Լուկրեցիուս

# ԻՐԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
Երևան 1960

Բնագրից լատ. թարգմ. և ծանոթագրությունները
կազմեց Գ. Բ. ԱՐՍՅԱՆ

Խմբագրեց Ս. ՏԱՐՈՆՑԻ


**ЛУКРЕЦИЙ**

**О ПРИРОДЕ ВЕЩЕЙ**

(На армянском языке)
Армянское государственное
издательство
(Айпетрат), Ереван 1960


J. LUCRETI CARI

DE RERUM NATURA

# ԼՈՒԿՐԵՑԻՈՍ

Հռոմեացի նշանավոր բանաստեղծ-փիլիսոփա Տիտոս Լուկրեցիոս Կառը գրական ասպարեզ իջավ այն ժամանակ, երբ կայսրությունը քաղաքական վայրիվերումներ էր ապրում։ Մայրաքաղաք աղքատությունն ու շահագործումը ստրուկներին հանել էին ստրկատերերի դեմ։ Տեղի էր ունենում Սպարտակյան լայնածավալ շարժումը, որը իր մեջ ընդգրկում էր բոլոր խավերից նրանց, ովքեր ձգտում էին ազատության։ Կայսրության ողնաշարը ճարճատում էր։ Եվ Հրապարակ իջավ ռեակցիայի պաշտպան ահարկու Սուլլան, որը արյան մեջ խեղդելով այդ վիթխարի շարժումը, աշխատելով պահպանել հռոմեական զառամյալ կայսրությունը, որի հիմքերը խարխլվել էին շատ վաղուց։

Լուկրեցիոսի կենսագրական տվյալները մինչև այժմ ճշտված չեն։ Ըստ հռոմեական կենսագիրների՝ բանաստեղծը ծնվել է 95 թվականին (մ. թ. ա.) և մեռել է 53 թվականին՝ մեր թվականության առաջին դարում։ Չկան ճշգրիտ տվյալներ նրա պատանեկության և երիտասարդության տարիների մասին։ Հայտնի է այն, որ կրթություն ստացել է Աթենքում, որտեղ և խորապես ծանոթացել է հունական, մասնավորապես էպիկուրի (341—270 մ. թ. ա.) մատերիալիստական փիլիսոփայության։ Վերադառնալով հայրենիք այն ժամանակ, երբ երկիրը արյունահեղ անցքեր էր ապրում և դժգոհ ներկա իրականությունից՝ հոգեկան բավականություն է գտնում փիլիսոփայության մեջ։ Նա երգում է, ինչպես Մարքսն է ասում «Հռոմեական ոգու սուրստանգը, աստվածային բնությունից

դում երջանկություն է աշխարհից մեկուսացված առանձնությունը: Այն կարծի-քը, թե նա չի ապրել ժամանակի հասարակական անցքերով՝ ընդունե-լի չէ այն չափով, որչափով որ նրա «Իրերի բնության մասին» պոեմը լույսը միջամտություն էր ժամանակի անցքերին,—ջանա-լով բացել կուրացված սերունդների աչքերը՝ այն իմաստով, որ ո՛չ աստվածների, ո՛չ էլ իշխողների գոյությունն է հավերժական, ուս-տի և հնարավոր է կործանել թե՛ մեկը, թե՛ մյուսը Պակասում են նրա անձնական կյանքին վերաբերող շատ տեղեկություններ, մի-այն ակնարկներ կան, որ նա իբր տառապել է «սիրո խմիչքից» առաջացած հոգեկան անհավասարակշռությունից, որի պատճառով էլ վերջ է տվել կյանքին ինքնասպանությամբ

Որևէ էլ ոչ որոշակի, այնուամենայնիվ, մի բան պարզ է, որ Լուկրեցիոսն իր աշխարհայացքով ու դասակարգային պատկա-նելությամբ կանգնած է հռոմեական առաջավոր դասի պաշտպան-յանին: Նրա պոեմն, ամենից առաջ, իր սուր ծայրով ուղղված է ստրկատերերի խավարամտության ու բռնապետության դեմ Նա ներբողում է աշխատանքի մարդուն, ատելություն տածում շահա-գործողների նկատմամբ, որոնք հարստություն դիզելու համար հանում են եղբայրը եղբոր դեմ և վայրագ բերկրանքով սպանդներ սարքում Ո՞ւմ են հովանավորում հեթանոսական սուտ աստված-ները, եթե ոչ բռնապետներին Ո՞ւմ են պետք այդ խրտվիլակները՝ եթե ոչ իշխողներին, որոնք նրանց միջոցով ներկայացնում են իրենց անմարդկային արարքները Շահագործվող թշվառին այդ աստվածները ոչնչով չեն օգնում, բացի նրանց միտքը մթագ-նելուց

Լուկրեցիոսի պոեմը բաղկացած է վեց ընդարձակ գրքից և ամեն մի գրքում դրված է փիլիսոփայական մի կարևոր խնդիր և այդ խնդրի լուծումն ըստ ամենայնի ժամանակի գիտության տե-սակետով: Նրա երգերը հիմնված են կոնկրետ փաստերի վրա. Նա մերժում է աբստրակտը՝ վերացականը, անշոշափելին Զինված ժամանակի առաջավոր գիտությամբ՝ նա դատողություններ է անում տիեզերքի, նրանում հավիտենապես շարժվող նախասկիզբների ատոմների մշտապես ներհակ զուգորդումների, ոգու և հոգու փոխ-հարաբերությունների, աստվածների ծագման, սոցիալական կյան-քի և բազմաթիվ այլ խնդիրների մասին, որոնց սկիզբը, ընթացքն ու վախճանը ոչ թե պայմանավորված է աստվածային նախախնա-մությամբ, այլ իրեն ուրույն և ինքնաստեղծ շարժում ժամանակի և տարածության մեջ, և այս ամենը մատերիալիստորեն Նրա համար բացարձակ ճշմարտություն է միասնական, հավիտենա-

կան շարժման խնդիրը, նրանց միասնությունն ու հակադրությունը, մահացման և վերածնման հավերժական պրոցեսը Բացատրելով բնության բոլոր երևույթները մատերիալիստորեն, նա խղազերծում է բոլոր տեսակի աստվածային ուժերին և ի վերջո կանգնում աթեիստական տեսակետի Լուկրեցիուսն աշխարհի առաջին աթեիստներից մեկն է, համարձակ ու խիզախ, մշտապես զգաստ՝ հավատալով միայն փորձին, գիտությանը Այսպես՝ ժխտելով աստվածների նախախնամությունը, նրանց անմիջական միջամտությունը՝ նա կործանիչ հարված է հասցնում Էմպեդոկլի, Հերակլիտի, Անաքսագորասի և Պլատոնի իդեալիստական ուսմունքներին, որոնք տիեզերքի և կյանքի ծագումն, ի վերջո, կապում էին աստվածային արարչության հետ Նա իր միակ ուսուցիչն է համարում Էպիկուրին, որ ինչպես Մարքսն է նշել՝ «առաջինը խորտակեց աստվածներին և արհամարհեց կրոնը»

Լուկրեցիուսի «Իրերի բնության մասին» պոեմի հիմքը, նախասկիզբը Էպիկուրի «Բնության մասին» տրակտատ-շարադրությունն է, այն տարբերությամբ, որ հույն փիլիսոփայի բոլոր վերացական խնդիրները Լուկրեցիուսի մոտ ստացել են շոշափելի կերպարանք, խոր գիտական լուծում Այն պարզությունը, ավելի շուտ նաիվությունը, որ կա Էպիկուրի գործում, Լուկրեցիուսի մոտ ստացել է խոր փիլիսոփայական, ճշգրիտ վերլուծում, և այն էլ բանաստեղծական այնպիսի ձևով, որ իր տեսակի մեջ եզակի է ոչ միայն հռոմեական, այլև համաշխարհային գրականության մեջ

Լուկրեցիոսը մեծ ազդեցություն է թողել ինչպես հռոմեական (Օվիդիոս, Հորացիոս), այնպես և համաշխարհային գրականության խոշորագույն ներկայացուցիչների (Գյոթե, Պուշկին) վրա Նկատելի է նրա ուժեղ ազդեցությունը Ջորդանո Բրունոյի, Հոլբախի, Դիդրոյի և XVIII դարի մնացած լուսավորիչների վրա Անգամ խավարակոտ միջնադարում նրա պոեմն արտագրվել և ձեռքից ձեռք է անցել, փիլիսոփայական. գեղագիտական խոր հաճույք պատճառելով առաջավոր մտքերին

Մարքսիզմի կլասիկները հիացել են Լուկրեցիուսի պոեմով Ամենից առաջ գրավիչն այդ գործում եղել է նրա մատերիալիստական աշխարհըմբռնումը, նրա կոնկրետ գիտականությունը, բանաստեղծական այն թռիչքը, որ յուրատեսակ է Լուկրեցիուսի քննադատական, դիդակտիկական մտքին Բանաստեղծի հզոր միտքը համեմատություններն ու մետաֆորները, գիտական թեման պարզությամբ մատուցելու եղանակը. այս ամենը Մարքսին հար-

կարել են ասել իր ժամանակի խոսք,—«Լուկրեցիոսը հանդիսանում է խիզախ հռոմեական էպիկական բանաստեղծ»

Լուկրեցիուսի «Իրերի բնության մասին» պոեմն իր բոլոր արժանիքներով պատկանում է առաջավոր մարդկությանը։ Նրա գիտական մի քանի հրատարակությունները մեզ մոտ ցույց է տալիս, որ սովետական ընթերցողը գնահատել է մեծագույն մտածողներից մեկին, որ դեռ երկու հազար տարի առաջ դեն է շպրտել կրոնական մղձավանջը, սնոտիապաշտություններն ու նախապաշարումները և օգնել առաջավոր մարդկությանը կառուցելու այն աշխարհը, որ պայքար է մղում հանուն անկաշկանդ, հզոր մտքի, հանուն պայծառ գիտության, ի խինդ կյանքի բարօրության, ինչպես նախագուշակել է անտիկ աշխարհի բանաստեղծ-մարգարեն

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

*1959 թ*

# ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

*Էնեականց ցեղի ծնող, աստվածների ու մարդկանց*
*Հեշտություն, օ, դու Վեներա՛, աստվածուհի բարերար։*
*Քո աստղազարդ բարձունքներից կյանք ես սփռում թե ծովում,*
*Ուր նավեր են լողում, և թե ողջ ցամաքում պտղաբեր*
*Ամեն տեսակ արարածներ, կյանք ստացած քեզանից*
*Եվ քեզանով աշխարհ եկած, տեսնում են լույսն արևի.*
*Երևան ես գալիս, իսկույն քամիները փախչում են,*
*Աստվածուհի և ցրվում են մութ ամպերը երկնքի,*
*Հողը ծածկվում ծաղկագորգով, ծովը դառնում է ծիծաղուն,*
*Ջինջ երկինքը պայծառ լույս է դեպի հեռուն տարածում,*
*Երբ հազիվ է գարուն բացվում և հազիվ է Փավոնը*[1]
*Կապանքները թոթափելով, փչում շնչով կենսաբեր,*
*Քեզ թևավոր թռչունները առաջիններն են զգում,*
*Վերադարձդ, աստվածուհի, մեզ ավետում են կրկին*
*Ցատկոտում է հոտն արոտի վայրերում և կախարդված*
*Քո հմայքով՝ անցնում է մեծ, արագահոս գետերը*
*Եվ բնության ամենայն մի արարած է ցանկանում*
*Քեզ հետևել, աստվածուհի, ուր որ տանել ցանկանաս։*
*Եվ վերջապես խոր ծովերում, լեռներում ու սրընթաց*
*Գետերի մեջ տերևախիտ պուրակներում ու կանաչ*
*Դաշտերում այդ քաղցր բոցը թափանցում է բոլորի*
*Սրտերի մեջ, դրդելով որ շարունակեն ցեղն իրենց*
*Քանզի դու ես ողջ բնության միահեծան տիրուհին*

Եվ առանց քեզ ոչինչ երբեք լույս աշխարհ գալ չի կարող,
Առանց քեզ ո՛չ խնդություն կա և ո՛չ հմայք աշխարհում։
Արդ օգնիր ինձ, աստվածուհի, և ներշնչիր մի պոեմ
Բնության մասին իրերի, որ ցանկանում եմ նվիրել
Մեմիոսի որդուն[2], որին կամեցել ես դու օժտել
Շնորհքներով, աստվածուհի, հազվադեպ ու բազմազան։
Եվ անթառամ կախարդանք դու պարգևիր իմ տողերին
Ցամաքում ու ծովում վերջ դիր պատերազմին անողոք
Խաղաղության բերկրությունը կարող ես դու միայն տալ
Պատերազմի աստված Մարսը մարտադաշտում է իշխում,
Հաճախ նետվում է քո գիրկը հավերժ սիրուց վիրավոր
Եվ գլուխը կրծքիդ դրած, քեզ է նայում շարունակ,
Կիսաբաց իր շրթունքներով և հայացքով ծարավի
Հագենում է քո սիրով նա և քո ջերմ շունչն է ծծում։
Երբ սրբազան քո ձեռքերով բռնած պահում ես նրան,
Աստվածուհի՛, երբ քնքշորեն նրա վրա ես թեքվում,
Դու մի քաղցր համոզմունքով նրա հոգին համակիր
Եվ Հռոմի համար խնդրիր խաղաղություն ու հանդիստ։
Երբ շարունակ պատակտում են հայրենիքում իմ, ավա՜ղ,
Ո՛չ ես կարող եմ աշխատել հանդիստ սրտով այսուհետ
Ո՛չ էլ կարող է Մեմիոսն իր հոգսերով բազմաթիվ
Լույս տալ գործից ընդհանուր, ինձ ունկնդրել շարունակ։
Դու, Մեմի՛ոս, ազատվիր այդ հոգսերից և քո խելքով
Խորաթափանց ունկնդրիր իմաստության ուսմունքը,
Որպեսզի դու չմերժես կամ արհամարհես պտուղը
Այն, որ արդեն ձեռք եմ բերել ես ջանքերով անսպառ,
Քանի այն դու չես քննարկել։ Ես քեզ պիտի բացատրեմ
Աստվածների բնությունը, համակարգը երկնքի,
Ինչպես նաև սկզբունքներն, անշուշտ, որոնց օգնությամբ
Բնությունը ձևավորում, սնուցում է աճեցնում
Արարածներ, որոնց հետո նույն տարրերն է դարձնում նա,
Երբ ավերվում, քայքայվում են, տարրալուծվում են նրանք։
Նրանց կոչում ենք մատերիա, կամ մարմիններ նախնական,
Կամ մարմիկներ սկզբնական, նաև սերմեր իրերի,
Որոնցից է առաջ գալիս ամենայն ինչ աշխարհում[3]։
Աստվածները իրենց հատուկ արտոնությամբ լռության
Խաղաղությամբ վայելում են անմահություն երկնքում,
Մեր դեպքերի շրջանից դուրս մեր աշխարհից հեռացած,
Վշտից, ցավից միշտ պաշտպանված և գոհ իրենք իրենցով

Դրանք անկախ են մեզանից, բարի գործի նկատմամբ
Զգայուն չեն ամենևին, մատչելի չեն բարկության[4]։
Այն ժամանակ, երբ մարդկային ցեղն էր սողում աշխարհում
Պղասատացված և կաշկանդված շղթաներով կրոնի, որ
Ցույց էր տալիս սարսափելի իր գլուխը բարձունքից
Եվ սպառնում մահկանացու մարդկանց ահեղ հայացքով
Հնդկաստանում ծնված մի մարդ[5] առաջինը հանդգնեց
Բարձրացնել վեր իր աչքերը նրա դեմ և խոնարհվել
Առաջինը հրաժարվեց նա։ Զվախեցավ ո՛չ այդքան
Բառաբանված աստվածներից, ո՛չ էլ նրանց կայծակից
Ո՛չ էլ ահեղ շանթերից, որ դղրդում են երկնքում։
Խիզախությամբ հաղթահարեց ամենայն մի խոչընդոտ
Եվ խորտակել ցանկացավ նեղ շրջանները բնության,
Անահ ոգով սլացավ և գնաց, անցավ աշխարհի
Բոցավառված սահմաններից[6] և հսկայի քայլերով
Տարածության մեջ պտտվեց, վերադարձավ հաղթական
Ուղորդելու համար մարդկանց, ինչ որ ինքն էր իմացել
Թե ինչ կարող է գոյություն ունենալ, ինչ՝ չի կարող,
Թե ինչպիսի ուժ է տրված ամեն ինչին վերջնական
Եվ վերջապես, թե ինչպիսի նրան դրված է սահման։
Եվ տրորվեց կրոնն այդպես մեր ոտքերի տակ։ Նրա
Հաղթությունը մեզ դարձնում է աստվածներին հավասար։
Վախենում եմ մի բանից, որ կարող ես ինձ մեղադրել,
Թե դարձնում եմ հաղորդակից քեզ անօրեն ուսմունքի
Կամ ցանկանում ոճիրների ճանապարհով քեզ տանել։
Կրոնն ինքն է մարդկանց դրդել, այն էլ հաճախ չափազանց,
Անօրեն ու պիղծ գործերի։ Մի ժամանակ Ավլիսում[7]
Դանայեցոց ընտիր ու քաջ առաջնորդներն առաջին
Իփիգենիա անմեղ կույսի արյունով են Տրիվիայի
Զոհարանը պղծել։ Եվ երբ հերակապով սգավոր
Կույսի մազերն էին կապել, և երբ այն իր ծայրերով
Ծածանվում էր նրա դեմքին, և երբ կույսը տեսավ իր
Հորը մռայլ կանգնած արդեն զոհարանի մոտ, նաև
Քրմերին, որ պահում էին հագուստների տակ իրենց
Անգութ ու սուր դանակները, ժողովուրդը արտասվող
Որ հավաքել էր իր շուրջը, այն ժամանակ ընկճված,
Սարսափելով ծունկի եկավ, աղերսելով լուռումունջ։
Բայց ի՞նչ օգուտ ողբերգական այդ վայրկյանին այն, որ նա
Առաջինն էր հայր անվանել, ավա՜ղ, նրան ում արքա

Անվանել էր հայրենիքը [8]   Եվ քուրմերն այն ժամանակ
Նրան, որը դողդողում էր, զոհարանի մոտ տարան,
Սակայն ոչ թե հանդիսավոր ծեսի համար հարսանյաց [9],
Այլ որպես մի քավության զոհ՝ կատաղության նողկալի։
Նրան պիտի զոհաբերեր հարազատ հայրն իր ձեռքով
Այն պահին, երբ ամուսնության ժամանակն էր իսկ ինչո՞ւ։
Որ նավերը կարողանան ելք ստանալ դեպի ծով։
Մարդկանց նման ոճիրների է կրոնը միշտ դրդում։

Դու էլ, գուցե, հոգնած նման հեքիաթներից սոսկալի,
Որ պատմում են պոետները դարեր ի վեր շարունակ,
Կարող ես խույս տալ ինձանից, վախեցած, որ կգտնես
Իմ պոեմում էլ նույնպիսի երազանքներ վշտալի,
Որ կարող են թունավորել ու սարսափով խախտել քո
Երջանիկ ու խաղաղ կյանքը իրավացի ես, սակայն։
Քանզի եթե մարդը տեսներ, որ իր տանջանքն ահռելի
Վերջ կունենա մի ժամանակ, կգտներ նա մի միջոց
Նախապաշարմունքների և պոետների դեմ, որոնք
Սպառնում են իրեն, սակայն չկա ոչ մի միջոց, որ
Պաշտպանվի այդ երկյուղից, որ միշտ պատճառում է նրան
Այն միտքը, թե մահից հետո պիտի դարձյալ չարչարվի,
Որովհետև նա չգիտէ բնությունը մեր հոգու՝
Ծնվո՞ւմ է նա մեր մարմնի հետ, թե՞ մտնում է նրա մեջ
Այն ժամանակ, երբ ծնվում ենք, և մեռնո՞ւմ է նա մեզ հետ
Երբ մարմինն է տարրալուծվում թե խավար Օրկն [10] է գնում
Մութ դժոխքի ափերը, թե՞ աստվածների կամքով նա
Պիտի անցնի անասնական մարմինների մեջ, ինչպես
Պատմել է մեզ Էննիոսը [11], որ առաջինն է իջել
Հելիկոնի [12] հավերժական, սեգ գագաթից Իտալիա,
Զարդարած իր ճակատն արդեն մի փառավոր պսակով։

Իր պոեմում նա պատմում է Աքերուզիայի [13] մասին
Որտեղ ոչ թե մարմիններ կամ հոգիներ են բնակվում
Այլ ստվերներ դժգույն, թեթև և որոնց մեջ եղել է
Տեսիլն անմահ Հոմերոսի, որը հայտնվել է նրան,
Արտասվելով բացահայտել գաղտնիքները բնության։

Նախքան պիտի մեր հայացքը դեպի վերև բարձրացնենք,
Հետազոտենք արևի և լուսնի երթը, իմանանք
Երևույթներն այս աշխարհի, կական է գիտենալ,
Որքան միայն կարելի է՝ ճիշտ, մեր ոգու և հոգու
Բաղկացուցիչ սկիզբները բնությունն այն իրերի

Դրանց հաճախ տեսնում ենք մենք օր-ցերեկով, բայց որոնք
Սարսափեցնում են մեզ դարձյալ, երբ հիվանդ ենք կամ քնած,
Եվ այնպիսի ճշգրտությամբ, որ թվում է հաճախ, թե
Տեսնում, լսում ենք նրանց մենք, որոնց մահը հնձել է,
Որոնց աճյունն արդեն վաղուց հողին հանձնված է եղել։
Սակայն ես չեմ կասկածում, որ մութ ուսմունքը հույների
Լատիներեն շարադրել մեզ շատ դժվար է լինելու.
Շատ խոսքեր են մեզ պակասում, մինչդեռ նոր է առարկան,
Եվ ես հաճախ ստիպված եմ նոր տերմիններ հնարել։
Արժանիքներն այն, որ ունես, և հաճույքը այն, որ ինձ
Շնորհում է քո մտերմությունը, ինձ ընդունակ են դարձնում
Այդ դժվարին աշխատանքին և ինձ դրդում են փնտրել
Խաղաղության մեջ գիշերվա դարձվածքներ նոր ու հաջող
Եվ պատկերներ այնպիսի, որ կարող էին լույս սփռել
Քո հոգու մեջ և քեզ բացել սիստեմն ամբողջ աշխարհի։
Ուստի վանել այդ երկյուղը և խավարը մեր հոգուց
Կարող են ոչ թե ցերեկվա՝ լույսն ու շողերն արևի,
Այլ բնությունն ինքն իր ներքին կառուցվածքով ու տեսքով։
Որպես հիմունք ընդունում ենք մենք մի դրույթ այսպիսի՝
Աստվածային կամոք ոչինչ չի ստեղծվում ոչնչից
Եվ, իսկապես, մարդկանց սիրտը երկյուղն այնպես է ճնշում,
Որ տեսնելով երևույթներ մեր երկրում ու երկնքում,
Հասկանալ չեն կարողանում այդ ամենի պատճառը
Եվ արարիչ աստվածներ են իրենց համար ստեղծում։
Իսկ եթե մենք գիտենանք, որ ընդունակ չէ ոչ մի բան
Ոչնչությունից առաջ գալ, տեսնելու ենք պարզորեն
Մենք այդ խնդրի առարկան, թե որտեղի՞ց և ինչպե՞ս են
Առաջ գալիս իրերն առանց աստվածների օգնության։
Եվ, իսկապես, եթե իրերն առաջ գային ոչնչից
Ամեն տեսակ արարածներ կծնվեին, անկասկած,
Ամեն տեսակ մարմիններից, առանց հատուկ սերմերի։
Կարող էին մարդիկ ծնվել ալիքներում ծովային,
Իսկ ձկներն ու թռչունները կծնվեին ցամաքում
Մանր խոշոր կենդանիներ կթափվեին երկնքից
Իսկ ահռելի գազանները կարող էին առաջ գալ
Եվ ամայի անապատում և թե հերկված արտերում։
Ծառերը մեզ միշտ չէին տա միանման պտուղներ,
Այլ ամեն օր կփոխեին պտուղներով զանազան,
Յուրաքանչյուր բույս մեզ կտար ամեն տեսակ պտուղներ

Եթե սերմեր չլինեին, սերունդները հետագա
Միանման չէին լինի և չէր լինի ոչ մի կարգ։
Բայց քանի որ բնության մեջ այն ամենը, ինչ որ կա,
Միայն որոշ սերմերից է առաջ գալիս և այնտեղ
Որտեղ նյութ ու տարրեր կան, որ միայն նրանց են հարմար,
Ամեն ինչը ամեն ինչից, ուստի, ծնվել չի կարող,
Որովհետև ամեն մի իր ունի տարրեր զանազան։
Եվ, իսկապես, վարդն ինչո՞ւ է բացվում միայն գարնանը,
Արտը դեղնում է ամռանը, իսկ աշնան տաք օրերին
Հասունանում է խաղողը, եթե ոչ այն պատճառով,
Որ ցանքերը կատարվում են ժամանակին ճշտորոշ
Եվ զարգանում է ամեն ինչ, երբ ծնում է անվտանգ
Քնքուշ իրեր լույս աշխարհում հողի ուժը կենսատեր։
Եթե միայն արարածներ առաջ գային ոչնչից,
Կծնվեին հանկարծակի ժամանակին անհարմար,
Եթե տարրեր չլինեին, որ կարող են խանգարել
Միակցության հզոր ուժին, սակայն այդպես չի լինում։
Այնուհետև եթե իրերն առաջ գային ոչնչից,
Նրանք իրենց աճի համար կարիք չէին ունենա
Ժամանակի և սերմերի զուգավորման անպայման
Մանուկները միանգամից կդառնային պատանի,
Դեռ նոր տնկված փոքրիկ ծառը կբարձրանար մինչ երկինք։
Բնությունը սակայն երբեք այդպիսի բան չի անում։
Հետզհետե ու դանդաղ են միշտ զարգանում իրերը
Պահպանելով իրենց ցեղն ու բնությունը սեփական
Եվ այդ հարցում երևում է մի ապացույց ակնառու
Ամեն մի իր իրեն հատուկ մատերիա է ունենում,
Սնուցվում է միշտ նրանով և զարգանում այնուհետ։
Գիտես, եթե ամենամյա անձրևները չլինեն,
Հողը երբեք չէր կարող մեջ բերել հյութեղ պտուղներ
Եվ կենդանի արարածներն՝ ուտելիքից զրկվելով
Չէին կարող պահպանել իրենց կյանքն ու բազմանալ
Ուստի, դու ոչ թե կարող ես այն տարրերը ժխտել, որ
Ընդհանուր են մարմիններում, այլև պիտի ճանաչես,
Որ բազմաթիվ կենդանիներ ունեն տարրեր ընդհանուր,
Ինչպես լինում են ընդհանուր տառեր բազում բառերում։
Եվ, վերջապես, բնությունը ի՞նչ պատճառով չէր կարող
Մարդուն այնքան մեծ ստեղծել, որ նա ոտքով ծովն անցներ
Այնքան ուժեղ, որ ձեռքերով փշրեր բարձր լեռները

Այնքան առողջ, որ ապրեր նա մի քանի դար շարունակ,
Եթե ոչ այն պատճառով, որ բնությունը պահելով
Կայուն բոլոր այդ տարրերը, ինքն է նույնպես որոշում
Հատկություններն այդ առանձին։ Ուստի պետք է ճանաչենք՝
Ոչնչից չի ծնվում ոչինչ, որովհետև ամեն իր
Աշխարհ գալու համար պիտի սերմ ունենա առանձին։
Որովհետև մշակված հողն արգավանդ է ավելի,
Քան անմշակն, իսկ բնությունն իր բերքն է միշտ լավացնում
Հողագործի աշխատանքից, ուստի հողում այնպիսի
Կան տարրական մասեր, որոնց դարձյալ դրդում ենք կյանքի,
Երբ խոփերով շուռ ենք տալիս հողի շերտերն արգավանդ։
Եթե այլ կերպ լիներ, ապա առանց ջանքի որևէ
Պետք է ամեն ինչ ինքն իրեն ձգտեր դառնալ կատարյալ։
Այստեղ պետք է ճշմարտությունն ավելացնենք հետևյալ
Բնությունը երբևէ չի ոչնչացնում ոչ մի բան,
Տարրալուծում է հիմնական մարմնիկների ամեն ինչ։
Թե տարրերը ամբողջովին լինեն մահի ենթակա,
Մարմինները կործանվելիս պետք է հանկարծ չքանան,
Անհրաժեշտ չէր լինի, որ մի փործողություն անշտապ
Քանդեր նրանց միակցումը, խախտեր նրանց կապերը։
Բնությունն է սակայն դարձրել մատերիայի տարրերը
Հավերժական, խորտակում է մարմինները, երբ մի խորթ
Ուժ է գալիս ու հարվածում կամ թափանցում նրանց մեջ։
Հետո եթե ժամանակը ոչնչացնում է բոլոր
Իրերը, որ մեր աչքերից չքանում են առհավետ,
Բնությունը ո՞ր աղբյուրից պիտի նոր նյութ ձեռք բերեր,
Ինչպե՞ս պիտի կենդանիներ բազմապատկեր Վեներան
Մեր աշխարհում այդքան. ինչպե՞ս հողը պիտի սնունդ տար
Այդ բոլորին ինչպե՞ս պիտի աղբյուրներն ու գետերը
Իրենց ջրով հար լցնեին խորունկ ծովերն անսահման
Եթերն ինչպե՞ս պիտի սներ արդյոք բոլոր աստղերին։
Թե լինեին այդ տարրերը դաժան մահին ենթակա,
Ժամանակը կկործաներ ամենայն ինչ աշխարհում։
Իսկ եթե այդ մարմնիկները միշտ եղել են ու դեռ կան
Բնությունը նրանցից է հավերժապես ստեղծում,
Ուստի նրանք պիտի լինեն անմահական և ոչինչ
Ոչնչանալ չի կարող այս տիեզերքում անսահման։
Եվ, վերջապես, միևնույն ուժից ու պատճառից ամեն ինչ
Կկործանվեր, թե մատերիան հավերժական չլիներ

Թե ամեն ինչ չամրապնդեր շատ կամ քիչ պինդ կապերով
Հազիվ միայն ձեռք կտային, կկործանվեր ամեն ինչ։
Եվ ինչպիսի՞ դիմադրություն հակադրել միշտ կարող էր
Միակցումը մահկանացու մասերի, որ փխրուն են.
Բայց կապերը, որոնցով միշտ միացված են տարրերը,
Իրար բնավ չեն նմանվում և մատերիան համերժ է,
Եվ ամեն ինչ պահպանում է գոյությունն իր, քանի դեռ
Ենթարկվում է հարվածների այնպիսի, որ տարրերի
Միացմանը համաչափ են, և այդպիսով ոչ մի բան
Ոչնչանալ չի կարող և միայն տարրերն են ցրվում։
Անձրևները, որ թափում է առատորեն երկնքից
Հայր եթերը, չքանում են հողի ծոցում մայրական
Մի՞թե կորած են թվում քեզ։ Նրանցով է երկիրը
Հացաբույսով ծածկվում, իրոք, կանաչում են ծառերը,
Կատարները բարձրացնելով, և ստերը ծռվում են
Պտուղների ծանրությունից. անձրևներն այդպիսով
Ապահովում են սնունդով և կենդանուն և մարդուն,
Լցնելով մեր քաղաքները դարձյալ մատաղ սերունդով.
Թռչունների երամներ են ուրախ երգում անտառում,
Ոչխարներ են հանգստանում մարգագետնում գիրանքով,
Ու ինչպես նրանց պտուկներից մաքուր կաթ է կաթկթում,
Եվ գառներ են այս ու այնտեղ խաղում ուրախ, ցատկոտում՝
Արդեն հարբած քաղցր կաթի թունդ հեղուկով ոգելից։
Մի խոսքով չի կորչում ոչինչ, երբ չքվում է մեր աչքից,
Բնությունը բեկորներից արարած է ստեղծում,
Կյանքը խլում է սրանցից ու պարգևում է նրանց
Ապացուցել եմ արդեն քեզ, որ ոչնչից ոչ մի բան
Չի ստեղծվում, ստեղծվածը ոչնչանալ չի կարող
Բայց որպեսզի չկասկածես բնավ դու այն պատճառով,
Որ իրերի այդ տարրերը մատչելի չեն մեր աչքին,
Իմացիր, որ մարմիններ կան, որոնց աչքով չենք տեսնում,
Սակայն նրանց գոյությունն անհրաժեշտ է ճանաչել։
Առաջինը՝ քամին ծովում բարձրացնում է ալիքներ,
Ծանր նավեր է ընկղմում, ցրում ամպեր երկնային,
Հաճախ որպես հողմապտույտ սլանում է դաշտերով
Նրանց ծածկում բեկորներով ամենամեծ ծառերի.
Քամին քանդում է լեռների գագաթներն ու մայրերը
Քամուց եռում է և ծովը սարսափելի ժխորով.
Ուստի թեև մենք չենք տեսնում, սակայն քամին մարմին է,

Քանի որ նա միանգամից փչում է ողջ երկնքում,
Դաշտերում ու ծովերում, և տարածում է օդում
Այն, ինչ խլել է նրանցից։ Քամին կարծես հոսանք է,
Գետի նման, որի խաղաղ հունը ուռել է հանկարծ
Անձրևներից, որոնք առատ հեղեղներով թափվում են
Լեռներից ու տարածում են երկայնությամբ ափերի
Անտառների բեկորները՝ ամբողջ ծառեր վիթխարի։
Ամենապինդ կամուրջներն էլ չեն դիմանում հոսանքին,
Որ արդեն շատ է կատաղել։ Ջրի ահեղ զանգվածը
Ամբարտակի վրա նետվում և խորտակում է նրան
Մեծ ժայռեր է գլորում նա և տապալում ամենայն
Խոչընդոտ, որ դուրս է գալիս մոլեգնության դեմ նրա։
Այդպես քամին էլ կատաղած ստիպում է տեղի տալ
Ամեն ինչ իր շնչի առջև գետի նման կատաղած՝
Փչում է նա իր ավարը և տապալում է նրան
Եվ, անդադար հարձակվելով, շրջապատում է հողմով
Եվ տանում է արագորեն, գալարելով երկնքում։
Ուստի դարձյալ կրկնում եմ քեզ, որ քամին մի մարմին է,
Թեև մենք չենք տեսնում նրան, քանի որ իր բնությամբ
Գործողությամբ նմանվում է այդպիսով մեծ գետերի
Իսկ գետերի գոյությունը ակներև է մեզ համար։
Հետո հոտ ենք առնում տարբեր և բազմաթիվ տեսակի,
Բայց չենք տեսնում, թե ինչպես է նա մտնում մեր քթի մեջ
Տաքությունը, ցուրտը, ձայնը մենք չենք տեսնում աչքերով,
Նրանց մարմնի գոյությունը սակայն ժխտել չես կարող
Քանի որ մեր զգացմունքները գրգռվում են նրանցով,
Իսկ շոշափել ու շոշափվել մարմինն է լոկ ընդունակ։
Այնուհետև թե որևէ գործվածք փռես ծովափին,
Խոնավություն կթափանցի նրա մեջ, բայց արևի
Շողերի տակ այն կչորի։ Սակայն տեսնել չես կարող,
Թե ջուրն ինչպես է թափանցում գործվածքի մեջ և ինչպես
Գոլորշի է դառնում կրկին տաքությունից, բաժանվում
Ուստի ջուրը մանրանում է մասնիկների այնպիսի
Որ մեր աչքին բոլորովին անմատչելի է դառնում։
Իսկ մատանին, որ կրում են մարդիկ երկար ժամանակ
Բարականում է օրեցօր կաթիլները անընդհատ
Թափվող ծակում են քարերը։ Հայտնի է, որ գութանի
Խոփը մաշվում է ակոսում արձանների պղնձե
Ու ձեռքը միշտ փոքրանում է դարպասի մոտ քաղաքի

Համբույրներից բազմության, որ մտնում և դուրս է գալիս։
Տեսնում ենք, որ մարմինները ժամանակի ընթացքում
Կորուստներ են ունենում, բայց բնությունը խանդոտ մեզ
Թույլ չի տալիս տեսնելու այն մասնիկները փոքրիկ, որ
Բաժանվում են ամեն վայրկյան։ Ընդունակ չէ ոչ մի աչք
Նկատել այն մասնիկները, որոնցով են իրերը
Միշտ մեծանում դանդաղորեն, և ոչ էլ նույն մասերն այն,
Որ խլում է ծերությունը մարմիններից շարունակ
Դու չես կարող տեսնել նաև փոքրիկ մասերն այն, որոնց
Ծովի կրծող աղն է խլում այն ժայռերից, որոնց նա
Սպառնում է ալիքներով։ Բնությունը գործում է
Մարմիններով այնքան փոքրիկ, որոնց տեսնել չենք կարող։
Տարածությունն ամբողջովին մատերիայով լցված չէ.
Անշուշտ, անհուն տիեզերքում դատարկություն կա նաև.
Ճշմարտությունն այդ քեզ համար կարևոր է, անկասկած
Գիտենալ և դա կարող է քեզ լինել շատ օգտավետ.
Կցրի քո կասկածները, դժվարություն ամենայն
Կկանխի և կներշնչի վստահություն քեզ մի նոր,
Որ ճանաչես արդարացի այն, ինչ որ ես եմ ասում
Եվ այդպիսով դատարկություն, տարածություն կա սակայն,
Չի շոշափվում։ Քանզի բոլոր մարմիններին հատուկ է
Հակազդելը, խոչընդոտ են հանդիսանում միշտ իրար,
Ուստի շարժումն առհասարակ անկարելի կլիներ
Քանզի ոչ մի մարմին փոխել իր տեղը չէր սկսի։
Բայց շարժումներ բազմատեսակ կատարվում են անդադար
Ծովերում ու ցամաքներում, բարձունքներում երկնային
Մեր աչքերի առջև։ Եթե դատարկություն չլիներ,
Իրերը ոչ միայն չէին կարող շարժվել անդադար,
Այլև ոչ մի բան աշխարհում երևան գալ չէր կարող,
Եվ մատերիան բոլոր կողմից ճնշված՝ անշարժ կմնար։
Հետո անցքեր ունեն նույնիսկ ամենահոծ իրերը,
Որոնք նրանց պիտի դարձնեն թափանցելի, անկասկած։
Արդ ժայռերի միջով ամուր ջուրը ելք է բաց անում
Անձավների կամարները թաց են առատ արցունքից։
Եվ սնունդը տարածվում է մարմնի բոլոր մասերում
Կենդանու և թե ծառերը աճում են ու կանաչում,
Եվ ծածկվում են ժամանակին նշված՝ հյութեղ մրգերով,
Պատճառն այն է, որ հյութերը արմատներից հասնում են
Մինչև բունը և այնտեղից տարածվում են ոստերում։

*Փակ դռների ու պատերի միջով անցնում է ձայնը*
*Եվ մինչև մեր ոսկրածուծն է սառնամանին թափանցում։*
*Իսկ կարո՞ղ ես բացատրել դու երևույթներն այդ առանց*
*Ընդունելու, որ դատարկ տեղ մարմիններում կա բոլոր,*
*Մարմիններում այն, ուր հեղուկ է ներմուծվում շարունակ։*
*Սակայն ինչո՞ւ այդքան մի մեծ տարբերություն է լինում*
*Մարմինների միջև, որոնք հավասար են չափերով*
*Քանզի բրդի կծիկում թե լիներ նույնքան նյութ, որքան*
*Ծանր արճիճն է ունենում, նույնքան ծանր կլիներ*
*Որովհետև մատերիան դեպի ներքև է ճնշում,*
*Դատարկությունն է բնությամբ ամենայն մի քաշից զուրկ,*
*Ուստի երկու մարմիններից, որ հավասար են չափով,*
*Թեթև լինում է ավելի այն, որի մեջ ավելի*
*Դատարկություն է լինում, և այն է ծանր առավել,*
*Որը նվազ անցքեր ունի, որը հոծ է ավելի։*
*Եվ մարդկային միտքն այդպես է մեզ ցույց տալիս պարզորեն*
*Գոյությունը դատարկության, որ ցրված է մարմնի մեջ։*
*Որպեսզի դու չկասկածես ամենևին, պետք է ես*
*Առարկությունն էլ կանխեմ այն, որ հնարում են ոմանք։*
*Ասում են, թե ջուրն, օրինակ, նահանջելով ձկան դեմ*
*Ջրի մեջ է ճամփա բացում, քանի որ իր հետևում*
*Ազատում է մի տեղ, որտեղ ջուրը խառնվում է նորից.*
*Եվ փոխելով տեղերն այդպես, մարմինները կարող են*
*Շարժվել, թեև տարածությունն այդ լցված է շարունակ։*
*Բայց այդպիսի բացատրության հիմքը ճիշտ չէ նախապես*
*Քանզի ինչպե՞ս ձուկը պիտի շարժվի առաջ, դեպի ո՞ւր,*
*Եթե ջուրը տեղ չի տալիս. ընդհակառակն՝ ո՞ւր պիտի*
*Գնա ջուրը, եթե միայն ձուկը տեղից չշարժվի։*
*Ուստի պետք է կամ իրերը զրկենք ամեն շարժումից,*
*Կամ ճանաչենք, որ իրերում դատարկություն նաև կա,*
*Եվ իրերի շարժումները սկիզբ են առնում նրանից։*
*Երբ անջատես արագորեն երկու տափակ մարմիններ,*
*Որ դրված են իրար վրա, նրանց միջև կլինի*
*Դատարկություն, որտեղ օդը միանգամից չի լցվի,*
*Թեև օդը միշտ շարժվում է արագությամբ սրընթաց*
*Այդ նուրբ տարրը միանգամից տարածությանն այդ ամբողջ*
*Տիրանալ չի կարող, պետք է նախ ծայրերին տիրանա,*
*Եվ իզուր ես դու ասելու, որ մարմիններն այդ երկու*
*Կբաժանվեն, հետո դատարկ տեղը, որ նոր գոյացավ,*

Կլցվի այն խիտ զանգվածով, որը եղել է առաջ
Քանզի պարզ է՝ առաջ կգար դատարկություն, որ չկար,
Եվ կլցվեր դատարկությունն այն, որ առաջ է եկել։
Խտանալ չի կարող օդը, բացի դրանից ինչպես այդ
Դու ես կարծում, եթե նույնիսկ հնար լիներ գեթ մի պահ,
Դարձյալ առանց դատարկության նա չէր կարող մոտեցնել
Իր մասերը և հավաքել ավելի նեղ չափի մեջ։
Որքան էլ ինձ առարկելով աշխատես դու խուսափել,
Դատարկության գոյությունը դարձյալ պիտի ճանաչես։

Կարող էի ապացույցներ ավելացնել բազմաթիվ,
Այնպիսիք, որ մի նոր կշիռ կտային իմ խոսքերին
Բայց, անկասկած, բավական են և հենքերը այդ թեթև,
Որպեսզի դու կարողանաս քո իսկ խելքով իմանալ
Մնացածը, որ չեմ ասում, ինչպես հարկն է ըմբռնել։
Եվ շների նման, որոնց սովորեցրել են որսի,
Որ գազանի հետքերով են գնում՝ նրան բռնելու
Խոտերի մեջ կանաչ, որտեղ ապաստանել է արդեն,
Այդպես էլ դու ընթանալով հետևանքից հետևանք
Կթափանցես գաղտնիքների մեջ բնության, կգտնես
Ճշմարտությունն այնտեղ, որտեղ ապաստանել է, անշուշտ։

Սակայն եթե սատանվում ես հետևելու դարձյալ ինձ
Եվ հրաժարվում համոզվելուց, ես կարող եմ ասել քեզ,
Որ կբացվեն քեզ այն առատ աղբյուրները, որոնցով
Հագեցել է իմ հանճարը, ճշմարտությունն այնուհետ
Կհոսի իմ շրթունքներից արդեն այնքան, մինչև որ
Կհասնի մեզ դանդաղաքայլ ծերությունն ու կարծակի
Կյանքի կապերն առաջ, քան ես կարող էի սպառել
Ապացույցներն այն որ կարող եմ ծավալել քո առջև։

Սակայն շղթան դատողության շարունակում եմ դարձյալ
Կազմված է ողջ բնությունը սկզբունքից այս երկու,
Որ գոյություն ունեն անկախ՝ դատարկություն և մարմին
Դատարկության մեջ լրերը բոլոր շարժվում են անդուլ։
Մարմինների գոյությունը զգայունքներն են ցույց տալիս,
Որ աներեր ստուգության համար հիմք են ծառայում
Իսկ բանական միտքը մենակ, առանց դրանց մնացած
Կարող է մեզ մոլորեցնել լաբիրինթի մեջ խավար
Թե չլիներ տարածությունն այն, որը մենք կոչում ենք
Դատարկություն մարմինները չէին կարող ոչ մի տեղ,

Դասավորվել այնպես, ինչպես չէին կարող և շարժվել
Տարբեր կերպով, ինչպես արդեն ապացուցել եմ առաջ։
Մենք չենք կարող ըմբռնել, որ բնության մեջ կա մի բան
Որը զուրկ է դատարկ տեղից, մատերիայից անկախ է,
Եվ կարող է այդպես կազմել ինչ-որ երրորդ սկզբունք։
Ինչ գոյություն ունի արդեն, պետք է նաև ունենա
Անպայման մի ծավալ, անշուշտ, չէ՞ որ առանց ծավալի
Գոյություն[illegible]ր ունենալու՝ մեծ լինի այն, թե փոքրիկ,
Հսկայական է արդյոք դա, թե աննշան իր չափով։
Եթե միայն շոշափելուն մատչելի է նա մի քիչ,
Այն էլ պիտի ավելանա մարմինների գումարին
Ինչպես նաև պիտի նրանց օրենքներին ենթարկվի։
Ընդհակառակն՝ իսկ եթե այն չի շոշափվում բնավ և
Խոչընդոտ չի հանդիսանում անցքին ուրիշ իրերի,
Թափանցելի է, նրան մենք դատարկություն կանվանենք։
Այն ամենը, ինչ գոյություն ունի արդեն աշխարհում
Կամ գործում է, կամ ենթարկվում գործողությանն ուրիշի,
Կամ այն, որի մեջ իրերը լինել, շարժվել կարող են։
Մարմիններն են կարող միայն կամ ենթարկվել, կամ գործել
Դատարկությունն է ասպարեզ գործողությանն այդ տալիս,
Եվ գոյություն չունի բնավ բնության մեջ որևէ
Այնպիսի բան, երրորդ կարգի, որ բնավ չի զգացվում
Ոչ էլ նույնիսկ ըմբռնելի մտքի համար մարդկային։
Եվ այն, ինչը մատերիա չէ, դատարկություն չէ նույնպես,
Հատկությունն է կամ երևույթն այս մեկի, կամ այն մեկի
Հատկություն է այն, ինչ խլել, անջատել չի կարելի՝
Առանց իրը քայքայելու, պատկանում է որին այն
Այդպես քարի ծանրությունն է, ջերմությունը՝ կրակի
Հատկությունն էլ ջրի այն է, որ հեղուկ է, մարմիններ,
Որ անպայման շոշափվում են, դատարկությունն են ժխտում։
Ազատություն, ստրկություն, խաղաղություն, պատերազմ,
Հարստություն, աղքատություն՝ լոկ ձևերն են գոյության,
Որոնց լինել-չլինելով մարմինները չեն փոխվում
Այդ ամենը, ինչպես պետք է, անվանում ենք երևույթ։
Եվ ինքն իրեն ժամանակն էլ նույնպես չունի գոյություն
Մարմինների տևողական գոյությունից միտքը մեր
Տարբերում է, անշուշտ, ներկան ու ապագան անցյալից
Արդ ուրեմն մատերիայի շարժումներն ու հանգիստը
Ըմբռնել չի կարող ոչ ոք՝ մեկուսացված ու անկախ։

Երբ խոսում են առևանգման մասին դստեր Տինդարի[14],
Կամ վինակի մասին դժբախտ զավակների Տրովայի,
Քանի որ այն օրերը, որ նշված են այդ դեպքերով,
Անցյալ դարերն անվերադարձ վաղուց տարել են արդեն,
Տարածությանն են, անկասկած, այդ դեպքերը պատկանում,
Կամ պատկանում մարմինների, անշուշտ, որպես երևույթ։
Եթե միայն մատերիա ամենևին չլիներ,
Ոչ տեղ և ոչ դատարկություն, ուր դեպքերն են կատարվում,
Տինդարուհու գեղեցկությամբ այդ հուրերը բորբոքված,
Որ փռյուգացի Ալեքսանդրի սիրտը սիրով վառեցին,
Առաջ չէին բերի, անշուշտ, պատերազմն այդ սոսկալի,
Եվ տրովացոց համար այդքան աղետաբեր փայտյա ձին[15]
Հունածիններին դուրս բերած՝ Պերգամը չէր ավերի։
Ուստի տեսնում ես այստեղից, որ դեպքերը այդ բոլոր
Ո՛չ իրական գոյություն են, ինչպես բոլոր իրերը,
Ո՛չ էլ ունեն դատարկության բնությունը, անկասկած
Ձևափոխումն են պարզապես մարմինների ու դատարկ
Տարածության, որ իրենց մեջ պարունակում են նրանք։
Հետո բոլոր մարմինները կամ տարրեր են իրերի,
Կամ կազմված են միակցումից այդ տարրերի[16] նախնական։
Այդ տարրերը ո՛չ կարող են փոխվել և ո՛չ քայքայվել,
Հաղթահարում են ամեն ինչ իրենց մարմնի կարծրությամբ։
Բույց, դժվար է ըմբռնել, որ կարելի է գտնել
Որևէ բան մեր աշխարհում ահա նման կարծրությամբ։
Պատի միջով անցնում են ձայնն, աղաղակն ու կայծակը
Պինդ երկաթը կարմրում է վառարանի կրակում,
Տաքությունից ճարճատելով փշրվում են ժայռերը
Հալոցի մեջ ոսկին էլ է կարծրությունը կորցնում իր
Եվ սառույցի պես հալվում է կրակի մեջ պղինձը
Մի արծաթյա գավաթ վերցրած՝ մենք զգում ենք հեղուկի
Տաքությունն ու սառնությունը այդպես ահա ոչ մի բան
Բնության մեջ կատարյալ պինդ ամենևին չենք գտնում,
Եվ քանի որ մտքի ճիգով, ավելի շուտ՝ բնությամբ
Ճշմարտությունն այդ մենք գիտենք, իմացիր դու նաև որ
Սկիզբները մատերիայի, այդ տարրերը նախնական
Տիեզերքում ամենուրեք հավերժական, կարծր են։
Նախ քանի որ մարմիններն ու տարածությունն ուղղակի
Հակադիր են միշտ բնությամբ, ուստի պետք է որ նրանց
Գոյությունն էլ լինի նույնպես անջատված ու առանձին։

Եվ չեն խառնվում նրանք իրար։ Եվ մատերիա չկա, ուր
Դատարկությունն է գտնվում, դատարկություն չկա, ուր
Ամենը, ինչը առլցված է մատերիայով մշտապես։
Մարմինների տարրերի մեջ դատարկություն չի լինում,
Ուստի նրանք պետք է լինեն հավերժական ու ամուր։
Եվ քանի որ մարմիններին դատարկությունն է խառնված,
Կարծր նյութը պետք է նրանց շրջապատի անպայման
Եվ եթե մենք ընդունում ենք, որ մարմիններն այդ իրենց
Մասերի մեջ պարփակում են դատարկություն, պիտի տանք
Կարծրություն և միջնորմներին, որ պաշարում են նրանց։
Իսկ ի՞նչ են այդ միջնորմները. մատերիայի, անկասկած,
Մարմնիկների միակցումներ։ Այդպիսով, այն ժամանակ,
Երբ իրերը քայքայվում են, մատերիան իր կարծրության
Պատճառով պետք է ունենա հավերժական գոյություն։
Այնուհետև եթե միայն դատարկություն չլիներ,
Տիեզերքը լինելու էր կարծր ու հոծ, իսկ եթե,
Ընդհակառակն՝ մարմիններն այդ չունենային գոյություն,
Որ լցնում են այն տեղը, որ զբաղեցնում են նրանք,
Տիեզերքը այնժամ անհուն դատարկություն կլիներ։
Տարածությունն ու մարմինը տարբերվում են իրարից,
Որովհետև ո՛չ կատարյալ լիություն կա աշխարհում,
Ո՛չ կատարյալ դատարկություն տիեզերքի մեջ համայն
Մատերիայի մարմնիկները իրենց մարմնի կարծրությամբ
Տարբերությունն են կազմում այն, որ գտնում ենք նրանց մեջ։
Հարվածներից չեն կործանվում մարմնիկները նախնական,
Եվ թափանցել չի կարելի նրանց մեջ, և արտաքին
Գործողություն ոչ մի նրանց արդեն փոխել չի կարող,
Ինչպես ես այդ ցույց եմ տվել քեզ վերևում քիչ առաջ։
Եվ, իսկապես, չէր հասկացվի այն, թե ինչպե՞ս կարող է
Մի որևէ մարմին առանց դատարկության փշրվել,
Տարրալուծվել կամ բաժանվել, ասենք, երկու մասերի
Մատչելի չեն տաքությանը, խոնավությանն ու ցրտին,
Որոնք իրերն են քայքայում սովորաբար, կործանում։
Որքան իրերն ավելի են դատարկություն պարփակում,
Այնքան ամեն ավելի շատ կործանվելու պատճառներ
Եթե չունեն դատարկություն մարմնիկները նախնական
Այդ պատճառով պետք է լինեն հավերժական անպայման։
Թե չլիներ հավերժական մատերիան, այն ժամանակ
Տիեզերքը բազում անգամ ոչնչացած կլիներ,

Բազում անգամ առաջ կգար ամենայն ինչ ոչնչից
Ապացուցել եմ սակայն քեզ որ ոչնչից չի կարող
Ծնվել ոչինչ, ինչ ծնվել է, ոչնչանալ չի կարող,
Այդ պատճառով հավերժական պետք է լինեն տարրերը,
Որովհետև տարրալուծման վերջը նրանք են միայն,
Եվ նորանոր արարչության սկիզբները նախնական
Նշանակում է՝ իրերի տարրերը պարզ ու պինդ են,
Իսկ այլապես պահպանվելով անթիվ դարեր շարունակ,
Չէին կարող վերստեղծել նրանք իրեր աշխարհում
Հետո եթե բնությունը ոչ մի սահման չդներ
Իրերի այդ մանրացմանը, փշրվելով անցյալում,
Մատերիայի մարմինները կհյուծվեին, անկասկած,
Այն աստիճան, որ իրերը, որոնք առաջ են գալիս
Միայն նրանց միակցումից, երբեք չէին հասնելու
Հասունության իրենց, չէ՞ որ իրերն, ինչպես տեսնում ենք,
Ավելի շուտ քայքայվում են, քան ստեղծվում աշխարհում,
Ահա ինչու կորուստները, որ անցյալն է պատճառել,
Չէին կարող վերականգնվել հետագայում երբևէ։
Բայց քանի որ բնության մեջ, ինչպես հաստատ գիտենք մենք
Նորոգությունն իրերի միշտ համաչափ է կորուստին,
Ամեն տեսակ արարածներ ժամանակին են ծնվում,
Հասունանում ժամանակին, եզրակացնել պետք է, որ
Մատերիայի բաժանմանը որոշ սահման է դրված,
Որն անպայման պետք է լինի անհրաժեշտ ու անփոփոխ։
Քանզի բոլոր մարմինները դատարկություն ունեն միշտ,
Թեև կարծր են տարրերը նրանց, սակայն, որոնցից
Ոչ մեկը չի կարող արդեն փափկանալ և ընդունել
Բնությունը ջրի , օդի, հողի, վառվող կրակի։
Ընդհակառակն՝ թե տարրերն այդ բոլոր փափուկ լինեին
Չէր կարելի բացատրել, թե առաջ եկել են ինչպես
Կարծր երկաթն ու քարերը, այն ժամանակ բնության
Հարաշարժ այդ աշխատանքի համար սպաշար չէր լինի
Հետևապես մատերիայի տարրերը պարզ ու պինդ են
Որ կարծր են մարմինները, որ դիմացկուն են նրանք,
Միությունից է տարրերի ավելի կամ պակաս սերտ։
Բնությունը մարմինների տևողության ու աճին
Մի սահման է դրել, ուստի, և նա է կարգ հաստատել՝
Ի՞նչ կարող են նրանք անել։ Տեսակները չեն փոխվում։
Սերունդները, չփոխվելով, միշտ հաջորդում են իրար։

Իսկ վանազան թռչունները ունենում են շարունակ
Փետուրների նույն բծերը՝ հատուկ իրենց տեսակին,
Որոնցով և տարբերվում են. պետք է տարրերն էլ լինեն
Տեսակների պես անփոփոխ, եթե մի ուժ արտաքին
Կարողանար հաղթահարել այդ ամենը, ամեն ինչ
Մեզ համար պարզ չէր լինելու, չէինք կարող ըմբռնել՝
Թե ինչ կարող է գոյություն ունենալ, ինչ՝ չի կարող,
Ամեն ինչին ինչպիսի մի ուժ է տրված վերջնական
Եվ, վերջապես, թե ինչպիսի նրան սահման է դրված.
Եվ ինչու է սերունդներում բազմազան ու անընդմեջ
Անվերջ դարեր միշտ կրկնվում նույն բնույթը շարունակ,
Զգացմունքները, ապրելու նույն բարքերը և ձևը նույն։
Պետք է ասել, որ լինելով մի կետ, տարրը նախնական
Խուսափում է զգացմունքներից, պետք է մասեր չունենա
Որ բնության նվազագույն մարմինն է և երբեք
Գոյություն չի ունեցել նա, գոյություն չի ունենա
Առանձնապես, որովհետև մի մասնիկն է այլ մարմնի,
Առաջինը և վերջինը։ Միացած նույն բնությամբ
Այլ մասերի հետ՝ կազմում է նա տարրերի մի զանգված
Սակայն եթե այդ տարրերը գոյություն չեն ունենում
Առանձնապես, այդ պատճառով միությունը նրանց սերտ
Պիտի լինի և այնքան, որ էլ ոչ մի ուժ չի կարող
Առանձնացնել ու բաժանել։ Մատերիայի տարրերը,
Ուստի կարծր, պարզ են այնքան, բաղկացած չեն մասերից,
Որոնք սակայն նուրբ են, քանզի միությունն այդ կազմված
Ո, թե իրար նմաններից, այլ պարզության պատճառով
Եվ գոյությամբ հավերժական։ Բնությունը այդպիսով
Ցանկանալով նրանց դարձնել մարմինների հիմքերը,
Այնուհետև թույլ չի տալիս, որպեսզի մեկն անջատվի
Կարողանա մարմիններից բաժանվել ու հեռանալ։
Այնուհետև եթե միայն բնության մեջ չընդունենք
Բաժանման մի վերջին սահման, նվազագույն իրերը
Բաղկանալու են նույնպիսի մասնիկներից անհամար
Որովհետև ամեն մի կես պիտի իր կեսն ունենա,
Այդպես մինչև անվերջություն տարբերություն արդյոք կա՞
Մասնիկների միջև նման՝ մեծապանծված ու փոքրիկ
Որոնք չէին տարբերվելու բոլորովին իրարից
Եվ եթե դու համեմատես նվազագույն մի մարմին
Տիեզերքի հետ կտեսնես, որ նա բնավ չի զիջում

Տիեզերքի՛ն, ինքն էլ կազմված մասնիկներից անհամար
Դատողությունն առողջ, սակայն, բարձրանում է դրա դեմ,
Ուստի պետք է ճանաչես, որ մարմնիկներն այն, որոնք
Վերջին սահմանն են բաժանման, և քանի որ դրանք կան,
Պետք է նաև ճանաչել, որ նրանք կարծր, հավերժ են։
Բնությունը արարածներ քայքայելով, վերջապես,
Եթե նրանց չբաժաներ մասնիկների փոքրագույն,
Բեկորներից նա չէր կարող նոր մարմիններ ստեղծել
Որովհետև կկազմվեին մասերից, որ էլ չունեն՝
Կապ, ծանրություն, նաև շարժում, հանդիպում ու հարված, որ
Մատերիան պետք է ունենա, որից առաջ է գալիս
Ամեն ինչ և առանց որի ոչինչ ստեղծել չի կարող։
Բայց ենթադրենք, որ կարող են իրերն անվերջ բաժանվել
Դարձյալ դու չես կարող ժխտել, որ չեն եղել մարմիններ,
Որ ենթարկված չլինեն դեռ հարվածների երբևէ.
Եթե փխրուն են բնությամբ, կարո՞ղ էին դիմանալ
Մի հարձակման, որ տևում է անթիվ դարեր անդադար։
Իսկ նրանք, որ կարծում են թե հուրն է եղել այդ միակ
Նախասկիզբը տիեզերքի, սխալվում են չարաչար[17],
Հերակլիտն է եղել նրանց առաջնորդը առաջին,
Իր մութ լեզվի համար միայն արժանացած հունաց մեջ
Հարգանքի, որ ունայնամիտ մարդիկ էին մատուցում,
Բայց ոչ նրանք, որ իմաստուն և սովոր են մտածել
Քանզի ամեն տխմարություն հիանում է այն մտքով
Որ թաքնված է որևէ խորհրդավոր խոսքի տակ
Ճշմարտություն է համարում այն, որ քաղցր է հնչում,
Կամ այն, որ մի փայլուն զույնով զարդարված է արտաքուստ։
Սակայն ես մի հարց եմ տալիս՝ կրակն ինչպե՞ս կարող է
Այն հատկությամբ, որ մենք գիտենք, արդեն վաղուց նա ունի
Այդքան տարբեր իրեր ստեղծել։ Ի՞նչ օգուտ, որ կարող է
Նա խտանալ ու նոսրանալ, եթե բոլոր մասերը
Ունեն միևնույն բնությունը, ինչպես ամբողջ մարմինը։
Ջերմությունը կավելանա, եթե իրար մոտեցնես
Տարրերը, և կպակասի, թե իրարից հեռացնես։
Ել առավել էլ ոչ մի բան ձեռք բերել չի կարելի,
Չխոսելով այն մասին, որ այդքան տարբեր մարմիններ
Ստացվել չեն կարող նրա խտացմամբ կամ նոսրացմամբ։
Դարձյալ եթե դատարկություն ճանաչեին այդ մարդիկ,
Կընդունեինք, որ կարող է խտանալ կամ նոսրանալ

Բայց քանի որ անտարակույս «Մուսաներին» նրանց այդ
Սկզբունքը հակասում է, այդ թույլ տալ չեն հանդգնում
Եվ քանի որ դատարկություն չեն ցանկանում ճանաչել,
Ուստի նրանք հեռանում են ճանապարհից ճշմարիտ
Պատճառով այն դժվարության, որ այնտեղ են հանդիպում։
Չեն տեսնում, որ բնությունից դատարկությունն արտաքսած՝
Պետք է բոլոր մարմիններից կազմվի միայն մի մարմին,
Որի մասերն ուժգին կերպով խտացված են, անջատվել
Էլ չեն կարող՝ տաքության ու լույսի պես, որ կրակից
Անջատվելով ցույց են տալիս իրենց բոլոր մասերում.
Մարմինները խտացված չեն, ինչպես կարծում են նրանք։
Մի կողմից էլ համառաբար պնդելով, թե կրակի
Մասնիկները, երբ մարում են, բնությունն են փոխում ողջ,
Այլ միանում են իրար հետ, նշանակում է՝ այդ, որ
Ոչնչացնում են կրակի տարրերը, այդ պատճառով
Ոչնչությունից են իրենց առաջ գալիս, քանի որ
Եթե մի բան իր բնության սահմաններից դուրս գալով,
Փոխվում է, այդ պատճառով էլ դադարում է լինել այն,
Ինչ եղել է ինքը առաջ։ Ուստի կրակի տարրերը
Պետք է իրենց բնությունը պահպանեն, այլ կերպ բոլոր
Մարմինները ոչնչացված կլինեին, աշխարհը
Առաջ կգար, հետևապես, և կկազմվեր ոչնչից։
Բայց քանի որ բնության մեջ կան մարմնիկներ այնպիսի,
Որ անփոփոխ են բնությամբ, քանակությամբ էլ նրանք
Ավելացված, պակասեցված, համակցությամբ զանազան՝
Այդպես բոլոր մարմինների էությունը փոխում են,
Ուստի պետք է եզրակացնենք՝ մարմնիկներն այդ կրակ չեն։
Ի՞նչ փույթ, եթե ավելացնես, պակասեցնես կամ փոխես
Նրանց կարգը, եթե նրանք պահպանելու են դարձյալ
Իրենց այրող բնությունը այնուհետ, ոչ մի դեպքում,
Բոցի կրակից, մի ուրիշ բան առաջ բերել չեն կարող։
Բանն այն է, կարծում եմ ես, որ տարրեր կան այնպիսի,
Որ հանդիպմամբ, շարժումներով, կազմով, կարգով, դրությամբ
Կարող են հուր առաջ բերել, համակցությունն էլ փոխած՝
Պետք է փոխեն բնությունը, ինչպես ես եմ ըմբռնում։
Այդ տարրերը չեն ստեղծվում բնությունից կրակի,
Ոչ էլ մարմնի մի այնպիսի, որի բխումն է դիպչում,
Ու թնացնում մեր զգացմունքները ու գրգռում է նրանց
Սակայն ասել, որ կրակ են բոլոր իրերն ու այլ իր

Իրերի մեջ չկա էնավ, բացի հենց նույն կրակից,
Ինչպես դարձյալ պնդում է նա, խենթություն է կատարյալ.
Նշանակում է այդ միայն՝ զգացմունքի դեմ պայքարել
Օգնությամբ հենց նույն զգացմունքի, և այդպիսով սասանել
Ճշմարտության հիմունքները, որոնց օգնությամբ է նա
Ճանաչում այդ կրակը, որ ի չարն է միշտ գործադրում,
Հավատում է վկայությանը զգացմունքի, երբ խոսքը իր
Հուրերին է վերաբերում, բայց չի ուզում հավատալ
Նկատմամբ այլ մարմինների, որ զգացվում են ոչ պակաս
Սակայն դա ինձ հակասական, խելացնոր է թվում։
Ինչո՞վ պիտի ղեկավարվենք և ավելի լավ ինչո՞վ
Ճշմարտությունից կարող ենք սակայն սուտը տարբերել
Ինչո՞ւ պիտի մենք ճանաչենք գոյությունը կրակի
Այլ իրերի հաշվին արդյոք, և ինչո՞ւ մենք չենք կարող
Ընդհակառակն՝ նրա հաշվին այլ իրերը ճանաչել
Եվ այդ երկու կարծիքներն էլ անհեթեթ են, անկասկած
Ուստի, նրանք, որ կարծում են, թե սկիզբը իրերի
Հուրն է եղել, ինչպես նաև նրանք, որոնք կարծում են
Թե օդից են առաջ եկել բոլոր իրերն աշխարհում,
Եվ որոնք ջուրն են համարում առաջ աղբյուրն իրերի,
Եվ նրանք, որ ուսուցում են, թե միայն հողն է կարող
Ձևերը այդ մարմինների և բնությունն ընդունել,
Ճշմարտությունից շեղվում են, իմ կարծիքով, չարաչար[13]
Ավելացնենք նրանց որոնք կրկնապատկում են այսպես
Տարրերն իրար միացնելով՝ օդ ու կրակ, հող ու ջուր.
Եվ, վերջապես, նրանց, որոնք այդ տարրերը վերցնում էն
Համոզված, թե հողը, ջուրը, օդն ու կրակը, միացած
Անշուշտ, կարող են ստեղծել ամենայն ինչ աշխարհում
Գլխավորում էր այդ մարդկանց Էմպեդոկլը, մարդը այն
Ակրագանտցի, որ ծնվել է այն եռանկյուն կղզում[19] որ
Ողողվում է Հոնիական ծովի լազուր ջրերով,
Շրջապատված չորս կողմից, Իտալիայից բաժանված
Արագահոս մի նեղուցով այնտեղ, որտեղ անդադար
Քարիբդեն[20] է ոռնում հուժկու և մինչև իր անդունդի
Խորքերն է տանում ու նշան տալիս դրանով
Մի նոր ահեղ պատերազմի, սպառնալով հուր որձկալ
Եվ բոցերի մի նոր հեղեղ դեպի երկինք շպրտել
Խառնարանի վրա կեցած այդ երկիրը բերքառատ
Արժանի է ուշադրության, զմայլանքին ճամփորդի

Այդ երկիրը շատ հարուստ է բարիքներով ամենայն
Եվ պաշտպանված քաջակորով հերոսների պատվարով
Եվ այդ երկրում դեռ չի ծնվել արժանավոր նման մարդ
Եվ առավել զարմանալի, առավել մեծ այդ մարդուց
Աստվածային իր հանճարով նա տաղեր է հորինել
Որ աշխարհը թնդացնում են գյուտերով վեհ ու վսեմ,
Այնքան պայծառ ու հոյակապ, որ մտածում ես նույնիսկ,
Թե այդ մարդուն մահկանացու անվանել չի կարելի։
Հոյակապ իմաստունն այդ, ինչպես նաև նրանք, որ
Պակաս հայտնի են նրանից, պատգամներ է թողել մեզ
Ավելի սուրբ և հարգարժան, քան Պիթիան[21], որ նստած
Ապոլոնի եռաժանու մոտ և դափնով պսակված՝
Զարմացնում էր ողջ աշխարհը իր գյուտերի մեծությամբ
Մատերիայի նախասկզբի բացատրությամբ նրանք էլ
Մոլորվել են և անկումն այդ մեծերի մեծ է եղել։
Որովհետև ընդունելով շարժումները, նրանք էլ
Դատարկությունը ժխտում են, մարմիններ են ճանաչում,
Որոնք փափուկ ու նոսր են, ինչպես օդն ու արևը
Կենդանի և՛ կրակ, և՛ հող ամեն տեսակ բույսեր, բայց
Հյուսվածքներին նրանց բնավ դատարկություն չեն խառնում
Հետո նրանք չեն ճանաչում մատերիայի բաժանման,
Ինչպես նաև մարմինների հար մանրացման մի սահման
Չեն ընդունում բնության մեջ նվազագույն մասնիկներ։
Սակայն մի՞թե մարմինների նվազագույն մասերը
Մեզ չեն թվում, որ բաժանման վերջին սահմանն են արդեն,
Եվ շատ փոքր այդ իրերի մասնիկները փոքրագույն,
Որոնց մենք չենք կարող տեսնել, ինչո՞ւ արդյոք չե՞նք կարող
Մենք համարել վերջին սահման բաժանման մեջ բնության։
Ավելացրու այն, որ նրանք իրերի այդ տարրերը
Համարում են փափուկ, ինչպես մարմինները այն, որոնք
Ծնվում են ու մեռնում, ուստի տիեզերքը շարունակ
Ոչնչանա պիտի ծնվի և առաջ գա ոչնչից։
Սակայն արդեն համոզվել ես իմ ասածից, թե որքան
Ճշմարտությունից հեռու են կարծիքները այդպիսի։
Բայց և այնպես այդ իրերը միշտ էլ ներհակ են իրար,
Նրանք իրար քայքայում են, երբ լինում են միասին
Այդպես իրար հարվածելով, տարրալուծվում, ցրվում են
Կայծակներն ու քամիները, ամպերը և անձրևը
Որոնք լինում են կատաղի փոթորիկի ժամանակ։

Եվ, վերջապես, թե ամեն ինչ առաջ գալիս է միայն
Չորս տարրերից այդ, հետո, երբ մարմինները այդ դարձյալ
Քայքայվում են, նորից դառնում չորս տարրերը այդ միևնույն,
Ի՞նչ պատճառով պիտի կոչենք մարմինների սկիզբներ
Այդ տարրերը և ինչո՞ւ մենք նմանապես չենք կարող
Այդպես կոչել այլ մարմիններ։ Մի՞թե հերթով չեն ծնվում,
Իրենց ձևը, բնությունը, էությունը չեն փոխում։
Ընդհակառակն՝ իսկ եթե դու կարծում ես, որ կրակը,
Հողը, ջուրը, օդը, իրար միանալով, չեն փոխում
Բնավ իրենց բնությունը, ինչպե՞ս կարող է սակայն
Առաջանալ մի արարած, շնչավոր է արդյոք նա,
Թե մի բույս է, ծառի նման։ Եվ ամեն մի բանի մեջ
Դու կունենաս միայն օդի, ջրի, կրակի և հողի
Մի խառնուրդ, այն իրերի, որ բնավ խառնվել չեն կարող,
Եվ որոնցից ամեն մեկը կծավալի առանձին
Հատկությունները իր, անկասկած. անհրաժեշտ է, ուստի, որ
Գաղտնի գործեն մարմնիկները, այնպես, որ մենք չտեսնենք
Թե բնությամբ, որով նրանք գերակշռում են այնտեղ,
Չխանգարեն մարմիններին, որ ծնվել են նրանցից,
Եվ ունենան մի բնույթ, որ նրանց չորսին է հատուկ
Բարձրանում են նրանք նույնիսկ մինչև երկինք ու աստղեր
Որոնելով այդ իրերի տարրերը, և կարծում են՝
Կրակն է տարրը նախնական, որ փոխվելով օդ է դառնում
Օդից էլ ջուրն է ստացվում թանձրանալով՝ ջուրը այդ
Դառնում է հող և հողից են ծնվում կարգով հետադարձ
Նույն տարրերը առաջ՝ ջուրը, հետո՝ օդն ու կրակը
Սակայն, այդպես փոփոխվելով, տարրերը չեն դադարում
Բարձունքներից իջնել երկիր, երկրից երկինք բարձրանալ։
Համատեղելի չեն, սակայն, փոփոխումներն այդպիսի
Այդ տարրերի բնության հետ պետք է լինեն անփոփոխ
Նրանք, թե չենք ցանկանում, որ տիեզերքը գլորվի
Ոչնչության մեջ, ինչպես այդ արդեն ասել եմ առաջ,
Եթե մի բան, իր բնության սահմաններից դուրս գալով,
Փոխվում է, այդ պատճառով էլ դադարում է լինել այն,
Ինչ որ ինքն է առաջ եղել։ Քանի որ չորս տարրերն այդ,
Ինչպես արդեն ասել ենք մենք, ենթարկվում են փոփոխման,
Ուստի իրենք պետք է կազմված լինեն ուրիշ տարրերից,
Որ չեն փոխվում, իսկ այլապես տիեզերքը կփլվի։
Լավ չէ՞ արդյոք ընդունել, որ կան մարմիններ այնպիսի

Դրանք բացի հուր կազմելուց, ի վիճակի են նաև,
Դրությունները այլ կերպ փոխած, հարակցությամբ իրենց նոր
Ստեղծել ինչպես օդի հոսանք, այնպես էլ այլ էություն։
Դու կարող ես ասել, սակայն, որ ամեն մի արարած
Օդից ծնվում, սնուցվում է միայն նրա հյութերով,
Եթե տարվա եղանակը օդին էլ չի հաղորդում
Բարենպաստ մի ջերմություն, երբ ծառերի կատարը
Մեղմիվ կերպով չի տատանվում անձրևներից թարմ ու զով,
Եվ երբ պայծառ իր շողերով արեգակը իր հերթին
Չի տաքացնում, հացաբույսեր, կենդանիներ ու ծառեր
Ոչ կարող են աճել արդեն, ոչ էլ, անշուշտ, զարգանալ։
Համաձայն եմ. եթե նույնպես մի որևէ լավ սնունդ,
Այն էլ թաքնված առողջարար հեղուկի մեջ որևէ,
Չպահպանի մեր մարմինը, մեր ուժերը կհյուծվեն,
Կհանգչեն մեր զգացմունքները անդամներում մեր բոլոր։
Ուստի մարդուն հարկավոր է, ինչպես ամեն մի ուրիշ
Արարածի, այնպիսի մի սնունդ, որը կարող է
Նրան պահել եթե բոլոր արարածներն այն, որոնց
Պարունակում է աշխարհը, մեկը մյուսի հաշվին են
Ապրում ուստի ամեն մեկը իր մեջ ունի սկիզբներ,
Որ ընդհանուր են շատերին։ Կարևոր է, անկասկած,
Ի նկատի ունենալ միշտ բնությունն այդ տարրերի,
Շարժումները, խառնուրդները, դրությունները փոխադարձ։
Սկիզբները, որոնցից են կառուցված և՛ երկինքը,
Եվ ծովերը, և՛ ցամաքը, արեգակն ու գետերը,
Նույն բաներն են, որոնք ուրիշ սկիզբների հետ խառնված,
Հարմարեցված տարբեր կերպով, տարբեր բույսեր, կենդանի,
Հացահատիկ են կազմում։ Դու մի՞թե հենց այս տողերում,
Որ կարդում ես, չես նկատում, թե շատ տառեր կան, որոնք
Ընդհանուր են շատ խոսքերի։ Բայց տողերն ու խոսքերը
Տարբերվում են միշտ իրարից հնչյուններով, մտքերով
Արտահայտմամբ, որ կազմում են և մեզ լսել են տալիս։
Եվ այդպիսի տարբերություն առաջացնում է նաև
Իրերի մեջ բոլորովին տարբեր կարգը տարրերի։
Մատերիայի սկիզբները, որոնք ունեն բազմազան
Հանգամանքներ, որոնք պետք է տարբերություն անսահման
Տան բերեն նույնպես իրենց հետևանքի մեջ, անշուշտ։
Իսկ հիմա Անաքսագորի [22] հոմեոմերիան քննենք,
Ինչպես հույներն են անվանում։ Մեր խոսքերով այդ ասել

*Թույլ չի տալիս մեր բարբառի աղքատությունն իհարկե,*
*Մենք կարող ենք բացատրել և այդ սիստեմը բնության,*
*Սկզբունքն այն, որ անվանում է նա* հոմեոմերիա
*Ոսկորները, ասում է նա, առաջանում են որոշ*
*Քանակությամբ ոսկրիկներից. աղիքներն էլ ճիշտ այդպես՝*
*Մանր, փոքրիկ աղիքներից. կաթիլները մեր արյան,*
*Միանալով, պետք է նույնպես առաջ բերեն նոր արյուն*
*Ոսկին կազմվում է մի քանի մասնիկներից նույն ոսկու*
*Կրակի, ջրի մասնիկներից ծնվում են ջուր ու կրակ*
*Վերջապես, մի խոսքով ասած, մարմինները այդ բոլոր*
*Համաքույթ են՝ կազմված իրենց միանման մասերից։*
*Սակայն նա էլ դատարկության գոյությունը ժխտում է*
*Եվ իրերի բաժանմանը չի դնում ոչ մի սահման*
*Կասկած չկա, որ նա էլ է գործում սխալ կրկնակի,*
*Ինչպես նրանք, որոնց մասին մենք խոսեցինք քիչ առաջ։*
*Ավելացրու այն, որ տարրերն այդ փխրուն են չափազանց,*
*Եթե միայն մեզ կարելի է անվանել տարրեր այն*
*Մարմինները՝ նույն բնությամբ, ինչպես և այդ իրերը,*
*Որոնց ուժը թույլ է նույնքան, իսկ հյուսվածքը՝ ենթարկված*
*Քայքայման։ Բայց ենթադրենք, որ պետք է տեղի ունենա*
*Սարսափելի մի հարձակում։ Մարմիններից արդյոք այդ*
*Ո՞ր մեկը ցույց տալ կարող է դիմադրություն հարվածին*
*Եվ ո՞ր մեկն է դիմանալու մահի գրոհին ահարկու*
*Կրա՞կը, օ՞դը, ջո՞ւրն, արյո՞ւնը, ոսկո՞րները։ Ո՛չ մեկը*
*Անտարակույս, որովհետև մարմինները այդ բոլոր*
*Մահանալու են նրանց պես, որ աչքերի առաջ մեր*
*Անհետանում են ամեն օր։ Եվ ինձ մնում է միայն*
*Մի անգամ էլ հիշեցնել քեզ դատողությունն այն, որով*
*Ապացուցել եմ, որ ոչինչ չի ծնվելու ոչնչից,*
*Ինչ ծնվել է, ոչնչանալ արդեն երբեք չի կարող։*
*Եվ, բացի այդ, որովհետև մարմինները աճում են*
*Սննդից ու սնուցվում են ամեն տեսակ սննդով,*
*Բայց տեսնում ենք, որ մեր բոլոր ջլերը և արյունը*
*Մեր ոսկորներն ու նյարդերը մասեր են հույժ զանազան*
*Կարո՞ղ ես դու կարծել արդյոք, որ ընդունված սնունդը*
*Էություններն են այն խառնված, պարունակում են որոնք*
*Եվ ոսկորներ և երակներ, նյարդեր, արյան կաթիլներ*
*Պետք է ասել նաև, որ այն, ինչ ուտում ենք և խմում,*
*Պետք է կազմված լինի տարբեր և այլասեռ մասերից։*

Եթե բոլոր մարմինները, որ ծնվում են մայր հողից,
Պարփակված են լինում արդեն նրա ծոցում մայրական,
Բայց փոքրիկ են, այն ժամանակ հողը պետք է որ լինի
Բաղկացած այն մասերից, որ տեսնում են աշխարհում
Բոլոր տարբեր մարմինները։ Այլ իրերի մասին էլ
Դու կարող ես ասել նույնը. եթե բոցը և ծուխը,
Մոխիրն արդեն պարփակված են փայտերի մեջ, փայտերի
Տարրերն արդեն, պետք է լինեն, անտարակույս, այլասեռ։
Խուսափելու համար պետք է մնա միայն մի միջոց,
Անաքսագորն այդ միջոցը օգտագործում է այսպես.
Մարմինները պարունակում են իրենց մեջ բազմազան
Մարմինների տարրեր տարրեր, բայց աչքերին մեր միայն
Երևում են նրանք, որոնք մեծ թվով են տարածված
Մարմինների մեջ, լինում են մակերեսին իրերի,
Տեղադրված մեր հայացքին, անկասկած, այդ պատճառով։
Սակայն առողջ դատողությամբ հերքվում է այդ կարծիքը.
Ցորենահատիկն այն ժամանակ պիտի թողներ, անկասկած,
Ջրաղացի քարի վրա արյան հետքեր, մեր մարմնի
Այն մասերը, որոնց հետ են հատիկները միանում.
Պետք է արյունն առաջ բերեն իրար զարկված երկու քար,
Կանաչ խոտից պիտի դուրս գար ոչխարների քաղցր կաթ,
Եվ դուրթանով հողաշերտեր իրար վրա շուռ տալով
Այնտեղ պիտի գտնեինք մենք փոքրիկ հատիկ, խոտ ու ծառ
Իսկ փայտերը կոտրատելիս՝ և՛ ծուխ, և՛ բոց, և՛ մոխիր
Սակայն փորձը ցույց է տալիս, որ չեն եղել ու չկան
Նման բաներ, այդ պատճառով ստիպված ենք ճանաչել,
Որ տարրերը առանց այդպես մարմնին խառնված լինելու
Ընդհանուր են բոլորին և համարեցված են նրանք
Մարմինների մեջ այլակերպ եղանակով զանազան։
Բայց կարող ես ասել՝ բարձր գագաթներին լեռների,
Ու ծառերի վրա քամին հարձակվում է կատաղի,
Կատարները թափահարվում ուժգին զարկվում են իրար,
Շփումից բոցեր են երևում լեզուներով բարձրացած։
Համաձայն եմ, ապացույց չէ, սակայն դա, որ փայտի մեջ
Կրակներ կան անշուշտ, վառվող մասերից այդ բազմաթիվ
Հավաքված ու շփված իրար թափով քամու կատաղի՝
Անտառներ են բոցավառվում։ Եթե փայտը ունենար
Իր մեջ այդքան կրակ երբեք նրան զսպել չէր կարող

Գեթ մի վայրկյան և ամեն օր պետք է ծառիր վառեր նա,
Մոխիր պիտի դարձներ ամբողջ անտառներ ու պուրակներ։
Վերջապես դու պետք է տեսնես, ինչպես ասել իմ առաջ,
Որ կարևոր է տարրերի դրությունը և խառնուրդը,
Եվ փոխադարձ շարժումները, որովհետև մի թեթև
Փոփոխությամբ պետք է կրակ կազմեն փայտի տարրերից,
Ինչպես գրեթե նույն տառերից կազմված ligna և ignes
Բառերը, որ բաղկացած են հնչյուններից զանազան։
Վերջապես, երբ տեսքերի երևույթներն այնուհետ
Բացատրել չեն կարող այլ կերպ, վերագրում են տարրերին
Բնությունն այն էակի, որ նրանցից է բաղկացած
Նշանակում է՝ նրան էլ սկզբունքներ ենք դարձնում
Մատերիայի և այդպիսով երևի այդ տարրերը
Կարող են մեզ պես ծիծաղել ու թափել դառն արտասուք
Ճշմարտությունն իմացիր այն, որ մնում է բացատրել
Ես գիտեմ, թե որքան խավար է այդ ամենն, անկասկած
Հույսը, փառքի ցանկությամբ տիրս[23] են խրել սրտիս մեջ,
Մուսաների հանդեպ կուրծքս քաղցր սիրով համակած։
Ոգեշնչված եմ նրանով, մտածելով, գնում եմ
Մուսաների անճանապարհ հարթ դաշտերով այն, որոնց
Դեռ ոչ մի ոտք չի տրորել։ Եվ բերկրալի է ըմպել
Շրթունքներով թարմ ակունքից, և ճակատս զարդարել
Անհայտ ու թարմ ծաղիկների մի պսակով, որով դեռ
Մուսաները ինձնից առաջ չեն պսակել ոչ ոքի։
Առաջինը՝ մեծ ուսմունք եմ ուսուցանում, ջանալով
Ճնշող նախապաշարմունքից մարդու ոգին ազատել
Եվ երկրորդը՝ պարզ երգով եմ շարադրում մութ առարկան
Ամենուրեք քաղցրացնելով մուսաների հմայքով։
Ինչպես տեսնում ես, խելացի միտք ունի դա, անկասկած։
Բժիշկների նման, որոնք դառնություն են ուզում տալ
Դեռ շատ փոքրիկ մանուկներին, նախապես այն գավաթի
Պռունկներն են ծածկում մեղրով մանուկները միամիտ
Հրապուրվում են շրթունքների այդ քաղցրությամբ խաբուսիկ,
Խորամանկ այդ հնարանքը չեն կասկածում, խմելով
Սև խմիչքը, որը նրանց անդամներին դեռ քնքուշ
Պետք է նորից վերադարձնի առողջություն և կորով։
Քանի որ իմ ուսմունքը, որ շարադրում եմ քեզ այստեղ,
Մարդկանց համար, որոնք երբեք չեն մտածել այդ մասին,
Չափազանց լուրջ է, մերժվում է մարդկանց կողմից դեռ անգետ

Ուստի փոխ եմ առնում լեռան մուսաների քաղցրաձայն
Եվ կարծես թե իմ տաղերին մեղրի համ եմ տալիս ես.
Հույս ունեմ, որ կհմայվես իմ տաղերով ներդաշնակ
Եվ այս գործում դու կգտնես բնության նոր գիտություն։

Արդ ասել եմ՝ մատերիայի մարմինիկները հիմնական
Միշտ շարժվում են անդադար՝ քայքայումից պաշտպանված
Այժմ քննենք՝ ամբողջությա՞մբ սահմանափակ են թվով,
Թե՞ անվերջ են նրանք արդյոք. դատարկությունն այն, որի
Գոյությունը հաստատել ենք, տարածությունն, այն վայրը
Մարմինների գործողության, ասպարեզը այդ հավերժ
Ունի՞ արդյոք որևէ վերջ, թե՞ խորությունը նրա
Ինչպես նաև տարածության, չունի և ոչ մի սահման։

Տիեզերքը ոչ մի կողմից, անշուշտ, չունի ոչ մի վերջ,
Որովհետև այլապես նա պիտի ծայրեր ունենար.
Բայց չի կարող, ակներև է, մի բան ծայրեր ունենալ,
Եթե միայն նրանից դուրս չկա այլ բան, որ նրա
Վերջը ցույց տար այնպես, որ մեր աչքը տեսներ պարզորեն
Թե մինչև ուր է տարածվում այդ մարմինը առանձին։
Քանի որ մենք ստիպված ենք ճանաչել, որ իսկապես,
Աշխարհից դուրս ոչինչ չկա, ծայր տալ նրան չենք կարող,
Ոչ էլ նրան հետևապես, նշել ինչ-որ մի սահման
Ի՞նչ փույթ, թե դու տիեզերքի որ մասում ես կանգնելու,
Որովհետև բոլոր կողմից տարածություն է անվերջ։

Սակայն եթե տարածությունն ասենք, ունի մի սահման,
Եթե մի մարդ տեղավորված ծայրին՝ ամբողջ իր ուժով
Արձակի սլացիկ նետ, կարծո՞ւմ ես դու արդյոք, որ
Ճեղքելով օդն այդ նետը իր ուղղությամբ է գնալու
Թե՞ ուզում ես, որ արտաքին որևէ մի խոչընդոտ
Պիտի փակի նրա ճամփան և կանգնեցնի թռիչքը։
Անհրաժեշտ է, որ դու ընտրես մեկնումեկը երկուսից
Բայց ոչ մեկը ելք չի տալիս, ստիպված ես վերացնել
Տիեզերքի սահմանները, որ հանդգնել ես նշել։
Որովհետև խանգարո՞ւմ է արդյոք նետին արձակված
Արտաքին մի խոչընդոտ իր նպատակին հասնելու,
Թե՞ նա պիտի շարունակի ավելի դեն սլանալ
Ակներև է, որ աշխարհի ծայրը բնավ չես գտնել։
Եվ այսպես քեզ կհետևեմ, ուր որ նշես մի սահման,
Այդ հարցը քեզ տալով, թե ի՞նչ կպատահի այդ նետին։



1 Լուկրեցիոս

Պարզ է՝ երբեք դու չես գտնի սահմանները աշխարհի,
Հավերժապես անվերջության մեջ է նյութը թռչելու։
Հետո՝ եթե բնությունը չորս կողմից պաշարեր
Տիեզերքը սահմաններով, մատերիան իր ծանրությամբ
Պետք է այնտեղ միշտ հավաքվեր, որ ներքև է ամենից.
Եվ երկնքի կամարի տակ ոչ մի բան չէր ծնվելու,
Կապույտ երկինքն ու արևի լույսը չէինք տեսնելու։
Այդքան դարեր անցկացնելով՝ ուժասպառված մատերիան
Ուժից զրկված սկիզբների մի հավաքույթ կլիներ։
Ընդհակառակն՝ այդ տարրական սկիզբները չգիտեն
Հանգստություն, ներքև չկա, որտեղ նրանք հավաքվել
Կարող էին, հետո լինել անգործության մեջ անշարժ։
Ահա այդպես հար անընդհատ շարժումներ են ստեղծում
Արարածներ ամեն վայրկյան տարածության կենտրոնում,
Տարածությունն էլ իր հերթին այն աղբյուրն է, որ հավերժ
Մատերիայի գործուն պաշար է հայթայթում անընդհատ։
Արդ տեսնում ենք, որ իրար են սահման դնում իրերին,
Օդի սահմանն է մեծ լեռը, լեռան սահմանն է օդը
Հողն ափեր է տալիս ծովին, որն իր հերթին ցամաքն է
Շրջապատել, անծայրածիր տիեզերքից ոչ մի բան
Դուրս չի գալիս, նրան սահման չի ծառայում ոչ մի բան։
Եվ այնպես է բնությունը տարածության ու տեղի,
Ինչպես անվերջ մի գետ, որը հավերժապես հոսելով,
Գտնվում է իր ընթացքի դեռ սկզբում, անկասկած։
Տիեզերքը սահման չունի, ազատորեն փռվել է
Տարածության մեջ անսահման, անվերջ ամեն ուղղությամբ։
Տիեզերքի էությունը թույլ չի տալիս սահմաններ
Բնությունը մատերիային որոշել է մի սահման՝
Դատարկությունն է դա, որը մատերիան է սահմանում,
Այդպիսով է ահա դարձնում նա իր գործը անսահման
Եթե նույնիսկ մեկը մյուսի համար սահման չլիներ,
Դարձյալ մեկը կամ թե մյուսը կտարածվեր ինքն իրեն։
Սակայն եթե լիներ միայն դատարկությունն անսահման,
Այն ժամանակ ծովն ու հողը, ապարանքը երկնային,
Լուսապայծառ աստվածների մարմինները սրբազան,
Ինչպես նաև մարդկանց ցեղը, արարածներն այդ բոլոր
Գոյությունը իրենց չէին պահպանի գեթ մի վայրկյան։
Եվ ոչ մի բան մատերիային չէր զսպի, նա կցրվեր
Անվերջության մեջ, կարող ենք ասել նույնիսկ, որ երբեք

Միակցված չէր լինի, ուստի հավաքույթը տարրերի
Չէ՞ որ բերել չէր կարողանա մի անհրաժեշտ խտություն,
Այնպիսի, որ կարողանար վերստեղծել մարմիններ։
Չի կարելի ասել, անշուշտ, որ տարրերը իրենց
Բանական են և իրենք են դասավորվել այդպիսի
Կարգով, ինչպես նկատում ենք, կամ թե ասել, որ նրանք
Համաձայնել են իրար հետ շարժումների մասին այն,
Կամ հաղորդվում են իրար հետ. բայց մեծ թվով ու տարբեր
Համակցությամբ, որ այնուհետ կատարվել է մշտատև
Տարածության մեջ, արտաքին հարվածներից փորձելով
Ամեն տեսակ շարժում, ինչպես հավաքույթներ առանձին,
Դասավորվել են այն կարգով, որից առաջ է եկել
Մեր աշխարհը, և այդ կարգի հետևանքով իրերը
Հավատարիմ են մնացել անթիվ տարիներ շարունակ։
Երբ տեսնում ենք, որ գետերը միշտ թափվում են ընդարձակ
Ծովերի մեջ, և ցերեկվա լուսատուն իր ջերմությամբ
Բույսերի կյանքն է նորոգում մեր աշխարհում շարունակ,
Առողջարար ծաղիկներ է տալիս բոլոր կենդանի
Էակներին, հագեցնում է եթերային ջահերին
Հավերժական մի սննդով, որ ստացվել չէր կարող,
Եթե անվերջ ու անհամար այդ տարրերը անընդհատ
Չաշխատեին միշտ արտադրել պաշարներ կենդանի։
Եվ ինչպես այն էակները, որ զրկված են սննդից,
Սպառվում ու մեռնում են, տիեզերքն էլ ճիշտ այդպես
Կկործանվեր, թե մատերիան իր բնական ընթացքից
Շեղվեր մի քիչ և նորոգման համար նյութ տալ դադարեր
Թող մեզ չասեն, որ արտաքին տարրերն իրենց ճնշումով
Պետք է պահեն մատերիայի կուտակումն ու խանգարեն
Ցրվել նրանց, որ կարող են հարվածներից կրկնվող
Դադարեցնել անջատումը, տարրերին տալ ժամանակ
Որպեսզի գան ու լրացնեն զանգվածը, բայց ստիպված
Են թռչել, երբ հարվածել են, թողնելով, որ մարմիններ
Տանի մի նոր տարածություն և ժամանակ, և այնքան,
Որ բաժանվեն իրարից։ Եվ անհրաժեշտ է, որ բոլոր
Տարրերն իրար հաջորդեն միշտ առանց ընդհատ շարժումի։
Եվ բացի այդ, արդեն ինքը այդ ճնշումը արտաքին
Ենթադրում է, որ մատերիան անվերջ է և անսահման։
Չկարծես դու, ինչպես ոմանք, որ մարմիններն այդ բոլոր
Ձգտում են միշտ դեպի կենտրոնն աշխարհի և աշխարհը

Կարիք չունի պաշտպանվելու հարվածներից արտաքին
Հարկավոր չէ վախենալ, որ վերևից ու ներքևից
Խույս են տալու, որովհետև պետք է ձգտեն բոլորը
Դեպի կենտրոն մի ընդհանուր։ Հասկանալի չէ, սակայն,
Մի բան հենվում է ինքն իրեն մեր ոտքերի տակ, նույնպես
Ծանրակշիռ մարմինները դեպի վերև են ձգտում
Եվ այնպիսի մի ուղղությամբ, որ հակառակն է, իրոք,
Մեր ուղղության ու միշտ այնպես արտացոլվում են ինչպես
Ջրի մեջ մեր պատկերները։ Սակայն, այդպես կարծելով,
Ասում են, թե ամեն տեսակ կենդանիներ են վխտում
Մեր ոտքերի տակ ոտնիվեր, սակայն ընկնել չեն կարող
Երկրից ներքին շրջանները, ինչպես որ մենք բարձրանալ
Դեպի երկինք չենք կարող, և ժողովուրդներն իբրև այն
Արեգակը տեսնում են այն ժամանակ, երբ գիշերվա
Լուսատուներն են մեզ փայլում, իսկ երբ ամառ է մեզ մոտ,
Այնտեղ ձմեռ է սառնաշունչ, երբ մութ գիշեր է մեզ մոտ
Այնտեղ ցերեկ է, երկնքում արեգակն է շողշողում։
    Նման կույր մոլորումներ կապացուցեն միայն այն
Տխմարները, որ հակված են ճշմարտությունն աղճատել,
Չգիտեն, որ կենտրոն չկա տարածության մեջ անհուն։
Եթե նույնիսկ այդպես լիներ, մարմինները անկասկած
Պետք է այնտեղ կանգ առնեին այնքան, որքան որևէ
Մի այլ մասում տարածության, դատարկությունն, իսկապես,
Իր բնությամբ պետք է ծանր մարմիններին տեղի տա
Ուր որ ձգտեն միևնույն է դա, դեպի կենտրոն է թե ոչ։
Տիեզերքում ամենևին չկա, սակայն, մի կետ, ուր
Մարմինները արդեն հասած՝ էլ չունենան ծանրություն։
Դատարկությունն էլ իր հերթին շարունակ անցք բաց կանի
Տվյալ մարմնի անկման առջև, որովհետև այդպես է
Պահանջում իր բնությունը։ Բավական չէ, այդպիսով,
Մի կարծեցյալ սեր նկատմամբ այդ կենտրոնի, իսկապես,
Որպեսզի դա տիեզերքի ցրիվ գալուն խանգարի։
    Եվ, վերջապես, նույնպես նրանք ասում են, որ ոչ բոլոր
Մարմիններն են ձգտում դեպի տիեզերքի կենտրոնը.
Եվ բաղկացած հողից, ջրից մարմիններն են այդ անում,
Ինչպես արձակ ծովի ջուրը, դանդաղահոս գետերը
Որ բխում են մեծ լեռներից, արարածներ այնպիսի,
Որ երկրային բնույթ ունեն ընդհակառակն՝ ասում են՝
Նուրբ օդը և թեթև բոցը խույս են տալիս կենտրոնից։

*Իսկ եթե մենք տեսնում ենք, որ երկնակամարն է ամբողջ*
*Շողշողում իր կրակներով և արևի կենսատըներ*
*Լույսը սնունդ է ստանում եթերային լազուրում,*
*Այդ միայն այն պատճառով է կատարվում, որ կրակի*
*Տարրերն այնտեղ միանում են, միշտ խույս տալով կենտրոնից։*
*Այնպես, ինչպես եթե միայն լինեին սնուցող*
*Արմատները, որ հողից են բարձրանում, ոչ մի սնունդ*
*Չէր լինելու, և ծառերը կզրկվեին սաղարթից*
*Տեղավորում են երկինքը աստղերի տակ նույն մարդիկ.*
*Մի անթափանց ծածկույթ է այն, առանց որի երկնքի*
*Հրերն իբրև, միշտ կենտրոնից խույս տալով, դուրս կգային*
*Տիեզերքի սահմաններից անկարգությամբ նույնպիսի*
*Պետք է տիրեր բնության մեջ, երկինքն իր շանթերով*
*Կփլվեր մեր գլխի վրա և երկիրը կբացվեր*
*Մեր ոտքի տակ տարրալուծված անմիջապես, ամեն ինչ*
*Կընկներ անտակ անդունդի մեջ աշխարհի ու երկնքի*
*Բեկորների հետ միասին և շուտով այդ անսահման*
*Տիեզերքից մի կույտ անլոր տարրեր էին մնալու*
*Մի անսահման ամայություն, որովհետև որտեղ էլ*
*Տարրալուծումն այդ սկսվի, նա դարձյալ դուռ կլինի*
*Ավերմանքի առջև միշտ բաց, որով ամբողջ մատերիան*
*Իր տարրերի հետ միասին դուրս կգար ու կփախչեր*

*Թե հասկացել ես առաջին ճշմարտությունն արդեն դու,*
*Որ ստացել է քեզ մուսա, մութ չի մնա ոչ մի բան*
*Գաղտնիք չկա, սկզբունքները լուսավորում են իրար*
*Եվ ծառայում որպես ջահեր ու իմաստ ամեն ինչ։*

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Հաճելի է, երբ փոթորիկ է մոլեգնում լայն ծովում,
Ափից տեսնել մարդուն, որին մեծ վտանգ է սպառնում
Ո՛չ թե այլոց դժբախտությունն է պատճառում հաճույք, այլ
Հաճելի է տեսնել չարիք, որին դու չես ենթարկվում։
Հաճելի է մարտադաշտում տեսնել շարքեր զորքերի
Այն ժամանակ, երբ որևէ վտանգ քեզ չի սպառնում։
Բայց առավել բերկրալի բան չկա ամբողջ աշխարհում
Քան հայացքով անհույզ դիտել այն տաճարը հոյակապ,
Որ կառուցվել է մեզ անհայտ իմաստունի ուսմունքով
Տեսնել՝ ինչպես մարդիկ անդուլ երջանկություն են փնտրում,
Վիճաբանելով առաջնություն տաղանդով կամ մի պատիվ,
Որ ծնունդն է ազնիվ նրանց, օր ու գիշեր աշխատում՝
Կուտակելու հարստություն, իշխանության հասնելու։

Ո՜ դո՛ւք, մարդկանց խղճուկ մտքեր, զգացմունքներ ու այդքան կո՛ւյր,
Եվ ինչպիսի՜ վտանգներում է անցնում կյանքը կարճատև
Եվ ինչպիսի՜ խավարի մեջ։ Եվ մի՞թե դուք չեք լսում
Աղաղակը բնության, որ միայն մի բան է տենչում՝
Որ մարմինը ամենևին ցավ չունենա, իսկ հոգին
Բոլորովին ազատ լինի սարսափից ու հոգսերից

Այսպիսով մենք տեսնում ենք, որ բնությանը մեր մարմնի
Շատ չնչին բան է հարկավոր ազատվելու ցավերից
Եվ, որքան այն կարելի է շատ հաճույքներ ստանալ
Եվ մեր բնությունը ավելին չի պահանջում։

Այդպես եթե լուսավորված չէ խնջույքդ գիշերվա
Ոսկե ջահերով, որ պահում են արձանները հոյակապ,
Եթե ոսկով ու արծաթով քո պալատը չի փայլում
Եվ նախշազարդ առաստաղի տակ չեն թնդում կիթառներ,
Սակայն կարող ես դու պառկել կանաչ փափուկ խոտի մեջ,
Առվին փոքրիկ մի վտակի կամ մեծ ծառի ստվերում,
Այդքան համեստ միջոցներով դարձյալ հաճույք վայելել,
Մանավանդ երբ եղանակը ժպտում է քեզ և տարվա
Ժամանակը ծաղիկներ է սփռում շուրջդ բազմաթիվ։
Ավելի շուտ չես ազատվի ջերմությունից տենդային,
Երբ պառկած ես գորգի վրա կամ ծիրանի անկողնում,
Քան երբ պառկած լինես կոպիտ պլեբեյական[2] սփռոցին։
Որովհետև հարստություն, ծնունդ, նույնիսկ թագ ու գահ
Մարմնին ոչ մի երջանկություն ի վիճակի չեն տալու,
Ինչպես նաև չեն տալիս մեր հոգուն վիճակ երջանիկ.
Երբ տեսնում ես քո բազմամարդ լեգեոններն անկուն,
Որ, մի դաշտում ծավալվելով, ահեղ մարտ են պատկերում,
Ունես հուժկու հեծելազոր, ինչպես նաև զորավիգ,
Եվ հավասար զենքով զինված, ոգեշնչված միակերպ,
Կամ տեսնելով քո նավերը ծովում ընկած դեսուդեն,
Ասա՛ մի՞թե սարսափած այդ տեսարանից փախչում են
Նախապաշարմունքները մեր, արդյոք մահվան սարսափը
Կթողնի՞, որ սիրտդ անհույզ խաղաղություն վայելի։
Ծիծաղելի է, իսկապես, և ծաղրանքի արժանի.
Մեր հոգսերը չեն դադարում շառաչումից զենքերի,
Հետապնդում են անդադար նրանք մարդկանց շարունակ,
Հպարտորեն արքաների այցելության են գնում
Եվ փառավոր կերպով բազմում տերերի մոտ աշխարհի,
Եվ չեն հարգում ո՛չ ծիրանին, ոչ գահը և ոչ ոսկին։
Կարելի՞ է կասկածել, որ սարսափները այդ ունայն
Պտուղներն են տգիտության, խավարի մեջ այն, որտեղ
Խարասուզված մենք բոլորս անց ենք կացնում կյանքը մեր։
Ինչպես մթում մանուկներն են ամեն ինչից վախենում,
Այդպես էլ մենք ցերեկով ենք սարսափում այն բաներից,
Որոնցից մեզ հարկավոր է վախենալ ո՛չ ավելի,
Քան նրանցից, որոնց իզուր մանուկներն են վախենում։
Ուստի վանել այդ երկյուղը և խավարը մեր հոգուց
Կարող են ոչ թե ցերեկվա լույսն ու շողերն արևի,
Այլ բնությունն ինքն իր ներքին կառուցվածքով ու տեսքով։

Այժմ պիտի իմանաս, թե մատերիայի հիմնական
Այդ տարրերը շարժումներով ինչ մարմիններ են կազմում,
Որոնց հետո քայքայում են նրանք ուժով ինչպիսի,
Եվ ինչպիսի արագությամբ նրանք ճախրում են անվերջ
Տարածության մեջ։ Իսկ այժմ ուշիմ մտքով հետևիր.
Ոչ մատերիան չի կազմում մի անշարժ զանգված, մի՞ թե մենք
Չենք տեսնում, որ ամեն մարմին փոքրանում է և հյուծվում
Ժամանակի ընթացքում իր բխումներից անդադար,
Քանի դեռ նա չի պառավել ու չքացել մեր աչքից
Բայց ընդհանուր այդ զանգվածը[3] կորուստներից չի տուժում.
Տարրերը, որ հեռանում են նրա մասից որևէ
Հարստացնեն պիտի նրա որևէ մի մասն ուրիշ.
Եթե նրանք ծերություն են տանում մի կողմում
Գնում են, որ թարմություն տան այլուր ծաղկի հասակին.
Տիեզերքը նորոգվում է ամեն մի պահ անդադար.
Մարդիկ իրար հաջորդարար կյանք են տալիս աշխարհում
Այս ազգն աճել է սկսում, բայց հյուծվում է ազգը այն
Եվ անընդմեջ սերունդները փոխվում են շարունակ,
Եվ անցնում են, ինչպես վազքում, կյանքի ջահը ձեռքից ձեռք։
Սակայն եթե դու կարծում ես, որ տարրերը իրենց
Տեղի կարող են անշարժ մնալ, անշարժությամբ դարձյալ նոր
Այդպես շարժում առաջ բերել, սխալվում ես չարաչար[4].
Որովհետև այդ նախնական սկիզբները շարժվում են
Դատարկության մեջ, անպայման պետք է գնան ուղղությամբ
Կամ ծանրության իրենց, կամ մի այլ պատճառով արտաքին
Տարածության մեջ ճախրելով, նրանք պիտի հանդիպեն
Այլ տարրերի, որոնք նրանց ճանապարհից շեղում են
Եվ զարմանալ չի կարելի, քանի որ խիստ կարծր են,
Հոծ ու ծանր, և ոչ մի բան նա ցատկել չի խանգարում.
Որպեսզի դու լավ ըմբռնես շարժումները ընդհանուր
Այդ հիմնական մարմինների, մտաբերիր, որ չկա
Տիեզերքում ներքև, որտեղ մարմինները, հասնելով,
Կարող էին կանգ առնել և, որովհետև անվերջ է
Տարածությունն, այդ պատճառով նրան բոլոր կողմերից
Անվերջություն է սահմանում։ Ճշմարտությունն այդ արդեն
Ապացուցել եմ ես առաջ հիմունքներով խելացի։
Եվ սահմանված է այնպես, որ մարմինները հիմնական
Ամենևին հանգիստ չունեն տարածության մեջ անվերջ
Ընդհակառակն՝ բշված իրենց շարժումներով անդադար

Եվ բնությամբ տարված իրենց ուղղությամբ միշտ վանապան,
Եվ իրար հետ ընդհարվելով ոմանք հեռու են գնում,
Ոմանք էլ կարճ տարածությամբ բաժանվում են իրարից,
Եվ իրար հետ միանում են հարվածների տակ նրանք
Իսկ երբ նրանց միությունը սերտ է լինում ավելի,
Ու չեն մղվում այնքան ուժգին իրարից և հյուսվածքը
Իրարին է կապված լինում, նրանք կազմում են հիմքը
Կայուն, ամուր ժայռերի և երկաթի, նույն բնությամբ
Եվ քանի այլ մարմինների ընդհակառակն՝ երբ նրանց
Հարվածներ են ետ շպրտում և, ցրելով, ստիպում
Տարածության մեջ սավառնել մեծ արանքներ կազմելով,
Նրանցից է առաջ գալիս օդի նոսր հոսանքը
Եվ այն պայծառ լույսերը, որ արեգակից են բխում։
Կան բազմաթիվ այլ սկիզբներ, որ լողում են անդադար
Դատարկության մեջ, բացառված հավաքույթից ամենայն
Եվ մնում են մի որևէ զանգվածի մեջ, բայց նրանք
Համակցել չեն կարողանում շարժումներին ընդհանուր
Այդ պատկերը մենք տեսնում ենք մեր աչքերով ամեն օր,
Երբ արևի պայծառ շողը թափանցում է բացվածքով
Մինչ մութ սենյակի մեջ նայի՛ր, և դու կտեսնես,
Որ անհամար մարմնիկներ կան ճառագայթված լույսի մեջ,
Որ վխտում են տարբեր ձևով, նրանք կարծես թե իրար
Ավերժական մի պատերազմ հայտարարած լինելով,
Հարձակվում են իրար վրա և անդադար մարտնչում,
Մե՛րթ բաժանվում են իրարից, մե՛րթ մոտենում են իրար։
Կարող ես այդ օրինակից հասկանալ, թե ինչպես են
Այդ տարրերը անդուլ շարժվում դատարկության մեջ անվերջ
Այնքան փոքրիկ երևույթներ կարող են մեզ ծառայել
Որպես հաստատ մի ուղեցույց և կարող ենք այդպիսով
Ճշմարտությունն այն գտնել, որ որոնում ենք մենք այստեղ։
Եվ այդ փոքրիկ մարմնիկները, որ արևի շողերում
Արագ շարժվում են անդադար, ավելի են արժանի
Ուշադրության այն պատճառով, որ շարժումներն այդ նրանց
Ապացուցում են տարրերի հարվածները միշտ անտես
Տեսնելու ես դու հաճախ, որ նրանք շեղվում են ուղուց
Աներևույթ այն զարկերից, որոնց դու չես նկատում,
Ետ են մղվում թավալվելով դեպի աջ ու դեպի ձախ,
Միշտ ուղղությամբ բազմատարբեր։ Եվ սկիզբներն այդպես են
Միշտ ամենուր առաջացնում անկարգություն ու շփոթ։

Նախ իրերի այդ տարրերն են արագ շարժվել սկսում,
Ապա նրանց շարժումները հաղորդվում են ամենից
Ավելի նուրբ մարմնիկներին, այսպես ասած, ուժերով
Ավելի մոտ այդ նախնական տարրերին, և նրանք էլ
Հարձակվում են նրանց վրա, որոնք կոպիտ են մի քիչ։
Իսկ այդ անվերջ շարժումները, որ ծնվել են տարրերից,
Հաղորդվում են իրար այնքան, քանի նրանք չեն դարձել
Զգալի մեր զգացմունքներին մարմնիկները փոքրագույն,
Որ շարժվում են շողերի մեջ պատճառներով զանազան
Խուսափում են մեր մարդկային հայացքներից շարունակ։
Եվ իմացի՛ր, Մեմիո՛ս, թե այդ մարմինը հիմնական
Տարածության մեջ ինչպիսի արագությամբ է շարժվում։
Երբ արշալույսն է ողողում աշխարհը իր փայլերով,
Եվ անտառի թռչունները, թռչկոտելով ոստից ոստ,
Օդը լցնում են ներդաշնակ իրենց քաղցր երգերով,
Նայի՛ր, թե ինչ արագությամբ հանկարծ ծագող արևը
Ողջ աշխարհը ողողում է պայծառ լույսի հեղեղով.
Դժուրին կերպով կարող ենք մենք ամեն անգամ այդ տեսնել։
Սակայն փայլուն մարմնիկները, որ բխում են արևից,
Սին ու դատարկ տարածությամբ ճամփա երբեք չեն անցնում.
Դանդաղանում է ընթացքը չէ որ ճեղքում են նրանք
Օդի հոսանք, ու բոլորը ո՛չ մենակ են և ո՛չ պարզ,
Այլ զանգվածներ ու փնջեր են պատճառները հապաղման
Նրանք գտնում են իրենց մեջ, ինչպես և դուրս իրենցից.
Իսկ տարրերը մատերիայի, պարզ ու կարծր լինելով,
Դատարկության մեջ շարժվում են, խոչընդոտներ արտաքին
Չունեն, մենակ են, կազմվածքով միանման բոլորը,
Միացնելով իրենց բոլոր մասերի ողջ ջանքերը,
Սլանում են դեպի միակ նպատակն, ուր ուղղված են,
Եվ միակ այս պատճառով էլ պիտի լինեն շատ փորձուն,
Տարածություն պիտի անցնեն, անկասկած, մեծ ավելի
Ընթացքում նույն ժամանակի, ինչպես, ինչպես արևի
Պայծառ շողերն են երկնքով դեպի աշխարհ սլանում։
Որովհետև դու չես ասի, անշուշտ, որ այդ տարրերը
Կանգ են առնում իրենց կամքով կամ թե նրանք իրար հետ
Կնքել են մի ինչ-որ պայման կամ ծրագիր են կազմել,
Որպեսզի այդ շարժումները կանոնավոր կատարեն։
Նրանք, որոնք մատերիայի հատկությունը չգիտեն,
Միամտաբար կարծում են, որ բնությունը չի կարող

Եթե չօգնեն աստվածները, համարելով մարդկային
Կարիքներին, եղանակը փոխել, գարի, ցորեն տալ
Եվ ստեղծել մնացածը, որով ամբողջ կյանքի տեր՝
Աստվածային սիրո կիրքը հրապուրում է շնչավոր
Ամենայն մի արարածի, որ նա ծնվի նոր սերունդ
Սիրո քաղցր հաճույքներից Վեներայի այդպիսի
Հրապույրներով շարունակվում է մարդկային ցեղը ողջ։
Իսկ նրանք այդ երևույթը վերագրում են արարիչ
Աստվածներին։ Տիեզերքը սակայն հերքում է նրանց
Ճառքը։ Եվ եթե նույնիսկ չիմանայի տարրերի
Էությունը, տեսարանը երկնքի ու աշխարհի,
Երևույթներն այդ բոլոր ինձ կապացուցեին դարձյալ,
Որ այդպիսի արատներով տիեզերքը չի կարող
Աստվածության գործ համարվել։ Հետագայում կպարզեմ
Քեզ, Մեմմիոս, այդ ամենը։ Շարունակում եմ սակայն
Այդ հիմնական մարմնիկների շարժումները քննարկել։
Կարծում եմ, որ ապացուցել այժմ տեղին կլինի,
Որ մարմիններ չկան, որոնք իրենց ուժով սեփական
Բարձրանային դեպի վերև։ Թող չխաբի բոցը քեզ,
Այն, որ ծնվում և աճում է բարձրանալով շարունակ,
Ինչպես ծառերն ու բույսերը, որ անդադար աճելով՝
Պետք է հողից միշտ հեռանան, թեև պետք է մոտ լինեն
Շնորհիվ իրենց ծանրության և հնարավոր է որքան։
Ճիշտ այդպես էլ երբ կրակը մինչև տանիքն է հասնում,
Գերաններն է արագորեն բոցով լիզել սկսում
Կարծես, որ այդ անում է նա իր ուժով սեփական.
Ներգործողությանն է ենթարկվում նա ուժերի արտաքինի
Այդպես է երբ երակներից արյունը դուրս է ցայտում
Այնպես կարմիր մի շատրվան։ Եվ մի՞թե դու չես տեսել,
Ի՞նչպիսի ուժով ջուրը գերաններ է վիթխարի
Դուրս շպրտում, և որքան մենք ավելի ենք աշխատում
Դրանց դարձյալ ջրում սուզել, այնտեղ պահել թեկուզ քիչ.
Ջուրը այնքան ավելի է շտապում դուրս շպրտել
[illegible]ի ապացուցված, որ օտար է, որ իր երկար մեծ մասով
[illegible]մբռանում է ջրի միջից։ Բայց կարո՞ղ ես կասկածել
Իջնում են մարմինները դատարկության մեջ ներքև
[illegible]ան նրանց ուժն է ներում։ Ճիշտ այդպես են բարձրանում
[illegible]ի՞ն ուժից այդ արտաքին մինչև իրենց ծանրության
[illegible] է իջնեն որքան կախված է այդ բանը լինելու։

Չե՞ս տեսել դու՝ մութ երկնքի ջահերն ինչպես են երկար
Հետքեր թողնում լուսավոր, երբ թռչում, ընում են այնտեղ,
Որտեղ նրանց բնությունը միայն մի անցք է տալիս,
Կամ ինչպես են գետին ընկնում պայծառափայլ աստղերը։
Եվ այդպես է արեգակը բարձունքներից երկնային
Ջերմությունն իր սփռում պայծառ և դաշտերը ողողում
Ուստի նրա կրակները դեպի ներքև են ձգտում։
Վերջապես, դու տեսել ես, որ կայծակը միշտ սրընթաց
Իրեն ուղի է բաց անում ամպի միջից երկնքում,
Ամեն կողմից նետվում է նա հաճախ գետին ընկնելով։
Կարծում եմ, որ հարկավոր է քեզ իմանալ նաև այն,
Թե նախնական այդ տարրերը, դեպի ներքև ճախրելով,
Միշտ ուղղաձիգ, իրենց քաշով դատարկության մեջ անծայր
Մեզ համար մի անհայտ վայրում սկսում էին շեղվել քիչ,
Այնպես որ այդ հազիվ շեղում կարելի է անվանել։
Թե անձրևի կաթիլների պես ընկնեին զուգընթաց,
Չշեղվեին դատարկության մեջ ճամփեքից շարունակ,
Այն ժամանակ չէր ստացվի ո՛չ հանդիպում ո՛չ հարված,
Եվ չէր կարող բնությունը երբեք ծնել ոչ մի բան։
Եթե ոմանք կարծում են, թե մարմիններ որ ծանր են,
Ուղիղ ներքև սլանալով արագությամբ ավելի
Պետք է ընկնեն թեթևների վրա, իրենց հպումով
Առաջ բերեն հանդիպումներ ու հարվածներ, ինչպես միշտ,
Որից ծնունդ են առնելու շարժումները ողջ կյանքի։
Ճշմարտությունից մոլորված, շատ հեռու են թափառում։
Արագացնում են իրերը, ճիշտ է, իրենց անկումը
Օդում, ջրում, սակայն իրենց ծանրության համաչափ,
Մի պատճառով՝ էությունը ջրերի կամ օդի նուրբ
Միանման խոչընդոտներ հանդիսանալ չի կարող,
Բայց ավելի շուտ զիջում է ավելի մեծ ծանրության։
Դատարկությունն այդպես չէ և նա ոչ մի տեղ և երբեք
Մարմիններին չի դիմադրում և տարբերն այդ պատճառով,
Ընդունած որ հավասար չեն ամենևին ծանրությամբ,
Գործողության վայրում իրենց, դատարկություն է որտեղ,
Պետք է, անշուշտ, միշտ հավասար արագություն ունենան[6]։
Այդպիսով այն մարմինները, որոնք ծանր են ավելի
Ո՛չ կարող են թեթևների վրա ընկնել, ո՛չ հրել,
Եվ փոխել չեն կարողանա շարժումները նրանց այն,
Որով դարձյալ բնությունը արարածներ է ծնում։

Մարմինները ուղիղ գծից պետք է շեղվեն անպայման,
Բայց կրկնում եմ, չմոռանաս, որ շեղումը այդ, սակայն,
Շատ աննշան պիտի լինի, չմեղադրես դու ինձ, որ,
Ճշմարտությանը հակառակ, թույլ եմ տալիս շեղակի
Շարժումներ ես։ Որովհետև մենք կարող ենք համոզվել
Եվ որքան մենք տեսնում ենք այդ շնորհիվ իրենց ծանրության՝
Մարմինները թեք չեն գնում իրենց անկման ժամանակ,
Բայց որ գծից՝ խիստ ուղղաձիգ ամենևին չեն շեղվում,
Ո՞վ կարող է համարձակվել այդպիսի բան ասելու։
Եթե միայն շարժումները, շղթա կազմած անընդհատ,
Եվ անպայման մի կարգով են առաջ գալիս իրարից,
Միայն ջրի այդ տարրերը շեղումներով չեն կարող
Առաջ բերել նոր համակցում, որը դեմ է օրենքին
Բնական, մի խախտում է շարժում տվող պատճառի
Հաջորդության մշտական, ինչպե՞ս առաջ է եկել
Էակների միջև անկաշկանդ ազատությունն այն, որով
Նրանք անկախ վճիռներ են իրենց համար ընդունում
Եվ կարող են գնալ այնտեղ, որտեղ հաճույքն է կանչում։
Այնուհետև, զգացմունքները առաջանում են, անշուշտ,
Եվ ոչ որոշ ժամանակին, որոշ վայրում որևէ.
Այլ մեր կամքն է այն սկիզբը, այն աղբյուրը, որտեղից
Նրանք արդեն տարածվում են ամբողջապես մեր մարմնում.
Չե՞ս տեսել այն վայրկյանում, երբ դարպասները բացվելիս
Ձիերը չեն կարողանում այնքան արագ սլանալ,
Որքան եռուն ցանկությունն է նրանց զրդում անել այդ.
Նախ՝ պետք է որ մատերիայի բոլոր տարրերն, անկասկած,
Որ ցրված են անդամներում, հավաքվեն ու զրգռվեն,
Որից հետո կհետևենք ցանկությանը մեր հոգու,
Մի բան, որը ցույց է տալիս, որ սկիզբը շարժման
Հաղորդվում է սրտից կամքին, իսկ հետո էլ այնտեղից,
Մյուս մարմնի անդամներին, հետո մարմնին մեր ամբողջ։
Այդ նման չէ ամենևին նրան, երբ մենք ենթարկված
Ենք ուժի մի որևէ, պետք է գնանք ակամա
Որովհետև այն ժամանակ մարմնի ամբողջ մատերիան
[illegible] է շարժվի և մեզանից, ակներև է, միշտ անկախ,
Եվ դա այնքան ժամանակ, երբ կամքը զսպում է նրան։
Արդ տեսնում ես դու, որ թեև պատճառները արտաքին
Հաճախ մարդուն ստիպում են շարժվել, քարշ գալ ակամա,
Սակայն նրա սրտի խորքում այնպիսի մի ուժ կա, որ

Պայքարում է այդ ճնշման դեմ և ընդունակ է շեղել
Մատերիայի ընթացքը, և հայեցողությամբ միայն իր
Սանձահարում զգացմունքը և ստիպում դառնալ ետ։

Ուստի պետք է ճանաչենք, որ մատերիայի տարրերում,
Բացի քաշից ու հարվածից, կա մի այլ ուժ առանձին,
Ազատությունն առաջանում է դրանից, իսկ եթե
Այդ չընդունես, այն ժամանակ կլինի մի հետևանք,
Որը չունի ոչ մի պատճառ։ Ծանրությունն է խանգարում,
Իրոք, որ մեր շարժումները ամենևին չլինեն
Դրսի ուժի հետևանքը կամ մղումի արտաքին,
Որի գործում թելադրանքը հոգին պիտի կատարի
Անհրաժեշտությամբ ներքին և որ չլինի անգործուն
Մի էություն, հետևանքը լինի միայն այն բանի,
Որ սկիզբներն իրենց անկման ժամանակ միշտ շեղվում են։

Բայց մատերիան ամբողջովին ավելի հոծ չի եղել,
Ինչպես նաև նա չի եղել երբեք նոսր ավելի,
Քանակությամբ ավելանալ կամ պակասել չի կարող.
Եվ այդպիսով շարժումները, որոնցով նա օժտված է,
Մնում են այն, որ ունեցել է նախընթաց դարերում
Եվ որ պետք է նմանապես ապագայում միահյանի
Մարմիններն այն, որ ծնվել են սովորաբար անցյալում,
Հետևելով նույն օրենքին, պետք է ծնվեն այսուհետ,
Եվ նույնպիսի պայմաններում՝ ապրեն, աճեն, ամրանան,
Այնքան, որքան վիճակված է օրենքներով բնության,
Եվ կստանան հատկություններն այն, որ հատուկ են նրանց.
Ոչ մի ուժ չի կարող խախտել ամբողջությունն իրերի,
Քանի որ մի տեղ չկա, ուր փախստական տարրերը
Կարողանան հեռանալ և խուսափել այդ ամփոփվածից
Չկան տարրեր արտաքին, որ հանկարծակի հարձակվեն,
Կարողանան տիեզերքում խախտել կարգը բնության
Եվ շեղել այն շարժումները, որ կատարվում են այնտեղ։

Ինչու՞ պիտի զարմանանք, որ այն ժամանակ, երբ բոլոր
Նախնական այդ սկիզբները միշտ շարժվում են անդադար,
Սակայն վերցված ամբողջովին՝ տիեզերքը անշարժ է,
Անշուշտ, բացի իրերից, որ ունեն շարժում սեփական.
Որովհետև մատերիայի տարրերը խույս են տալիս
Զգացմունքներից մարդկային և եթե միայն մատերիան
Անզգա մի մեծ զանգված է, ավելի մեծ պատճառով
Անմատչելի պետք է լինի և շարժումը տարրերի,

Տարածությունն է քանի որ միշտ քողարկում մեզանից
Շարժումները այն իրերի, որ կոպիտ են ավելի։
Հաճախ կանաչ բլրալանջին արածում են ոչխարներ,
Դանդաղ քայլում դեպի այնտեղ, ուր թարմ խոտն է հրապուրում՝
Դեռ մարգարտյա ցողով փայլող, մինչդեռ ընքուշ գառները
Քաղցր կաթով կշտացել են ու ցատկոտում են իրենց
Մայրերի մոտ, գլուխներով անմեղ կռիվ սկսում։
Սակայն եթե հեռվից նայես, բոլորն իրար են խառնվում
Կանաչ լոտը երևում է, մինչդեռ այնտեղ մենք միայն
Նշմարում ենք հոտը որպես մի անշարժ ու ճերմակ բիծ։
Թող բազմամարդ մի մեծ բանակ ծածկի մի մեծ հարթավայր,
Թող դեսուդեն վազեն մարդիկ, ճակատամարտ ցույց տալով,
Թող հետևակ գնդերի հետ հեծելազոր արշավի,
Կամ թող անցնի վայրկենաբար տարածություն ընդարձակ,
Եվ կայծակներ թող բարձրանան դեպի երկինք զենքերից,
Եվ թող դաշտեր գունավորվեն արտացոլմամբ պղնձի[7],
Թող դղրդա հողը հուժկու հետևակի քայլերից
Եվ թող լեռներն այդ ռազմական աղաղակը տարածեն
Մինչև ծայրերն աշխարհի, բայց բարձր լեռան գագաթից
Անշարժ է այդ բազմությունը թվում, նրա փայլը ողջ,
Կարծես միայն հարթավայրի երեսին է պատկանում
Բայց ինչպիսի՞ հատկություններ ունեն տարրերն այդ արդյոք,
Որ տարբերվում են իրարից, բազմազան են ձևերով
Պետք է ասել, թե շատ չկան ձևեր, որոնք նմանվեն.
Արարածներն այն բոլոր, որ ստացվում են նրանցից,
Իրար նման բոլորովին լինել երբեք չեն կարող
Ինչո՞ւ պիտի մենք զարմանանք քանակությամբ միշտ անվերջ
Եվ անհուն են ինչպես առաջ ապացուցել եմ արդեն
Պետք է զգալ, որ չեն կարող ճիշտ նույն ձևերն ունենալ,
Ոչ էլ նույնիսկ շրջագծված լինել իրար խիստ նման։
Տեսնո՞ւմ ես, որ մարդկանց ցեղը, ձկները, որ ապրում են
Ջրերում, և գազանները վայրի, բոլոր ծառերը,
Ամեն տեսակ թռչունները, որ հավաքվում են զվարթ
Մեծ գետերի, աղբյուրների և լճերի ափերին,
Հետո նրանց, որ ճախրում են անտառներում ընդարձակ
Արդ եթե դու համեմատես տեսակներում առանձին
Անհատներին իրար հետ, դու կհամոզվես, որ նրանք
Միշտ տարբերվում են իրարից։ Եթե այդպես չլիներ,
Մայրերը և զավակները իրար չէին ճանաչի.

Սակայն նրանց բնազդները երբեք իրար չեն խառնվում
Եվ իրար վատ չեն ճանաչում ասենք, նույնիսկ մարդկանցից։
Աստվածների կոհարանի առջև հաճախ զարդարված
Հորթ է ընկնում մի հարվածից խնկի անուշ ծխի մեջ,
Արձակելով վերջին շնչի հետ արյունի տաք հեղեղ
Նրա մայրը, որ էլ մայր չէ, պտտվում է դաշտերում
Եվ դրոշմում հողի վրա խոր հետքերն իր ոտքերի
Ամենուրեք նա փնտրում է իր անհանգիստ հայացքով
Տեկեր քնքուշ իր հորթուկին, որին կորցրել է, ավա՜ղ
Կանգ է առնում մութ անտառում, որ թնդում է նրա թավ
Բառաչումից սրտաճմլիկ, վերադառնում տխրությամբ
Անշարժ կանգնում մսուրի մոտ վշտացած իր կորուստից
Արծաթ ցողով ողողված այդ խոտերը թարմ ու կանաչ,
Եվ լայն գետի ժպտուն ափը նրան երբեք չեն կարող
Մխիթարել, մոռացում տալ ողբերգական այդ վշտից,
Ցանկանում է գտնել նրան, որ շատ թանկ էր իր սրտին
Ուրիշ մատղաշ հորթերով որ ցատկոտում են մարգերում,
Ամենևին չի զբաղվում, փնտրում է իր զավակին
Որին սիրում, ճանաչում է։ Ուլը, որի ձայնը դեռ
Դողում է, և գառները որ ցատկոտում են կենսուրախ,
Նույնպես իրենց եղջերավոր մայրերին են ճանաչում.
Եվ, բնության ձայնին հլու, սովորաբար նրանցից
Ամեն մեկը դեպի իր մոր կուրծն է վազում անսխալ։
Մի հասկ վերցրու չնայած որ հատիկները նման են,
Բայց կտեսնես, որ նրանք էլ տարբերվում են իրարից
Տարբերություն գտնելու ենք խեցիներում նաև այն,
Որ զարդարում են ծովափը, որտեղ փափուկ ալիքով
Նահանջում է ծովը ափից, աղատելով ավազը։
Այդ պատճառով էլ իրերի սկիզբները, քանի որ
Հանդիսանում են բնության աշխատանքը, և նրանք
Պատրաստված չեն մարդկանց ձեռքով, չունեն տրոշ մի նմուշ,
Իրար բնավ չեն նմանվում տարածության մեջ գատարկ։
Այդ պատճառով ամենևին դժվար չէ քեզ բացատրել,
Թե ինչու է կայծակների հուրն ավելի թափանցիկ,
Քան կրակը, որ ջահերից ստացվում է աշխարհում։
Կարելի է ասել՝ բոցը կայծակների երկնային
Բաղկացած է ավելի նուրբ մասնիկներից մանրադուլն,
Այդ պատճառով էլ անցնում է նա այնպիսի անցքերով,
Որոնցով չի կարող անցնել կոպիտ բոցը ջահերի։

Եվ ինչո՞ւ է լապտերների լույսը անցնում եղջյուրով,
Բայց չեն անցնում անձրևները։ Այն պատճառով, որ լույսը
Բաղկացած է ավելի նուրբ սկզբներից, քան ջուրը։
Անցնում է մի ակնթարթում գինին, երբ այն քամում ենք,
Ընդհակառակը՝ ձեթն անցնում է դանդաղորեն ու կաթում
Ի՞նչ պատճառով որովհետև ձիթենու ծույլ հեղուկը
Բաղկացած է տարրերից, որ թանձրախիտ են ավելի,
Եվ ավելի խառնված իրար մասնիկներով, անկասկած,
Շուտ բաժանվել իրարից չեն կարողանում անցնում են
Նեղ անցքերով դանդաղորեն, երբ քամում ենք մենք նրան։
Հետո՝ եթե փորձում ես դու քաղցր մեղրը և կաթը,
Նրանց համը քո բերանում միշտ թվում է հաճելի
Սակայն նրան վիրավորում է օշինդրը դառնությամբ։
Արդ այստեղից դու անսպայման արդեն պիտի ճանաչես
Ու հաճելի զգացմունքները առաջանում են միայն
Փափուկ, կլոր տարրերից միշտ դառնությունը և այն որ
Մեզ կծու է թվում, արդեն ծնվում են այն տարրերից,
Որոնք ծուռ ու կեռ են սաստիկ, իրար ամուր միացած,
Մեր մարմնի մեջ թափանցելով, զգացմունք են գրգռում,
Եվ անցնելիս՝ իրենց ճամփին վիրավորում են նրան։
Վերջապես, այն ամենը, որ վատ կամ լավ է թվում մեզ,
Պետք է կախված լինի, անշուշտ, այդ տարրերի ձևերից։
Մի՞թե կարող ես հավատալ, որ սղոցի ճիչը սուր
Բաղկացած է նուրբ տարրերից, որոնք հարթ են ճիշտ այնպես,
Ինչպես հուզիչ այն ձայները, որ կորզում է խնջույքում
Վարժ մատներով երաժիշտը իր քնարի լարերից։
Չկարծես, որ միայն ձևով նմաններն են թափանցում
Մեր քթի մեջ, երբ այրում են դիակները գարշահոտ,
Եվ կիլիկյան նուրբ քրքում են շաղ տալիս մեր թատրոնում,
Կամ ծխում է զոհարանը պանքեական[8] բուրմունքով։
Եվ չկարծես, որ առաջ են գալիս նման սերմերից
Գույներ, որոնք փայփայում են մարդու հայացքն իրենցով,
Եվ նրանք, որ աչք են ծակում, ստիպում են արտասվել,
Կամ շուռ գալ են մեզ ստիպում իրենց տեսքից զզվելի։
Քանի որ այն, ինչ հաճելի է անշուշտ, մեր հույզերին,
Շոյում է մեր զգացմունքները, բաղկացած է տարրերից,
Որոնք միշտ հարթ ու կլոր են ընդհակառակը՝ ինչ նրանց
Տանելի չէ, բաղկացած է այն տարրերից, որ հարթ չեն,
Արդեն սակավ կատարյալ են, խորդուբորդ են և կոպիտ։

Սակայն տարրեր կան, որոնց դու հարթ անվանել չես կարող,
Բայց չես ասի նրանց մասին, որ ծուռումուռ են նրանք
Եվ ցցված են նրանց վրա բազում կետեր այնպիսի,
Որոնք սաստիկ խտղտում են զգացմունքը մարդկային,
Ահա այդպես են օսլայը և խոտերը բուրավետ։
Եվ, վերջապես, այրող հուրը ասեղները եղյամի
Միանման չեն խոցում մեր զգացմունքը մարմնավոր
Այդ զգում ենք այն ժամանակ, երբ շոշափում ենք նրանց
Շոշափումն է, այո՛, նա է, աստվածներով եմ երդվում,
Աղբյուրը մեր զգացմունքների, երբ որևէ մի խորթ իր
Թափանցում է մեր մարմնի մեջ, նրան մի բան է ներսից
Ցավ պատճառում կամ զվարճացնում Վեներայի խաղերում
Կամ սերմերը, ընդհարվելով մեր մարմնի մեջ, խառնվում են,
Խախտում կարգը սահմանված և զգացմունքները շփոթում
Այդ կարող ես փորձել ինքդ ամեն վայրկյան, թե ձեռքով
Որևէ մի մարմնի մասին թեթև կերպով հարվածես,
Որովհետև մարմնիկները տարբերվում են անպայման,
Ուստի պետք է առաջ բերեն զգացումներ բազմազան։
Վերջապես, այն ամենը ինչ մեզ թվում է կարծր, հոծ,
Կասկած չկա, մարմնիկներից պետք է լինեն ծուռումուռ,
Որ միացել են իրար հետ, ինչպես ոստերն են խառնվում։
Ադամանդին է պատկանում տեղն առաջին այդ կարգի
Իրերի մեջ, քանի որ նա չի վախենում հարվածից
Ահեղ, հետո՝ քարերին, որ շատ ամուր են, երկաթին,
Որ չի ճկվում, և պղնձին, որը կայուն է մնում
Եվ զնգում է շարունակ, երբ մեր դռներն ենք բացում մենք։
Սակայն բոլոր հեղուկները, որ հոսում են անդադար,
Պետք է կազմված լինեն, անշուշտ, տարրերից հարթ ու կլոր.
Այդ տեսակի գնդիկները իրար կապվել չեն կարող,
Դյուրին կերպով գլորվում են, եթե տեղը թեք է քիչ։
Եվ, վերջապես, այն ամենը, ինչ որ ցրվում է իսկույն,
Ինչպես ծուխը, մառախուղը և բոցերը, օրինակ,
Թեև դրանք բաղկացած չեն հարթ ու կլոր տարրերից,
Որովհետև զգացմունքները վիրավորում են նրանք,
Եվ քանի որ պինդ ժայռերի մեջ կարող են թափանցել,
Ուստի նրանց մարմնիկները ո՛չ խառնված են, ո՛չ էլ ծուռ,
Բաղկացած են, ինչպես արդեն դժվարին չէ իմանալ,
Մարմնիկներից միայն, որոնց ծայրը սուր է, բայց ոչ ծուռ։
Եթե տեսնես դու մարմիններ, որոնք դառն են ու հեղուկ,

Ինչպես ծովի աղի ջուրը չպիտի դու զարմանաս
Առաջացել է հեղուկը տարրերից հարթ ու կլոր,
Բայց կան նաև խորտուբորդներ, որ դառնություն են տալիս,
Միանալու համար՝ նրանք պետք է լինեն ծուռումուռ
Բավական է այն, որ նրանք խորդուբորդ են և կլոր,
Գլորվելով խոցոտում են զգայարանքը մարդկային։
Կուզեի՞ր դու իմանալ, որ կան և կոպիտ մարմիններ
Հարթերի հետ խառնուրդ կազմած աղի մարմնում նեպտունյա
Իրոք, նրանց կարելի է տեսնել նաև առանձին
Ծովի դառը ջուրը դարձյալ քաղցրանում է՝ թափանցած
Հողի ծոցը, ջրամբարում, չէ՞ որ դառը տարրերը,
Որ պակաս հարթ, բայց ավելի խորդուբորդ են միշտ լինում
Ջրանցքներում այն, որոնցով նրանք հոսել, անցել են։
Այդ պարզելուց հետո պիտի շարունակեմ ընթանալ.
Իրերի այդ տարրերն, ինչպես համոզվելու ես շուտով,
Բազմազան են լինում ձևով մինչև որոշ մի սահման.
Եթե այդպես չլիներ այդ, այն ժամանակ, անկասկած,
Որոշ սերմեր լուծենային հսկայական մեծություն։
Եվ, իսկապես, ընդունակ չեն այդքան փոքրիկ տարրերը
Ձևերի մեծ տարբերության։ Ենթադրիր դու, որ նրանց
Բաժանում ենք դարձյալ երեք կամ ավելի մասերի
Եվ երբ նրանց դասավորել մենք ուզենք ամեն կերպ,
Վերև, ներքև դնենք նրանց, տեղափոխենք աջից ձախ,
Համակցումներն այդ բոլոր մենք, անշուշտ, շուտով կսպառենք
Իսկ եթե դու ցանկանում ես և այլ ձևեր ստանալ,
Արդեն պիտի դու այլ մասեր ավելացնես։ Իսկ հետո՝
Միակցության համար մի նոր հարկավոր են նոր մասեր։
Այդպես ձևի նորությունը բերում է իր հետևից
Մարմնի աճը, այդ պատճառով դու չպիտի ենթադրես,
Որ իրերի սերմերն անվերջ զանազան են ձևերով,
Եվ որ կարող են ունենալ հսկայական մեծություն։
Այն ժամանակ օտարերկրյա փրծվածքները, ծիրանին
Մելիբեյան [9]՝ թեսալիական խեցիներով վառ ներկված,
Սիրամարգի երփներանգ, ճոխ պոչի գույնը կթվար
Նոր իրերի շլացուցիչ պայծառության մոտ խավար։
Հաճելի չէր լինի մեղրը, և զմուռսը բուրավետ,
Եվ կարապի հուզիչ երգը, Ֆեբի թովիչ քնարը
Նույն պատճառով կենթարկվեին ամոթալի լռության։
Չէ՞ որ մի շարք զգացումները, մեկը մյուսից հաճելի,

Պետք է իրար հաջորդեին անընդմեջ ու անդադար։
Սակայն պիտի անվերջորեն նույնպիսի բան կատարվեր
Հատկությունների վատ շարքում մեր քիթը և ճաշակը,
Աչքերը և ականջները զգացումներից անվայել
Պետք է անչափ վախենային։ Երևույթներն այդ բոլոր
Հակասում են փորձին։ Եթե անփոփոխ են զգացվող
Հատկություններն այդ իրերի, պարտավոր ես ճանաչել,
Որ ձևերը մատերիայի սահմանափակ են նույնպես։
Եվ, վերջապես, տապ օրերից մինչև խիստ ցուրտ ձմեռ
Տարածություն կա սահմանված, որ չափված է ճշտորոշ,
Երբ ծայրերը գրավել են ջերմությունը և ցուրտը,
Բայց մեջտեղում բարեխառն է, օդը երկու ծայրերի,
Գնալով, հար թափանցում է նրանց միջև արանքը։
Այդ պատճառով էլ իրերի հատկություններն անվերջ չեն,
Քանի որ մի կողմից նրանց սահմանում է կրակը,
Իսկ մյուս կողմից ընդդիմադիր սառնամանիքն խստաշունչ։
Այդ պարզելուց հետո պետք է շարունակեմ ընթանալ,
Որովհետև մարմնիկների ձևերն ամեն մի սահման,
Անհրաժեշտ է, որ ամեն մի կարգում նրանց քանակը
Ոչ մի սահման չունենա, դա հետևանքն է բնական
Այն տարրերի որ մենք արդեն սահմանել ենք, թե այդպես
Չլինեին, ողջ տիեզերքը պետք է սահման ունենար,
Սակայն մենք այս մոլորումը արդեն հերքել ենք առաջ։
Շարունակում եմ ընթանալ ուզում եմ քեզ համոզել,
Մի քանի խոսք բավական է Անվերջության մեջ իրենց
Այդ անդադար բախումների օգնությամբ են տարրերը
Կարողանում տիեզերքի գոյությունը պահպանել
Տեսնո՞ւմ ես, որ որոշ ցեղի անասուններ շատ քիչ կան,
Բնությունը ստեղծում է նրանց թվով շատ սակավ,
Սակայն ուրիշ երկրներում, որ այստեղից հեռու չեն,
Բազմապատկում է նրանց և այդ պակասը լրացնում։
Փղին է այդպես, օձաձեռք այդ չորքոտանին վիթխարի
Հազիվ ենք մեր երկրում գտնում մի քանի հատ նրանցից,
Սակայն նրանք Հնդկաստանում այնքան շատ են, որ նրանց
Ոսկորներից կառուցված են անմատչելի պարիսպներ,
Որոնցով և շրջապատված է երկիրը այդ ամբողջ։
Ասենք քեզ հետ համաձայն եմ թող լինության մեջ լինի
Մի եզակի ինչ որ մարմին, որի նմանն աշխարհում
Ոչ մի տեղ չես գտնի եթե մատերիայի տարրերը

Այդքան անվերջ չլինեին, արտոնյալը այդ միակ
Ոչ կարող էր լույս աշխարհ գալ, ոչ սնուցվել, ո՛չ աճել։
Ենթադրենք որ այդ եղակի մարմնի բոլոր տարրերը
Սահմանափակ ու ցրված են տիեզերքում անսահման
Որտե՞ղ և ի՞նչ ուժով նրանք կարող էին հավաքվել
Այդքան մի մեծ, անհաշվելի բազմության մեջ տարրերի։
Ոչ կարծում եմ, ամենևին չէին կարող այդ անել։
Սակայն ինչպես պատահում է մի որևէ ահռելի
Նավաբեկման ժամանակ, երբ ալիքները խենթ ծովի
Այստեղ, այնտեղ են շպրտում բեկված նավի մասերը՝
Սռնադաստեր, կայմափայտեր նավացռուկ, թիակներ,
Այնպես որ ողջ այդ ծովափում երևում են նախշազարդ
Փշրանքները բեկված նավի, մարդկանց ցուցում տալով, որ
Փախչեն, զգան չվստահեն, եթե նույնիսկ խորամանկ
Խաղաղ ծովի մակերևույթ մեղմիկ ժպտում է նրանց
Այդպես եթե սկիզբների թիվը դարձնել ցանկանաս
Սահմանափակ այն ժամանակ, անշուշտ, նրանց կցրի
Մատերիայի անդուլ երթը ջարդելով ու քշելով։
Ուստի տարրերն այդ չեն կարող համախմբված, համակցված
Ոչ իրար հետ կապ պահպանել, ոչ աճել, ոչ բազմանալ։
Սակայն, ինչպես ամենօրյա փորձը ցույց է տալիս մեզ
Մարմինները հետզհետե ծնվում են ու զարգանում,
Ուստի պիտի համաձայնես, որ ամեն մի տեսակը
Պահպանվում է սկիզբների քանակությամբ անսահման։
Ահա ինչու ոչ մահաբեր շարժումները կարող են
Հաղթահարել ընաջնջել ամբողջ կյանքը աշխարհում,
Ոչ էլ կյանքի ստեղծարար շարժումները կարող են
Անխախտ պահել ստեղծվածը, ինչպես այն կա հավիտյան։
Եվ փոխադարձ հաջողությամբ դարեր ի վեր սկսված
Սկիզբների այդ մարտերը շարունակվում են անվերջ։
Եվ մե՛րթ հաղթում են բնության ստեղծարար ուժերը,
Մե՛րթ հաղթում է մահը։ Այդպես հոգևարքի խռխռոց
Միշտ խառնվում է աշխարհ եկած մանկան խղճուկ ձայներին։
Եվ երբեք չի եղել գիշեր կամ արշալույս այնպիսի,
Որ չլսվեն օրորոցում պառկած մանկան լաց ու ճիչ
Եվ դագաղի մոտ թնդացող տխուր ողբ ու աղաղակ։
Ահա թե ինչ հարկավոր է անջնջելի գծերով
Հիշողության մեջ դրոշմել մարմիններից այն բոլոր,
Որոնց, գիտենք, բնությունը բաղկացած չէ միասեռ

Սկիզբներից, չկա մեկը, որ չլինի բազմազան
Տարրերի մի խառնուրդ միայն, և որքան շատ հատկություն
Ունի մարմին մի առանձին, այնքան պետք է ավելի
Նրան կազմող սկիզբները զանազանվեն ձևերով։
Մեր երկիրը սկիզբներ է պարունակում անհամար
Մեծ գետերի, որ լցվում են հավերժական ծովի մեջ
Ինչպես նաև պարունակում է ընդերքում, անկասկած,
Ստորերկրյա կրակի սերմեր, որոնք կրծում են Նրան,
Այն բոցերը, որ Էտնան է կատաղությամբ խենթ ործկում
Պարունակում է Նա սաղմեր հասկերի և հյութեղ
Պտուղների, որ հետո Նա մարդկությանն է պարգևում
Պարունակում է սաղմերը աղբյուրների սառնորակ
Սաղմերը թարմ տերևների, արոտների կանաչած,
Որոնցով Նա սնուցում է կենդանիներ ամենայն,
Որ ապրում են ու վխտում են դաշտերում ու լեռներում։
Ահա ինչու աստվածների Նա մեծ մայր է անվանվում[10]
Եվ ստնտուն անասունի և մարդկային ցեղի ողջ
Հին հունական պոետները միշտ պատկերել են Նրան
Մի կառքի մեջ բազմած, որը քարշ են տալիս առյուծներ
Ուսուցանում է, սակայն այդ, որ երկիրը կախված է
Տարածության մեջ օդային, երկիրն երկրի չի հենվում։
Իսկ կատաղի գազանները, որոնք հլու են Նրա
Լծին, պետք է նշանակեն այն, որ նույնիսկ կատաղի
Զավակները Նրա պետք է, բոլորի պես ենթարկվեն
Նրա գթոտ խնամքներին և մայրական հոգսերին։
Իսկ դրոշը զարդարում են պարսպաձև պսակով[11],
Որովհետև երկրում շատ կան քաղաք ու բերդ անառիկ
Եվ ռազմական այդ պսակից սարսափում են ազգերն այն,
Որոնց երկրում ման են տալիս աստվածամոր արձանը։
Իսկ այն բոլոր ազգերը, որ բնակվում են այդ երկրում,
Սովորության համաձայն, որ պապերից է մնացել
Իդեական մայր[12] են Նրան անվանում, և Նրան միշտ
Ուղեկցում են փռյուգացիներ, քանզի, ասում են նրանք,
Թե առաջին անգամ ցորեն հերկ ցանել են այնտեղ։
Մեծ քուրմեր[13] են կատարում ամորձատված, որովհետև
Մահկանացու մարդկանց ասեն, թե ով մորը չի հարգում,
Որն աշխարհում կոչված է լինի աստվածուհու պատիվը
Եվ ով բնավ երախտագետ չէ հարազատ իր հորը
Ամենևին արժանի չէ ունենալու զավակներ.

Այդ քուրմերը թմբուկներ են թնդացնում ու աղմկում,
Ծնծղաներ են զրնգացնում, սպառնալով փողերի
Խռպոտ ձայնով, իսկ փրյուգական սրինգների նվագով
Գրգռում են մարդու հոգու մոլեգնությունն անպատկառ.
Եվ դաշույն[14] են կրում նրանք, կատաղության նշանն այդ,
Ահ ու երկյուղ պատճառելով ապականված սրտերին,
Որ հլու չեն և գնում են աստվածամոր կամքի դեմ։
Երբ արձանը աստվածամոր հասնում է մի մեծ քաղաք,
Լռության մեջ սփռում է նա մարդկանց վրա բարիքներ.
Նրա ճամփան առատորեն զարդարում են արծաթով,
Նրա առջև փռում փնջեր, վարդեր, ճերմակ ծաղիկներ։
Զինված մարդկանց ջոկատ, որոնց փրյուգական կուրետներ[15]
Անվանում են գրայները, ուղեկցում են նրան միշտ,
Իրենք իրենց հարվածելով շղթաներով շարունակ,
Պարում են և ուրախությամբ նայում հոսող արյունին,
Որ ծածկում է մարմինն իրենց փետրափնջեր ահավոր
Թափահարում են շարունակ իրենց գլխի վերևում,
Պատկերացնում դիքթեական կուրետներին այն, որոնք
Կրետա կղզում, եթե միայն հավատանք այդ հեքիաթին,
Պղինձներ են զարկել իրար, աղմկելով անդադար,
Մինչդեռ զինված մանուկները կատաղորեն պարել են
Յուպիտերի օրորոցի շուրջը այնպես, որ ագահ
Սատուրնոսը Յուպիտերի ճիչը բնավ չլսի,
Որ առհավետ չխոցի նա քնքուշ սիրտը մայրական։
Այդ պատճառով աստվածամորն ուղեկցում են զենքերով,
Կամ կուզեն ցույց տալ, որ մարդիկ հերոսաբար, զենքերով
Մեծ մոր կամքով պետք է իրենց հայրենիքը պաշտպանեն,
Ծնողների համար իրենց լինեն նեցուկ աններեր։

Սակայն որքան էլ գեղեցիկ լինի հեքիաթն այդպիսի,
Ամենևին չկա ո մի ճշմարտություն նրա մեջ
Եվ, իսկապես, աստվածները՝ անմահ իրենց բնությամբ
Պետք է, անշուշտ, լիակատար խաղաղ մի կյանք վայելեն,
Մեր առօրյա հոգսերին խորթ, մեր աշխարհից շատ հեռու,
Ո՛չ վտանգի են ենթարկվում և ո՛չ վիշտ են ունենում,
Միշտ գոհ իրենք իրենցով և կարիք չունեն որևէ,
Չեն զգում մեր բարությունը, մատչելի չեն բարկության։
Ինչ երկրին է վերաբերում, զգացմունքներից զուրկ նյութի
Մի հավաքույթ է եղել նա, և այն, ինչ մեզ է տալիս,
Ինքն ստանում է բազմաթիվ սկիզբներից զանազան,

Որ իր մեջ է պարունակում։ Սակայն եթե ուզում են,
Թող անվանեն ծովը Նեպտուն, և արտերը՝ Կերես,
Եթե մարդիկ ցանկանում են գինին Բաքոս անվանել,
Համաձայնենք, որ երկիրն էլ անվանեն մեծ մայր նրանք,
Բայց մայր լինել նա չի կարող, միայն եթե պղծելի
Կրոններով չկեղտոտեն իրենց հոգին, իսկապես։
Կանաչ դաշտում արածում է եղջերավոր մի նախիր,
Եվ բրդակիր շատ ոչխարներ, և ձիերը ռազմական
Նույն երկնքի տակ խմում են նրանք ջուր նույն վտակից,
Սակայն նրանք շատ տարբեր են տեսակներով առանձին,
Ժառանգաբար պահելով հատկությունը հայրերի։
Այնքան շատ են մատերիայի տեսակները զանազան
Թե մարգերի խոտերի մեջ, թե գետերի ջրի մեջ։
Բաղկացած է, հետո, ամեն մի կենդանի արարած
Ոսկորներից, երակներից, ջերմությունից, արյունից.
Նյարդեր, հեղուկ, ներքին մասեր և ընդերք այդ ամենը
Էություններ են, որ իրենց տարրերով շատ տարբեր են։
Հետո այն, ինչ որ վառվում է, պարունակում է իր մեջ
Տարրեր լույսի, ծխի, մոխրի, բոցերի ու կայծերի
Թե նույնպիսի ուշադրությամբ էություններն այդ զննես,
Որ գոյություն ունեն երկրում, կհամոզվես, որ նրանք
Պարունակում են իրերի և այլ սերմեր զանազան։
Վերջապես, կան շատ մարմիններ, որ ունեն գույն, հոտ ու
Եվ այդպես են այն զոհերը, որ մորթում են անխնա
Հանցավորներն այն, որ իրենց մեղքերն ուզում են քավել։
Տարրերը այդ մարմինների, ուստի, պետք է տարբերվեն,
Որովհետև թափանցում է հոտը այնպիսի անցքերով,
Որոնցով չի կարող համը։ Մինչդեռ համը անցնում է
Ուղիներով, որոնք հոտի համար փակ են շարունակ
Եվ այդ երկու հատկություններն առաջանում են, ուստի,
Այն տարրերից, որ ձևերով տարբերվում են իրարից
Եվ այդպիսով մատերիայի նույն կույտը իր հյուսվածքում
Պարփակում է տարբեր ձևեր, մարմիններ են ստացվում
Միշտ նախնական այդ տարրերի որևէ մի խառնուրդից։
Այս տողերում, որ կարդում ես, կնկատես, որ ճիշտ նույն
Բազում տառերն ընդհանուր են շատ խոսքերում, բայց պետք է
Ճանաչես, որ տարբերություն կա խոսքերի միջև այդ
Եվ ոչ թե այն պատճառով, որ շատ տառեր կան ընդհանուր,
Ոչ թե նրանք բաղկացած չեն հաճախ ճիշտ նույն տարրերից,

Եվ որ երկու հատ չես գտնի իրար նման ճիշտ գրված,
Այլ ամբողջը նույն միացման հետևանքը չէ անշուշտ
Ճիշտ այդպես էլ թեև տարբեր մարմինները բնության
Ընդհանուր շատ տարրեր ունեն, բայց զանգվածներն իրարից
Զատ են անշուշտ, տարրեր լինեն, ուստի, ունենք իրավունք
Ասելու որ մարդկանց ցեղը, հացահատիկն ու ծառերը
Պետք է կազմված լինեն տարբեր սկզբներից սահմանական:
Սակայն կարծել չի կարելի, թե կարող են միակցվել
Ամեն կարգի տարրեր, չէ՞ որ այդ ժամանակ մշտապես
Կտեսնեիր հրեշներ որ մարմին ունեն մարդկային,
Բայց գազանի անդամներով, կտեսնեիր նաև դու,
Որ բուսնում են ծառի ոստեր մարմիններից կենդանի
Ամեն տեսակ արարածներ, որ ապրում են ցամաքում,
Միատեղվեն նրանց հետ որ ծովի խորքում են լինում
Եվ քիմերը կարող էր իր բոցավառված երախով
Այրել, բանդել, ոչնչացնել ամենայն ինչ աշխարհում
Թե բնության մեջ այդպիսի հրաշքներ չենք տեսնում մենք
Մի պատճառ կա՝ արարածներն այդ կազմված են միշտ որոշ
Տարրերից և ծնողները նրանց նույնպես որոշ են
Եվ աճում են նրանք այդպես, պահպանելով շարունակ
Յուրաքանչյուրն իր տեսակի հատկանիշը ցեղային:
Եվ անխախտ է այդ օրենքը, քանզի ամեն արարած
Պետք է առնի իր սննդից հյութեր, որոնք ավելի
Համապատասխան են համարվում իր կազմվածքին, անկասկած,
Միանալով նրա մարմնին, օժանդակում են նրա
Եվ կյանքին և՛ շարժումներին բայց տարրերը այն, որոնք
Ամենևին չեն միացել, չեն ստացել կյանքի շունչ,
Եվ բնավ չեն օժանդակել ստեղծարար ուժերին,
Բնությունը վերադարձնում է աշխարհին մեր դարձյալ,
Կամ նրանցից ձերբազատվում գործողությամբ որևէ:
Չկարծես, թե օրենքն այդ լոկ վերաբերում է մարդկանց
Այդ օրենքին ենթակա է այս աշխարհում ամեն ինչ
Եվ քանի որ տարբերվում են բոլոր իրերն իրարից,
Ուստի պետք է օժտված լինեն տարբեր ձևով տարրերը,
Սակայն ոչ թե այն պատճառով որ կան տարրեր բազմաթիվ
Որ զանազան ձևեր ունեն, այլ մարմիններն այն, որոնք
Նրանցից են կազմված, իրար նման լինել չեն կարող:
Եվ եթե այդ տարրերն այդպես տարբերվում են իրարից,
Տարբերվելու են ուրեմն տարածությամբ ուղղությամբ,

Որով գնում են կապակցված, և ինչպես են հանդիպում,
Կամ ինչպես են շարժվում նրանք և ինչպես են հարվածում.
Հատկություններն այն, որոնցով մենք կարող ենք տարբերել
Մի կենդանին այլ կենդանուց, ինչպես մենք ենք այդ անում՝
Ինչպես ծովը մայր ցամաքից և ցամարը երկնքից։
Լսիր՝ ինչ եմ հետազոտել և իմացել ես արդեն
Չկարծես դու, թե իրերը, որ մեզ թվում են ճերմակ,
Պետք է ճերմակ մարմնիկներից կազմված լինեն անպայման,
Կամ կազմված են սև իրերը միշտ սերմերից սևագույն
Չկարծես, որ եթե իրերն ունեն երանգ այս կամ այն,
Պետք է նրանց մարմնիկները նույն գույները ունենան։
Բայց ոչ մի գույն չեն ունենում մարմնիկները հիմնական՝
Ոչ իրերի գույների պես և ոչ տարբեր նրանցից։
Իսկ եթե դու կարծում ես, որ գույներից զուրկ մարմնիկներ
Ըմբռնել չենք կարող խելքով, սխալվում ես չարաչար։
Դժբախտներն այն, որ ի ծնե կույր են լինում աշխարհում
Եվ չեն տեսել լույսն արևի, մանկությունից են նրանք
Շոշափելով ճանաչում այն, ինչի գույնը չեն տեսնում.
Ճիշտ այդպես էլ կարող ենք մենք, անշուշտ, կազմել գաղափար
Այդ նախնական մարմնիկների մասին, որոնք գույն չունեն։
Եվ մի՞թե մենք առարկաներ շոշափելով մթի մեջ
Ընդունակ ենք իմանալու, թե ինչպիսի գույն ունեն։
Ապացուցած այդ ամենը, այժմ քեզ ցույց կտամ, որ
Չկա մի գույն, որ կարող է փոխվել դառնալ մի այլ գույն.
Չէ՞ որ ամեն ինչ փոխվելով արդեն դառնում է այլ բան
Այդ տարրերը, սակայն երբեք այդպես փոխվել չեն կարող
Բնությունն է պահանջում, որ նրանք լինեն անփոփոխ։
Եթե մի բան իր բնության սահմաններից դուրս գալով
Փոխվում է, այդ պատճառով հենց դադարում է լինել այն,
Ինչ առաջ է եղել ինքը։ Այդ պատճառով չկարծես,
Թե տարրերը մատերիայի ինչ-որ գույն են ունենում.
Թե չընդունես այդ, իրերը ոչնչությամբ կդառնան
Բնությունը, այդ տարրերին գույներ տալը մերժելով,
Ձևերով է օժտել տարբեր, որ հատկություն ունենան միշտ
Նրանց գույներ հաղորդել նոր, դարձնել անվերջ լազմազան
Կարևորը այն է միայն, թե ինչպիսի մարմնիկներ
Եվ ինչպիսի դրության մեջ են միակցումներն այդ կազմում,
Եվ ինչպիսի շարժումներ են նրանք անում փոխադարձ
Բացատրել քեզ ամենևին այդ դժվար չի լինի, թե

Արդյոք ինչպես է կատարվում, որ քիչ առաջ իրը սև
Երևան է գալիս հանկարծ մարմարի պես սպիտակ։
Այդպես՝ էթե ծովում քամին ալիքներ է բարձրացնում,
Ջուրը ծածկվում է փրփուրով։ Բայց կարո՞ղ ես ասել դու,
Թե տարրերը մարմնի, որը առաջ մեզ սև էր թվում,
Երբ հուզվում են, խառնվում իրար, նրանց կարգը նախնական
Փոխվում է, մի քանի տարրեր հեռանում են նրանից,
Չիջում իրենց տեղը այլոց, մակերեսը այդ մարմնի
Այդ ժամանակ ընդունում է տեսքն անբիծ ճերմակի գույնի։
Եթե ծովի ալիքները, ասենք, կազմված լինեին
Այն տարրերից, որ կապույտ են, սա ճերմակել չէր կարող,
Որովհետև ինչպես էլ որ նրանց կարգը դու փոխես,
Նրանք երբեք չեն ընդունի մարմարի պես ճերմակ գույն։
Եթե ծովի գույնը, ասենք, մաքուր է և անխառնուրդ,
Տարրերից է առաջ գալիս, որոնք ունեն տարբեր գույն,
Ինչպես տարբեր ձևերի մի խառնուրդից է կարելի
Միակ ձևով քառակուսի կազմել, այդպես էլ պետք է,
Քանի որ կան քառակուսում տարբեր ձևեր, որոնցից
Նա կազմված է, զանազանվեն, ծովի մեջ է արդյոք դա,
Թե որևէ այլ իրերի, որոնք ունեն մաքուր գույն,
Բայց որևէ մի խառնուրդ չեն և իրար չեն նմանվում,
Պետք է բոլոր այդ գույներից առաջ գար գույն ընդհանուր։
Տարբերությունն առանձին այդ ձևերի չի խանգարում
Որպեսզի դա քառակուսի լինի ձևով արտաքին,
Տարբերությունն այդ գույների, սակայն, պիտի խանգարի,
Որ այդ մարմինն ամբողջովին միայն մի գույն ունենա։
Այն փաստարկը, որ երբեմն հրապուրում է իրերի
Տարրերին մի գույն վերագրել, վերացվում է այդպիսով։
Որ կարող են ճերմակ իրեր առաջ գալ ոչ ճերմակից,
Եվ նրանցից, որոնք սև են, այլ գույն ունեն զանազան
Հավանական է ավելի, որ մարմիններ սպիտակ
Ծնվեն շատ անգույններից, քան սևերից, կծնվեն
Նաև որևէ ուրիշներից, որոնք չունեն գույներ նույն։
Հայտնի է, որ առանց լույսի գույներ երբեք չեն լինում
Իրերի այդ տարրերը լուսավորվել չեն կարող,
Որից պետք է եզրակացնել, որ զգեստավորված չեն նրանք։
Ինչ գույներ են հնարավոր խավարի մեջ անթափանց
Եվ լույսի այդ, լույսը փոխում է իրերի գույնը, երբ
Լույսը՝ իրերը ուղղակի հատ շեղակի

Երբ արևը լուսավորում է բմբուլը աղավնու,
Որ ծածկում է նրա վիզը և ծոծրակը պսակով,
Մերթ նա հանկարծ կարմրում է փայլուն գույնով սուտակի,
Մե՛րթ փայլում է այնպես, կարծես թե լինի նա շափյուղա,
Որը կարծես շողշողում է զմրուխտի մեջ աննման
Սիրամարգի պոչը՝ ընկած արևգակի շողի տակ
Պտտվելիս փոփոխում է իր գույները շարունակ
Եթե կախված են գույները լույսից, պետք է ընդունել,
Որ գոյություն չունեն նրանք առանց լույսի, անկասկած
Բիբն էլ ուրիշ հարվածներ է ստանում այն ժամանակ,
Երբ զգում է, այսպես ասած միայն ճերմակ գույները,
Քան սևը կամ մի ուրիշը, որը ինքդ ես ցանկանում։
Եվ քանի որ շոշափելիս կարևոր չեն գույները,
Կարևոր է, թե ինչպիսի ձևեր ունի առարկան
Ուստի գույնի կարիք չունեն ամենևին տարրերը
Որոնք միայն ձևերով են զգացմունքը գրգռում։
Եվ բացի այդ, թե տարրերի գույնը ձևից կախված չէ,
Ինչպիսի գույն էլ որ լինի, ընդունակ են ընդունել
Ամեն մի գույն, ինչո՞ւ նրանցից կազմված բոլոր իրերը
Արտոնությունն այդ չունեն և ինչո՞ւ նրանց գույները
Տեսակից է կախված լինում Եթե այդպես չլիներ
Հաճախ ճերմակ փետուրներով ագռավ էիր տեսնելու
Սև սերմերից սև կարապներ կծնվեին շարունակ,
Իսկ գունավոր սերմերից էլ, ինչ գույնով ու ցանկանաս։
Հետո՝ իրեր մանրացնելով կարող ես դու տեսնել, որ
Նրանք որքան ավելի են մանրանում ու փոքրանում,
Այնքան կորցնում են ավելի իրենց գույները առաջվա,
Վերջանում է այն բանով որ անհետանում է գույնը։
Այդպես ոսկին փոշիացված կամ քրքրված ծիրանին
Եվ փյունիկյան կարմիր ներկը իրենց գույնը կորցնում են։
Այդպես ահա անհերքելի փորձը ցույց է տալիս քեզ,
Որ տարրերը մատերիայի իրենց գույնից զրկվում են,
Երբ վերածվում են իրերի արդեն մանրիկ սերմերի։
Սակայն բոլոր մարմիններին չէր կարող տալ ձայն ու հոտ
Քանի որ մեր հոտառությունն, ականջը չեն գրգռում
Նույնպես եթե նշմարում ենք աչքերով ոչ ամեն ինչ,
Ակներև է մարմիններ կան որոնք զուրկ են գույներից
Ինչպես և կան այնպիսիններ, որոնք չունեն հոտ ու ձայն,

Նորաթափանց միտքը դրանց ըմբռնում է ու պակաս,
Բան նրանց, որ ամենևին չունեն ու մի հատկություն։
Այնուհետև չկարծես, որ մարմինները նախնական
Զուրկ են միայն գույնից, նրանք չունեն նաև ջերմություն,
Սառնություն ու խոնավություն, նրանք չունեն նաև հյութ,
Ինչպես նաև ընդունակ չեն որևէ հոտ արձակել։
Այդպես՝ եթե ցանկանում ես պատրաստել մի բալասան,
Որ սամբարի հետ խառնելով բուրյան, զմուռս ու նարդոս,
[illegible] ի ձեռք բերել նախ ձիթապտղի անհոտ ձեթ,
Արտաշնչի մի ուրիշ հոտով չփչանա բույրը այն,
Որ արձակում են ծաղիկներն ու խեժը բուրավետ։
Այդ պատճառով առարկաներ ստեղծելով, չեն կարող
Ինչ-որ հատուկ հոտեր նրանց տալ տարրերը իրենց,
Կամ ձայն չէ՞ որ ամենևին չունեն նրանք նման բան
Ամենևին չունեն նրանք համ, ջերմություն, սառնություն,
Հատկություններն այն բոլոր, որ անթիվ գործեր շարունակ
Քայքայում են մարմինները՝ ճկունություն, փափկություն,
Փխրունություն, մատերիայի դատարկության խառնուրդը
Ներածել չես կարող, անշուշտ, այդ տարրերին անհամար,
Թե ուզում ես տիեզերքին կուռ, աներեր հիմքեր տալ,
Որ պահպանես, փրկես նրան ոչնչություն դառնալուց։
Պարտավոր ես դու հաստատել, որ մարմիններն այն բոլոր,
Որ օժտված են զգացմունքներով՝ բաղկացած են տարրերից,
Որոնք զուրկ են զգացմունքներից, և ժխտելու փոխարեն
Որին ինքն է մեր ձեռքից բռնած կարծես, տանում, ցույց տալ
Որ կենդանի արարածներ ծնվում են այն տարրերից,
Որոնք բնավ կենդանի չեն։ Եվ տեսնել մենք կարող ենք,
Թե ինչպես են աղբակույտից ծնվում որդեր կենդանի,
Երբ փտում է հողը արդեն տեղատարափ անձրևից [16]։
Եվ այդպես են մարմինները փոփոխության ենթարկվում,
Ջուրը խոտը, ծաղիկները, տերևները թարմ, կանաչ,
Անասունի մեջ անցնելով, բնությունը փոխում են.
Անասունն էլ իր հերթին է անցնում մարդու մարմնի մեջ,
Մարդն էլ հաճախ իր մարմնով է գազաններին սնուցում,
Իսկ երբեմն բաժին դառնում թռչուններին գիշատիչ։
Բնությունն է այդպես կերը դարձնում մարմին կենդանի,
Իսկ մարմնի մեջ առաջ բերում զգացմունքներ ամենայն
Ինչպես փայտն ու այլ նյութերը բոցերի է վերածում։

*Կարևորը այն է միայն, թե ինչպիսի մարմիններ,*
*Եվ ինչպիսի դրության մեջ են կազմում նրանք միակցում,*
*Եվ ինչպիսի շարժումներ են նրանք անում փոխադարձ։*
*Հոգու վրա իրերն ազդել կարող են ի՞նչ բնությամբ,*
*Հուզել նրան, առաջ բերել բազմապիսի զգացմունք,*
*Երբ մասերիան ամենևին չունի զգացմունք որևէ*
*Եվ չի կարող արարածներ ծնել՝ օժտված զգացմունքով։*
*Ճիշտ է այն, որ քարը, փայտը, հողը, իրար խառնվելով,*
*Ոչ կարող են կյանք ստեղծել, ոչ այն օժտել զգացմունքով*
*Ես չեմ ասել քեզ, որ բոլոր այն տարրերն են ընդունակ*
*Արարածներ ծնել, որոնք զգացմունքով օժտված են*
*Հրամիրել եմ մեծությունը ի նկատի ունենալ*
*Նրանց քանակն ու ձևերը, դրությունները, կարգերը,*
*Նրանց բոլոր շարժումներն ու պայմաններն այն, որ մենք*
*Չենք նկատում ո՛չ բույսերում ո՛չ էլ հողի կույտի մեջ*
*Սակայն այդ նույն մարմինները, երբ փտում են անձրևից,*
*Որդ են ծնում, որովհետև նրանց բոլոր տարրերը,*
*Փոխված մի նոր հանգամանքով, պետք է, անշուշտ, ձևք բերեն*
*Միակցում, որ անհրաժեշտ է նոր սերունդներ ծնելու*
*Իսկ ասել, որ զգացմունքներով օժտված տարրեր են ծնում*
*Զգացմունք, նրանց իրենց հերթին ստեղծել են զգացմունքով*
*Օժտված ուրիշ տարրեր դարձյալ, նշանակում է՝ նրանց*
*Էությունը դարձնել փափուկ, որովհետև զգացմունքը*
*Երակների, բջերբի և նյարդի հետ է կապված, որ,*
*Ինչպես տեսնում ենք, փափուկ են, մաշված՝ մահվան ենթակա*
*Ասենք, թե այդ մասնիկները հավերժական կյանք ունեն,*
*Դարձյալ պետք է կամ ունենան զգացմունքը մի մասի,*
*Կամ կենդանի արարածի ամբողջապես նմանվեն*
*Բայց մասերը, մեկուսացված իրենք իրենց չեն կարող*
*Զգալ իրենց գոյությունը, զգացմունքը այլ մասերի*
*Համորդվել չի կարող նրանց այդպես մարմնից անջատված*
*Ձեռքը կամ այլ անդամները չունեն ոչ մի զգացմունք։*
*Քեզ մնում է այդ տարրերը դարձնել փոքրիկ կենդանի*
*Եվ բոլորին տալ զգացմունքներ, որ հատուկ են ողջ մարմնին։*
*Բայց կարո՞ղ ենք այն ժամանակ նրանց սերմեր անվանել,*
*Եվ կարո՞ղ են այն ժամանակ նրանք մահից խուսափել,*
*Եթե նրանք կենդանի են, որ մեռնում են ամեն օր։*
*Եթե նույնիսկ կարողանան, միակցումից նրանց հոծ*
*Կյանքով օժտված էակների մի բազմություն կծնվեր.*

Ոյթե խաղով Վեներայի զուգավորվեն իրար հետ
Մարդը, գազանն, անասունը, ի՞նչ կծնվի դրանից։
Եթե, մարմնի մեջ մտնելով, կորցնում են մի զգացմունք,
Փոխարենը ստանում այլ, ինչո՞ւ պիտի նրանց տանք
Այն, ինչ նրանք կորցրել էին։ Ինչպես ասել ենք առաջ,
Եթե դառնում է թռչունի ձուն մի թռչուն կենդանի,
Եթե որդեր են անհամար փտած հողից դուրս գալիս,
Երբ անձրևից տեղատարափ տարրալուծվում է հողը,
Որ զգացմունք ծնվի, ուստի, հարկավոր չեն զգացմունքներ։
Իսկ եթե ինձ առարկեն, որ զգացմունքն առաջ է գալիս
Իրերից, որ զգացմունք չունեն, փոփոխությամբ այն, որ միշտ
Կատարվում է, ինչպես ամեն արարածի մոտ, նախքան
Նա լույս աշխարհ է դուրս գալիս, բավական է ասել քեզ
Որ ծնունդ չի լինում, եթե զուգավորում չի եղել,
Քանի դեռ չեն զուգավորվել, փոփոխություն չի լինում
Քանի մարմին դեռ չի կազմվել, չկա ոչ մի զգացմունք,
Որովհետև ողջ մատերիան, որ ցրված է աշխարհում՝
Օդում, ջրում ,հողում, հրում, դեռ իրար չեն հանդիպել,
Եվ միացել, և հարվածել այնպես, ինչպես պետք է, որ
Ոգևորվեն պահապաններն էակների կենդանի։
Ենթադրենք, որ մի արարած ենթարկվում է հարվածի,
Որը ուժեղ է չափազանց տապալվում է, և իսկույն
Շփոթվում են հատկությունները արդեն մարմնի և հոգու,
Տեղափոխվում են տարրերը, շարժումները այն, որոնք
Անհրաժեշտ են կյանքի համար, դադարում են այնուհետ,
Քանի ամբողջ մատերիան, որ անդամներում է ցնցվել,
Դեռ չի խախտել մարմնի, հոգու կապերը, չի վտարել
Հոգուն մարմնի բացվածքներով Հետևանքը այդպես է,
Որ առաջ է գալիս ուժեղ ու ահռելի հարվածից
Խորտակվում և ավերվում է մարմինը ո՛չ ավելի։
Պատահում է, որ հարվածը պակաս ուժգին է լինում,
Եվ հաղթում են շարժումները ողջ մնացած այդ կյանքի,
Խաղաղեցնում անկարգությունն՝ առաջ եկած հարվածից,
Վերադարձնում է ամեն ինչ իր բնական հունի մեջ
Այդ քայքայիչ շարժումները՝ մարմինն ամբողջ տիրացած,
Ցրում են և վառում դարձյալ զգացմունքը մարմրող
Սակայն ինչպե՞ս կարելի է մահի շեմից ետ դառնալ,
Եվ դեռ մնալ ապաստանում գիտակցության ու կյանքի,
Զիջելով այդքան հզոր ողբերգական հարվածին։

Այնուհետև քանի որ մենք խմելու մի ցավ ենք զգում,
Երբ մեր մարմնի տարրերին մի ուժ է հուզում արտաքին
Եվ նրանք մեր անդամներում անկարգորեն են շարժվում,
Սկսում ենք այն ժամանակ մի բերկրություն զգալ խոր,
Երբ նորից են վերադառնում նրանք իրենց տեղերը
Հետևապես այդ տարրերը իրենք ոչ ցավ են զգում
Եվ ոչ հաճույք, որովհետև բաղկացած չեն մասերից,
Եվ հիմնական տարրեր նույնպես նրանք չունեն սեփական,
Որ տառապել կարողանան շարժումների փոփոխմամբ,
Կամ որևէ մի հաճույքի քաղցր պտուղ վայելել,
Զգացմունքները ուստի, հատուկ չեն տարրերին իրենց
Եթե զգացմունք ունենալու համար ամեն արարած
Կարիք ունի զգացմունքներով արդեն օժտված տարրերի
Ինչպե՞ս պետք է լինեն արդյոք այն տարրերը, որոնցից
Մարդ արարածն է բաղկացած Նրանք կարո՞ղ են խնդալ
Իրենց դեմքը և այտերը արտասուքով ողողել
Եվ իրերի կազմի մասին խոսել, ինչպես գիտնական,
Եվ վերլուծել այն տարրերը որոնցից են բաղկացած
Որովհետև եթե ամեն բանով նման են մարդկանց,
Ուստի իրենք բաղկացած են բազմաթիվ այլ տարրերից,
Վերջիններս այլ տարրերից, վերջը երբեք չես գտնի։
Ես չեմ հոգնի ամեն անգամ կրկնելուց երբ ինձ ասեն՝
Այս արարածն ընդունակ է խոսել դատել, ծիծաղել
Սակայն նրա տարրերն ունե՞ն հատկություններն այդ բոլոր,
Բայց ենթադրություն այդպիսի մի խենթություն է կատարյալ
Երբ ծիծաղել կարելի է առանց տարրի ծիծաղող,
Հարտարախոս լինել, դատել ինչպես մի Մարդ իմաստուն
Առանց տարրեր ունենալու որ ճարտար ու խելոք են
Ուրեմն ինչո՞ւ չի կարելի, որ զգացմունքի ընդունակ
Արարածներն այդ կենդանի կազմված լինեն տարրերից
Որոնք զուրկ են ամբողջովին այդ տարրերից նախնական.
Եվ, վերջապես մենք ծնունդն ենք երկնային մի սերմի,
Մեր ընդհանուր ծնողն է նա, բեղմնավորվում է որից
Հողը՝ մայրը մեր բարերար՝ անձրևներով ոռոգված
Նա է ծնում լեցուն հասկեր, ինչպես նաև խիտ անտառ,
Մարդկային ցեղ, անասուններ և գազաններ զանազան,
Եվ սնունդ է տալիս, որով հագենում է ամեն որ
Եվ բոլորը անհոգ ապրում և ծնում են սերունդներ,
Այդ պատճառով իրավացի է հողին տալ մայր անունը

Այն ամենը, ինչ ծնել է հողը, գնում է դարձյալ
Հողի մեջ, իսկ ինչ իջել է եթերային բարձունքից,
Բարձրանում է դարձյալ դեպի ապաստանը երկնային։
Երբ իրերի մակերեսից տարրեր են հար անջատվում,
Թվում է, որ ամեն վայրկյան ծնվում, մեռնում են նրանք,
Դա պատճառ չէ, որ ասենք, թե նրանց կյանքը հավերժ չէ։
Ամեն վայրկյան մահը անդուլ կործանում է մարմիններ,
Սակայն երբեք նա տարրերին դիպչել անգամ չի կարող։
Իշխանությունն այն է նրա, որ հյուսվածքը քանդելով,
Կազմում է նոր միակցումներ, ձևն ու գույներն է փոխում,
Զգացմունքներ է տալիս նրանց կամ խլում՝ իր ցանկությամբ,
Ուստի պետք է հասկանալ այն, ինչ ասել եմ քեզ առաջ՝
Կարևորը այն է միայն, թե ինչպիսի մարմնիկներ,
Եվ ինչպիսի դրության մեջ են կազմում նրանք միակցում,
Եվ ինչպիսի շարժումներ են նրանք անում փոխադարձ,
Որովհետև նույն տարրերը, որոնք առաջ են բերել
Երկինք, արև, ծով, ցամաք, գետ, օժանդակում են նաև
Կազմել ծառեր, հացաբույսեր, կենդանիներ զանազան։
Էականը մեզ համար լոկ միակցումն է տարրերի,
Ինչպես, ասենք, այս բառերը, որոնք կազմված են հենց նույն
Այդ տառերից, թեկուզ մասամբ զանազանվում են միայն
Իրենց կարգով, դասավորմամբ։ Այդպես են և տարրերը.
Փոխիր նրանց ուղղությունը, արանքները, կապերը,
Հարվածները, քաշը, կարգը, հանդիպումն ու ձևերը,
Դասավորիր այլ կերպ, տարբեր հետևանք դու կստանաս
Ուշադրությամբ պիտի լսես մտքի ձայնը մարդկային,
Որ ձգտում է նոր առարկա հասցնել քո ականջին,
Տիեզերքը քո դեմ մի նոր կերպարանքով դուրս կգա
Չկան այնքան ստույգ իրեր, որ առաջին հայացքից
Չթվան ոչ հավանական մեզ, և չկան այնպիսի
Զարմանալի ու այնքան մեծ երևույթներ, որ հետո
Չթվան մեզ հիանալի առաջվանից շատ պակաս։
Երկնակամարն էլ այդպես է՝ անհուն, բարձր, ջինջ, կապույտ,
Լուսատուներն այնքան պայծառ ոլորտներում նրա խոր,
Լուսինը և պայծառ լույսը արեգակից ճառագած,
Թե առաջին անգամ դուրս գար այդ ամենը մարդկանց դեմ,
Եթե նրանք երևային անսպասելի և հանկարծ,
Ի՞նչը կարող էր համարվել զարմանալի առավել,
Ինչի՞ն էին մարդիկ պակաս հավատալու, ասա՛ ինձ։

Ոչ մի բանի անտարակույս միայն խորին հիացմունք
Կպատճառեր հիանալի այդ տեսարանն, անկասկած։
Սակայն նրա հայեցությամբ մենք ձանձրացած՝ հազիվ ենք
Բարեհաճում նայել պայծառ երկնքին մի ակնթարթ
Նորությունը այն իրերի, որ պատմելու եմ ես քեզ,
Քննարկիր և կշռադատիր եթե գտնես որ ճիշտ է,
Դու անձնատուր պիտի լինես, կամ վեր կենաս, հերքես այնու
Քննարկում եմ այն, որ դուրս է սահմաններից աշխարհի,
Տարածությունն անսահման, ուր կապանքներից ազատված
Սլանալ է սիրում միտքը և սավառնում մեր հոգին
Որ այնտեղ է բարձրանում իր աներևույթ թևերով
Արդ տեսնում ենք ամենուրեք մենք և բոլոր կողմերում
Տիեզերքը, որտեղ նայես՝ ներքևից թե վերևից
Անսահման է, ինչպես արդեն ապացուցել եմ առաջ։
Ակներև միտքն է հաստատում, որ դա, իրոք, այդպես է,
Ինչպես նաև անվերջությունն իրեն հատուկ լնությամբ,
Եվ համարել հավանական անկարելի է, անշուշտ
Երբ բացված է տարածությունն ամեն կողմից ու անվերջ
Երբ անդունդում սավառնում են սերմեր ամեն տեսակի
Թվով անթիվ ու անհամար, շարժումներով մշտական,
Որ ստեղծված լինեն միայն մեր երկիրն ու երկինքը [17]
Մատերիայի մարմնիկները այդքան պարապ կմնա՞ն
Մանավանդ որ բնությունն է մեր աշխարհը ստեղծել
Եթե սերմերն այդ իրերի պատահական հանդիպմամբ
Իզուր, ամեն կերպ, ապարդյուն հավաքվելով շատ անգամ
Հետո խառնվել են վերջապես միակցությամբ այնպիսի
Որ ծնել են արդեն սաղմեր մեծ իրերի մշտական՝
Երկինք երկիր, ծովեր, ապա արարածներ կենդանի
Ուստի պետք է ճանաչես որ աշխարհից դուրս կան բազում
Տարբեր ուրիշ կուտակումներ մատերիայի և նման
Երկրին որին եթերը իր ագահ գրկումն է պահում,
Եվ բացի այդ, եթե միայն մատերիան շատ առատ է,
Ընդունելու համար նրան տարածություն կա նույնպես,
Շարժումների համար նրա չկա ոչ մի խոչընդոտ
Այդ պատճառով արարածներ պետք է կազմվեն անպայման։
Եվ վերջապես թե սերմեր կան քանակությամբ այդքան մեծ,
Այնքան որքան նույնիսկ ամբողջ կյանքում հաշվել չես կարող,
Թե կարող է բնությունը այդ սերմերը իրերի
Խառնել իրար ամենուրեք ու հավաքել նույն կարգով,

Եվ միակցել, ինչպես երկրում, մեզ մնում է ընդունել
Որ այդպես էլ տիեզերքում կան բազում այլ աշխարհներ,
Եվ մարդկային բազում ցեղեր և՛ գազաններ զանազան։
Հարկավոր է ավելացնել, որ բնության մեջ չկա
Իր տեսակի մեջ եզակի արարած, որ, ծնվելով,
Չի պատկանում ոչ մի ցեղի և աճում է մեկուսի,
Սակայն, ինչպես հաստատ գիտես, կենդանիներն այդպես չեն
Բազմաթիվ են նրանք երկրում, բազմաթիվ են և մարդիկ,
Ինչպես նաև թռչունները, և ձկները, որ մունջ են
Նույն պատճառն էլ համոզում է, որ երկինքն ու երկիրը
Արևը, ծովն ու լուսինը, և մարմիններ զանազան
Տիեզերքում եզակի չեն, անշուշտ, ունեն գոյություն
Այլ մարմիններ, որ նման են, և քանակով անհամար
Որովհետև նրանց կյանքին որոշ սահման է դրված
Որովհետև սրանք էլ են ծնվել, ինչպես և նրանք
Որոնց տեսնում ենք բաղկացած անհատներից բազմաթիվ։
Եվ իսկապես, երբ ծնվել է աշխարհն ու երբ կազմվել են
Երկիրն արևն ու ծովերը տիեզերքը մեծ թվով
Տարբեր սերմեր է թողել իր բնումներից մեր երկրի
Շուրջը ինչպես նաև նրա սահմաններից դուրս հեռվում
Այդ պատճառով էլ աճում են և ծովը, և՛ ցամաքը,
Եվ նրանցից է փոխ առնում երկինքը իր նյութերը,
Բարձր պահում իր կամարը երկրի վրա հաստատուն՝
Եվ վերջապես այդտեղից է նորոգվում օդն անդադար՝
Ստանալով տարրերն ամբողջ տարածության կետերից
Եվ այն բոլոր էակներին, որոնք նման են նրանց
Ջուրը ջրին է միանում, հողը՝ հողին, օդը՝ օդին
Կրակը կրակի հետ՝ մինչև այն ժամանակ, երբ բազմադետ
Եվ մեծ վարպետ բնությունը արարածին ամեն մի
Տանի մինչև իր վախճանը, որ տեղի է ունենում
Երբ մարմիններն ստանում են այնքան, որքան կորցնում են
Եվ այդպես է մի ժամանակ կյանքը մնում անփոփոխ
Բնությունը մարմինների աճելուն վերջ է դնում
Երբ կենսական երակներում սնունդ մտնում է նույնքան,
Որքան դուրս է գալիս իսկույն, ի՞նչ կարող է պատահել
Արդեն հասնում է հասակի համար ժամը սահմանված
Բնությունը սանձահարում է զարգացումն իրերի։
Եվ այն ինչը զարգանում է զվարթ աճով շուրջը մեր,
Դանդաղորեն ընթանում է հասունության է հասնում

*Ավելի շատ մարմիններ է ընդունում, քան նետում դուրս*
*Երբ սնունդը երակներում դյուրին կերպով է անցնում*
*Եվ այնքան չի մեծացել, որ դուրս շպրտի ավելի,*
*Ավելի շատ ծախսի, քան այդ հասակում է ստանում*
*Որովհետև իրերից շատ մարմնիկներ են դուրս գալիս*
*Հարկավոր է ընդունել, որ պետք է մտնի ավելի,*
*Քանի աճը չի հասել դեռ իր սահմանված գագաթին։*
*Ուժն սկսում է պակասել, սպառվում է եռանդը,*
*Ամբողջ կյանքը հետզհետե իր անկումին է հասնում,*
*Որովհետև որքան մեծ է լինը վերջում իր աճի,*
*Որքան մեծ է նա ավելի, այնքան էլ նա ավելի*
*Մարմնիկներ է դուրս շպրտում, ցրում նրանց անխնա*
*Եվ աղբյուրը այդքան մեծ մի արտահոսման ժամանակ*
*Սրդեն հոսել չի կարենում այնքան հզոր հոսանքով,*
*Եվ այդպես է արդարացի, որ իրերը արտաքին*
*Հարվածներից տարրալուծվեն և կործանվեն նվաղած,*
*Սնունդը չի բավարարում այդ ղառամյալ հասակում,*
*Սակայն դրսից հարվածները շարունակվում են անվերջ,*
*Նրան ուրիշ մարմիններ են վերջ տալիս ու սպանում։*
*Աշխարհի պինդ պարիսպները ժամանակի ընթացքում*
*Հարձակումով կտապալվեն և ավերակ կդառնան։*
*Սնունդն է միշտ նոր ուժ տալիս, նորոգելով կորուստը,*
*Եվ պահպանում ամեն ինչը և ծառայում որպես հիմք։*
*Բայց իզո՜ւր, երբ ընդունակ չեն երակները դիմանալ*
*Իսկ ինչ պետք է, այն տալ նրան բնությունը չի կարող։*
*Այո դարը ղառամել է, հողը հյուծվել է այնքան*
*Որ հազիվ է կարող մանր կենդանիներ ստեղծել*
*Սակայն առաջ ստեղծում էր նա գազաններ վիթխարի։*
*Եվ այնպես եմ ես կարծում, որ մահկանացու ցեղերը*
*Ոչ թե իջել են երկնքից ինչ-որ ոսկյա շղթայով* [18],
*Ոչ թե ժայռեր ծեծող ծովի ալիքներն են ստեղծել*
*Այլ ծնել է հողը նրանց և իրենով սնուցում.*
*Դեռ սկզբից հասուն հասկեր և այգիներ խաղողի*
*Ստեղծել է նա ինքն իրեն և պարգևել մարդկության,*
*Ապա բաշխել քաղցր պտուղ, մարգագետին, թարմ խոտեր,*
*Այն, ինչ ծանր աշխատանքով այժմ հազիվ է տալիս.*
*Չարչարում ենք մենք եզներին, ուժասպառում հերկողին,*
*Բթանում է երկաթը բայց արտերը բերք չեն տալիս,*
*Քանզի հողը դարձել ժլատ, աշխատանք է ուզում նոր.*

Թափահարում է գլուխը հողագործը ծերունի
Սայում ծանր աշխատանքին, հաճախ, ի դեպ, ապարդյուն։
Եվ երբ նա համեմատում է անցյալի հետ ներկան
Եվ փառաբանում է շարունակ նախնիների վիճակը։
Այգեգործը նայելով իր վազերին, որ հյուծվել են
Նզովում է չարաբաստիկ ժամանակը տխրությամբ
Եվ քրթմնջում է ինքն իրեն այն մասին, որ անցյալում
Բարեպաշտ այլ ժողովուրդ էր ապրում՝ քչով բավական
Թեև փոքրիկ էր ավելի նրանց հողի բաժինը.
Չի հասկանում, որ ամեն ինչ պառավում է օրեցօր,
Կյանքի երկար ճամփից հոգնած լոկ իջնում դերեզման
Արդ եթե այդ ըմբռնել ես, այնժամ պիտի պարզ լինի
Որ ազատ է բնությունը և զուրկ գոռոզ տերերից
Աստվածները չեն խառնվում նրա ներքին գործերին։
Հանգստության մեջ է անցնում նրանց կյանքը մշտատև
Նրանցից ո՞վ տիեզերքին կարող էր տալ օրենքներ
Տիեզերքի լարված սանձերն ինչպե՞ս, ո՞վ էր զսպելու
Հմուտ ձեռքով և գլորել երկինքները այն բոլոր,
Եվ համաչափ եթերային կրակներով չհանգչող
Ջերմություն տալ մեր աշխարհին և լինել նույն ժամանակ
Ամենուրեք, բավարարել կարիքները առանձին,
Եվ ամպերով մութ տարածել, և՛ հարվածել բարձունքից
Շանթի ահեղ հարվածներով, և՛ կայծակներ արձակել
Որոնք հաճախ ավերում են տաճարները հենց իրենց[19],
Եվ մոլեգնել այնտեղ, որտեղ անապատ է ամայի,
Եվ, թողնելով հանցավորին, դաժանորեն ջախջախել
Բոլորովին անմեղ մարդկանց որ արժանի չեն պատժի։

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Առաջինը դո՛ւ ես բերել խավարի մեջ այդպիսի
Պայծառ լույս, որ լուսավորում է ողջ կյանքը մարդկային
Ինչպես այն կա, Հունաստանի փառք ու պատիվ պանծալի
Այժմ պետք է ես քայլեմ քո հետքերով, քեզ հետևեմ
Ո՛չ թե մրցել կուզեմ քեզ հետ այլ սիրով քեզ հետևել
Մի՞թե կարող է ծիծեռը սեգ կարապի հետ մրցել
Մի՞թե այծը հավասարվել արագ վազքում կարող է
Արագավազ հովատակին։ Հայր իմաստո՛ւն, մեծիմաստ
Դու ինչպիսի դաս ես տալիս պատվիրաններից ուշադիր։
Մեղուն այնքան չի հավաքում քաղցր մեղր բուրավետ
Որքան մենք ենք ճշմարտություն գրվածքներում քո գտնում
Ոսկյա խոսքեր[1] անմահական հավերժ կյանքի արժանի
Մեծ ուսմունքդ որ բխում է աստվածային քո մտքից՝
Բնության մասին իրերի մենք հազիվ ենք ճիշտ ընկալում
Երբ ցրվում է հոգու վիշտը, լացում պատերն աշխարհի
Անվերջության մեջ իրերի ընթացքն է մեզ ցույց տալիս,
Աստվածների օթևանն ու տերությունն ենք մենք տեսնում
Ո՛չ քամի է փչում այնտեղ, ո՛չ էլ անձրև է թափվում
Եվ չի ճնշում նրանց ցուրտը իր անարատ ծածկույթով
Նրանց պայծառ օթևանը անամպ եթերն է ծածկում
Ամեն ինչն է այնտեղ ժպտում լույսերի մեջ շողշողում
Բնությունը առատորեն ինքն է տալիս ամեն ինչ,
Եվ ոչ մի բան աստվածների անդորր կյանքը չի հուզում

Ու սահեսիլ Աքերոնից այնտեղ չկա ոչ մի լաստ
Եվ երկիրը չի խանգարում այն ամենը տեսնել, ինչ
Կատարվում է մեր ոտքի տակ, տարածության անդունդում
Ահա ինչու ինձ սրբազան հիացմունք է պատճառում,
Երբ տեսնում եմ, որ քո ուժով բնությունը բացվել է
Եվ պարզվել է ամենուրեք այժմ մտքին մատչելի։
Լուծությունն ու հատկությունը ես տարրերի հիմնական
Ես բացահայտել եմ քեզ արդեն և թե ինչպես են տարրեր
Հավերժական շարժումներով ակամայից ալանում
Եվ թե ինչպես են տարրերը մոլոր իրերն ստեղծում։
Այժմ պետք է բացահայտեմ բնությունը մեր հոգու
Եվ մեր ոգու[3], ոչնչացնեմ այն սարսափը, որով դեռ
Աքերոնն է մարդկանց հոգին այնքան ճնշում շարունակ
Թունավորում նրանց կյանքը, նրանց բոլոր մտքերը
Ներկում մահվան մառախուղով, որ խավար է անթափանց,
Եվ նրանց չի թողնում պայծառ ուրախություն վայելել
Կան այնպիսի մարդիկ, որոնք մեզ ասում են, թե ցավից
Պղծությունից էլ ավելի վախենալ է հարկավոր
Բան մահից ու Տարտարոսի անդունդներից սոսկալի
Գիտեն հոգու բնությունը, որ կազմված է արյունից
Մեր ուսմունքը ամենևին նրանց պետք չէ, ասում են
Եվ այդպես են ասում ոչ թե այն պատճառով, որ նրանք
Համոզված են, թե այդպես է, այլ սնափառ են, անշուշտ
Եվ նրանց սին ցանկությունն է դրդում այդպես ասելու
Ուզե՞ս, որ այդ ապացուցեմ։ Նայիր ուրեմն այն մարդկանց
Որոնց իրենց հայրենիքից քշել են ու արտաքսել
Աղտոտված են հանցանքներով, խայտառակված են զազիր
Ահավոր ու դաժան պատժով։ Բայց և այնպես նրանք միշտ,
Ուր որ լինեն ամեն տեսակ թշվառության ենթարկված
Աղոթում են և թաղման պահին մեռելահաց են սարքում,
Մանեսին զոհ են մատուցում, ու ոչխարներ են մորթում
Դժբախտությունն ավելի է աշխուժացնում այդ մարդկանց
Խելառ գլխում անհեթեթ ու խրթին մտքեր կրոնական։
Ահա ինչու մարդուն պետք է թշվառության մեջ տեսնել,
Այն ժամանակ կհամոզվես, թե ինչպիսի մարդ է նա
Որովհետև այն ժամանակ սրտի խորքից է լսվում
Ձայնն իսկական, դիմակն ընկնում և մնում է մարդը լոկ։
Ժլատ են շատ մեծարանքի ցանկությունն է ստիպում
Դժբախտ մարդկանց օրենքների սահմաններից դուրս գալու,

Եվ հաճախ է նրանց դրդում դիմել ծանր հանցանքի,
Օժանդակել հանցավորի, օր ու գիշեր, ստիպված,
Ջանալ ծանր աշխատանքով հարստություն ձեռք բերել։
Այդ խոցերն են թունավորում մարդկանց կյանքը և մահից
Այնքան նրանց սարսափեցնում։ Եվ թվում է, որ երբեք
Հիվանդություն և անարգանք, արհամարհանք ու ամոթ
Չի կարելի համատեղել խաղաղ, անհույզ կյանքի հետ,
Մարդկանց համար դրանք կարծես լինեն մահվան նախամուտք
Ենթարկվելով այդպիսի կեղծ տագնապների, այդ մարդիկ
Ցանկանում են հեռանալ այդ կործանարար խմբակից
Խուսափելու համար, սակայն, նրանք գույք են կուտակում,
Եվ հարազատ մարդկանց արյուն թափելով են ձեռք բերում
Նրանք մի մեծ հարստություն, ուրախությամբ ընթանում
Իրենց մեռած միակ եղբոր սգո կառքի հետևից։
Սարսափում են խնջույքներից, երբ ազգական է կանչում,

Մահվան երկյուղն է կրծոտում նախանձների սիրտը չար
Նրանց կրկնում է անդադար, որ այս մեկը հզոր է,
Եվ նայում է մի ուրիշի, որը, նրա կարծիքով,
Փայլում մի փառք է վայելում, մինչդեռ ինքը մնում է
Խորասուզված մի անթափանց խավարի ու ցեխի մեջ։
Ոմանք իրենց կյանքը նույնիսկ զոհաբերում են դատարկ
Արձանի կամ անվան համար։ Ոմանք մահվան երկյուղից
Հաճախ այնքան են տառապում՝ անտանելի ու դաժան
Որ զզվելով իրենց կյանքից, պայծառ լույսից ցերեկվա
Հոժարությամբ ընթանում են իրենց մահվան ընդառաջ,
Մոռացած, որ իրենց վշտի աղբյուրը նույն երկյուղն է
Եվ այն է, որ հալածելով անմեղությունն անդադար,
Քանդում, փշրում է կապերը ամենասերտ մերձության
Բնությունն էլ իր հերթին է նրանց ոտքով տրորում
Եվ, իսկապես, Աքերոնից խուսափելով շարունակ,
Մի՞թե ոմանք ծնողներին, հայրենիքին չեն մատնում։
Ինչպես մթում մանուկներն են ամեն ինչից վախենում,
Այդպես մենք ենք օր-ցերեկով սարսափում այն բաներից
Որոնցից մեզ հարկավոր է վախենալ ոչ ավելի,
Քան նրանից, որից իզուր մանուկներն են վախենում
Ուստի վանել այդ երկյուղը և խավարը մեր հոգուց
Կարող են ոչ թե ցերեկվա լույսն ու շողերն արևի,
Այլ բնությունն ինքն իր ներքին կառուցվածքով ու տեսքով։

Ասում եմ, թե ոգին, որին հաճախ խելք ենք անվանում
Որի մեջ է տեղավորված գիտակցումը մեր կյանքի,
Մի առանձին մասն է մարդու, ինչպես ձեռքերն, աչքերը
Կամ ոտքերը, որ կենդանի արարածի մասերն են։
Թեև իզուր իմաստուններն ասում են մեզ շարունակ,
Որ զգացող ոգին մարմնում մի տեղ չունի առանձին,
Այլ նա մարմնի մի կենսական սովորությունն է միայն,
Որ գրայները անվանում են հարմոնիա[6], քանի որ
Ոգևորում է մարմինը, սակայն չունի որոշ տեղ,
Այնպես, ինչպես առողջությունն է կյանքի մի դրություն
Սակայն մարմնում մի որևէ առանձին մաս չի կազմում,
Այդ պատճառով առանձին տեղ նրանք հոգուն չեն տալիս
Բայց ճշմարիտ լինելուց այդ կարծիքը շատ հեռու է։

Մեր մարմինն իր արտաքինով հիվանդանում է հաճախ
Իսկ ներքինով այդ ժամանակ մենք առողջ ենք և առույգ
Իսկ հաճախ էլ ընդհակառակն՝ առողջ է մեր մարմինը
Սակայն հոգին հիվանդությամբ է որևէ տառապում
Այնպես, ինչպես երբեմն, ասենք, մեր ոտքերն են խիստ ցավում
Այդ ժամանակ մեր գլուխը չի ունենում ոչ մի ցավ
Բացի այդ, երբ անդամները, ասենք, քաղցր ննջում են
Եվ պառկած է մեր մարմինը անզգացմունք, ծանրացած
Մեր մեջ կա մի այնպիսի բան, որը նրա փոխարեն
Կամ զղում է բերկրությունից, կամ տառապում է վշտից։

Որպեսզի քեզ ապացուցեմ, թե մեր հոգին մնում է
Անդամներում այն ժամանակ, երբ հարմոնիան խախտված է
Բավական է քեզ ասել, որ երբ մարմինը կորցնում է
Իր մի մասը, այդ ժամանակ շարունակում է կյանքը
Ոգևորել մեր մարմինը ընդհակառակն՝ եթե մեր
Մարմինն ինչ-որ մարմնիկներից տաքություն իր զրկվում է
Եվ բերանից դուրս է գալիս քանակությամբ ոչ շատ օդ
Անմիջապես հեռանում է կյանքը մարմնից առհավետ։
Այստեղից դու եզրակացնել կարող ես, որ մեր մարմնի
Բոլոր մասերն, անկասկած, չեն կարող խաղալ դերը նույն
Կյանքի համար էական չեն, բայց ջերմությունն ու օդը
Պահպանողներն են գլխավոր, կյանքի վերջին տարրերը,
Որոնք մարմնից հեռանում են, երբ մեռնում է արդեն նա
Ուստի քամի և կենսական ջերմություն կան, որ մարմնից
Հեռանում են այն ժամանակ, երբ իր շունչը փչում է։

*Ուստի ոգու և մեր հոգու բնությունը, անկասկած,*
*Պետք է կազմի մի որևէ առանձին մաս մարմնի մեջ*
*Եվ դու մերժիր այդ* հարմոնիան *երաժիշտներն այդ բառը*
*Փոխ են առել Հելիկոնից կամ մեկ անհայտ մի տեղից՝*
*Անվանելու համար մի բան, որը անուն դեռ չուներ*
*Ինչպես էլ որ եղած լինի, լսի՛ր, թե ինչ եմ ասում*
*Մեր ոգին ու հոգին այնքան միացած են սերտորեն,*
*Որ կազմում են անխախտելի մի էություն միասին*
*Բայց գլուխն է տիրապետում մեր ողջ մարմնին և ունի*
*Խելք, որ ոգի ենք անվանում, դրված կրծքի մեջտեղում,*
*Այնտեղ, որտեղ ուրախությունն ու երկյուղն են լինում մեր*
*Եվ մեր խելքի և մեր ոգու բնակավայրն այնտեղ է։*
*Իսկ մնացած մասը հոգու, որ ցրված է մեր մարմնում*
*Հնազանդվում է մեր խելքին, նրա կամքով է շարժվում։*
*Ըմբռնում է միայն խելքը՝ ինքնուրույն և ինքնակամ*
*Երբ մարմինն ու հոգին նույնիսկ դեռ ոչ մի բան չեն զգում*
*Ինչպես գլուխն ու աչքերը կարող են մերթ տառապել*
*Որևէ մի հիվանդությամբ, սակայն ամբողջ մարմնով մենք*
*Այդ ժամանակ քաջառողջ ենք տառապում է նաև մեր*
*Ոգին վշտից կամ ցնծում է ուրախությամբ կենարար*
*Սակայն հոգին անդամներում ամենևին չի փոխվում*
*Բայց երբ ոգին ցնցվում է մի սաստիկ ուժգին հուզմունքից*
*Հոգին էլ է անմիջապես ամբողջովին մասնակցում,*
*Եվ քրտնում է ողջ մարմինը հանկարծակի գունատվում*
*Մարդու լեզուն կակազում է, նրա ձայնը խզվում է*
*Եվ աչքերը խավարում են, ականջները զրնգում*
*Թուլանում են անդամները, հաճախ մահով վերահաս*
*Վերջ է տրվում կյանքին այնժամ։ Միությունը շատ է սերտ*
*Մեր ոգու և հոգու, չէ՞ որ հարվածում է հոգին միշտ*
*Մարմնին հենց նույն հարվածով, որ ինքն է ոգուց ստացել*
*Եվ այդտեղից հետևում է, որ մեր հոգու և ոգու*
*Բնությունը մարմնավոր է, եթե նրանք իսկապես,*
*Ի վիճակի են մեր մարմնի անդամները արթնացնել,*
*Փոխել մարդու դեմքի գույնը, ղեկավարել մարմինը*
*Բայց չէ՞ որ այդ արարքները շփումներ են ենթադրում*
*Շփումները ենթադրում են մարմնավոր մի էություն,*
*Ուստի պարզ է՝ նյութական են անշուշտ ոգին ու հոգին։*
*Հետո՝ մի՞թե չենք տեսնում մենք, որ բաժանում է հոգին*
*Մարմնի բոլոր գրգիռները ինչպես նաև ողջ ֆունկցիան։*

Եթե տեղի հարվածն ասենք մահացու չէ, և եթե
Չի վնասել ոսկորները և նյարդերը մեր մարմնի,
Ոչ թափանցել ընդերքի մեջ, հյուսվածքը չի պատառել,
Աշխատում ենք սակայն, մենք, իսկույն գետին գլորվում
Կարծես արդեն մեռած լինենք, անցնում է մի ժամանակ
Խելքը դարձյալ գրգռվում է ինչ-որ քաղցր բերկրությամբ,
Զգում աղոտ մի ցանկություն՝ նորից ոտքի ելնելու
Ուստի հոգու բնությունը մարմնավոր է, քանի որ
Այդքան շատ է տառապում նա մարմնավոր մի հարվածից
Բայց ինչպիսի՞ հատկություններ ունեն հոգու տարրերը
Ինչ տեսակի տարրերից է արդյոք հոգին բաղկացած
Այդ պետք է քեզ պարզաբանեմ։ Նախ՝ ասում եմ, որ հոգին
Կազմված է այն տարրերից, որ մանր, նուրբ են չափազանց։
Ու համաձայն կլինես, թե ինչպես հարկն է մտածես
Զարմանալի արագության մասին, որով մեր հոգին
Ընդունում է իր վճիռներն ու սկսում է գործել։
Բնությունը ցույց չի տալիս մեզ այնպիսի մի մարմին
Որ ավելի գործուն լիներ։ Շարժունությունն այդքան մեծ
Ենթադրում է տարրեր, որոնք շատ մանր ու կլոր են
Որպեսզի մի թեթև հարված նրանց իսկույն շարժում տա
Ուստի եթե հեշտությամբ է մի աննշան հարվածից
Ջուրը շարժվում անքակտելի մասնիկներով իր թեթև
Պատճառն այն է, որ տարրերը նրա շատ նուրբ, մանր են
Ընդհակառակն՝ եթե մեղրը հապաղում է ավելի
Եվ ավելի դանդաղորեն հոսում նրա հեղուկը,
Պատճառն այն է, որ մասերը նրա կապված են շատ պինդ
Եվ այդ պինդ կապանքներով խանգարում են միշտ իրար
Որովհետև պակաս հարթ են, պակաս կլոր, պակաս նուրբ
Իսկ կակաչի հատիկները, որոնք մի կույտ են կազմել
Իրենց կերպով ցրվելու են քամու շնչից աննշան
Բայց չի կարող քամին երբեք ցրել կույտը քարերի
Կամ տեգերը այն, որոնցով դաշտում բուրգեր են կազմում
Ուստի այնքան ավելի են շարժուն լինում իրերը
Որքան նրանց մակերեսը հարթ ու փոքր է ավելի
Ընդհակառակն՝ նրանք, որոնք խորդուբորդ ու ծանր են
Ավելի մեծ կայունություն պիտի ցույց տան, անկասկած։
Ուստի հոգու էությունը, որ շարժուն է չափազանց
Պետք է կազմված լինի, անշուշտ, մասնիկներից այնպիսի
Որոնք փոքրիկ են չափազանց, չափազանց հարթ ու կլոր։

Դու շատ անգամ կզգաս, որ այս սկզբունքը քեզ համար
Միշտ օգտակար է լինելու և առավել կարևոր։
Մի սուրբ փոքր կարող է քեզ համոզել, թե մեր հոգին
Ինչպիսի նուրբ հյուսվածք ունի, որքան քիչ տեղ կբռներ,
Եթե միայն կարենայինք նրան ի մի հավաքել.
Հավիվհաղ է մարդուն տիրում անդորր մահվան հանգիստը,
Եվ հազիվ են հոգին, ոգին, նրան թողած, հեռացել,
Ոչ մի պակաս չի նկատվում նրա ամբողջ մարմնի մեջ։
Մահը նրան պահպանում է տեսքով, քաշով անփոփոխ,
Զգացմունքն է խլել միայն, ջերմությունը կենսական։
Այդ պատճառով էությունը, որ կապված է նյարդերի,
Երակների, ընդերքի հետ, պետք է լինի բաղկացած
Տարրերից, որ շատ փոքրիկ են, որովհետև երբ արդեն
Նա մեր մարմնից դուրս է եկել, ոչ մի բան չի պակասում՝
Ո չ մեր մարմնի մակերեսից և ո չ նրա զանգվածից։
Այդպես լինում է Բաքոսը[7], երբ կորցնում է իր ոգին,
Եվ այն համեղ կերակուրը, որ կորցրել է իր համը,
Անուշահոտ նյութը, որի անհետացել է բույրը,
Չէ՞ որ աչքով չենք նկատում, որ փոքրանում են նրանք,
Կամ որ նրանց ծանրությունը պակասում է գոնե քիչ,
Որովհետև համն ու հոտը հանդիսանում են մարմնի
Ամենանուրբ մասնիկները։ Ուստի դարձյալ ասում եմ,
Որ ամենից նուրբ տարրերից են բաղկացած, անկասկած,
Մեր ոգին ու հոգին, քանզի երբ հեռանում են նրանք,
Ամենևին չի պակասում ծանրությունը մեր մարմնի։
Սակայն կարծել չի կարելի, թե լրությամբ պարզ է նա
Երբ թեթև շունչ է դուրս գալիս մեռնողների բերանից,
Այն խառնված է ջերմության հետ, իսկ ջերմություն չի լինում,
Եթե օդի խառնուրդ չկա, քանզի նրա մասերը
Միակցված չեն իրար այնքան ամուր կերպով, սերտորեն,
Որ սողոսկել չկարենան արանքների մեջ օդի,
Ուստի հոգին մեր կազմված է երեք տեսակ տարրերից։
Բայց զգացմունք առնելու այդ բոլորը քիչ է դեռ
Չէ՞ որ թույլ տալ չի կարելի, որ նրանցից առաջ գան
Ե՛վ զգացմունքներ, և՛ շարժումներ, մանավանդ՝ միտք արթնացող
Այդ պատճառով անհրաժեշտ է ավելացնել չորրորդը,
Որևէ մի այլ էություն, որ չունի ոչ մի անուն։
Բայց ոչ մի բան իր տարրերի շարժունությամբ, նրբությամբ
Եվ հարթությամբ դեռ չի կարող համեմատվել նրա հետ

Եվ նա է մեր անդամներին առաջինը հաղորդում
Կյանքի բոլոր շարժումները, իր տարրերի մանրության
Պատճառով է շարժումները առաջինը սկսում,
Որոնք արդեն անմիջապես ջերմությանն են հաղորդվում,
Հետո՝ քամու աներևույթ շնչին, ապա և օդին
Այդ ժամանակ գործողության մեջ է ամբողջ մարմինը
Եվ արյունը երակներում սկսում է խիստ զարկվել,
Զգացումները գրգռվում են, հասնում մինչև ոսկրածուծ,
Ուրախություն լինի արդյոք, թե տխրություն անսահման։
Բայց ո՛չ վիշտը, ո՛չ էլ ուրիշ որևէ մի ուժգին ցավ
Թափանցել չեն կարող մինչև այդ չորրորդի տարրերը,
Որանց մարմնին պատճառելու անկարգություն այնպիսի
Որ կյանքը իր ապաստանում արդեն մնալ չի կարող
Եվ մեր հոգին դուրս չփախչի մարմնի բոլոր ելքերով։
Սակայն պետք է ասել, որ այդ հարվածները մեծ մասամբ
Հաճախ մարմնի մակերեսից չեն թափանցում նրա մեջ,
Մի հանգամանք, որին կյանքի պահպանմամբ ենք պարտական։
Իսկ այժմ այդ չորս տարրերը ինչպիսի՞ մի օրենքով
Կարողանում են միակցվել, գործել այդքան համերաշխ,
Կուզեի քեզ բացատրել, բայց աղքատությունն է լեզվի
Խանգարում ինձ այդ անելու, այդ պատճառով ստիպված
Բավական եմ համարում այն, որքան կարող եմ միայն
Շարադրել քեզ թեթև կերպով և ընդհանուր գծերով։
Չորս տարրերը, սկզբունքներն իրենց իրար խառնելով,
Շարժումները միասին են սկսում, բայց չեն կարող
Ո՛չ անջատվել, ո՛չ գործադրել հատկություններն առանձին,
Այլ կարող են նրանք գործել որպես ամբողջ մի մարմին,
Հատկություն կամ ունակություն, որ տարբեր են իրարից
Այնպես, ինչպես տարբերվում են մի կենդանու ընդերքում
Գույնը, օդը, հոտն ու համը, որ հատուկ են լոկ նրանց,
Հատկություններն այդ միացած պատկանում են այնուհետ
Միակ և նույն էությանը, ջերմությունն էլ է այդպես
Ինչպես նաև օդն ու շունչը, և այն, որ դեռ հայտնի չէ
Կազմում են մի ամբողջություն սկզբունքի հետ գործող
Որ սկիզբ է տալիս նրանց շարժումներին, և որը
Զգացմունքներ է առաջ բերում այդպես ամբողջ մարմնի մեջ
Այդ գլխավոր սկզբունքը թաքնված է մեր մարմնի
Կենտրոնում և կազմում նրա ամենախոր մի մասը
Եվ այնպես է նա, որ կարծես լինի հոգին մեր հոգու

Եվ ինչպես մեր անդամներում և մարմնի մեջ մեր ամբողջ
Ոգու ունակ ուժերը միշտ ուժերի հետ են հոգու
Իսկ տարրերը, որոնցից են նրանք կազմված, փոքրիկ են
Այնպես էլ այդ սկզբունքը, որ չունի ոչ մի անուն,
Իր գոյությամբ պարտական է ամենանուրբ տարրերին
Եվ մեր մարմնի խորքումն է նա, որտեղ նա նույն ժամանակ
Մարմնի տերն է ամբողջովին և հոգին է մեր հոգու։
Շունչը, օդն ու ջերմությունը անդամներում կարող են
Առաջացնել կյանք այդպիսի մի խառնուրդի օգնությամբ
Թեև, վերցված առանձնապես, ամեն մեկը կարող է
Ավելի թույլ կամ ավելի ուժեղ լինել, անկասկած
Սակայն միայն խառնուրդից է կազմվում ամբողջ մարմինը
Թե առանձին գործեն նրանք, զգացմունքները կխախտվեն
Թե բաժանվեն, քանդելու են կյանքի բոլոր կապերը։
Սակայն միայն ջերմությունն է միշտ բարկություն գրգռում
Որից եռում է արյունը և փայլում են աչքերը
Այնտեղ կա և մի սառը շունչ՝ ուղեկիցը երկյուղի
Որից դողում են հոդերը, զգայարվում է մարմինը
Սակայն բոլոր այդ տարրերից չափավոր է ավելի
Օդը որին պարտական ենք խաղաղությամբ մեր հոգու
Նա դարձնում է դեմքը խաղաղ։ Ջերմությունը տիրում է
Սրտում, որ չի զսպում իրեն. բարկությունը նրա միշտ
Հեշտությամբ է բոցավառվում։ Միշտ այդպես է առյուծը
Այդ կատաղի չորքոտանին, որի կողերն անդադար
Բարձրանում են, իջնում հեւթով մռնչյունից ահռելի
Նա չի կարող զսպել կրծքի կատաղությունն ահավոր
Եղնիկների հոգին լի է քամիների սառնությամբ
Որը նրանց ընդերքում է արագորեն պտտվում,
Նրանց բոլոր անդամներին միշտ պատճառում է սարսուռ
Եզն իր կյանքով պարտական է արդեն օդին չափավոր
Նրա հոգին մատչելի չէ կրակներին բարկության
Ինչպես նաև չի վախենում նա երկյուղի նետերից
Չի կուրանում էրեբյան քուլաներից սև ծխի
Սակայն նա չի ընդարմանում սառնությունից թափանցիկ
Առյուծի և եղնիկի մեջ միջին տեղն է գրավում։
Մարդկային ցեղն էլ այդպես է կրթությունը օրինակ
Ոմանց տալով արտաքին փայլ բնավ ջնջել չի կարող
Այն գլխավոր գծերը, որ բնությունն է դրոշմել
Չկարծես, որ կարելի է պոկել արատն արմատով

Ով կարող ես սրան բաժնել բարկությունից կատաղի,
Իսկ երկրորդին՝ իր երկյուղից, թուլությունից՝ երրորդին,
Որ դարձնում է նրան ասփույթ ավելի, քան պետք է այդ։
Եվ չկան տարբերություններ բնույթների ղանազան
Որ կա, ինչպես և նրանցից առաջ եկած բարքերում,
Ես էլ չեմ կարող նրանց ծածուկ պատճառները շարադրել
Ու էլ անուն տալ այն բոլոր մարմնիկների ձևերին
Որոնցից է առաջ գալիս տարբերություն ամենայն
Բայց կարծում եմ, որ կարող եմ հաստատ ասել, թե միտքը
Եվ ուսումը թեև ջնջել ամենևին չեն կարող
Այդ նախնական գծերը, բայց այն աստիճան են նրանց
Թուլացնում, որ ոչ մի բան մեզ չի խանգարում, որպեսզի
Ապրենք անդորր այն կյանքին, որ աստվածներն են վայելում։
Այդպիսով, մեր հոգու համար մարմինը մի ծածկույթ է
Իսկ հոգին էլ պահապանն է հանդիսանում մեր մարմնի
Երկուսն էլ նույն արմատից են առաջ եկել անկասկած,
Չի կարելի նրանց առանց կործանելու բաժանել
Ինչպես խնկից չի կարելի խլել նրա բուրմունքը,
Առանց նրան քայքայելու, այնպես էլ չի կարելի
Մի որևէ մարմնից պոկել նրա ոգին ու հոգին,
Քայքայած հենց այդ երկու էությունները անբաժան։
Ձևավորման պահից արդեն նրանց բոլոր տարրերը
Այնքան սերտ են կապված իրար, որ ենթարկվեն նույն բախտին
Եվ չեն կարող նրանք գործել, ի վիճակի չեն զգալ
Առանց իրար օգնելու և շարժումների միությամբ
Բոցավառում պահպանում են անշեջ կյանքի ջահերը
Եվ, իսկապես ոչ մի մարմին առանց հոգու չի ծնվում,
Առանց հոգու չի աճում նա և չի ապրում նա հոգու
Մահից հետո Որովհետև ջրի պես չէ, որ տրված
Ջերմությունը վերադարձնի, բայց քայքայման չենթարկվի
Իսկ երբ հոգին հեռանում է, մարմինը չի դիմանում
Եվ խորտակվում ու փտում է արդեն նրա հյուսվածքը։
Սկզբից են սովոր կրել կյանքի բեռը միասին,
Եվ այդ երկու էությունները այնքան սերտ են միացել
Որ նույնիսկ դեռ մոր արգանդում նրանք առանց մեռնելու
Բաժանվել չեն կարողանում։ Նրանց կյանքը, անկասկած
Միշտ է այնպես կապված եղել, բնությունը այդպես է։
Ով մարմնավոր զգացմունքները ժխտում է և ասում, թե
Մեր մարմնի մեջ ցրված հոգին մեզ տալիս է այն բոլոր

Շարժումները, որոնց, իրոք, զգացմունքներ ենք անվանում,
Նշանակում է՝ բացահայտ ճշմարտության դեմ է նա։
Ինչո՞վ մարմնի զգացմունքները ապացուցել կարող ենք,
Եթե ոչ այն սերտ կապով, որ կա նրանց և հոգու մեջ,
Մի բան, որ մենք հաստատել ենք հիմունքներով խելացի։
«Երբ հեռանում է մեր հոգին, մարմինն էլ է զրկվում իր
Զգացմունքներից»։ Պատճառն այն է, որ մարմինը իր կյանքում,
Իր համար ոչ հատուկ տարրեր չափազանց շատ կորցնելով,
Հետո մահն է արդեն խլում այլ տարրերը կարևոր։

Բայց ասել, թե մեր աչքերը ոչինչ տեսնել չեն կարող[8],
Որ դռներ են նրանք միայն բաց արած և նրանցով
Հոգին տեսնում է իրերը, խենթություն է, որի դեմ
Տեսողությունն ինքն է ելնում և ստիպում համարել,
Որ տեսնում ենք մեր բիբերով։ Իսկ երբ փայլուն իրերի
Նայել նա չի կարողանում, լույսն է ուժգին չափազանց
Խանգարում և այդ պատճառով մենք կարող ենք ասել, որ
Ունենում են բաց դռները, որոնցով մենք նայում ենք,
Ցնցումներ, որ մեզ տանջում են։ Բայց այդպես չի պատահում,
Երբ նայում ես բաց դռներով, աչքերը չեն հանդիպում
Որևէ մի դժվարության, երբ բացված են փեղկերը
Եթե, իրոք, մեր աչքերը հանդիսանում են դռներ,
Երբ դռներն այդ վերացված են և հոգուն չեն խանգարում,
Այն ժամանակ ավելի լավ պետք է տեսներ մեր հոգին։

Բայց այդ հարցում զգուշացիր դու կարծիք, ասենք, ունենալ,
Ինչպիսին է Դեմոկրիտի կարծիքը[9] մեծ, սրբազան,
Որ իբրև թե հոգու, մարմնի այդ տարրերը նախնական
Անդամներն են կապում տարրեր հաջորդաբար իրար հետ
Որ ավելի նուրբ են հոգու տարրերը այն տարրերից,
Որոնցից և մեր մարմինը, և ընդերքն են բաղկացած,
Քանակությամբ այնքան շատ չեն, անդամների մեջ ցրված
Այն ժամանակ մենք իրավունք կունենայինք ասելու,
Որ այնքան են նվազագույն մարմնիկները նախնական,
Որքան կարող են զգացմունքներ առաջ բերել մարմնի մեջ,
Նույնքան, որքան անդամներում հոգու մասեր կան ցրված
Եվ, իսկապես, փոշին բնավ մենք չենք զգում այն, որը
Կպչում է մեր անդամներին, և՛ ոչ նեկը այն, որով
Շպարում ենք մենք մեր մաշկը, և՛ ոչ ցողը գիշերվա,
Ե՛վ ոչ սարդի նուրբ թելերը, երբ հանդիպում ենք նրանց
Քայլելիս, և նույն միջատի հին ծածկույթը, որ հաճախ

Ընկնում է մեր գլխի վրա, և բմբուլը թռչունի
Եվ ոչ թռչող պապուսները, և՛ ոչ թելերն այն, որոնք
Դղեկուց են առաջ գալիս, սավառնում են օդի մեջ
Եվ իջնում են գետին դանդաղ, քանզի թեթև ու նուրբ են
Մենք չենք զգում նաև քայլը միջատի, որ սողում է,
Եվ վերջապես, մի մոծակի ոտքի հետքերն, ասենք, կամ
Այլ միջատի, որ ավելի փոքրիկ է, և շատ հաճախ
Անփույթ դնում ու գալիս է անդամների վրա մեր։
Եվ, այդպիսով, անհրաժեշտ է, որ մեր մարմնի տարրերից,
Անշուշտ, որոշ քանակություն լինի առաջ գրգռված,
Բան մեր հոգու մարմնիկները, որ բաժան են իրարից
Այնքան մեծ մի տարածությամբ, որ կարենան միանալ,
Զգալ գրգիռ և հարվածել, ապա նորից ետ մղվել։
Անշուշտ, ոգին է գլխավոր պահապանը մեր կյանքի
Կյանքը կախված է նրանից ավելի, քան մեր հոգուց
Իրոք, հոգին ոչ մի վայրկյան մեր մեջ մնալ չի կարող,
Մնալ այնպես, առանց ոգու, առանց մտքի ու խելքի,
Մինչդեռ նա իր վերջին մասնիկն է ցրում ողջ մարմնի մեջ
Հետևում միշտ ոգուն օդում և հեռանում է մարմնից,
Երբ տիրել է արդեն մահի սառնությունը մեր մարմնին։
Սակայն քանի կենդանի է, քանի մարդը շնչում է,
Պահպանում է միտքն ու ոգին. մասամբ կարող է կորցնել
Իր հոգին ու անդամները, երբ դառնում է հաշմանդամ
Առանց ոտքի, առանց ձեռքի, կոճղի նման դարձյալ նա
Դեռ կարող է թե՛ օդ շնչել, թե՛ պահպանել զգացմունք
Եվ քանի նա դեռ չի զրկվել ամբողջովին իր հոգուց,
Որքան էլ մի փոքրիկ մասնիկ մնա, կապրի մարմինը
Այդպես եթե պատառոտվեն աչքի բոլոր մասերը,
Որ նրա շուրջն են գտնվում թե մնա բիբն անվնաս
Տեսողության ուժից դարձյալ կենդանին չի զրկվի, թե
Ակնախնձորն ամբողջովին բոլորովին չավերես,
Չվնասես նրա շուրջը, բիբը մենակ չթողնես,
Տեսողությունն ամենևին չի տուժելու, անկասկած։
Սակայն եթե դու ավերես այդ զգացմունքի կենտրոնը,
Որ մեր աչքի փոքրիկ մասն է հանդիսանում, իմացի՛ր
Թեկուզ ամբողջ մնացածով աչքը մնա անաղարտ
Լույսը իսկույն պիտի մարի և տիրելու է խավար։
Մեր ոգին ու հոգին այդպես շաղկապված են առհավետ։

Այժմ պետք է իմանաս, թե մեր մարմնի հետ ինչպես են
Եվ ոգին ու հոգին ծնվում, հետո մնում նրա հետ
Մի առարկա, որով, անշուշտ, արժանի է զբաղվել։
Ահավասիկ երկարատև աշխատանքի պտուղը
Քեզ արժանի տաղերով ես այժմ պիտի շարադրեմ։
Որովհետև սերտ միությամբ էությունները այդ երկու
Էություն են կազմում միակ, միացրու մի անունով
Եվ երբ ասեմ, թե մնում է առաջինը, այնժամ դու
Զմոռանաս՝ վերաբերում է դա նաև երկրորդին։
Նախ՝ մեր հոգու էությունը մարմնիկներից է կազմված
Որ շատ նուրբ են, ասել եմ քեզ, անհամեմատ շատ փոքրիկ
Շատ ավելի փոքրիկ են քան որոնցից ջուրն է կազմված
Կամ մեգը կամ ծուխը, չէ՞ որ գերազանցում են նրանց
Շարժունությամբ, նվազագույն հարված շարժում է նրանց
Չէ՞ որ մեգի, ծխի տեսքը արդեն շարժում է նրան
Երբ քնած ենք, մեզ թվում է հաճախ, որ մի զոհարան
Բարձրացնում է շատ կրակներ և թանձր ծուխ արձակում
Դա անկասկած, երևում են մեզ տեսիլներն իրերի
Երբ հեղուկ է, ասենք, հոսում անոթից որ ջարդված է
Եվ ճեղքվածքից գլգլալով ամենուրեք տարածվում
Ինչպես ծուխն ու մառախուղն են ցրվում պայծառ օդի մեջ
Հավատացիր, որ հոգին էլ, երբ բաժանվում է մարմնից,
Հեռանալով ամբողջովին, ճիշտ այդպես է նա ցրվում
Շատ ավելի արագությամբ էությունն է կործանվում
Նույնիսկ ավելի ժամանակի ընթացքում քան ցրվում են
Էությունները այդ երկու և դառնում տարրեր նախնական
Երբ մարմինը որը կարծես հոգու համար անոթ է,
Քայքայվել է մի մահացու հարվածից կամ նոսրացել
Արդեն արյան իր կորուստից և ընդունակ չէ զսպել
Հոգուն, ինչպե՞ս ընդունել որ օդը զսպում է նրան.
Օդը, որ հեշտ է թափանցվում, ավելի խիտ մի հոսանք է
Այնուհետև մենք գիտենք, որ հոգին մարմնի հետ է միշտ
Ծնվում, աճում ու ծերանում։ Մանկությունից սկսած
Մի փխրուն ու նուրբ մարմին է, գիտենք նրան ծառայում
Որպես հոգու մի օրորոց և թույլ նույնքան, որքան նա
Այն հասակում երբ անդամներն ամրապնդվում են մանկան
Հասունանում է նա խելքով ուժը հոգու աճում է
Իսկ հետո, երբ ծերությունից կորանում է մարմինը,
Անդամները զառամում են, սպառվում են ուժերը

Ավերում է դատողությունն ու շփոթվում է հոգին,
Մարդու լեզուն կակազում է և պակասում ամեն ինչ
Թերություններ են երևում, և բնական է արդեն,
Որ հոգին էլ տարրալուծվի, ցնդի օդում ծխի պես
Ու որ տեսնում ենք, որ հոգին մեր ծնվում է մարմնի հետ
Աճում է նա և ընկնում է բեռան տակ իր ծերության։
Ավելացնել պետք է նաև, որ տանջվում է մեր հոգին
Ցավից վշտից ու սարսափից ինչպես հաճախ մարմինն է
Որևէ մի հիվանդությամբ կամ ցավերից տառապում
Ուստի նա էլ մարմնի նման պետք է մեռնի անպայման
Երբ մարմինը տառապում է հիվանդությամբ որևէ
Մոլորվում է ոգին հաճախ և տիրում է մեր հոգուն
Եվ խենթություն, և՛ զառանցանք, լեթարգիան քունն այնժամ
Նրան սուզում է անզգա ընդարմացման մեջ հաճախ
Եվ գլուխը կախ է ընկնում և փակվում են աչքերը
Հիվանդը չի լսում ձայներ, չի ճանաչում ոչ ոքի
Ընտանիքից, որը նրան շրջապատած՝ ջանում է
Ուշքի բերել, և թրջվում են արտասուքով դեմքերը
Որովհետև նման ցավով վարակվում է մեր հոգին,
Ուստի պետք է եզրակացնենք, որ նա էլ է քայքայվում
Չէ՞ որ հաճախ կրկնված այդ փորձից արդեն գիտենք որ
Հիվանդությունն ու ցավերը օգնականներն են մահի։
Եվ, վերջապես, երբ մարդու մեջ թափանցում է թունդ գինի
Ջերմությունը տարածվում է երակներում նրա ողջ,
Մարմինն ինչո՞ւ է ծանրանում և քայլվածքը երերում,
Եվ ինչո՞ւ է նա սասանվում, լեզուն ինչո՞ւ է կապվում
Ինչո՞ւ հոգին մոլորվում է և մթնում է աչքերում
Եվ ինչի՞ց են առաջ գալիս զկռտոցը և ճիչը,
Կռիվները և վեճերը, այն ամենը, վերջապես
Ինչ որ հաճախ է կատարում մարդը հարբած վիճակում
Հարձակվում է հոգու վրա մարդու մարմնի խորքերում
Իսկ ամենայն մի էություն, որ կարող է շփոթվել,
Անպայման պետք է քայքայվի, պետք է զրկվի անպայման
Շարունակությունից կյանքի, երբ ենթարկվի որևէ
Ավելի պինդ մի հարվածի գործողության, անկասկած
Երբ մի մարդ է հիվանդանում ընկնավոր է ասես նա
Կարծես հանկարծ շանթահարված՝ միանգամից ընկնում է
Փրփրակալվում է բերանը, կուրծքը տնքում է նրա,
Եվ դողում են անդամները, և մարմինը փայտանում

Կտրվում է շունչը նրա, թպրտում է ողջ մարմնով,
Ուժասպառված՝ կորցնում է նա գիտակցությունն իր իսկույն։
Մկանները կարկամում են և նա ընկնում է գետին։
Այդ ամենը ասում է, որ հոդերի մեջ անցնելով,
Հիվանդության ուժից հոգին փրփրում է ու եռում,
Ինչպես վայրագ քամուց ծովի ալիքներն են եռում խենթ
Սկսում է հառաչել նա, քանզի սեղմվում են ցավից
Նրա բոլոր անդամները, ձայնի սերմերն են ժայթքում,
Եվ բազմությամբ անցնում նրա բերանով և այն ճամփով,
Որ գտնում են բաց կամ որով նրանք սովոր են անցնել։
Եթե հոգին միտ և ոգին խենթությունից հուզվում են,
Պատճառն այն է, ասել եմ, որ, բաժանվելով իրարից,
Հիվանդության կատաղությամբ հատկություններն իրենց հար
Գործադրում են անկարգ կերպով, ամեն մեկը առանձին։
Երբ պատճառը հիվանդության շուռ է գալիս և թույնը
Որ վարակել էր մարմինը ապականող հեղուկով,
Վերադառնում է այնուհետ ընտելարանն իր թաքուն
Դժբախտ մարդը հետզհետե վեր է կենում, երերում
Դարձյալ ուշքի է գալիս և կենդանանում է հոգին։
Եթե հոգին տառապում է հիվանդությամբ մարմնի մեջ
Կարո՞ղ ես դու կարծել, որ նա մարմնից արդեն դուրս եկած
Ընդունակ է շարունակել իր գոյությունն առանձին
Քամիների ու անհույլ մրրիկների մեջ նաև
Բայց քանի որ հոգին նույնպես, ինչպես հիվանդ մարմինը,
Բուժվում է և առողջանում բժշկության օգնությամբ
Այդ էլ է մեզ ապացուցում, որ մեռնում է մեր հոգին
Եվ իսկապես հոգին ունի հատկություններ, ինչպես այն
Էություններն արդեն հայտնի, որոնց մասին խոսեցինք
Նրա վիճակն էլ է փոխվում այնժամ երբ մենք նոր մասեր
Ավելացնում, պակասեցնում, տեղափոխում ենք նորից։
Սակայն չէ՞ որ ոչ մի անմահ էություն չի հանդուրժի
Ավելացնել, պակասեցնել նրա տարրերն ու փոխել
Նրանց քանակն, ինչպես արդեն մենք ասել ենք քիչ առաջ
Եթե մի բան, իր բնության սահմաններից դուրս գալով,
Փոխվում է, այդ պատճառով նա դադարում է լինել այն
Ինչ որ առաջ ինքն է եղել։ Հետո՝ եթե մեր հոգին
Հիվանդանում և բուժվում է, այդ էլ պետք է համոզի
Որ մեռնում է հոգին նույնպես ճշմարտությունն այդպես է
Մոլորումի դեմ դուրս գալիս և արգելում է նրա

*Ամեն կարգի հնարները դատողությամբ իր առողջ,*
*Անժխտելի կերպով հերքում կարծիքները այդ սխալ։*
*Եվ, վերջապես, մեր աչքերի առջև մեռնում են մարդիկ*
*Եվ զրկվում է հետզհետե զգացմունքից մարմինը,*
*Նախ՝ ոտքերի եղունգները, ապա մատներն են կապտում*
*Ներբանները են մեռնում հետո, սրունքները, իսկ հետո*
*Հաջորդաբար մահը դրոշմում է արդեն իր հետքերը*
*Այլ մասերի վրա մարմնի, որոնցով է անցնում նա։*
*Եվ քանի որ այն ժամանակ բաժանված է մեր հոգին*
*Ամբողջապես, նա գոյություն էլ չի կարող ունենալ*
*Ուստի կարող ենք համարել, որ մեր հոգին մեռնում է։*
*Իսկ եթե մեզ ասեն, որ նա, մարմնի ներսում հավաքված,*
*Իր մոտ բերում է մասերն այն, որ մարմնի մեջ են ցրված,*
*Եվ կարող է կենտրոնացնել զգացմունքները ողջ իր մեջ,*
*Ուստի այնտեղ, ուր հավաքվել է բազմություն այդպիսի*
*Ոգևորված մասնիկների, պետք է լինի, անկասկած,*
*Շատ ավելի զգայուն մի զգացմունքով միշտ օժտված։*
*Բայց այդպիսի տեղ չենք գտնում, ուստի, ինչպես ասել ենք,*
*Մարմնից արդեն պոկված հոգին, պատառոտված մասերի,*
*Պետք է դուրս գա նրա միջից, ցրվի, ուստի մեռնում է։*
*Սակայն ասենք, թե զիջում եմ դատողությանն այդ սխալ*
*Եվ ընդունում, որ կարող է հոգին մարմնում հավաքվել.*
*Եթե միայն հետզհետե պետք է մեռնի ամեն մարդ,*
*Դարձյալ պիտի ճանաչես, որ հոգին նույնպես մեռնում է։*
*Ի՞նչ փույթ, օդում ցրվելո՞վ է կործանվելու մեր հոգին,*
*Թե՞ խեղդվում է միանգամից իր հավաքած մասերով,*
*Եթե մարդու զգացմունքները պետք է մարեն առհավետ,*
*Եթե պիտի հետզհետե այդպես կորցնի կյանքը իր։*
*Այնուհետև, եթե ասենք, հոգին մարմնի մի մասն է,*
*Մի որոշ տեղ է գրավում, ինչպես աչքն ու ականջը,*
*Քանի որ մի զգայարան, որը պետք է որևէ*
*Գործողություն կառավարի, ինչպես ձեռքերն, աչքերը,*
*Որոնք, մարմնից բաժանվելով, արդեն զգալ չեն կարող*
*Եվ գոյություն չեն ունենա, այլ փտում են, քայքայվում*
*Ընթացքում կարճ ժամանակի, այդպես էլ չի կարող մեր*
*Հոգին ապրել առանց մարմնի, որը նրա անոթն է,*
*Կամ որևէ մի ուրիշ բանի, որ մոտիկ է ավելի,*
*Որովհետև մարմնի հետ նա մի էություն է կազմում,*

Իրենց կյանքով ու գոյությամբ մեր մարմինը և հոգին
Միայն իրենց միությանն են, վերջ ի վերջո, պարտական
Մարմնից բաժան՝ հոգին մենակ ընդունակ չէ կենսական
Շարժում առաջ բերել, մինչդեռ հոգուց զրկված մարմինը
Ո՛չ կարող է ապրել և ո՛չ զգացմունքներ ունենալ։
Ինչպես աչքը, որ հանված է, դուրս է բերված իր տեղից
Եվ բաժանված արդեն մարմնից, առարկաներ չի տեսնում
Մեր հոգին ու ոգին մենակ ոչինչ անել չեն կարող
Զի՞ որ նրանց տարրերը, որ ցրված են մեր ընդերքում
Երակներում, ոսկորներում, նյարդերում, ողջ մարմնի մեջ
Պահպանվում են այնքան ուժգին, որ չեն կարող հեռանալ
Իրարից մեծ տարածությամբ։ Այդ խոչընդոտն է, սակայն,
Պահպանում ու դյուրին դարձնում շարժումները մեր կյանքի
Որ չեն կարող շարունակվել, երբ հեռանում է հոգին
Օդում նրա տարրերն արդեն իրար կապվել չեն կարող
Օդն էլ, անշուշտ, մի շնչավոր մարմին պիտի համարվեր,
Եթե հոգին կարողանար այնտեղ սեղմվել, համաքվել
Եվ շարժումներ առաջացնել, ինչպես առաջ մարմնի մեջ
Ուստի դարձյալ կրկնում եմ, որ երբ ծածկույթը մարմնական
Քայքայվել է, կյանքի շունչը արտաշնչվել է արդեն,
Այդ պատճառով զգացմունքները պետք է մարեն հոգու մեջ
Որովհետև հետևանքն են նրանք միևնույն պատճառի
Եթե հոգուց մեր մարմինը բաժանված չի դիմանում
Այլ նեխում է, արձակելով հոտ զարշելի չափազանց,
Կարելի՞ է կասկածել, որ տարրալուծված մեր հոգին
Պետք է փախչի մարմնի խորքից, երբ փլվում է, փոխվելով
Մարմնավոր շենքն ամբողջովին, մի՞թե այդ չի ասում թե
Մեր հոգին, որ հիմքն է նրա, տեղափոխվել է, նրա
Մասերն արդեն մարմնի բոլոր ուղիներով, ելքերով
Դուրս են եկել ու տարածվել։ Այդպիսով, մեզ ամեն ինչ
Ապացուցում է, որ հոգին, անդամներից բաժանված
Դուրս է փախչում ու ցրվում է այն ժամանակ օդում, երբ
Տարրալուծվել է մարմինը ու քայքայվել առհավետ։
Հաճախ հոգին ապաստանից կյանքի դեռ չի հեռացել
Բայց կատաղի ու ավերիչ մի ցնցումից երերված՝
Կարծես քիչ է մնում, որ նա իսկույն մարմնից հեռանա
Թուլանում է մարմինն ամբողջ, դեմքը՝ դառնում հողնատանջ
Հոգևարքում կարծես լինի, անդամները ուժասպառ
Կարծես պատրաստ են պոկվելու մարդու մարմնից, երբ արդեն

Արյունը չի պատվում։ Արդ ահա վիճակն այն մարդու,
Որ ընկնում է ուշաթափված գիտակցությունն իր կորցրած։
Մի անհեթի հարձակում, և մարմնի բոլոր ուժերը
Կորցնեն կապերն արդեն, որ միացնում են նրանց,
Այդ ժամանակ կտապալվեն հոգին, ոգին մարմնի հետ
Կկործանվեն եթե հարվածն ուժգին լինի ավելի։
Հիմա կարո՞ղ ես կարծել դու, որ մեր մարմնից դուրս եկած,
Հարվածների դեմ արտաքին այդքան անզոր լինելով
Ունենալով ապաստարան, պաշտպանություն որևէ,
Հնարավոր է, որ հոգին ապրի, հավետ՝ չեմ ասում,
Այլ պահպանի գոյությունը նույնիսկ գոնե մի վայրկյան։
Ոչ մի մարդ, ըստ երևույթին երբ մեռնում է, չի զգում,
Որ իր հոգին ամբողջապես դուրս է գալիս իր մարմնից,
Հաջորդաբար հասնում մինչև իր բերանն ու կոկորդը,
Մարում է իր հերթին, ինչպես զգայարան որևէ
Որտեղ առաջ բնությունը տեղավորել էր նրան։
Իսկ եթե մեր հոգին լիներ անմահական ու հավերժ,
Ինչո՞ւ պիտի տնքար. պետք է ուրախությամբ հեռանար,
Դուրս կգար նա մարմնի միջից, ինչպես օձը իր կաշվից
Այնպես, ինչպես եղջերուն է, ամենք փոխում եղջյուրը։
Այնուհետև, դատողությունն ու զգացմունքը մեր ինչո՞ւ
Մեր գլխի կամ ոտքերի ու ձեռքերի մեջ չեն ծնվում,
Այլ ինչո՞ւ են մի տեղ լինում, մարմնի որոշ մի մասում
Եթե ոչ այն պատճառով, որ բնությունն է սահմանել
Այդ երկուսին առանձին տեղ, որտեղ նրանք կարող են
Ծնվել հետո և զարգանալ։ Եվ բնությունն այդպես է
Գործում տարբեր ու բազմաբարդ եղանակով մշտապես
Մարմնի բոլոր անդամների հետ և երբեք չի թողնում,
Որ երբևէ խեղաթյուրվեն նրանց նշված կարգերը
Պատճառի և հետևանքի շղթան անշուշտ, այդպես է՝
Ոչ կրակն է ծնվում ջրում, ո՛չ էլ սառույց՝ հրի մեջ
Սակայն եթե անմահ լիներ մեր հոգին իր բնությամբ
Եթե մարմնից բաժանված նա ընդունակ է դեռ ապրել
Թվում է, որ նա պետք է հինգ զգայարան ունենա,
Չէ՞ որ այլ կերպ պատկերացնել հոգիները չենք կարող,
Որոնք ներքև թափառում են Աքերոնի ափերին
Հին դարերի նկարիչներն ու պոետներն են նրանց
Այդպես օժտել զգացմունքներով։ Առանց մարմնի մեր հոգին

Ունենալ չի կարող աչքեր, ձեռքեր, լեզու և ականջ,
Որոնք առանց մարմնի երբեք ո՛չ կզգան, ո՛չ կապրեն։
Այնուհետև հաստատ գիտենք, որ զգացումը մեր կյանքի
Տարածված է ողջ մարմնի մեջ, որի բոլոր մասերը
Ոգևորված են նրանով: Եթե հանկարծ հարվածեն
Այնքան ուժգին, որ մարմինը երկու կեսի բաժանվի,
Մի՞թե պարզ չէ, որ հոգին էլ նույն ահեղի հարվածով
Այնպես, ինչպես այդ մարմինը, պետք է դառնա երկու կես
Իսկ այն, ինչը բաժանվելով, երկու մասեր է դառնում,
Մենք չենք կարող ընդունել, որ ունի անմահ բնություն։
Ասում են, թե մարտերի թունդ ժամանակ այն կառքերը
Որ զինված են մանգաղներով, այնքան արագ են կտրում
Անդամները կոտորածով ոգևորված ռազմիկի,
Որ կտրված այդ մասերը փոշու մեջ են թավալվում,
Իսկ կորուստի մասին ցավը դեռ հոգուն չի ծանուցում։
Արագությո՜ւնն է, չգիտես, ցավը ծածկում զգացմունքից
Թե՞ հոգին, տաք կռիվներով արդեն տարված լինելով,
Ամբողջովին վերցնում է այն ինչ մնացել է մարմնից
Որպեսզի ինքն էլ հարվածի կամ ետ մղի հարվածը։
Իսկ երկրորդը չգիտե, որ իր վահանն ու ձեռքը ձախ
Որ կորցրել է ձիերի մեջ, անիվներ են տրորում,
Կամ տարել են մանգաղները։ Եվ մեկը իր թշնամուն
Ետ մղելով, գրոհում է պարիսպները, չի տեսնում,
Որ կորցրել է իր աջ ձեռքը, արդեն պոկված իր թևից
Իսկ մի ուրիշն էլ հենվում է իր այն ոտքին, որ չկա
Որ մեռնելուց առաջ գետնին իր մատներն է գալարում,
Գլուխը իր մարմնից պոկված՝ պահպանում է դեռ կյանքի
Ջերմությունը, ուստի դեմքը ոգևորված է մնում
Եվ մինչև այն ժամանակ են աչքերը բաց մնում, երբ
Հոգու վերջին մնացորդը անհետանում է օդում։
Մի վիթխարի օձ է, ասենք, քեզ սպառնում իր թույնով.
Կտրատում ես նրան սրով դու բազմաթիվ մասերի
Ու տեսնում ես, որ բաժանված ամեն մի մաս առանձին
Գալարվում է ու թափում է իր արյունը թունավոր,
Բայց առջևի կտորը, որ կատաղում է խոր վերքից,
Ատամներով հարձակվում է մասի վրա հետևի,
Հագեցնելով այրող ցավն ու խորունկ վերքի մրմուռը։
Յուրաքանչյուր կտորն արդյոք ունի ամբողջ մի հոգի՞,
Թե՞ մենք պետք է եզրակացնենք, որ ամեն մի անասուն

Հոգի ունի մի քանի հատ։ Բայց մի հոգի է եղել,
Որ մարմնի հետ կորստվել է ու բաժանվել մասերի։
Ուստի պետք է ընդունենք, որ մահկանացու են նրանք,
Որովհետև երկուսին էլ կարելի է մասնատել։
Այնուհետև, եթե հոգին անմահ է իր բնությամբ,
Եթե մտել է մարմնի մեջ նա ծննդի ժամանակ,
Ինչո՞ւ մենք չենք մտաբերում անցյալ կյանքից ոչ մի բան
Եվ գործերից մեր կատարած չի պահպանվում ոչ մի հետք։
Եթե հոգու ունակությունն այնքան փոխվել է արդեն,
Որ կորցրել է ամբողջովին հիշողությունն անցյալի,
Կարծում եմ, որ ամենևին դա մահից չի տարբերվում։
Ուստի պետք է ընդունենք, որ հոգիները նախընթաց
Կործանվել են, իսկ այն, որ կա, միայն այժմ է կազմվել։
Այնուհետև, եթե հոգին մտնում է մեր մարմնի մեջ
Բոլորովին արդեն եղած ունակությամբ պատրաստի
Այն ժամանակ, երբ ծնվում ենք, հասնում կյանքի ափերը
Անդամների հետ զարգանալ ամենևին չէր կարող,
Սակայն այդպես է անում նա, ինչպես տեսնում ենք մենք այդ
Թռչունի պես պիտի ապրեր մեն-մենակ ու վանդակում
Եվ անկախ այն մարմնից, որը ոգևորում է ինքը։
Ուստի դարձյալ կրկնում ենք մենք, որ հոգիներն ազատ չեն
Օրենքներից ծննդի և մահկանացու են նրանք։
Բայց կարելի՞ է հավատալ, որ որևէ էություն
Դրսից մտել է մարմնի մեջ, կապվել այնքան սերտորեն
Անդամների հետ մեր բոլոր, ցրվել մարմնի նյարդերում,
Երակներում, ոսկորներում, ընդերքում և հաղորդում
Զգացմունք նույնիսկ ատամներին, քանզի ցավում են նրանք,
Բացի իրենց հատուկ ցավից, ցավում են և պաղ ջրից
Եվ կտորից փոքրիկ քարի, որ երբեմն է պատահում
Ուտելիքի մեջ որևէ, որ ատամներն են ծամում։
Եթե այդքան սերտորեն է հոգին կապված մարմնի հետ,
Անշուշտ, պետք է բաժանվի նա, ամբողջովին քայքայված
Արդեն բոլոր ոսկորներից, նյարդերից ու հոդերից։
Եթե կարծում ես, որ հոգին, թափանցելով մարմնի մեջ
Դրսից, հետո է նա ցրվում անդամներում մեր բոլոր,
Լուծվելով, նա ավելի շուտ կկործանվի մարմնի հետ
Այն ամենը, ինչ լուծվում է, քայքայվում է ու մեռնում,
[illegible] որ հոգին մասնատված է անցնում մարմնի անցքերով,
Սննդի պես, որ քամվում է և հետո է թափանցում

Անդամների մեջ, կորցնելով բնությունն իր, որպեսզի
Դառնա ուրիշ մի էություն: Հենց այդպես է մեր Հոգին,
Թեև եղած ամբողջական, երբ միայն նոր է մտնում
Նոր ստեղծված մի մարմնի մեջ, բայց, նրա մեջ ցրվելով,
Պետք է, անշուշտ, տարրալուծվի մասնիկները մեր Հոգու
Պետք է, անշուշտ, առաջ բերեն, երբ ցրվում են մարմնի մեջ
Մեր մարմինը կառավարող մի նոր Հոգի, որ արդեն
Այդ Հոգուց է առաջ գալիս, որ մահացել է վաղուց,
Այն ժամանակ, երբ մեր մարմնի անդամներում էր ցրված
Այդ պատճառով ակներև է, որ Հոգին իր բնությամբ
Ո՛չ ծնդից, ո՛չ վախճանից վիճակված չէ զերծ մնալ

Մեռած մարմնում Հոգու սերմեր մնո՞ւմ են, թե՞ չեն մնում
Եթե միայն մեռած մարմնում Հոգու սերմեր մնում են,
Մենք չենք կարող Հոգու հավերժ անմահությունն ընդունել
Քանի որ նա հեռանալիս ինչ-որ կորուստ է կրում
Իսկ եթե նա ամբողջովին է դուրս գալիս մեր մարմնից
Իր մասերից ամենևին չթողնելով մարմնի մեջ,
Որտեղի՞ց են առաջ գալիս դիակների մեջ որդեր,
Եվ ինչպե՞ս են ուռած մարմնում առաջանում անհամար
Արարածներն այդ կենդանի՝ անոսկոր ու անարյուն:
Իսկ եթե դու կարծում ես, որ, գուցե, դրսից թափանցած
Մի Հոգի է այդ որդերից ամեն մեկի մեջ ապրում,
Չե՞ս մտածում արդյոք՝ ինչո՞ւ են հավաքվում միասին
Այնտեղ այնքան Հոգիներ, երբ միայն մեկն է հեռացել
Սակայն ահա թե ինչ պետք է մտածես ու քննարկես
Արդյոք պե՞տք է ընդունել, թե Հոգիներն որսում են
Որդի սերմեր, որ նրանց մեջ ապաստարան ստեղծեն
Թե՞ հետո են նրանք մտնում արդեն պատրաստ մարմնի մեջ
Ինչո՞ւ պիտի վարվեն այդպես, ինչո՞ւ պիտի չարչարվեն
Դժվար է այդ ասել, եթե, մարմնից արդեն հեռացած
Նրանք քաղցից, ցրտից և այլ ցավերից չեն տառապում,
Չէ՞ որ միայն դրանցից է մեր մարմինը չարչարվում,
Իսկ մարմնի հետ միանալով, իրենք էլ են տառապում:
Ենթադրենք, որ օգտավետ է նրանց համար կառուցել
Որևէ մի մարմին, որի մեջ բնակվել են ուզում
Այդ անելու համար դարձյալ չունեն միջոց որևէ
Ուստի Հոգին իր համար մի մարմին շինել չի կարող
Նա չի կարող նաև մտնել արդեն պատրաստ մարմնի մեջ,

Իսկ այդպես այդ սերտ կապը համաձայն ու ներդաշնակ
Էությունների այդ երկու գոյություն չէր ունենա։
Առյուծն ինչո՞ւ է պահպանում կատաղությունն իր ցեղի
Աղվեսն ինչո՞ւ է ի ծնե արդյոք լինում խորամանկ,
Եղնիկն ինչո՞ւ ժառանգաբար այդքան երկչոտ է լինում
Եվ փախչում է այնքան արագ, ինչպես իր հայրն էր փախչում
Եվ ինչո՞ւ են հատկություններն այն, որ ծնվում են մեզ հետ,
Միշտ նմանվում այնքան իրար, եթե ոչ այն պատճառով,
Որ մեր հոգին, մարմնի նման ունի սաղմեր ու տարրեր,
Որ հատուկ են միայն նրան հատկություններն այդ բոլոր
Միշտ աճում են ու զարգանում հետզհետե մարմնի հետ
Սակայն եթե հոգին, իրոք, անմահ լիներ բնությամբ,
Կամ եթե մի մարմնից անցներ նա մի ուրիշ մարմնի մեջ,
Անասուններն իրենց բարքով կլինեին խառնածին
Հիրկանական[10] չար շները կփախչեին, սարսափած
Եղնիկների հարձակումից մի աղավնի տեսնելով,
Ջինջ երկնքում ճախրող բազեն պիտի դողար սրտաճաք
Եվ բանական իրենց միտքը մարդիկ պիտի կորցնեին,
Մինչդեռ վայրի գազանները կդառնային իմաստուն
Սակայն իզուր են փորձելու դժվարությունն այս լուծել
Պնդելով, թե հոգին թեև անմահ է իր բնությամբ
Այնուհանդերձ փոխում է այն, մարմնից մարմին անցնելիս
Ամեն մարմին, որ փոխվում է, տարրալուծվում է անշուշտ
Եվ փոխելով իր տեղը, նա կկործանվի անպայման,
Երբ բաժանվում է մասերի, երբ խախտվում է կարգը իր։
Ուստի հոգին անդամներում տարրալուծվում է, անշուշտ
Պետք է մեռնի ամբողջովին մեր մարմնի հետ միասին։
Եթե պնդեն, թե մեր հոգին թափանցում է շարունակ
Մարմնի մեջ մի ուրիշ մարդու, ինչո՞ւ պիտի խելոքը
Դառնա տխմար, ասում եմ ես մանուկն ինչո՞ւ խելոք չէ
Մտրուկն ինչո՞ւ չի հասկանում ինչպես մի ձի մարտական,
Եթե ոչ այն պատճառով, որ հոգին ունի սաղմերն իր,
Որոնք հետո զարգանում են իր մարմնի հետ շարունակ
Եթե ասես՝ «Անզոր մարմնում խելքը անզոր է լինում»
Այն ժամանակ պարտավոր ես դու անպայման ընդունել
Որ հոգին էլ պիտի մեռնի, քանզի կորցնում է նա իր
Ե՛վ կյանքը և՛ զգացմունքները որոնցով նա օժտված է։
Սակայն ինչպե՞ս կարող է նա սերտ միանալ մարմնի հետ,
Նույն մարմնի հետ հետզհետե դառնալ այդքան կատարյալ

Եթե միայն նա չի ծնվել այդ մարմնի հետ միասին։
Եվ ինչո՞ւ է նա շտապում դուրս գալ մարմնից զառամյալ.
Վախենում է փտող մարմնում փակվա՞ծ մնալ առհավետ,
Սարսափո՞ւմ է, որ կփլվի իր հին տունը իր վրա,
Չէ՞ որ անմահ էությանը վտանգներ չեն սպառնում։
Ծիծաղելի չէ՞ կարծել, որ այն ժամանակ են գալիս
Հոգիները, երբ կենդանի անասուններ են ծնվում,
Զուգավորվում և կարծես այդ անմահները անհամբեր
Սպասում են բազմությամբ, որ մահկանացու մի մարմին
Ծնվի և որ անմիջապես թվով անթիվ, անհամար
Հարձակվեն և ամեն մեկն է աշխատելու ներս մտնել
Առաջինը, այդ պատճառով կպայքարեն իրար հետ։
Եթե նրանք տարաձայն են, այդ կանխելու համար դեռ
Պայման չէին կնքել առաջ իրար հետ այն մասին, թե
Առաջինը եկած հոգին կմտնի այդ մարմնի մեջ։
Եվ, վերջապես, ջինջ երկնքում ծառեր երբեք չեն լինում,
Ո չ էլ ծովի խորքում ամպեր, ո չ էլ ձկներ արտի մեջ,
Փայտի մեջ չի լինում արյուն և քարի մեջ հյութ չկա
Կա որոշ տեղ, ուր ամեն ինչ պիտի ծնվի, զարգանա։
Ո՛չ կարող է հոգին ծնվել բոլորովին մեկուսի,
Ո՛չ էլ ապրել անկախորեն նյարդերից ու արյունից։
Եթե լիներ այդ կարելի, ավելի շուտ մեր գլխում
Նա կլիներ, կամ ուսերում և նույնիսկ մեր ոտքերում,
Կարող էր նա ծնվել նույնիսկ ամեն մասում մեր մարմնի,
Քանի որ նույն մարմնում պետք է մնա որպես անոթում։
Բայց քանի որ արդեն գիտենք, որ մարմնում կա որոշ տեղ,
Որտեղ ծնվում, բնակվում են, աճում ոգին ու հոգին,
Ավելի մեծ իրավունքով մենք կարող ենք ժխտել այն,
Որ գոյությունն առանց մարմնի պահպանում է մեր հոգին
Բայց երբ մեռնում է մարմինը, հոգին պիտի քայքայվի։
Մահկանացուն ու անմահը իրար կապել ու կարծել,
Որ կարող են միշտ միասին զգալ, գործել համերաշխ,
Դա ուղղակի խենթություն է. ի՞նչ կա տարբեր ավելի,
Եվ ավելի հակադիր, քան էություններն այդ երկու,
Որոնցից մեկն անմահ է և մահկանացու՝ երկրորդը,
Որոնց ուզում են միացնել։ Սակայն ինչո՞ւ Որպեսզի
Կարողանան դիմանալ այդ կործանարար դեպքերին,
Եվ, վերջապես, հավերժական է այնպիսի մի մարմին,
Որ միայն իր կարծրությամբ է հարվածների դիմանում,

*Չի թողնում, որ մտնեն իր մեջ, իր հյուսվածքը քայքայեն,*
*Եվ կապերը իր մասերի։ Եվ բնությունն է այդպես*
*Մատերիայի մասնիկների, ինչպես ցույց եմ տվել քեզ*
*Կամ կարող է այն պատճառով հավերժապես պահպանվել,*
*Որ հարվածի չի ենթարկվում, դատարկությունն է այդպես,*
*Որը ընավ չի շոշափվում, հարվածի չի ենթարկվում։*
*Վերջապես, այն պատճառով, որ նրա շուրջը, ոլորտում,*
*Չկա ուրիշ տարածություն, որ կարող էր ընդունել*
*Նրա բոլոր բեկորները, երբ ջախջախված լինի այն*
*Տիեզերքն է այդպես, որից դուրս տեղ չկա, որտեղ նա*
*Կարողանար ցրվել, չկան և մարմիններ այնպիսի*
*Որ հարվածեն ու բաժանեն նրան իրենց ուժերով։*
*Հոգին անմահ չէ, քանի որ չունի նման կարծրություն։*
*Ասել եմ, որ դատարկություն կա բնության մեջ նրա*
*Ինչի մեջ կա դատարկություն անմահ լինել չի կարող*
*Չափազանց շատ մարմիններ կան տիեզերքում անսահման,*
*Որոնք, հանկարծ ներխուժելով, նրա կյանքն են երերում*
*Եվ սպառնում նույնիսկ նրա գոյությանը վերջ դնել։*
*Եվ, վերջապես, մի անսահման տարածություն կա, որտեղ*
*Հոգու մարմնիկներն են կարող ցրվել և այդ պատճառով*
*Կործանվում է նա, վերջապես, ինչ ձևով էլ որ լինի։*
*Եվ այդպիսով, հոգու առջև փակ չեն մահվան դռները,*
*Հիմնավորել անմահությունն այն բանով են փորձում, որ*
*Իբրև հոգին պաշտպանված է պատճառներից քայքայիչ,*
*Որովհետև նրանք իբրև հոգուն երբեք չեն հասնում,*
*Կամ նա ինչ-որ եղանակով նրանց ետ է մղում միշտ,*
*Քանի դեռ չենք զգացել, թե հոգուն ինչ են անելու*
*Կապակցություն չունի սակայն այդ ամենը հոգու հետ,*
*Որովհետև հաշվի չառած, որ ցավերից մեր մարմնի*
*Տառապում է նաև հոգին, տառապում է անորոշ*
*Իր գալիքի համար նաև, անվերջորեն հուզվում է*
*Հոգսերից ու տագնապներից, և չարչարվում շարունակ*
*Հիշելով իր ոճիրները՝ դեռ անցյալում կատարած.*
*Ավելացրու զառանցանքը, որ խիստ հատուկ է հոգուն*
*Լեթարգիայի մեջ է սուզվում, գիտակցությունն է կորցնում։*
*Իսկ մեզ համար ի՞նչ է մահը, ինչո՞ւ պիտի վախենանք,*
*Երբ մեր հոգու բնությունն է մահկանացու, անկասկած*
*Ինչպես անցյալ դարերում մենք չենք ունեցել ո՛չ մի վիշտ,*
*Երբ պունների[11] զորքերն էին համախմբված հարձակվում,*

Այն ժամանակ, երբ աշխարհը ցնցված ահեղ մարտերից
Դեռ դողում էր ամբողջովին կամարի տակ երկնքի
Երբ կասկածում էին, թե որ ազգը պիտի տիրանա
Ողջ երկրին ու ծովերին, և իշխանությանն աշխարհի,
Այնպես էլ այն ժամանակ, երբ չենք լինելու մենք արդեն
Կրաժանվի հոգին մարմնից, որոնցից ենք բաղկացած,
Եվ արդեն չի արթնանալու մեր մեջ ոչ մի զգացմունք
Եթե նույնիսկ ծովը խառնվի երկրին, երկիրն՝ երկնքին։

Եթե նույնիսկ հեռանալուց հետո ոգին ու հոգին
Պահպանեն դեռ ինչ-որ զգացմունք, այդ ժամանակ դարձյալ մեզ
Դա ոչ մի բան չի կարող տալ, չէ՞ որ մարմնի կապերով
Մենք կապված ենք մեր հոգու հետ և նրանից սերտ միությամբ
Եթե նույնիսկ կարողանար ժամանակը հավաքել
Մահից հետո ողջ մատերիան որից մարմինն է կազմված
Դասավորել յուրաքանչյուր տարրը դարձյալ այն կարգով
Այն դրությամբ, որ ունեցել է ամեն մեկը առանձին,
Երկրորդ անգամ վերադարձներ դարձյալ կյանքի ջահը մեզ
Մեզ ոչ մի բան չէր տալու այդ վերածնունդն, անկասկած
Որովհետև գոյությունը ընդհատված է եղել մեր։
Ո՞վ է հուզվում այն բանից, թե ինչ է եղել ինքն առաջ
Կամ իր մարմնի բեկորներից ժամանակը ի՞նչ կանի։
Եվ, իսկապես երբ կտեսնես թիվը անցյալ դարերի,
Մատերիայի բազմատարրեր շարժումները, կարգը այն,
Կկարենաս դյուրին կերպով ըմբռնել, որ սերմերը
Որոնցից մենք ենք բաղկացած, դասավորվել են հաճախ
Այնպիսի մի կարգով, ինչպես դասավորված են հիմա։
Սակայն մենք չենք մտաբերում ամենևին անցյալը,
Որովհետև երկարատև ընդմիջում է եղել մեր
Գոյության մեջ, երբ տարրերը մեր հոգու և մեր ոգու
Բոլորովին զրկված իրենց զգացմունքներից, մոլորված,
Թափառել են տարածության մեջ շարժումով ապարդյուն

Եթե պետք է ապագայում դժբախտություն սպասվի,
Պետք է լինի նաև նա, ում դա կարող է պատահել
Բայց քանի որ մահից հետո չքանում է ամեն մարդ
Որի գլխին կարող էին թափվել չարիք ու աղետ
Որոնց այժմ ենթարկվում ենք, խանգարում է ուստի դա,
Այսպես ասած, դեռ կանխապես, և պարզ է, որ ոչ մի մարդ
Ամենևին առիթ չունի սարսափելու իր մահից։
Դժբախտ լինել չի կարող նա, որը չունի գոյություն,

*Որին կյանքից մահկանացու անմահ մահը զրկել է*
*Այնպես, ինչպես կարծես թե նա երբեք ծնված չլինի։*
*Եվ երբ տեսնես մի մարդ, որը վշտանում է, դառնորեն*
*Դանդաղվելով, թե մարմինն իր գերեզմանում կփտի*
*Կամ կրակը կլափլիզի, կամ որևէ մի գազան,*
*Դու համոզված պիտի լինես, որ անկեղծ չի խոսում նա,*
*Որ, առանց այդ իմանալու նրա սիրտը դարձել է*
*Անհայտ ձեռքի, և անորոշ հուզմունքի մի խաղալիք։*
*Եթե նրան ականջ դնենք, նա կկարծի, անկասկած*
*Որ իր մահից հետո դարձյալ նա զգացմունք կունենա*
*Սակայն, ինչպես ես եմ կարծում, առողջ դատել չգիտե*
*Չի հասկանում, որ իր ամբողջ մարմնով է նա չքվելու,*
*Իբրև մի մասն իր էության միշտ է մնում կենդանի։*
*Երբ կենդանի ժամանակ դեռ սակայն, մտածում է, թե*
*Իր մարմինը գազանները ու թռչունները գիշատի,*
*Կհոշոտեն, ապա նա իր դառն վիճակն է ողբում*
*Եվ նա խղճում է ինքն իրեն, ի վիճակի չէ իրեն*
*Բաժանել իր մարմնից, որին արդեն մահն է տապալել*
*Կարծում է, որ դիակն ինքն է, կանգնած ահա իր կողքին*
*Զգացմունքներ է տալիս նրան, և ահա թե ինչու է*
*Զայրանում ու վշտանում, որ մահկանացու է ծնվել։*
*Նա չի տեսնում, որ, իսկապես, մահը երբեք չի թողնում,*
*Որ դիակից մի բան մնա, մի արարած կենդանի*
*Որպեսզի իր մահը ողբա, արցունք թափի իր փռված*
*Արդեն անշունչ մարմնի վրա, որը պետք է հոշոտեն*
*Դժնարարո գազանները, խարույկի մեջ կվառվի։*
*Եթե վատ է մահից հետո գազանների կեր դառնալ,*
*Չեմ հասկանում, այն ժամանակ, սակայն, ինչո՞ւ ահեղ չէ*
*Այն որ վառվում ես կրակով բոցավառվող խարույկի*
*Կամ մեղրի մեջ դրված խեղդվում կամ փայտանում խիստ ցրտից,*
*Կամ մարմարյա դամբարանի խորքում մնում առհավետ,*
*Կամ ծածկված ու ճնշված լինես անտաշ քարի ծանրությամբ։*
*«Բայց,— ասում են — ընտանիքս, որին միայն ես էի*
*Երջանկացնում, կինս և իմ զավակները սիրասուն,*
*Որոնք վազում, գալիս էին ինձ ընդառաջ ամեն ժամ՝*
*Սաանալու իմ առաջին համբույրները, ինչպիսի՜*
*Ցնծություն էր այն ժամանակ թափանցում իմ սրտի մեջ։*
*Եվ այնպես էլ դեռ չէր հասել իմ փառքը իր գագաթին,*
*Եվ բարեկամ մարդկանց համար կլինեի օգտավետ։*

Օ՜, որքան ես դժբախտ մարդ եմ, ողբերգական մի վայրկյան
Մահը խլեց ինձանից ողջ քաղցրությունը իմ կյանքի»։
Ճիշտ է, բայց չես ավելացնում՝ մահը խլեց քեզանից
Քո վշտերն ու ձգտումները, որ բարիքներ ձեռք բերես։
Եթե միայն ճշմարտությունն այդ իմացած լինեինք,
Կազատվեինք մեր հոգսերից, տագնապներից բազմաթիվ։
«Արդեն մահվան ընդհարմացումն է փակել քո կոպերը
Գալիք բոլոր դարերում դու պաշտպանված ես վշտերից
Մենք էլ, կանգնած խարույկի մոտ, ուր մոխիր ես դառնում դու,
Անմխիթար պիտի ողբանք։ Չի խաղաղվի առհավետ
Տխրությունը, որ չեն կարող պոկել վշտոտ մեր կրծքից»։
Նման մարդու պետք է ասել՝ ի՞նչ դառնություն այդտեղ կա,
Եթե նորից հանգստություն և քուն է նա ստանում,
Որ դու այդպես աղաղակես ու տառապես քո վշտից
Ծաղիկներով պսակված և լի գավաթներ ձեռքներին
Մարդիկ հաճախ սկսում են սրտի խորքից ճչալ, թե
«Շատ կարճատև է վայելքը, հեռանալու է շուտով
Որպեսզի էլ ետ չդառնա երբևիցե աշխարհում»։
Կարծես նրանք վախենում են, որ մեռնելուց հետո դեռ
Պիտի տանջվեն խիստ ծարավից, պիտի քաղցից տառապեն,
Եվ զանազան ցանկությունից կչարչարվեն անդադար
Բայց չէ՞ որ չի ողբում ոչ ոք ինքն իրեն ու իր կյանքը,
Երբ սուզված են խաղաղ քնի մեջ իր խելքն ու մարմինը
Թեկուզև այդ խաղաղ քունը տևի նույնիսկ առհավետ,
Մենք բնավ չենք ափսոսալու, որ ժամանակ ենք կորցրել։
Որովհետև մեր մարմնի մեջ այդ տարրերը նախնական
Այդ ժամանակ պահպանում են զգացմունքը շարժումի,
Ուստի առույգ և աշխույժ է դառնում մարդը արթնացած։
Ուստի մահը է՛լ ավելի պակաս բան է, քան նինջը,
Եթե միայն պակաս լինել կարելի է ոչնչից։
Չէ՞ որ ընկնում է մատերիան անկարգության մեջ լրիվ,
Ցրվում է ով մահվան քնով քնել է, չի արթնանում,
Քանզի մի պաղ վերջ է դրվում որպես սահման մեր կյանքի։
Եթե հանկարծ բնությունը ինքը խոսեր, վերջապես,
Եվ սկսեր հանդիմանել, ասենք, մեկին մեզանից
«Մահկանացո՛ւ, ինչո՞ւ ես դու հուսահատվում չափազանց,
Ինչո՞ւ ես դու ողբում, տանջվում մոտեցումից քո մահվան։
Եթե կյանքը մինչև այժմ հաճելի է եղել քեզ,
Եթե հոգին քո չի եղել որպես անտակ մի անոթ,

Այնտեղ լցված երջանկությունն ու հաճույքը չեն կորել,
Ինչո՞ւ կյանքից դուրս չես գալիս որպես մի հյուր հագեցած
Ինչո՞ւ, տխմա՛ր, խաղաղությամբ չես սպասում այն ժամին
Երբ դու դարձյալ կվայելես հանգստություն առհավետ։
Իսկ եթե դու բարիքները բաց ես թողել քո ձեռքից,
Որ քեզ եղել են մատուցված, զզվելի է կյանքդ քեզ,
Ապա ինչո՞ւ ես օրերդ բազմապատկել ցանկանում,
Որոնք պիտի անցնեն տխուր և նույնպիսի դառնությամբ
Եվ չքվելու են առհավետ, և քեզ հաճույք չեն տալու
Ինչո՞ւ նման տառապանքին ու կյանքին վերջ չդնել
Որովհետև որքան էլ որ ճգնեմ, դարձյալ քեզ համար
Որևէ մի հաճելի բան ես հնարել չեմ կարող
Եվ դարձյալ նույն շղթայակցումն է ետ գալու շարունակ
Եթե նույնիսկ չպառամի քո մարմինը, թուլացած
Անդամներով, այս աշխարհում ոչ մի բան չի փոխվելու
Եթե, ասենք, ապրես բոլոր սերունդներից ավելի
Եթե նույնիսկ բոլորովին խուսափես քո մահվանից»

Ի՞նչ կարող ենք պատասխանել բնությանը, եթե նա
Ներկայացնի այդպիսի մի իրավացի հայց հանկարծ։

Եթե այդպես տրտնջում է մի պառավմյալ ծերունի
Իր վախճանը ավելի է նա ողբում, քան պետք է այդ,
Բնությունը չունի՞ արդյոք մի իրավունք ասելու
«Հորի՛ր լալկան դատարկախո՛ս, բավական է տրտնջալ
Կյանքի բոլոր վայելքները վայելել ես, անկուշտ մարդ
Սակայն կպչում ես դեռ կյանքին ու չես ուզում հեռանալ
Անշնորհք ես անում, ինչ կա, և այն ուզում, ինչ չկա
Դու քո կյանքը անց ես կացրել այդպես առանց հաճույքի
Այժմ մահը հանկարծակի արդեն քեզ է մոտեցել,
Առաջ, քան դու կարող էիր հեռանալ գոհ երջանիկ
Սակայն թո՛ղ իմ պարգևները որ վայել չեն հասակիդ
Թող ուրիշներ այն վայելեն, և այդպես է հարկավոր»։

Բնությունը կշտամբելու այդպես ունի իրավունք,
Ծվ ծերունին պիտի զիջի իր տեղը մի պատանու
Եվ այդպես են արարածներն անհատ իրար հաջորդում
Երբեք ոչ ոք Տարտարոսի մութ անդունդը չի գնում,
Նյութի պաշար է հարկավոր սերունդներին ապագա
Նրանք էլ քեզ կհետևեն, իրենց կյանքը ավարտած
Մահացել են քեզնից առաջ, կմահանան և հետո
Մեկը մյուսից է միշտ ծնվում շարունակ և անփոփոխ

Հավերժական կյանք չի լինում, տրվում է առժամանակ,
Եվ որքան քիչ իմաստ ունի այստեղ, ավա՜ղ, մեզ համար
Մասը հավերժ ժամանակի՝ մեզնից առաջ անցկացած։
Բնությունը տվել է մեզ ապագայի հայելին,
Որ տեսնենք, թե ինչ կլինի, երբ մենք արդեն չենք լինի
Մի՞թե այստեղ երևում է որևէ մի ահեղ բան,
Խաղաղությունն արդյոք քուն չէ՞, քնից քաղցր առավել։
Սարսափները, որ պատմում են Աքերոնի մասին մեզ[12],
Այդ ամե՞նը, ակներև է, մենք գտնում ենք մեր կյանքում
Տանտալոսը չի սարսափում հսկա ժայռի բեռան տակ
Բայց այն մարդը, որ աշխարհում անձնատուր է լինում միշտ
Իր ունայն ու անհեթեթ մտքերին ու հույզերին,
Վախենում է աստվածների բարկությունից այն բոլոր
Դեպքերում, որ կարող են և պատահաբար կատարվել։
Աքերոնի ափին չկա նաև ոչ մի Տիտիոս,
Որին լորև թռչուններ են ուտում. նրանք չեն կարող
Հավերժապես պատառոտել նրա կուրծքը վիթխարի,
Չկա մարմնի մի մաս, որը այդպես ուտվի դարերով,
Որքան էլ որ փռված մարմնի չափը լինի վիթխարի
Թեկուզ բռնած լինի, ասենք, ոչ թե ինը յուգեր հող,
Այլ ողջ երկրի մակերեսը հսկայական իր մարմնով,
Ո՛չ կարող է ենթարկվել այն հավերժական տանջանքին
Ո՛չ էլ սնունդ տալ իր մարմնից թռչուններին անընդհատ
Բայց իսկական Տիտիոսին չարչարում է սերը իր,
Այն, որ նրան հոշոտում է ու գալարում չարաչար,
Եվ կամ նրան պատառոտում են այլ հոգսեր ու կրքեր։
Մեր աչքերի առջև կյանքում, պատահում է և Սիզիֆ,
Նա, որ սակրեր ու փնջեր է[13] ժողովրդից պահանջում,
Բայց միշտ մերժում ստանալով, տխրած սրտով հեռանում։
Հյուծվել ծանր աշխատանքից հանուն նման բաների,
Որոնք ոչինչ չարժեն, իրոք, ձեռք բերել չի կարելի,
Դա հենց այն է, ինչ մեծ ջանքով մի քար հրել լեռն ի վեր,
Մի քար, որը հազիվ հասած մինչև լեռան գագաթը,
Իսկույն ներքև է գլորվում, սլանալով դեպի դաշտ։
Ամեն անգամ հոգու անկուշտ բնությանը սնունդ տալ
Բարիքներով, որ բերում է եղանակը այդ տարվա,
Պարգևելով պտուղներ և պտտվելով շարունակ,
Երբ չես կարող ամենևին բավարարել դու նրան

Դա հենց այն է, իմ կարծիքով, ինչ այն ծաղիկ կույսերը
Որոնք անտակ անոթի մեջ ջուր են լցնում անդադար։
Չկա երբեք երախներով հաչող Կերբեր ահռելի,
Եվ Ֆուրիա խելակորույս, և տարտարոս լուսազուրկ
Ո՛չ գոյություն ունեն նրանք, ո՛չ կարող են ունենալ։
Չարագործը պատժվում է, քանի նա դեռ չի մեռել,
Իր նողկալի ոճիրների պատիժներով համաչափ,
Սարսափով, որ բանտ կնստի, բարձր ժայռից գլորված՝
Կընկնի անդունդ, մտրակներով խարազանված կլինի։
Եթե դահիճ չկա, այնժամ խիղճը ինքն է կատարում
Դահճի գործը, նրա սիրտը պատառոտում անողոք,
Սուր խայթոցով ծակում նրան։ Թեև նա դեռ չգիտե,
Թե երբ պիտի սահման դրվի իր այդ անլուր տանջանքին
Որը իբրև մահից հետո կծանրանա ավելի,
Եվ տխմարի կյանքն է դառնում Աքերուզիա իսկական։
Ահա թե ինչ որպես խրատ պիտի ասես ինքդ քեզ
Իր աչքերի լույսից զրկվել է Անկոսը [14] պանծալի,
Որ, անորեն, առաքինի էր քեզանից ավելի։
Հետո որքա՜ն թագավորներ և իշխաններ մեծազոր,
Որ ազգեր են կառավարել, անհետացել են նույնպես։
Նույնիսկ նա [15], որ մի ժամանակ անծայրածիր ծովերով
Լեգեոններ տարավ իր հետ անդունդով խոր ու անտակ
Անարգելով բարկությունը աստվածների ու ծովի,
Մեռավ, հոգին բաց թողնելով անդամներից թուլացած։
Կարթագենի արհավիրքը՝ Սկիպիոնը [16], մարտի շանթ
Ոսկորները տվեց հողին, ինչպես վերջին մի ստրուկ։
Մեծահմուտ գիտնականներ և վարպետներ արվեստի
Մուսաների ուղեկիցներ, Հոմերոսը հանճարեղ
Նա ու նրանց գլխավորն էր, մահացել են, վերջապես։
Եվ, վերջապես, Դեմոկրիտը [17], երբ ծերացել էր արդեն
Երբ նկատեց, որ թուլանում է իր միտքը, իսկապես,
Իր գլուխը սիրահոժար տարավ մահվան ընդառաջ։
Կյանքի ընթացքն ավարտելով, ինքն Էպիկուրն էլ մեռավ
Նա, որ մարդկանց գերազանցում, խավարեցնում էր նրանց
Ինչպես արևն է եթերում խավարեցնում աստղերը։
Եվ դո՞ւ էլ ես զայրանում, որ պիտի մեռնես նույնպես, դո՞ւ,
Ում կյանքը միշտ մահ է եղել, ամեն վայրկյան ես մեռել,
Դո՞ւ, որ կյանքիդ մեծ մասը միշտ անց ես կացրել քնելով,
Երբ քնած ես, այն ժամանակ նույնիսկ, երբ դու արթուն ես

*Դո՛ւ, ում միտքն ու գաղափարը կրակներ են անհեթեթ,*
*Եվ անոտի մտքերի և սարսափի զոհ անիմաստ*
*Չես հասկանում հաճախ նույնիսկ, թե այդ քեզ ինչ է ճնշում,*
*Տառապում ես, չիմանալով, թե ինչպիսի հոգսերից,*
*Ում հոգին միշտ մոլորված է, տարակուսված, երերուն։*
*Եթե մարդիկ, որոնք, անշուշտ, պետք է զգան լուծը այն*
*Որ ճնշում է նրանց հոգին, կարողանան գիտակցել,*
*Իրոք, բոլոր պատճառները, որտեղից է այնպիսի*
*Ծանր բարի նման ճնշող առաջ եկել վիշտը խոր,*
*Ինչպես ապրել են սովորել, այնպես չէին ապրելու,*
*Քանզի իրենք չգիտեն, թե ինչ են արդյոք ցանկանում,*
*Եվ տեղից տեղ գնալով են ուզում լծից ազատվել։*
*Մեկը շքեղ իր պալատից հեռանում է ձանձրացած*
*Բայց այնտեղ է վերադառնում, թեթևություն չգտած*
*Իսկ երկրորդը իր ագարակն է շտապում անհամբեր,*
*Կարծես պետք է կրակներից փրկի տունը իր այնտեղ*
*Բայց սկսում է հորանջել, շեմքից դեռ նոր անցնելով*
*Ծանր քնի մեջ է ընկնում, ցանկանալով մոռանալ*
*Ինքն իրեն, մի վայրկյան հետո վերադառնալ կշտապի։*
*Յուրաքանչյուրն ինքն իրենից փախչում է, բայց չի կարող*
*Հեռանալ, և ստիպված է ինքը միշտ իր հետ մնալ,*
*Քանզի նա իր հիվանդության բուն պատճառը չգիտե*
*Սակայն եթե հասկանար, ողջ մնացածը թողնելով*
*Նախ՝ իրերի բնությունը նա կաշխատեր ըմբռնել*
*Որովհետև հարց է ծագում այստեղ ոչ թե մի ժամի,*
*Այլ ինչպիսի դրության մեջ են գտնվելու անպայման*
*Մահկանացու մարդիկ իրենց մահից հետո առհավետ։*
*Վատ հասկացված սերը կյանքի ինչպիսի՜ մի չարիք է,*
*Որքա՜ն վտանգ, փորձություն են ամեն մարդու սպառնում*
*Սահմաններ են որոշ դրված կյանքի համար մարդկային*
*Եվ խուսափել չի կարելի հանդիպելուց մահվան հետ։*
*Եվ, բացի այդ, գտնվելով անդադար մի շրջանում,*
*Նոր բան կյանքի երկարացմամբ ձեռք բերել չի կարելի։*
*Այն, ինչ չունենք, մեզ թվում է ցանկալի շատ ավելի,*
*Չհասած մեր նպատակին, մենք այլ բան ենք որոնում,*
*Եվ շարունակ չարչարվում ենք կյանքի անզուսպ ծարավից։*
*Եվ չգիտենք, թե ինչպիսի վիճակ կտա ապագան,*
*Ինչ է արդյոք մեզ պատրաստում, ինչպիսի վերջ կունենանք։*
*Իսկ մեր կյանքի երկարացմամբ մի մազաչափ չենք կարող*

Կրճատել ու պակասեցնել տևողությունը մահվան,
Որպեսզի այդ դրության մեջ մենք մնանք գոնե քիչ պակա։
Եվ դու քանի կյանքերով էլ ապրես, սակայն, ի վերջո,
Հավերժական մահը պիտի քեզ սպասի անպայման
Պետք է մնան չգոյության մեջ միակերպ ու երկար
Նրանք, որոնք իրենց կյանքը պետք է այսօր ավարտեն
Ինչպես նրանք, որոնք արդեն վաղուց առաջ են մեռել

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

*Մուսաների անճանապարհ ղաշտերով եմ քայլում, որ*
*Դեռ ոչ մի ոտք չի տրորել։ Եվ բերկրալի է ըմպել*
*Շրթունքներով թարմ ակունքից և ճակատս զարդարել*
*Անհայտ ու թարմ ծաղիկների մի պսակով, որով դեռ*
*Մուսաները ինձնից առաջ չեն պսակել ոչ որի։*
*Առաջինը՝ մեծ ուսմունք եմ ուսուցանում, ջանալով*
*Ճնշող նախապաշարմունքից մարդու ոգին ազատել։*
*Եվ երկրորդը՝ պարզ երգով եմ շարադրում մութ առարկան,*
*Ամենուրեք քաղցրացնելով մուսաների հմայքով։*
*Ինչպես տեսնում ես, լիովին միտք ունի դա, անհրաժեշտ*
*Բժիշկների նման, որոնք դառնություն են ուզում տալ*
*Դեռ շատ փոքրիկ մանուկներին, նախապես այն գավաթի*
*Պռունկներն են ծածկում մեղրով մանուկները միամիտ*
*Հրապուրվում են շրթունքների այդ քաղցրությամբ խաբուսիկ*
*Այդ անոթի դառնությունը ամբողջովին խմելով*
*Բայց խաբուստի ղոհ չեն դառնում, ընդհակառակն՝ այնուհետ*
*Ձեզ են բերում առողջություն ուժ ու կորով ստանում։*
*Այդպես վարվում եմ նաև ես, քանի որ մեր ուսմունքը*
*Անտեղյակ այդ մարդկանց թվում է շատ խիստ ու առելի,*
*Ահա թե ինչ պատճառներով ցանկանում եմ ես քեզ այն*
*Ներկայացնել մեր քաղցրաձայն մուսաների տաղերով,*
*Կարծես ընթուն տաղերգության քաղցր մեղրով համ տված*
*Ինձ, գուցե այդ եղանակով կհաջողվի գրավել*

Ուշքն ու միտքը, նաև խելքդ և մինչև այն ժամանակ,
Քանի ամբողջ բնությունը իրերի չես ըմբռնել։
Պարզաբանել եմ քեզ արդեն այդ նախնական տարրերի
Հատկությունները, այն, թե որքան զանազան են ձևերով
Եվ դու գիտես, թե ինչպես են այդ տարրերը իրերի
Իրենց հատուկ շարժումներով հավերժորեն սավառնում
Տարածության մեջ անսահման, և թե ինչպես կարող են
Ամեն տեսակ արարածներ միակցումից այդպիսի
Առաջ գալ. դու գիտես նաև բնությունը մեր հոգու,
Այն տարրերը, որ տալիս են հոգուն կյանք ու գոյություն
Եվ թե ինչպես է նա գործում միանալով մարմնի հետ,
Եվ այնպես է կապված մարմնին, որ, նրանից բաժանված,
Դարձյալ դառնում է նա հենց նույն այդ տարրերը նախնական։
Այժմ քննենք մի առարկա, որը շատ սերտ է կապված
Նախընթացի հետ։ Կան իրեր, որ տեսիլներ են կոչվում,
Եվ մի տեսակ թաղանթներ[1] են, որոնք պոկվում են մարմնի
Մակերեսից, և թռչում են օդում, ինչպես պատահի,
Սարսափեցնում են մեր հոգին, երբ գիշեր է, մանավանդ,
Երբ տեսնում ենք տարօրինակ տեսիլները նրանց, որ
Վաղուց զրկվել են արևի պայծառ լույսը դիտելուց
Արթնանում ենք սարսափահար։ Անհնար է կարծել, թե
Կարող է մի հոգի դուրս գալ Աքերոնի խորքերից,
Կամ որ մարդկանց ստվերները կարող են մեզ երևալ,
Կամ մեռնելուց հետո ինչ-որ բան է մնում մեզանից,
Երբ մեր հոգին ու մարմինը արդեն մեռել են վաղուց,
Բաժանվելով, տարրալուծվել, դարձել տարրեր առանձին[2]։
Ասում եմ ես, թե իրերի մակերեսից անդադար
Պատկերներ ու նկարներ են ընկնում, որոնց անվանել
Կարելի է թաղանթ, կեղև, որովհետև նրանք միշտ
Նույն տեսքերն ու ձևերն ունեն, ինչպես և այն մարմինը
Որից առաջ են գալիս և տարածվում են օդի մեջ
Եվ բթամիտ մարդուն անգամ դժվար չէ դա հասկանալ։
Քանի որ մեծ քանակությամբ մարմիններ կան այնպիսի
Որոնց առատ բխումները մատչելի են մեր աչքին,
Նրանց մեջ կան մասեր, որոնք բաժանվում են, ցրվելով
Ամենուրեք, ծխի նման, որ փայտից է դուրս գալիս,
Կամ ջերմության, որ բոցկլտող կրակից է տարածվում։
Կան այդպիսի տեսիլներ, որ հոծ են հյուսված ավելի,
Թաղանթի պես, որ թողնում են ճպուռները ամռանը

Կամ ինչպես այն նուրբ թաղանթը, որ ընկնում է նորածին
Հորթի մարմնի մակերեսից, և կամ օձի ծածկույթը,
Որը մնում է փշերին, ինչպես հաճախ ենք տեսնում,
Երբ շատ թեթև մորթիկներ են կախված թփի ոստերից։
Եթե, իրոք, այդպես է այդ, ուստի պետք է պատկերներ
Նուրբ բաժանվեն շատ իրերից, մակերեսից անջատված։
Անհնար է ապացուցել, որ ավելի հույժ կոպիտ
Բաներ կարող են բաժանվել իրերից, քան նրբերը,
Որովհետև պարունակում է մակերեսն իրերի
Բազմատեսակ մարմնիկներ, որ միշտ պոկվում են նրանցից,
Նրանց ձևը և պատկերը պահպանելով ճշտորոշ
Եվ թռչում են արագորեն, խոչընդոտներ շատ չկան
Որովհետև հոծ չեն նրանք և տեղում են առաջին։
Եվ, իսկապես, նկատում ենք, որ մասնիկներ բազմաթիվ
Անջատվում են իրերի ոչ միայն ներսի մասերից,
Այլև նրանց մակերեսից, ինչպես ասել ենք առաջ։
Գույներն այդպես են անջատվում, երևույթներ ծնելով,
Առաջ բերում դեղին, կարմիր, սև ծածկույթներ, որոնք մեր
Թատրոնների սյուներին ու ձողերին ենք մենք փռում,
Եվ որ քամուց ծածանվելով, կազմում են մեծ մի շրջան,
Իվ փայլը այդ ծածկույթների լուսավորում է բոլոր
Հանդիսատես տղամարդկանց կանանց դեմքերը, բեմը,
Աստվածների արձանները գունազարդում է նրանց։
Որքան փոքրիկ է ավելի թատրոնական այդ շենքը,
Որքան պակաս է թափանցում դրսից լույսը ցերեկվա
Այնքան ճոխ ու գունագեղ է արտացոլումն ավելի
Եվ արևի շողերից է այնժամ ժպտում ամեն ինչ
Եթե գույներ են արձակվում մակերեսից գործվածքի,
Իրերից էլ նուրբ պատկերներ պետք է այդպես բաժանվեն,
Երկու տեսակն էլ բաժանվում են իրերի վրայից
Ուստի արդեն մենք գտել ենք հետքերը այն որոնված
Տեսիլների, որ ճախրում են, ուրվագծեր ունեն նուրբ
Եվ առանձին երբևիցե չեն երևում օդի մեջ

Այնուհետև, հոտը, ծուխը, ջերմությունը և ուրիշ
Բխումները, որոնք ունեն ճիշտ նույնպիսի բնություն
Տարածվում են, ցրիվ գալիս այն պատճառով, որ նրանք,
Անջատվելով, մարմինների ներսում արդեն չեն գտնում
Իրենց համար ուղիղ ճամփա, ուղիներում ծուռումուռ
Բաժանվում են, որ ելք գտնեն իրենց համար դեպի դուրս։

Մակերեսից, սակայն, բխած նույն թաղանթը գույների,
Խոչընդոտի չհանդիպած, պատառոտված չի լինում։
Վերջապես, այն տեսիլները, որ երևում են հաճախ
Հայելու և ջրերի մեջ, հարթ իրերի երեսին,
Որովհետև միշտ բխում են առարկայից իսկական,
Պետք է նման լինեն տվյալ առարկայի պատկերին։
Ինչո՞ւ կոպիտ պատկերները այդ շրջափվող իրերի
Պետք է առաջ գան ավելի շուտ, քան նրանք, որոնց մենք
Նկատել չենք կարողանում, որովհետև շատ նուրբ են։
Ահա մի հարց, որին ոչ ոք պատասխանել չի կարող։
Ուրեմն իրերն ուղարկում են իրենց նման պատկերներ,
Բայց առանձին տեսնել նրանց ընդունակ չէ ոչ մի մարդ,
Իսկ նրանցից արտաբխած պատկերներն այն, որոնք,
Հավաքվելով, արտացոլվում են հայելու օգնությամբ,
Հասնում են մեր զգացմունքներին։ Եթե այդպես չլիներ
Նրանք մեզ ցույց չէին տալու իրերի ձևն այդքան ճիշտ։
Իմացիր, թե որքան նուրբ է բնությունն այդ պատկերի,
Որքան հեռու են տարրերն այդ զգացմունքների սահմանից,
Որքան փոքրիկ են ավելի և իրերից այն որոնց
Մեր աչքը չի տեսնում արդեն։ Որպեսզի դու ավելի
Համոզվես, մի քանի խոսքով իմացիր դու, թե իրոք
Իրերի այդ մասնիկները որքան նուրբ են ու փոքրիկ։
Նախ՝ գոյություն ունեն, գիտենք կենդանիներ այնպիսի
Որոնց մարմնի երրորդ մասը մենք ընդունակ չենք տեսնել,
Իսկ ինչպիսի՞ք պիտի լինեն նրանց ներքին մասերը,
Սրտիկները, աչիկները, անդամները, հոդերը։
Որքան փո՞քր են։ Եթե խորհենք այն տարրերի մասին, որ
Պետք է կազմեն հոգին ոգին այն ժամանակ, կարող ենք
Ըմբռնել, որ կա այնպիսի փոքրիկ ու նուրբ մի հյուսվածք։
Եթե թեթև կերպով դիպչես ցողունին այն բույսերի,
Որոնք սուր հոտ են արձակում, ինչպես դառը օշինդրը,
Պանացեան, բուրումնալից կնդածաղիկն, իսկույն դու
Փորձից հետո այդ ստիպված պիտի լինես ընդունել,
Որ բազմաթիվ տեսիլներ կան, որ թռչում են զանազան
Եղանակով, բայց անզոր են, նրանց զգալ չենք կարող
Ամենևին։ Սակայն որքան փոքրիկ են այն տարրերը,
Որոնցից է, անշուշտ, կազմված նրանց փոքրիկ մարմինը,
Արտահայտել կամ ասել ո՞վ է կարող մեզանից։
Բայց չկարծես դու, որ օդում չկան ուրիշ տեսիլներ,

Բացի նրանցից, որ բխել են մարմիններից զանազան.
Կան այնպիսիք, որ իրենք են առաջ գալիս երկնքում,
Որը նույնպես անվանում ենք տարածություն օդային.
Բարձրանում են նրանք վերև, տարբեր ձևեր ընդունած
Եվ, նոր տեսքեր ընդունելով, փոխվում ամեն մի վայրկյան։
Հաճախ տեսնում ենք բարձունքում, որ ամպեր են կուտակվում
Մե՛րթ թվում է, որ թռչում են սարսափելի հսկաներ,
Որոնք հեռվում այնքան խավար ստվերներ են տարածում
Մե՛րթ էլ կարծես հսկայական լեռներ լինեն, որոնցից
Պոկված ժայռեր նախորդում են կամ հետևում արևին
Եվ, վերջապես, այնտեղ կարծես լինի ինչ որ մի հրեշ,
Եվ նա ամպեր է հավաքում՝ ամենուրեք սփռելու։
Սակայն որքան դյուրին կերպով, որքան արագ են կազմվում
Տեսիլները և ինչպիսի առատությամբ բաժանվում,
Եվ անջատվում են իրերից։ Մակերեսից իրերի
Բոլոր բխում են մարմինկներ, որոնք հասած արտաքին
Այլ իրերի, սկսում են կամ նրանց հետ թափառել,
Կարծես նրանք գործվածք լինեն, կամ բաժանված իրարից՝
Պատկերներ չեն արտացոլում, ինչպես փայտն ու ժայռերը։
Բայց այդպես չի պատահում, երբ հանդիպում են մի մարմնի,
Որը հոծ ու շատ ողորկ է, ինչպես, ասենք, հայելին։
Նրանցով չեն կարողանում անցնել, ինչպես գործվածքով,
Եթե նրանց հյուսվածքը դեռ մնացել է անվնաս,
Այն ժամանակ ամբողջապես կարտացոլի, անխաթար,
Նրան մի շատ հարթ մակերես։ Ահա ինչու տեսիլներ
Ուղարկում են հարթ իրերը։ Եվ երբ միայն այդ լինի,
Եվ ինչպիսի արագությամբ էլ դնես մի հայելի,
Նրանք սիտի երևան այդ հայելու մեջ լիովին։
Այդ պատճառով եզրակացնել մենք կարող ենք, անշուշտ, որ
Մարմինների մակերեսից անջատվում են անդադար
Նուրբ հյուսվածքներ, ձևեր, որոնք ըզգալի չեն մեզ համար,
Ընթացքում մի ակնթարթի պետք է ծնվեն բազմաթիվ
Տեսլիներ, որ երևում են արագությամբ այնպիսի,
Որին ոչ մի ուրիշ մարմին հավասարվել չի կարող։
Ինչպես արևն է կարճատև ժամանակի ընթացքում
Առաջ բերում պայծառ լույսի թվով անթիվ մասնիկներ,
Որ նրանցով լցնի ամբողջ տարածությունն անընդհատ,
Ճիշտ այդպես էլ անհրաժեշտ է, որ իրերից բխած այդ
Տեսիլները մի վայրկյանում սլանան մեծ բազմությամբ,

Այն էլ ամեն մի ուղղությամբ, ամեն կողմից, քանի որ
Ինչպի որ կողմն էլ որ շուռ տաս հարթ հայելին այդ, իսկույն
Այնտեղ իրենց ձևով, գույնով իրեր պետք է երևան։
Այնուհետև, մի քիչ առաջ երկինքը ջինջ ու պայծառ
Անկարծ թանձր խավարով է ծածկվում բոլոր կողմերից
Կարծես թե դա Աքերոնի ողջ խավարն է դուրս եկել,
Որ դրանով լցնի պայծառ կամարները երկնային.
Եվ ամպերից առաջ եկած այդ գիշերվա ընթացքում
Մեզ թվում է, թե մեր գլխին արդեն սարսափ է կախվել
Ձևերով շատ արտասովոր, բազմաթիվ ու բազմակերպ։
Բայց պատկերն այդ որքա՞ն փոքրիկ մասնիկներից է կազմված,
Դա ոչ ոք չի կարող հաշվել, արտահայտել խոսքերով։
Իսկ այժմ թե ինչպիսի մի շարժունությամբ են օժտված
Նշույլները և ինչպիսի արագությամբ են անցնում,
Ինչպիսի մի տարածություն ճեղքում են մի վայրկյանում,
Որ կողմից էլ որ սլանան և զանազան ուղղությամբ,
Բացատրելու համար պետք է դիմեմ ոչ թե չափազանց
Շատ խոսքերի օգնությանն, այլ իմ տաղերի հմայքին
Կարապի կարճ երգը լավ է կռունկների աղմուկից,
Որ Ավստրն է[3] հալածելով ամպեր, ցրում երկնքում։
Նկատիր, որ արագություն հատուկ է այն իրերին,
Որ բաղկացած են ավելի նուրբ ու փոքրիկ տարրերից.
Այդպես լույսն ու ջերմությունը արեգակի շարունակ
Օժտված են մեծ արագությամբ, որովհետև կազմված են
Նախնական այն տարրերից, որ միշտ հարվածում են իրար
Եվ թափանցում արանքները օդի առանց որևէ
Դժվարության, և օգնությամբ թափի՝ արդեն ստացած
Տարրերից որ հետևում են, որովհետև լույսը միշտ
Հետևում է լույսի ուստի արեգակի շողերի
Արագությունն աճում է այն ցնցումներից անդադար,
Որ առաջ են բերում դարձյալ նոր տարրերը հաջորդող։
Նախիններն էլ նույն պատճառով պետք է որ մի վայրկյանում
Անծայրածիր տարածություն անցնեն, քանզի ետևից
Անդադար մի թափ է բշում մարմնիկներին այդ փոքրիկ
Հետո նրանց հյուսվածքը, որ նուրբ է, անշուշտ, չափազանց,
Դյուրին կերպով է թափանցում մարմինների մեջ բոլոր,
Սողոսկելով օդի բոլոր արանքները անխտիր։
Եվ եթե այն մարմնիկները, որ բխում են իրերի
Ներսից, լույսի, ջերմության պես արեգակի, կարող են

Տարածվել մի ակնթարթում տարածության մեջ ամբողջ,
Ցրվել ծովում ու ցամաքում, դեպի երկինք բարձրանալ,
Եվ ողողել երկնակամարն իրենց պայծառ հուրերով,
Որ սլանան ամեն կողմից արագությամբ այդպիսի,
Տեսիլներն էլ, ուստի, որոնք գտնվում են իրերի
Մակերեսին, իսկ անջատվել ոչ մի բան չի խանգարում,
Սլանալու են ավելի արագորեն և հեռու,
Պետք է անցնեն տարածություն, որ ավելի է երկար,
Քան կարող են նույն ժամանակ անցնել պայծառ արևի
Ամբողջ լույսն ու ջերմությունը ջինջ երկնքի կամարով։
Ճշմարտությունն այդ քեզ ցույց տալ նաև կարող է մի փորձ
Թե տեսիլներն այդ ինչպիսի արագությամբ են շարժվում.
Հազիվ ենք դուրս բերում ջրով լի որևէ մի անոթ
Երկնքի տակ, եթե այնտեղ առկայծում են ջինջ աստղեր,
Տիեզերքի ջահերն իսկույն պատկերվում են նրա մեջ։
Երևում է այստեղից, թե որքան պետք է ժամանակ,
Որ պատկերներն այդպես հասնեն մինչև գետին երկնքից։
Ուստի պետք է մենք ընդունենք, որ իրերից բխում են
Տեսիլներ և նրանք հետո, հարվածելով մեր աչքին,
Տեսողության զգացմունք են առաջ բերում նրա մեջ,
Ինչպես որոշ մարմիններից անջատվում է անդադար
Բույր, գետերից՝ սառնություն և արևակից՝ ջերմություն,
Եվ աղմուկը ծովի, որը միշտ ժայռեր է կրծում,
Եվ ճախրում են տարբեր ձայներ ամենուրեք օդի մեջ,
Մեր բերանն է հաճախ ընկնում ծովի աղի հեղուկը,
Երբ լինում ենք մենք ծովափին, և չենք կարող պաշտպանվել
Դառնությունից այնտեղ, որտեղ թրմաջուր են պատրաստում։
Ուստի բոլոր մարմինները բխումներ են արձակում
Ամեն կարգի ու տեսակի, որ սլանում են ամեն
Մի ուղղությամբ, և որպեսզի ամենևին կանգ չառնեն
Եվ չսպառվեն, քանի որ մենք ամեն վայրկյան զգում ենք,
Ի վիճակի ենք միշտ լսել, նկատել ու հոտոտել։
Որովհետև մենք խավարում շոշափելով ձեռքերով
Որոշ ձևից որևէ իր ճանաչում ենք, որ նույնն է,
Որ տեսել ենք օր ցերեկով, այդ պատճառով շոշափման,
Տեսողության զգացմունքները պետք է, անշուշտ, գրգռվեն
Միշտ նույնպիսի եղանակով։ Քառակուսի է, ասենք,
Այն, ինչ որ մենք ենք շոշափել, ուրիշ էլ ի՞նչ առարկա
Կարող է ցույց տալ ցերեկով քառակուսու պատկերը։

*Ուստի պարզ է այստեղից, որ տեսողության պատճառը*
*Պատկերներն են, առանց որոնց ոչինչ տեսնել չենք կարող։*
*Իրերի այդ տեսիլները, որոնց մասին է խոսքը,*
*Սլանում են ամեն կողմից և ամեն մի ուղղությամբ*
*Բայց քանի որ ընդունակ ենք տեսնել միայն աչքերով,*
*Այդ պատճառով միայն այնտեղ, ուր մեր հայացքն ենք ուղղում,*
*Իրերը մեզ հարվածում են իրենց ձևով ու գույնով*
*Տարածությունն այն, որը մեզ բաժանում է իրերից,*
*Նույն պատկերներն է ցույց տալիս, օգնում նրանց ճանաչել,*
*Որովհետև, սլանալով, մարմիններից քշում են*
*Դրանք օդը, որ նրանց ու աչքի միջև է լինում,*
*Եվ այդ օդի սյունը ամբողջ երկարությամբ սահելով*
*Գալիս է ու դիպչում աչքին, թեթև կերպով քսվելով*
*Մեր բիբերին, որից հետո ավելի է հեռանում։*
*Այդպես ենք մենք իմանում, թե որքան մի առարկա*
*Որքան հեռու է մեզանից։ Որքան երկար ավելի*
*Այն օդի սյունը, որին այդ տեսիլներն են քշում,*
*Որն անցնելով թեթև կերպով, դիպչում է մեր աչքերին,*
*Այնքան հեռու պիտի թվա այդ առարկան մեզանից,*
*Չէ՞ որ դա միշտ կատարվում է արագությամբ այնպիսի,*
*Որ անհնար է ըմբռնել. դատում ենք, թե առարկան*
*Որքան հեռու է մեզանից, տեսնելով նույն ժամանակ։*
*Ինչո՞ւ պիտի զարմանաս դու, որ տեսիլներն այն, որոնք*
*Հարվածում են մեր աչքերին, տեսանելի չեն թեև*
*Ամեն մեկը առանձին, բայց թույլ են տալիս, որ տեսնենք*
*Մենք բոլոր այդ մարմինները։ Չէ՞ որ նույնպես չենք տեսնում*
*Քամուն, որ մեզ գրգռում է յուրաքանչյուր մասնիկով*
*Մենք չենք կարող զգալ նաև մասնիկները խիստ ցրտի,*
*Մի՞թե զգալ մենք կարող ենք այն իրերը, իսկապես,*
*Առարկաներն, ասենք, որոնց հարվածներից արտաքին*
*Տառապում է մեր մարմինը։ Ձեռքով դիպչիր մի քարի,*
*Դու կդիպչես նրա գույնին մակերեսին, ծայրերին,*
*Բայց կզգաս դու շոշափմամբ ոչ թե գույն, այլ կարծրություն,*
*Այն, ինչը լոկ հատկանիշն է քարի ամբողջ զանգվածի։*
*Բայց ինչո՞ւ ենք պատկեր տեսնում մենք հայելու այն կողմում,*
*Նույն պատճառով, որ տեսնում ենք մենք մարմիններն այն, որոնք*
*Գտնվում են մեր տնից դուրս, երբ բաց են տան դռները,*
*Տեսարան է բացվում ազատ, շատ բաներ են երևում*
*Որովհետև այն ժամանակ օդի երկու սյուներ կան*

Աչքերի ու դրան միջև. առաջինը մեզ հանդեպ՝
Դրան պատկերն է, և ապա այն իրերի արտաքին,
Որ կան այնտեղ արդեն, դլսում դրան երկու կողմերում
Իսկ երկրորդը նախորդում է այն արտաքին լույսին, որ
Գալիս է և ծեծև կերպով դիպչում է մեր աչքերին.
Դրան արդեն հետևում են պատկերներն այն իրերի,
Որոնք դրսում են գտնվում և որոնց մենք տեսնում ենք
Այդպես է այն պատկերը, որ, արտացոլված հայելուց
Մեր աչքերին մոտենալիս առջևի օդն է քշում,
Որ նրա ու մեր աչքերի միջև պիտի տարածվի,
Եվ այնպես է ստացվում, որ օդի անկանդ հոսանքը
Մեզ հասնում է ավելի շուտ, քան պատկերը հայելու
Եվ երբ միայն սկսում ենք մենք տեսնել այդ հայելին
Մեր պատկերը անմիջապես մեզնից հասնում է նրան
Սակայն իսկույն ետ է դառնում, արտացոլված դեպի մեզ
Երբ դիպչում է մեր աչքերին երկրորդ սյունը այն օդի
Որ քշել էր մեր պատկերը. ահա թե ինչ պատճառով
Մեր պատկերը թվում է մեզ այսքան հեռու հայելուց
Այդպիսով այդ երևույթով մենք չենք կարող զարմանալ,
Քանի որ նա հետևանքն է օդի երկու սյուների:

Հետո մարմնի մասերը, որ մեր աջ կողմումն են լինում,
Այն պատճառով պետք է լինեն հայելու ձախ կողմում որ
Հայելու հարթ մակերեսին հարվածելով, պատկերը
Ետ մղվելուց առաջ պիտի փոփոխության ենթարկվի
Երեսի կողմն այդ պատճառով շուռ է գալիս, անկասկած
Այդպես երբ մի կավե դիմակ սեղմես մի սյան և եթե
Այնպես անես, որ չկորցնեն նրա դեռ թաց մասերը
Իրենց ձևը նախնական և դասավորես ճիշտ նույնպես
Սակայն դեպի դրսի կողմը, անտարակույս, պետք է, որ
Հարվածվելուց հետո կողմով ետնի նա կերևա.
Այն ժամանակ մեր աջ աչքի տեղում ձախը կլինի
Իսկ ձախ աչքը կգտնվի, որտեղ եղել է աջը:
Եվ հայելուց հայելի ետ ուղարկված այդ պատկերը
Տալիս է հինգ, վեց տեսիլներ: Այն ժամանակ, անկասկած,
Իրերը, որ գտնվում են վերևում ու խորքերում,
Չնայած որ տեղավորված լինեն նույնիսկ շեղակի,
Եվ մեզանից հեռու լինեն, անդրադարձմամբ կրկնված
Այնուհետդերձ կարելի է դրսից կերպով դուրս բերել
Նույնիսկ իրենց թաքուն տեղից մեր սենյակի միջտեղը:

Հայելիներն այդպես իրար և պատկերներ են ուղարկում,
Եթե միայն ցույց է տալիս մեզ առաջին հայելին
Մեր ձախ կողմը, իսկ երկրորդը պիտի ցույց տա աջ կողմը,
Հատվելով, վերականգնվում է դրությունն առաջվա։
Սակայն եթե մի հայելի ծովածք ունի այնպիսի
Ինչպիսին է, ասենք, տրված մարդու մարմնի կողքերին,
Պետք է իրերն արդեն ցույց տա, ինչպես որ կան, ուղղակի
Այն պատճառով, որ հայելուց երկու անգամ հայելի
Անդրադարձված է պատկերը հասնում միշտ մեր աչքերին,
Կամ հայելու ծովածքն արդեն շուռ է տալիս պատկերը
Եվ հետո է այն ուղարկում դեպի մարդու աչքերը։
Հետո թվում է նաև, որ տեսիլները քայլում են,
Կրկնում են մեր շարժումները, մեզ հետ գնում ու գալիս
Այն պատճառով, որ հայելու մասը, որից հեռացանք,
Անմիջապես դադարում է պատկերներ ետ ուղարկել.
Բնությունն է պահանջում, որ հավասարվեն մշտապես
Անկյունները անդրադարձման ու անկման խստորեն։
Մեր աչքերը խուսափում են նայել պայծառ իրերին,
Կուրանում են նրանք, ովքեր արևին են նայում,
Որովհետև, բացի նրա պայծառ ուժից սեփական,
Տեսիլները երկնային միշտ մաքուր օդի բարձունքից
Արագորեն սլանալով էլ չեն կարող հարվածել
Մեր աչքերին, չքանդելով նրանց շատ նուրբ հյուսվածքը։
Եվ, բացի այդ, պայծառ լույսը, որ փայլում է չափազանց,
Այրում է մեր տեսողությունն այն պատճառով, որ իր մեջ
Պարունակում է կրակի սերմեր նույնպես բազմաթիվ,
Որոնք, աչքի մեջ մտնելով, նրան ցավ են պատճառում։
Հետո՝ նրանց պիտի դեղին թվան բոլոր իրերը,
Ովքեր հիվանդ են դեղնախտով այն պատճառով, որ նրանց
Մարմիններից միշտ բխում են դեղին սերմեր անհամար,
Որոնք օդում միանում են տեսիլներին իրերի,
Իսկ աչքերի մեջ այդ մարդկանց կան բազմաթիվ մասնիկներ,
Որոնք բոլոր պատկերները վարակում են նույն գույնով։
Իսկ մութ տեղից մենք տեսնում ենք լուսավորված ցերեկվա
Լույսով իրերն այն պատճառով, որ օդը մութ է թեև
Այն, որ մոտիկ է ավելի, միշտ առաջինն է մտնում
Եվ տիրանում ուղիներին, որոնց գտնում է բացված,
Սակայն նրան լուսավորված օդն է շուտով հետևում
Եվ մաքրում է, այսպես ասած, մեր աչքերը, ցրելով

Խավարն առանց դժվարության, քանի որ նա առավել
Շարժուն, նուրբ ու եռանդուն է, քան թե օդը խավարի։
Եվ անցքերը, որոնք առաջ փակված էին խավարով,
Ազատվում են ահա այդպես, պայծառ լույսով են լցվում։
Լուսավորված մարմինների տեսիլներն էլ են իսկույն
Մտնում այնտեղ ու գրգռում զգայունքը աչքերի։
Ընդհակառակն՝ անհնար է, որ մենք տեսնենք որևէ
Լուսավորված տեղից իրեր, որ խավարում են արդեն,
Քանի որ մութ թանձր օդը, հասած այնտեղ երկրորդը
Փակում է մեր տեսողության անցքերը և պաշարում
Ուղիները, թույլ չտալով տեսիլ մանի աչքի մեջ։
Իսկ երբ հեռվից քառակուսի աշտարակի ենք նայում
Այն շարունակ մեզ կլոր է թվում լոկ այն պատճառով,
Որ ամենայն անկյուն հեռվից մեզ միշտ բութ է երևում
Բայց կարող է առհասարակ ոչ մի անկյուն չերևալ
Այն մեզ վրա լի էլ աղդում, հարվածները չեն կարող
Արդեն հասնել մեր աչքերին, քանի որ այլ տեսիլներ,
Անցնելով մի երկար ճամփա, ենթարկվում են անդադար
Դարձյալ օդի հարվածների, բթանում են, թուլանում։
Երբ անկյունը այդպես մաշվի, դառնալ է ոչ զգալի,
Հեռվից միայն երևում են կլոր կույտեր քարերի,
Ոչ թե այնպես, ինչպես կլոր մարմիններն են երևում,
Այլ ձևով, որ այնքան պարզ չէ և կատարյալ է պակաս։
Թվում է, որ արևի տակ մեր ստվերը շարժվում է
Եվ գալիս է մեր հետքերով, կրկնում է մեր շարժումը,
Եթե կարծել կարելի է, թե օդը, որ լույս չունի,
Որովհետև որևէ այլ բան չէ մարդու ստվերը,
Մի հատկություն ունի՝ քայլել այդպես կրկնել մարդկային
Շարժումները։ Եվ այդպես է պատահում այն պատճառով,
Որ, զրկվելով լույսից հերթով, հողը այնտեղ, որտեղ մենք
Ծածկել էինք մարմնով նրան, լույսով լցվում է այնտեղ,
Որտեղից մենք հեռանում ենք։ Այդ պատճառով թվում է
Որ ստվերը չի դադարում շարունակ մեզ հետևել։
Չէ՞ որ թափվում են նոր շողեր հին շողերի փոխարեն
Եվ չքանում բրդի նման, որ ընկնում է բոցի մեջ.
Այդպես ահա հեշտությամբ է հողը զրկվում իր լույսից
Եվ լցվում է լույսով նորից, և փռում սև ստվերներ։
Այդ ժամանակ չենք կարծում, որ խաբվում են մեր աչքերը,
Նրանց գործն է՝ լույս ու ստվեր տեսնել այնտեղ, որտեղ կան.

Բայց նո՞ւյն լույսն է արդյոք փայլում, թե՞ մի ուրիշն է արդեն,
Կամ ինչպե՞ս է կատարվում այն, ինչի մասին է խոսքը,
Միայն մարդու միտքը պետք է լուծի մթին այդ հարցը
Մեր աչքերը չեն իմանում բնությունը իրերի,
Եվ աչքերը մեղավոր չեն, երբ մեր խելքն է սխալվում։
Նավը, որով մենք գնում ենք, մեզ թվում է միշտ կանգնած,
Թվում է, որ խարսխվածը անց է կենում շարունակ
Բլուրները և դաշտերը երկայնությամբ ափերի,
Որոնց մոտից նավն է անցնում, կարծես փախչում են դեպի
Նավախելը, իսկ աստղերը անշարժ գամված են թվում
Եթերային բարձունքներում, մինչդեռ ծագում են նրանք
Եվ անդադար գլորվում են դեպի մուտքը հեռավոր,
Իրենց փայլուն մարմինները տանելով ողջ երկնքով։
Արեգակը և լուսինը անշարժ կանգնած են թվում,
Թեև մարդու միտքն է ասում, որ շարժվում են և նրանք
Լեռները, որ բարձրանում են անդունդներից ծովային
Որոնց միջև նավի համար լայն անցքեր են մնացել,
Հեռվից նույնպես մեզ թվում են ամբողջական մի զանգված
Թեև բաժան են իրարից, մեզ թվում են միացած,
Եվ կարծես մի կղզի լինեն։ Մանուկները փոքրիկ, որ
Իրենց շուրջը չեն պտտվում այլևս, այն աստիճան
Համոզված են, որ շարժվում է ամբողջ տունը, պտտվում
Նրանց շուրջը սյունաշարքը, որ հազիվ են հավատում,
Թե չեն փլվի պատն ու կտուրն ու իրենց չեն ջախջախի։
Բնությունը սկսում է բարձրացնել մեծ լեռների
Վրա պայծառ արեգակի կրակները շողշողուն,
Իսկ լեռները, որոնց կարծես գագաթին է նա կանգնել,
Որոնց կարծես նա դիպչում է իր հուրերով բոցավառ,
Մեզ թվում են, թե հեռու են նրանք ոչ շատ մեզանից,
Ասենք՝ նետի մի թռիչքից հազար անգամ առավել,
Բայց լեռների ու արևի միջև պայծառ երկնքի
Տակ փռվել են անծայր ծովեր ու երկրներ բազմաթիվ
Որտեղ ապրում են անհամար անասուններ ու մարդիկ։
Փոսի մեջ, որ լի է ջրով մի մատնաչափ խորությամբ,
Որ հավաքվում է քարերի միջև ամեն փողոցի,
Մեր ոտքերի տակ տեսնում ենք տարածություն անհատակ, որ
Անսահման է նույնքան, որքան այն, որը մեր վերևում
Երկրից երկինքն է բաժանում, կարծես թե ողջ աշխարհը
Ճեղքված է իր ողջ խորությամբ և ամպեր է ցույց տալիս,

*Ու թվում է, որ տեսնում ենք երկրորդ կեսը Լուսնի,
Եվ մարմիններ, որ կան նաև այդ անծանոթ շրջանում։
Վերջապես, երբ համառում է մեր ձին գետի մեջտեղում,
Այն ժամանակ, երբ նայում ենք արագահոս հոսանքին,
Թեև մեր ձին անշարժ է, բայց թվում է, որ քշվում է
Հոսանքի դեմ. ինչ իրերի էլ որ նայենք, կտեսնենք,
Որ տարվում են նրանք նույն կերպ արագ քշվում գետն ի վեր։
Եթե նայենք սյունասրահի, ասենք, ծայրից ուրեք,
Որ կառուցված է զուգընթաց և հավասար բարձրությամբ
Սյուներից և նրա ամբողջ երկայնությամբ կթվա,
Որ զուգամետ կոնուսով է հեռվում վերջանում,
Գետնին կտուրն է մոտենում, և աջ կողմը ձախ կողմին,
Քանի դեռ չի խառնվել ողջը մառախլապատ սուր ծայրում։
Իսկ նավաստուն արձակ ծովում թվում է, թե արևը
Բարձրանում է ծովից և իր լույսը թաղում նրա մեջ
Չէ՞ որ ոչինչ բացի ծովից ու երկնքից, չի տեսնում,
Ուստի նրա զգացմունքները չհամարես խաբուսիկ։
Նրանք, ովքեր ամենևին ծովը դեռ չեն ճանաչում,
Կարծում են, որ այն նավերը, որոնցով միշտ լի է նա,
Այլանդակված ու ջարդված են, պայքարելով ջրի դեմ
Թիակները և ղեկի այն մասը, որ դուրս է ջրից,
Ուղիղ են, իսկ ջրում սուզված մասը ծալել է կարծես
Թեքվել դեպի հետնամասը, դեպի վերև ոլորվել,
Կարծես ջրի մակերեսին է համայյա նա լողում
Իսկ գիշերվա ընթացքում, երբ քամին նոսր ամպերին
Հալածում է, քշում, կարծես թե ամպերին ընդդառաջ,
Պայծառ աստղեր են սահելով անցնում նրանց վերևում
Այն ուղղությամբ, որ հակառակն է ընթացքին իսկական։
Եթե ձեռքով մենք սեղմենք մեր աչքի մասը ներքևի,
Կտեսնենք, որ ամեն մի բան իսկույն դառնում է երկու.
Կրկնապատկվում է ջահերի պայծառ լույսը մեր աչքում,
Կրկնապատկվում է կահույքը, որ գտնվում է տան մեջ,
Կրկնակի են դառնում մարդկանց մարմիններն ու դեմքերը։
Երբ շղթայով քաղցր քնի մեր անդամներն են կապված,
Եվ երբ անուշ քնի գրկում փռված է մեր մարմինը,
Հաճախ է մեզ թվում, որ մենք արթուն ենք և շարժվում ենք,
Մեզ թվում է, որ խավարում մենք արեգակն ենք տեսնում,
Եվ ցերեկվա պայծառ լույսը։ Եվ, փակված նեղ սենյակում,
Մի այլ երկիր ենք գնում մենք և տեսնում ենք այլ ծովեր,*

Ձորով անցնում գետեր, լեռներ և ընդարձակ դաշտավայր,
Ձայն ենք լսում, երբ տիրում է մի ընդհանուր լռություն,
Պատասխանում ենք, թեև մեր լեզուն մնում է անշարժ։
Զարմանքով ենք տեսնում նման երևույթներ բազմաթիվ,
Որ ջանում են, սակայն իզո՜ւր, որ մենք պակաս վստահենք
Զգացումներին։ Այդ սխալը ստացվում է մեծ մասամբ
Այն պատճառով, որ սխալ է դատում հոգին, դրա հետ
Գումարում ենք զգացումների տվյալները, կարծելով,
Որ տեսել ենք, ինչ զգացումը մեզ բնավ ցույց չի տվել։
Ի՞նչ կա դժվար ավելի, քան բաժանելը այդ ստույգ
Տվյալները զգացումների ենթադրվածից, այն, որ մեզ
Ամենևին պարզ չէ և որ հոգին ինքն է միացնում։
Ով պնդում է[4], որ գիտենալ մենք չենք կարող ոչ մի բան,
Նա չգիտե նույնիսկ այն, թե ճի՞շտ է արդյոք այն, որ մենք
Գիտենալ չենք կարող ոչինչ, չէ՞ որ ինքն է ընդունում
Որ նա ոչ մի բան չգիտե։ Վիճաբանել չեմ ուզում
Նրա հետ, ով հակասում է ճշմարտությանն այդ ստույգ
Եվ գլուխ է դնում այնտեղ, որտեղ ոտքեր են լինում.
Ասենք՝ գիտե, որ գիտենալ մենք չենք կարող ոչ մի բան
Գիտենալն ու չգիտենալն ի՞նչ է, ինչպե՞ս գիտե այդ,
Քանի որ չի գտել երբեք նա որևէ ստույգ բան
Ճշմարիտի, ստի մասին, ե՞րբ է կազմել գաղափար,
Կասկածելին ու ստույգը ինչպե՞ս է նա տարբերում։
Ճշմարտության գաղափարը զգացումից է ծնվում
Կհամոզվես շուտով. հերքել մոլորումը չի կարող
Զգացումների տվյալները։ Զգացումներն են արժանի
Ամենամեծ վստահության, որովհետև սեփական
Ուժով իրենց նրանք պիտի բացեն ամեն մի սուտ, որ
Ճշմարտությանն է հակասում։ Որտե՞ղ գտնենք իսկապես,
Մի ուղեցույց, որն ավելի վստահելի լիներ, քան
Զգացումները։ Եվ կարո՞ղ է արդյոք, ասենք, խելքը մեր
Որը ինքն էլ ամբողջովին զգացումներից է կախված,
Գործել արդյոք, ինչպես հարկն է մեր էության անոթում
Բանականությունն է, անշուշտ, մոլորեցնում մեզ, եթե
Զգացումները սխալվում են։ Կարելի՞ է ասել, որ
Կարող են մեր ականջները մերկացնել մեր աչքերին
Շոշափում կմերկացնի՞ ականջներին իր հերթին,
Հոտառությունն ու ճաշակը, աչքերը մեր կարո՞ղ են
Սատարել մեր շոշափմանը, որպեսզի նա չխաբվի։

Կարծում եմ՝ ո՛չ։ Յուրաքանչյուր զգացմունքը առանձին
Բնագավառ ու հատկություն ունի և այդ պատճառով
Կարծրությունն ու փափկությունը, ջերմությունը և ցուրտը
Պետք է լինեն զգացմունքների փորձիքները առանձին։
Հատկանիշներն ու գույները, ինչ որ հատուկ են նրանց,
Արդեն պետք է բոլորովին այլ զգացմունքի պատկանեն,
Համը, հոտը և ձայնն ունեն դատավորներ առանձին,
Հետևապես զգացմունքները իրար ժխտել չեն կարող,
Եվ չեն կարող ամենևին իրենք իրենց մերկացնել,
Որովհետև վստահություն վայելելով իրար պես,
Նրանց բոլոր տվյալները ճիշտ են բոլոր դեպքերում։
Եթե միայն մեր խելքը մեզ բացատրել չի կարող, թե
Ինչ պատճառով է մոտիկից քառակուսի առարկան
Հեռվից թվում կլոր, դարձյալ երբ խելացի հիմք չկա
Լավ է սխալ մեկնաբանել երևույթներն այդ երկու,
Քան բաց թողնել ճշմարտությունն այդպես ձեռքից, անկասկած,
Այդպես քանդել ու ավերել վստահություն ամենայն,
Տապալել այն հիմքը ամուր, որով մեր կյանքն է հիմնված,
Եվ ոչ միայն մեր խելքն այնժամ կտապալվի, անկասկած
Զգացմունքների տվյալներով է մեր կյանքը պահպանվում,
Ցույց տալով մեզ, թե ինչպես մենք անդունդներից խուսափենք,
Ինչպես և այլ վնասակար մարմիններից բազմաթիվ,
Եվ ձեռք բերել այն, ինչը մեզ պետք է լինի օգտավետ։
Ուստի, անմիտ զրույցներ են դատողություն ամենայն,
Որ դուրս գալով զգացմունքի դեմ, նրան ժխտել է փորձում։
Եթե մի տուն կառուցելիս քանոնն ունի արատներ,
Անկյունաչափն ուղղահայաց գծից շեղվի շարունակ,
Եթե տեղի դրությունը հարթացույցը ցույց չտա,
Այդ պատճառով ամբողջ շենքը արատավոր կլինի
Թեքված, նստած, տգեղ, անշուք, անհամաչափ, շեղակի
Կամ կփլվի ամբողջովին, կամ կփլվի մի մասը,
Եթե միայն սկզբից է կառուցվածքը վատ շինվել։
Այդպես եթե չվստահենք զգացմունքներին մեր, այնժամ
Խարխուլ ու սուտ կլինեն կարծիքները մեր բոլոր։
Այժմ պետք է լուսաբանեմ, թե զգացմունքներն ինչպես են
Գործում իրենց ասպարեզում, որ խիստ հատուկ են նրանց,
Ահա մի հարց, որ մեզ համար շատ դժվարին չէ պարզել։
Ձայն ու հնչյուն լսվելու են այն ժամանակ միայն, երբ
Նրանց տարրերն, ականջների խոռոչի մեջ մտնելով

Կգրգռեն զգացմունքը։ Եթե միայն ընդունենք,
Որ ձայներն ու հնչյունները մարմնավոր են բնությամբ,
Ուստի պետք է զգացմունքների վրա ազդեն, անկասկած։
Եվ, բացի այդ, ձայնը հաճախ մեր կոկորդը քերելով,
Շնչափողը գրգռում է աղաղակով բարձրաձայն,
Որովհետև այն ժամանակ ձայնի բոլոր տարրերը,
Չափազանց մեծ քանակությամբ շտապելով դեպի դուրս,
Հանկարծակի, միանգամից պետք է լցնեն մի նեղ անցք.
Պատառոտում են այդ անցքը, վնասում են այն ուղին,
Որով ձայնը դուրս է պրծնում։ Ուստի պետք է կարծենք, որ
Ձայնի, խոսքի այդ տարրերը պետք է լինեն մարմնավոր,
Քանի որ մեր մեջ կարող են նրանք առաջ բերել ցավ.
Բայց դու գիտես, թե մեր մարմնին որքան է դա վնասում,
Նյարդերն ինչպես են տուժում և որքան ուժ է խլում, երբ
Արշալույսի դեռ առաջին լույսի հետ են սկսում
Խոսել մինչև իջնում են սև ստվերները գիշերվա,
Մանավանդ, երբ բարձրաձայն են արտասանվում ճառերը։
Ուստի պետք է ճանաչենք, որ մարմնավոր է ձայնը մեր,
Որովհետև վնասվում է մարմինը շատ խոսելուց։
Կոպտությունը ձայնի պետք է կոպտությունից առաջ գա
Իր հիմնական մարմնիկների, իսկ թե հարթ են՝ մեղմություն.
Ականջների մեջ մտնում են տարբեր կարգի մարմնիկներ,
Երբ շեփորն է աղաղակում իր կոշտ լուրջ և հուժկու,
Երբ եղջյուրն է թունդ արձակում իր ձայնը խուլ ու խոպոտ,
Եվ երբ ջրի խոխոջի հետ աղերսանքով վշտալից
Զնգա երգը կարապի, որ Հելիկոնից է եկել։

Այդպես, երբ մեր մարմնի խորքից ձայն է քշվում դեպի դուրս,
Երբ ասում ենք մեր բերանով, նրան դուրս ենք արձակում,
Շարժուն վարպետ լեզուն նրան բաժանում է բառերի,
Շրթունքներն էլ իրենց հերթին ձևավորում են նրանց
Բայց երբ հասնում է ականջին և երբ ձայնը չի անցնում
Երկար ճամփա, այն ժամանակ բաժանվում են խոսքերը,
Պարզորոշ ու առանձին է ուստի լսվում ամեն բառ,
Որովհետև իր ձևերը պահպանում է ձայնը մեր։
Տարածությունն այն, որ լինում է խոսքերի արանքում,
Երբ չափազանց շատ երկար է օդը, չափից ավելի,
Խոսքերն իրար պիտի խառնվեն, շփոթվում է ձայնը մեր,
Երբ անցնում է օդի միջով։ Պատահում է այդպես, երբ

Լսում ենք մենք ձայնը, միտքը՝ բառերի չենք հասկանում.
Հասնում են մեր ականջներին խառնաշփոթ ու անպարզ։
Հաճախ երբ մի հրովարտակ է հայտարարվում փողոցում
Ժողովրդի մեջ բոլորը միանման են լսում,
Ուստի մի ձայն բաժանվում է արդեն բազում ձայների
Որովհետև, ցրվելով շատ ականջներում առանձին,
Ամեն մեկի մոտ դառնում են որոշակի հնչյուններ։
Իսկ ձայները այն, որ հաճախ ականջների չեն հասնում,
Շարունակում են ճանապարհն ու ցրվում են օդի մեջ,
Սակայն մասամբ հանդիպելով դարձյալ ամուր իրերի,
Ետ են մղվում, ձայնի նման մի բանով միտ խաբելով։
Իմացած այդ երևույթը, կարող ես քեզ բացատրել,
Ինչպես նաև ուրիշ մարդկանց, թե ինչպես են ժայռերը
Մի ամայի վայրում, ասենք, վերադարձնում բառերը,
Պահպանելով նրանց կարգը և ձևերը նախնական,
Երբ ձորերում ստվերապատ որոնում ենք մոլորված
Մեզ ուղեկցող մարդկանց, որոնց մենք կանչում ենք բարձրաձայն
Տեսել եմ ես վայրեր, որոնք անդրադարձնում են խոսքեր
Վեց, յոթ անգամ, բլուրները բլուրների հետևից,
Եվ բառ առ բառ պատասխանում և իրար ճիշտ են կրկնում
Այդ վայրերը ծառայում են, բնիկների ասելով,
Սպասարան այծոտն[5] սատիրներին, ֆավներին
Նիմֆաներին, որոնք, եթե միայն նրանց հավատանք
Զվարճանում են այդ ամայի վայրում, հաճախ խախտելով
Լռությունը իրենց զնգուն գիշերային համերգով
Նրանք իբրև սրինգներից ու լարերից քաղցրալուր
Ու վշտալից ձայն են կորզում իրենց վարպետ մատներով
Ավելացնում են նրանք, թե բնիկները դաշտերի
Ամեն անգամ գիտեն, որ իր Փանն[6] աստվածն է գալիս
Որ եղևնյա մի պսակով զարդարում է գլուխը,
Շրթունքները կպցնում է եղեգնյա ծուռ փողերին
Եվ երգում է անտառային մուսան[7] նրա սրինգով։
Հնարում են և այլ կարգի զարմանալի հրեշներ
Կամ որպեսզի չկարծեն, թե երկրից, որտեղ ապրում են
Աստվածները հեռացել են, կամ մի ուրիշ պատճառով,
Որովհետև նրանք գիտեն անշուշտ, թե ինչ աստիճան
Ամեն մարդու ականջները ծարավի են հեքիաթի։
Այնուհետև ինչո՞ւ պիտի դու զարմանաս, թե ձայնը
Հասնում է մեզ ու հարվածում ականջին այն տեղերով

Որոնց միջով մեր աչքերը ոչինչ տեսնել չեն կարող.
Փորձով գիտենք, որ խոսում ենք փակ դռների միջով մենք,
Որովհետև ձայնը առանց ցրվելու չի կարող է
Անցնել բոլոր մարմիններով, որ ամենից ավելի
Ծուռ արանքներ ունեն, մինչդեռ տեսիլները, անկասկած,
Չեն կարող և բաժանվում են, եթե անցքերն ուղիղ չեն,
Ապակու պես, որի միջով պատկերներն են թափանցում.

Այնուհետև տարածվում է ձայնը բոլոր կողմերում,
Որովհետև իրարից են առաջ գալիս ձայները
Երբ հնչում է մի ձայն, իսկույն բաժանվում է շատերի,
Այնպես, ինչպես կրակներն են ցրվում անթիվ կայծերով,
Այդպես ահա ձայնն է հասնում ամենախուլ տեղերը.
Ձայնը թնդում է մեր շուրջը արթնացնելով բոլորին.
Իսկ տեսիլներն այդ իրերից ուղիղ գծով են գալիս,
Ինչպես առաջ ասել էի. Այդպես պատի վերևում
Ոչ մի բան չենք կարող տեսնել, սակայն ձայներ լսում ենք
Բայց ձայները, որ անցնում են ամուր փակված դռներով,
Դառնում են խուլ ականջի մեջ, անպարզալուր են մտնում,
Այնպես որ մենք ոչ թե խոսքեր այլ միայն ձայն ենք լսում.

Իսկ ինչպես ենք զգում համը մենք մեր լեզվով ու քիմքով,
Ավելի բարդ և ավելի դժվարին է բացատրել.
Համ զգում ենք նախ՝ բերանում, մեր սնունդը ծամելիս
Դուրս ենք բերում նրա հյութը, ինչպես ջուրն ենք դուրս բերում,
Հանենք, սպունգի միջից, նրան մեր ձեռքերով սեղմելով.
Եվ այդպես դուրս բերված հյութը՝ հետո մտնում է քիմքի
Անցքերով և անցնում լեզվի ուղիներով ծուռումուռ.
Եթե հյութի մարմնիկները նախնական հարթ, կլոր էն,
Այն ժամանակ քաղցրությամբ էն միշտ խտղտում մեր լեզուն
Եվ ընդհանուր հաճույք ցրում լեզվի թքոտ թաց տան մեջ.
Ընդհակառակն՝ որքան կոպիտ, խորդուբորդ են ավելի,
Այնքան ծակում են ավելի և մեր մարմինն են քերում.
Հետո՝ քիմքի ծայրով ենք մենք զգում համի հաճույքը,
Իսկ երբ արդեն մեր կոկորդով սնունդն իջել է ներքև,
Երբ ցրվել է անդամներում քաղցրություն չենք զգում մենք,
Եվ անտարբեր է մեր մարմնին, թե ինչ սնունդ ենք կերել,
Եթե միայն լավ է մարսվում և մաքրվում է այնքան,
Որ կարող է մեր մարմնի մեջ ամբողջովին տարածվել,
Եվ պետքական թացությունը ստամոքսում պահպանել.

Սակայն ինչո՞ւ նույն սնունդը հաճելի չէ բոլորին,
Բացատրում եմ. ինչը մեկին դառն է ու շատ զզվելի,
Այն կարող է հաճելի և համեղ թվալ երկրորդին.
Տարբերվում են մարդիկ իրենց ճաշակներով ու համով։
Ինչը սրան սնուցում է, նրան թույն է մահացու.
Եթե մարդու թուքը ընկնի օձի ուղիղ բերանը,
Օձն ինքն իրեն ատամներով կգզգզի, կսատկի.
Իսկ «շքիտամ» բույսից[8], որ մեզ համար թույն է մահացու,
Ճարպակալվում են այծերը, կաքավներն են գիրանում։
Եվ որպեսզի հասկանաս, թե ինչն է դրա պատճառը,
Պետք է դու այն մտաբերես, ինչ ասել եմ քիչ առաջ,
Որ խառնված են տարբեր կերպով մարմնիկները իրերում։
Անասուններն այն, որ իրենց արտաքինով են տարբեր,
Տարբեր ձևեր, ուրվագծեր նրանք ունեն ցեղական,
Ուստի իրենց մարմնիկներով տարբերվում են ավելի։
Տարբերությունն այդ սերմերի պետք է անհրաժեշտորեն
Տարբերություն առաջ բերի ընդհանրապես ու միայն
Անդամների միջև, այլև արանքների, անցքերի,
Որոնք հաճախ նեղ են լինում և հաճախ լայն առավել,
Ե՛վ եռանկյուն, և՛ քառանկյուն նրանք լինել կարող են
Բազմատեսակ, հարթ ու կլոր, անհարթ, կոպիտ, խորդուբորդ,
Որովհետև ձևն անցքերի տարբեր է ըստ տարրերի,
Շարժումների, ֆիգուրայի, ինչպես անցքերն են տարբեր
Ըստ հյուսվածքի, այն, որ նրանց պարունակում է իր մեջ։
Եթե մի բան մեկի համար քաղցր է և հաճելի,
Ուստի նրա սկզբնական տարրերը հարթ, կլոր են
Ընդհակառակն՝ եթե մի բան մարդուն կծու է թվում,
Խորդուբորդ ու ծուռ տարրեր են անցնում նրա կոկորդով։
Այդ ըմբռնած, կհասկանաս երևույթներ նաև այլ
Այդպես՝ եթե տենդ է առաջ բերում լեղու հոսանքը,
Հիվանդություն է սկսվում որևէ այլ պատճառով,
Լիակատար անկարգություն է ստացվում մեր մարմնում,
Տարրերն իրենց դրությունը փոփոխում են ամենուր
Ներս են մտնում միայն նրանք, որ մեզ ցավ են պատճառում,
Այն ինչը մեզ հաճելի էր և շատ հարմար մինչև այդ,
Այլևս մեզ հարմար չէ և մի այլ բան է հաճելի։
Մեղրի համը կազմված է այդ երկու տարբեր տարրերից,
Ինչպես արդեն դրա մասին բել ասել եմ քիչ առաջ։

Այժմ ինչպես հոտ է առաջ գալիս, հասնում մեր քթին.
Անհրաժեշտ է, որ բազմաթիվ իրեր լինեն այնպիսի,
Որոնց ներսից թանձր հոտ է արտահոսում դեպի դուրս,
Որովհետև չի կարելի ընավ ժխտել փաստը այն,
Որ իրերից արտահոսում, դուրս են գալիս շատ հոտեր,
Բայց շատ կամ քիչ համանման մարմիններին զանազան,
Ըստ ձևերի տարբեր, որոնց նրանք պիտի գրգռեն։
Եվ ահա թե ինչու օդում ճախրող մեղուն դեռ հեռվից
Հրապուրվում է մեղրի հոտով, իսկ ուրուրը՝ լեշերի,
Եվ ինչու է շունը գնում գազանների հետքերով
Մարդու հոտը լավ են զգում հեռվից ճերմակ սագերը,
Որ փրկել են մի ժամանակ պարիսպները Հռոմի[9]։
Այդպես ահա բնությունը տարբեր հոտի օգնությամբ
Յուրաքանչյուր անասունի սննդի մոտ է տանում,
Որ հարմար է միայն նրան, թույնից հարկավ զգալով,
Եվ այդպես է նա պահպանում անասունին կենդանի։
Հոտերը, որ գրգռում են մարդու քիթը, գործում են
Ավելի կամ պակաս հեռվից, սակայն երբեք չեն կարող
Այնքան հեռու գնալ, որքան հնչյուններն են գնում միշտ,
Կամ ձայները, որոնք հաճախ շատ հեռվից են հասնում մեզ,
Չխոսելով աչքի մասին, որ շատ հեռու է տեսնում։
Թափառում ու քարշ են գալիս հոտերը խիստ դանդաղկոտ,
Նաև կործանվում իրենց ճամփին, և ցրվում են երկնքում
Այնուհետև դյուրին կերպով քամու թեթև մի շնչից,
Նախքան նրանք կարող էին մեր զգացմունքը գրգռել,
Այն պատճառով, որ նրանք մեծ դժվարությամբ են բխում
Մարմինների ներսից և այդ մենք չենք կարող կասկածել,
Տեսնելով, թե մարմինները ինչպես են հոտ արձակում
Ավելի, երբ փշրված են ու կրակի մեջ նետված.
Հետո՝ քանի որ հոտերի, ինչպես հեշտ է իմանալ,
Տարրերը միշտ կոպիտ են շատ, քան տարրերը ձայների,
Եվ երբեք չեն անցնում պատով, որով ձայներն են անցնում,
Այդ պատճառով քիչ են նշում մարմինների տեղը մեզ։
Այդ հոտերը կարծես լինեն սուրհանդակներ ծանրաշարժ,
Որոնք իրենց հաղորդումը ուշ են բերում չափազանց։
Ահա ինչու են շները հետքեր կորցնում շատ հաճախ։
Ոչ միայն հոտն ու համն ունեն հատկություններ այդպիսի,
Այլև բոլոր մարմինների պատկերներն ու գույները,
Որ այնքան էլ համաչափ չեն զգացմունքներին, անկասկած,

Մարմիններ կան, ուստի, որոնց տեսքը ցավ է պատճառում
Մեր աչքերին ավելի, քան տեսքը ուրիշ իրերի։
Աքաղաղը, որ թևերը թափահարում է կայտառ,
Քշում մութը գիշերվա և արշալույսին ձայն տալիս,
Սարսափեցնում է, իսկապես, առյուծներին կատաղի[10],
Որոնք, հազիվ նրան տեսած, փախչում են ու հեռանում։
Աքաղաղի մարմնից պիտի բխեն տարրեր այնպիսի,
Որ առյուծի աչքերի մեջ մտած՝ բիբերն են խոցում
Եվ ուժգին ցավ են պատճառում։ Այնքան արի առյուծը
Դիմանալ չի կարողանում։ Սակայն այդ նույն տարրերը
Չեն կարող մեր աչքը խոցել՝ կամ այնտեղ չեն թափանցում,
Կամ թափանցած արդեն այնտեղ՝ գտնում են մի ազատ ելք,
Որը նրանց խանգարում է աչքին վնաս պատճառել։
Իսկ այժմ թե ինչպիսիք են մարմնիկները այն, որոնք
Շարժում են մեր հոգին այդպես և որտեղից է գալիս
Գաղափարը նրա։ Արդեն ես քեզ ասել եմ առաջ,
Որ տեսիլներ կան առանձին տեսակի և որ նրանք
Օդում ճախրում են շարունակ բազմատարբեր ձևերով
Տարածության մեջ անսահման։ Նրանց հյուսվածքն էլ այնքան
Նուրբ է, որ չեն կարող իրար հանդիպել ու միանալ,
Ինչպես թելը ոստայնի կամ, ասենք, ոսկու փայլքերը,
Որովհետև պատկերներից նրանք նուրբ են ավելի,
Որոնց միայն պարտական ենք, որ իրեր ենք տեսնում մենք։
Այդ նրբագույն տեսիլները մարմնի բոլոր անցքերով
Ներթափանցած՝ սկսում են ներսից հուզել մեր հոգու
Էությունն ու շարժել նրա զգացմունքները անընդհատ։
Ահա ինչու կենտավրոսներ, սկիլլեններ[11] ենք մենք տեսնում,
Եվ Կերբերի նման շներ, տեսիլները այն մարդկանց,
Որոնց արդեն մահն է տարել և աճյունը թաղված է։
Մթնոլորտում շատ են վխտում ամեն տեսակ տեսիլներ,
Տարածության մեջ շատերը իրենք իրենց են կազմվում։
Ուրիշներ են առաջանում մարմիններից անկասկած,
Կան այնպիսիք, որ այդ երկու տեսակներից են կազմված
Մի օրինակ կենտավրոսի պատկերն առաջ չի եկել
Մի կենդանի կենտավրոսից բնությունը անկասկած,
Երբեք նման արարածներ դեռ չի ծնել աշխարհում։
Բայց կարող է ձիու պատկեր պատահաբար միանալ
Մարդկային մի պատկերի հետ, և պատկերներն այդ երկու
Հեշտությամբ կկցվեն իրար, ինչպես արդեն ասել ենք

Այն պատճառով, որ բնությամբ նրանք նուրբ են չափազանց։
Եվ հյուսվածքով շատ քնքուշ են։ Եվ այդպիսի պատկերներ
Այդ ձևով են առաջանում այն պատճառով, որ նրանց
Թեթևությունը դարձնում է հաճախ շարժուն չափազանց,
Ուստի նրանց համար հեշտ է հենց առաջին մղումից
Շարժումներ տալ մեր հոգուն, որ այնպես էլ շատ շարժուն է,
Արտասովոր շարժունություն ունի, նուրբ է չափազանց։
Դու հեշտությամբ կըմբռնես թե, որքան ճիշտ է ասածն իմ,
Որ մեր աչքով տեսած բանը նմանվում է ճիշտ նրան,
Որ տեսնում ենք հոգով, ուստի անհրաժեշտ է, որ նրանց
Պատճառներն էլ նման լինեն։ Ապացուցել եմ, ասենք,
Որ տեսնում եմ ես մի առյուծ այն ժամանակ օգնությամբ
Տեսիլների, որ գալիս են ու աչքերս գրգռում։
Եվ դրանից հետևում է, որ հուզված է իմ հոգին
Նաև ուրիշ տեսիլներով առյուծի, որ տեսնում է
Այնպես հոգիս, և նույնքան պարզ, ինչպես իմ աչքն է տեսնում,
Տարբերությամբ այն միայն, որ նրանք նուրբ են ավելի։
Եթե արթուն է մեր հոգին, իսկ մարմինը փռված է
Քնի գրկում, այն ժամանակ տեսիլները այն, որոնք
Դրոշմել են մեզ ցերեկով, երևում են մեր հոգուն
Այնքան պարզ ու ճշտորոշ, որ մարդիկ պիտի հավատան,
Թե տեսնում են նրանց, որոնց մահն է վաղուց տիրացել։
Եվ խուսափել չի կարելի պատրանքներից բնության
Այն պատճառով, անկասկած, որ այն ժամանակ մեր բոլոր
Զգացմունքները, որ սուզվել են արդեն խաղաղ քնի մեջ,
Հակադրել չեն կարողանում ճշմարտություն կեղծիքին
Ինչպես ինքը հիշողությունն արդեն թմրած հոգնատանջ,
Այլևս չի հիշում, թե ում դեռ կենդանի է տեսնում,
Այլևս չի ապրում, վաղուց մահվան զոհ է դարձել նա։
Այնուհետև մենք չպիտի ամենևին զարմանանք,
Որ շարժվում են տեսիլները և շարժում են համաչափ
Դրանց ձևերն ու ոտքերը։ Այդ էլ է մի երևույթ,
Որ լինում է երազում, քանի որ երբ առաջին
Տեսիլն արդեն չքացել է, հաջորդում է երկրորդը,
Եվ մի ուրիշ, տարբեր տեսքով, իսկ թվում է նույնը նա,
Նույն փոփոխվել է առաջվա իր կեցվածքով, քանի որ
Հաջորդությունն արագությամբ է կատարվել չափազանց։
Շատ հարցեր են դեռ մնում մեզ, շատ բան պետք է պարզենք մենք,
Թե ուզում ենք ինչպես հարկն է ըմբռնել մեր առարկան։

Մի հարց են մեզ տալիս հաճախ, թե ինչո՞ւ է մեր հոգին
Այն իրերի մասին կազմում մի գաղափար, որոնցով
Անմիջապես զբաղվելու ցանկություն է ունենում։
Տեսիլները չե՞ն սպասում, թե արդյոք ի՞նչ կվճռենք,
Պատկերները չե՞ն երևում, երբ միայն այդ ցանկանանք.
Բնությունը չի՞ ստեղծում, ինչպես մենք ենք հրամայում։
Թե՞ երկնքի ու ցամաքի, ժողովների ու ծովի,
Հանդեսների, խնջույքների և մարտերի կատաղի
Տեսիլների մեծ պաշար է նա պահպանում, որպեսզի
Մեր առաջին իսկ պահանջով ներկայացնի ամեն ինչ
Բազմաթիվ այլ հոգիներ էլ պետք է լինեն զբաղված
Այլ մտքերով, որոնք արդեն տարբերվում են իրարից
    Ի՞նչ ասենք մենք, երբ տեսնում ենք երազում, որ համաչափ
Տեսիլներ են գնում գալիս, շարժում ճկուն մի մարմին,
Հերթով պարզում ձեռքերն իրենց, գալարվելով հեշտությամբ
Ճարպիկ ոտքով կրկնում են շատ շարժումներ մեր առջև
Տեսիլները կանոններ չե՞ն հետազոտել բազմաթիվ.
Ի՞նչ արվեստով են զբաղվում մութ գիշերվա խաղերում։
Բայց ավելի ճիշտը այն է որ զգում ենք այդ բոլոր
Շարժումները այնպես, ինչպես հաճախ լսում ենք ձայնի
Յուրաքանչյուր խոսքն առանձին, բայց միայն մի վայրկյանում։
Բայց տեսիլներ անցնում են մեծ քանակությամբ չափազանց։
Իսկ ինչպես են նրանք իրար հաջորդում, մենք չենք զգում
Բայց մեր միտքը ունակություն ունի նրանց տարբերել,
Այդ պատճառով երևում են ամենուրեք, ամեն ժամ
Ամեն տեսակ տեսիլներ և այլ պատկերներ բազմաթիվ։
Որովհետև նրանց հյուսվածքն այնքան նուրբ է, որ հոգին
Պարզորոշ չի կարող տեսնել, ուստի նրանք այդպիսով
Կորած են մեր հոգու համար, եթե նա չի պատրաստվել
Ընդունելու նրանց, մի բան, որ անել չի հապաղում,
Որովհետև ցանկանում է և հույս ունի տեսնելու
Ապագայում իրեր, որոնց նա տեսնում է իսկապես։
    Մի՞թե դու չես նկատել, որ մեր աչքերը նույնպես, երբ
Նայում են այն իրերին, որ այնքան լավ չեն երևում,
Երբ չեն նայում ուշադրությամբ, երբ նրանք չեն պատրաստվել
Տեսնել էլ չեն կարողանում ինչպես հարկն է պարզորոշ
Այն իրերը, որ ամենից լավ են միշտ մեզ երևում,
Եթե միայն չի պատրաստվել հոգին նրանց դիտելու,
Հոգու համար նրանք կարծես անչափ հեռու են լինում։

Ինչո՞ւ պիտի զարմանանք, որ այլ տեսիլներ չի տեսնում,
Բացի նրանցից, որոնցով նա ինքն է այժմ զբաղված։
Հաճախ փոքրիկ իրերին մենք շատ մեծ չափեր ենք տալիս,
Պատրաստում ենք մի ծուղակ ու ինքներս ընկնում նրա մեջ.
Եվ այնպես է պատահում, որ առաջինին ոչ նման
Պատկերն ուրիշ բան է դառնում նա, որ մեզ կին էր թվում,
Անկարծ կարող է մեր գրկում դուրս գալ որպես տղամարդ,
Որ նրան է հաջորդում, կամ մի ուրիշ մարդ, որ արդեն
Իր հասակով ու իր մարմնով նրանից շատ տարբեր է։
Մոռացությունն ու քունը միշտ այնպես պետք է անեն, որ
Այնմեկին չզարմանանք փոփոխությամբ այդպիսի։
Եվ գոյություն ունի այստեղ մի տարածված մոլորում,
Ամբողջ ուժով պիտի ջանանք, որ դրանից խուսափես,
Որ կարենաս հեռու մնալ սխալներից այդ կոպիտ.
Չկարծես, որ մեր աչքերին փայլուն հայացք է տրված,
Որպեսզի մենք կարողանանք իրեն տեսնել զանազան
Որ ոտքերի վրա հենվող սրունքներն ու ազդրերը
Ստեղծվել են, որպեսզի մեր քայլն ավելի լայն լինի.
Որ կազմվել են մեր թևերը մկաններից, վերջապես,
Եվ աջ ու ձախ դաստակներով են վերջանում, որպեսզի
Պաշտպանության կարիքների համար միայն ծառայեն։
Եթե այդպես մեկնաբանեն և բաները մնացած,
Տապալեն ամենայն ինչ դատողությամբ իրենց սուտ
Գործածելու համար մարմնում՝ երբեք ոչինչ չի ծնվում,
Ինչ ծնվել է, կիրառում է ստեղծում նա իր համար
Քանի աչքեր դեռ չկային, տեսողություն էլ չկար,
Ոչ ոք խոսել չէր կարող, երբ դեռ ստեղծված չէր լեզուն
Մարդու լեզուն ստեղծվել է խոսքից առաջ, անկասկած,
Ականջները գոյություն են ունեցել շատ առաջ, քան
Ձայնը լսվել է առաջին. անդամները մեր բոլոր
Գոյություն են ունեցել դեռ գործածվելուց շատ առաջ,
Ուստի կարծել կարելի է նույնիսկ, որ այդ բոլորը
Գործածության կարիքից է առաջ եկել, անկասկած։
Ընդհակառակն՝ սկսել են ձեռնամարտով մարտնչել,
Պատառոտել մարմիններ և ներկել ձեռքերն արյունով,
Նախքան օդով սլացել են փայլուն նետերն առաջին։
Բնությունը մարդկանց դրդել է խուսափել վերքերից,
Քանի դեռ ձախ թևը ծածկել չգիտեին վահանով.
Հանգստություն սովորել ենք մենք տալ մարմնին մեր հոգնած

Շատ առաջ, քան սկսել ենք քնել փափուկ անկողնում.
Եվ հագեցրել ծարավն առաջ, քան գավաթ են հնարել։
Այն ամենը, ինչ կարիքն է մեզ ստիպել անելու
Այն, ինչ պտուղն է փորձերի, կարելի է կարծել, որ
Հնարված է եղել հետո՝ որպես միջոց օգտավետ։
Այդպես չեն այն իրերը, որ սովորել են գործածել
Մարդիկ, անշուշտ, շատ հետո, քան նրանք առաջ են եկել։
Եվ այդպես են զգացմունքներն ու անդամները մեր բոլոր,
Ուստի կարծել ամենևին չի կարելի, որ նրանք
Առաջ եկած լինեն որպես միայն միջոց օգտավետ։
Ինչո՞ւ պիտի մենք զարմանանք, որ ամեն մի կենդանի
Շատ բնական կերպով է միշտ իր սնունդը որոնում։
Արդեն առաջ ասել եմ քեզ, որ իրերից այդ բոլոր
Տարբեր կերպով մեծաքանակ մարմնիկներ են անջատվում։
Առանձնապես շատ մարմնիկներ անասունի կենդանի
Մարմնից պիտի բաժանվեն, երբ շարժումներ է կատարում
Շնչառության ու քրտինքի հետ էլ պիտի շատ դուրս գան,
Դուրս գան պիտի և բերանից, երբ շատ հոգնած է լինում։
Կորուստներն այդ նոսրացնում են մարմինը և ջլատում,
Սաստկանում է տառապանքը, քիչ է մնում, որ փուլ գա,
Ուստի դիմում է սնունդի, որ ցրվելով մարմնի մեջ
Բոլոր մանր արանքներում, անդամներն է պահպանում։
Վերականգնվում են ուժերը, ուղիները լցվում են,
Որ ուտելու սուր կարիքից էին այդքան լայնացել։
Այդպես և ջուրն է տարածվում ամենուրեք, որտեղ մեր
Մարմինը ջուր է պահանջում մարմնիկները տաքության,
Որ փորի մեջ են կուտակվում և կարող են հրդեհվել.
Ջուրը ցրում և մարում է կրակները այն, որոնք
Չորացնում են ու վառում են մեր անդամներն այնուհետ
Ահա ինչպես ենք հագեցնում տանջող ծարավն ու քաղցը։
Իսկ քայլելու ունակությունն ինչպե՞ս ենք մենք ձեռք բեր
Երբ միայն այդ ցանկանում ենք, անդամները մեր շարժել
Տարբեր ձևով։ Եվ ի՞նչ ուժ է սովորեցրել մեզ արդյոք
Առաջ մղել այնպիսի մի ծանր զանգված, ինչպիսին
Մեր մարմինն է, բացատրում եմ, ուշադրությամբ լսիր ինձ։
Բայց ամենից առաջ պիտի, ինչպես արդեն ասել ենք,
Որ տեսիլներն այն, որոնք են առաջացնում շարժումը,
Դիպչեն հոգուն։ Եվ այդպիսով կամքն է առաջ գալիս մեր,
Որովհետև սկսում ենք այն ժամանակ գործել, երբ

Հոգին արդեն գիտակցել է իր ցանկության առարկան,
Իմանում է ամեն ինչը տեսիլների շնորհիվ։
Իսկ երբ ոգին գրգռված է, ցույց է տալիս իր կամքը
Շարժումներով, որ անհապաղ հաղորդվում են մեր Հոգուն,
Որ ցրված է անդամներում. դյուրին է այդ կատարվում,
Քանի որ շատ սերտ են կապված էությունները այդ երկու,
Եվ անցնում են շարժումները, հետո, հույժ մեր մարմնին,
Զանգվածն արդեն շարժվում է և առաջանալ սկսում։
Եվ, բացի այդ, մեր մարմինը սկսում է նոսրանալ,
Օդը, որ միշտ շարժուն է շատ, ինչպես պետք է և անի,
Ներանում է ուղիներին, տարածվում մեծ հոսանքով
անիկների անցքերի մեջ, որ ամենից մանր են
ոգին ու օդն այն ժամանակ կարծես լինեն մեզ համար
Առագաստ ու թևեր, որոնք մեզ քշում են, նավի պես։
Զարմանալու ոչինչ չկա, որ մարմնիկներն այդքան նուրբ
Կարող են մեզ առաջ մղել, շուռ տալ, ինչպես կամենան,
Այնպիսի մի ծանր զանգված, ինչպիսին մեր մարմինն է։
Թեև քամին իր էությամբ թեթև ու նուրբ է, սակայն
Ամենամեծ նավեր է նա ծովում քշում իր առջև,
Կարծես մի ձեռք, ուղղություն է տալիս նրա ընթացքին
Որքան էլ որ արագ լինի կառավարման համար այն,
Բավական է միայն մի ղեկ, չէ՞ որ առանց որևէ
Դժվարության կռունկները բարձրացնում են վիթխարի
Ծանրություններ կարապիկի և անվակի օգնությամբ։
Իսկ այժմ թե ինչպես քունը լցնում է մեր մարմնի մեջ
Հանգստություն և հույզերը դուրս վտարում մեր հոգուց
Պետք է ասեմ քեզ համառոտ, բայց տաղերով ներդաշնակ։
Կարապի մեղմ երգը լավ է կռունկների աղմուկից,
Որ թնդում է ամպերի մեջ, որ Ավստրն է քշում։
Իսկ դու լսիր ուշադրությամբ, խորաթափանց քո խելքով
Չժխտես դու այն փաստերը, հնարավոր են որոնք.
Ես քեզ պիտի ապացուցեմ համառությամբ, որպեսզի
Ճշմարտությունն այն ընդունես, որ ասելու եմ հիմա,
Որ չդառնաս դու ինքդ քո մոլորության պատճառը։
Մենք քնում ենք, երբ մեր հոգին կազմալուծվում է մարմնում,
Եվ մի մասը դուրս է քշում, և հավաքում այլ մասը.
Եվ մեր մարմնի ներսում արդեն հոծ է դառնում ավելի։
Թուլանում են այդ ժամանակ մեր անդամներն, անկասկած։
Եվ, ինչպես, պարտական ենք այն զգացմունքով մեր հոգուն,

*Որից, քամու չխանգարած, վրկել մեզ չի կարող նա,*
*Եվ մարմնից դուրս չքշելով էությանը մտածող,*
*Բայց ոչ ամբողջ, այլապես մեր մարմնում պիտի տարածվեր*
*Մահվան հավերժ սառնությամբ, չէ՞ որ մարմնում մեր հոգուց*
*Ոչ մի մասնիկ չէր մնալու, որը մոխրի տակ թաղված*
*Կայծի նման կարողանար նորից հանկարծ բորբոքել*
*Անդամների մեջ մեր բոլոր զգացմունքների բոցը վառ*
*Որովհետև մարած հրից բոց երբեք չի բռնկվի։*
*Բայց ինչի՞ց է առաջ գալիս փոփոխություն այդպիսի*
*Մարմինն ինչո՞ւ է թուլանում և չփոթվում մեր հոգին,*
*Բացատրում եմ, նայիր, քամին իմ խոսքերը չտանի*
*Նախ և առաջ յուրաքանչյուր մարմին կողմով արտաքին,*
*Որովհետև նրան օդի հոսանքներ են պաշարում,*
*Պետք է նրանց հաճախակի հարվածներին ենթարկվի*
*Ուստի բոլոր արարածներն այդ պատճառով ծածկված են*
*Դրսից մորթով կամ կլեպով, հաստ մաշկով կամ կեղևով*[12]
*Օդ է դիպչում շնչողների նաև ներսի մասերին,*
*Հարվածելով ներշնչման ու արտաշնչման ժամանակ,*
*Որովհետև երկու կողմից է հարվածվում մարմինը,*
*Եվ անցնում են հարվածները մարմնի մանր անցքերով,*
*Մինչև նրա խոր հիմքերը և տարրերը նախնական,*
*Այդպես մարմնի կործանումն է հետզհետե պատրաստվում*
*Եվ հոգու և մարմնի տարրերն սկսում են փոփոխել*
*Դրությունները իրենց, հոգին, որ մասամբ դուրս է քշվում*
*Մասամբ մնում է խորքերը, ամենուրեք ցրվելով,*
*Այն ժամանակ ընդունակ չէ արդեն մարմնի հոդերում*
*Համախմբվել ու մասնակցել դարձյալ կյանքի շարժումին*
*Որովհետև բնությունը արդեն փոխում է բոլոր*
*Անցքերը և ուղիները։ Անկարողության միջից այդ*
*Զգացմունքները հեռանում են, թուլանում է մարմինը,*
*Քանզի չունի նա հենարան՝ անդամները հյուծվում են,*
*Եվ ծալվում են ձեռքերն արդեն, ու փակվում են կոպերը*
*Կարկամում է ծունկը մարդու, ուժասպառվում մարմինը*
*Եվ ուտելուց հետո քունը գալիս է այն պատճառով,*
*Որ սնունդը, երակներում տարածվելով, գործում է*
*Օդի նման։ Մենք տարվում ենք արդեն ծանր քնի մեջ,*
*Երբ կամ կուշտ ենք, կամ հոգնած ենք, որովհետև բազմաթիվ*
*Մարմնիկներ են ցնցվել ծանր աշխատանքից, շփոթվել,*
*Եվ, այդպիսով, ահա հոգին ավելի է խորանում,*

Իսկ դուրս գալիս՝ սլանում է ավելի մեծ հոսանքով,
Ներսում արդեն բաժանվելով, անջատվելով ավելի։
Իսկ եթե մենք զբաղված ենք, ասենք, գործով որևէ,
Կամ առաջ ենք եղել ինչ-որ բանով երկար զբաղված,
Մեզանից դա պահանջել է, որ մենք լարենք խելքը մեր,
Ուստի հաճախ այդ բանը մենք տեսնում ենք մեր երազում։
Փաստաբանը պաշտպանում է, մեկնաբանում օրենքը,
Զորավարը մարտ է մղում, ճակատամարտ սկսում,
Նավապետը պայքարում է մի ահռելի քամու դեմ
Ես աշխատում եմ անդադար, բնությունը իրերի,
Թվում է ինձ, շարադրում եմ դարձյալ լեզվով հարազատ.
Մարդկանց միտքը տարվում է այլ արվեստներով, գործերով,
Երբ սուզված են խոր քնի մեջ և խաբվում են պատրանքով։
Մենք հաճախ ենք տեսնում մարդկանց, որոնք, թողած ամեն գործ
Խաղերի են ներկա լինում մի քանի օր շարունակ
Երբ խաղերը զգացմունքների վրա ազդել չեն կարող,
Դարձյալ մնում են ուղիներ նրանց հոգում, որոնցով
Թափանցում են այնտեղ այդ նույն տեսիլները իրերի։
Եվ այդպես նույն տեսիլները շատ օրերի ընթացքում
Ծախրելու են մարդկանց առջև, որոնք, նույնիսկ չքնած,
Տեսնելու են, թե ինչպես են պարողները ցատկոտում,
Եվ ինչպես են շարժում ճկուն մարմինն իրենց շարունակ։
Նրանք լսում են քնարի քաղցրահնչյուն ձայները,
Եվ լարերի քնքուշ լեզուն. նույն հավաքույթն են տեսնում
Եվ բաց բեմի խայտաբղետ զարդարանքը հոյակապ։
Հակվածությունն ու ճաշակը, սովորությունն այդքան շատ
Կարևոր են, անտարակույս, և ոչ միայն մեզ համար
Այլև բոլոր նրանց, որոնք կենդանի են, շնչում են։
Եվ, իսկապես, արագավազ ձիեր տեսնել կարող ես
Որոնք փռվել ու քնել են, հաճախակի շնչելով,
Մկաններն են լարել իրենց, կարծես վազել են ուզում,
Իբր բացում են նրանց առջև դարբասների փեղկերը,
Առաջնության արմավենու համար մրցում իրար հետ։
Իսկ շները որսորդական, որոնք քնել են արդեն՝
Կամ ոտքի են ելնում հանկարծ, կամ հաչել են սկսում,
Հոտոտելով իրենց շուրջը, ուղղում դունչը դեսուդեն,
Կարծես հոտ են առնում նրանք, ընկած որսի հետևից,
Կամ երազում տեսնում են, որ հեռանում է եղնիկը

Եվ հալածում այդ տեսիլին, որը խաբում է նրանց,
Սակայն, քնից արթնանալով, դադարում են հալածել։
Շան շողոմքոր լակոտները՝ տիրոջ տանը սովորած,
Հանկարծ իրենց թեթև քունը թոթափում են մի վայրկյան,
Եվ մազերն են ցցում իրենց, ցանկանում են վեր կենալ
Անծանոթ ու կասկածելի կարծես դեմքեր են տեսնում։
Որքան նրանք անհարթ սերմեր ունենում են ավելի
Քնում այնքան ավելի են լինում վայրագ, կատաղի։
Բոլոր գույնի թռչունները, որ թռչում են թևերով
Խախտում խաղաղ պուրակների լռությունը մշտական,
Թեթև քնում տեսնելու են, որ երկնային բարձունքից
Նետվում է մի բազե, նրանց հալածելով անողոք
Իսկ մարդկային հոգիները նրազներում ինչպի՞սի
Շարժումով չեն հուզվում իզուր, և ինչպի՞սի ծրագիր
Չեն կազմում ու լուծում, այն էլ ակնթարթում սրընթաց
Արքաները պատերազմում և գերում են, և գերվում,
Եվ այնպես են աղաղակում կարծես մորթում են նրանց.
Ոմանք կարծես մարտնչում են և ոռնում են տանջանքից,
Շրջապատի օդը լցնում զարհուրելի կանչերով
Կարծես նրանց պատառոտում է մի վագր կամ առյուծ
Ոմանք խոսում են երազում գործի մասին կարևոր
Եվ մատնելով իրենք իրենց, խոստովանում ակամա
Բացահայտում իրենց գործած ոճիրները նողկալի
Ոմանք տեսնում են, որ իրենց կառափնարան են տանում
Կամ անդունդ են նետվում իրենց մարմնի ամբողջ ծանրությամբ
Եվ, սարսափից արթնանալով, գլուխները կորցրած
Միայն հետո դժվարությամբ կարողանում ուշքի գալ
Ծարավ մարդը տեսնում է, որ ահա նստած դետափին
Կամ մի վճիտ աղբյուրի մոտ շրթունքներով չորացած
Արդեն դիպչում է պաղ ջրին ու վայելում շարունակ։
Քնած մանուկն իր երազում իրեն տեսնում է փոսի
Կամ գիշերվա անոթի մոտ շապիկը վեր բարձրացրած,
Եվ հավաքած ջրի պաշարն է դուրս թափում իր մարմնից
Բաբելական ծածկոցները մահճի վրա թրջելով։
Նրանց, որոնց փոթորկալի պատանությունն է հուզում,
Քանզի սերմն է հասունացել անդամների մեջ նրանց,
Ամեն տեսակ մարմիններից բխած բազում տեսիլներ
Գեղեցկությամբ պատանության, որ քնքուշ է, դուրեկան,
Գրգռում են սերմից ուռած օրգանները մանկածին

Այդպես հաճախ, կատարելով իբրև այն, ինչ որ պետք էր,
Արձակում են առատ հոսանք և շուրջը կեղտոտում։
Մեր մեջ սերմ է առաջ գալիս, ինչպես ասել ենք արդեն
Պատանության օրերին, երբ անդամներն են ամրանում։
Տարբեր բաներ գրգռվում են պատճառներով զանազան,
Մարդու սերմը գրգռվում է կերպարանքից մարդկային,
Երբ հեղուկը բեղմնավորող սկսում է դուրս գալ իր
Ապաստանից ու տարածվում մարդու ամբողջ մարմնի մեջ
Որոշ տեղում հավաքվելով, անդամներով անցնելով
Դրդում է մարդկանց բոլոր օրգանները մանկածին,
Այդպես նրանց ուռեցնելով, առաջ բերում ցանկություն
Թափել սերմը այնտեղ, որտեղ նրան կիրքն է հրապուրում
Ձգտում դեպի այն մարմինը, որից խոցվել է սիրով
Մարտում մարդը սովորաբար ընկնում է այն ուղղությամբ
Որտեղից վերք է ստացել, և ցայտում է արյունը,
Եվ թշնամին մոտ է, նա էլ պիտի թրջվի արյունից։
Նա, ով նետով Վեներայի վիրավորված է եղել
Պատանի՞ է վիրավորողն արդյոք, տեսքով կանացի,
Թե՞ մի կին է՝ ամենուրեք սիրով լեցուն իր մարմնով,
Պիտի ձգտի դեպի այնտեղ, որտեղից խոց է շահել
Կրքոտ տենչի՝ միանալու, մարմնից հեղուկ մուծելու
Այն մարմնի մեջ, որը կրքոտ վայելքներ է խոստանում։
Մեզ համար այդ է Վեներան, այդ ենք Ամուր անվանում
Վեներայի քաղցր հյութը այդտեղից է մտնում մեր
Սրտի մեջ իր կաթիլներով և հոգսերի ծով դառնում
Որովհետև թեպետ հեռու նրանից, ում սիրում ես,
Դարձյալ նրա տեսիլը քեզ հանգստություն չի տալիս
Քաղցր խոսքեր շշնջալով շարունակ քո ականջին
Հարկավոր է, սակայն, խույս տալ տեսիլներից այդպիսի
Եվ հեռանալ այն ամենից, ինչը սեր է սերմանում,
Այլ ուղղություն տալ մտքերին և արձակել հեղուկի
Պաշարն ամեն մի մարմնի մեջ անհույզ կերպով անտարբեր
Եվ սիրածի համար միայն ամենևին չպահել,
Այդպիսով, քեզ ենթարկվելով հոգսերի ու տանջանքի
Սերը վերք է, սնուցելով նրան բուժել չես կարող,
Խենթությունն ու դառը վիշտը պիտի աճեն օրավուր
Թե նոր վերքով վերջ չդնես քո առաջվա վերքերին,
Հանգստություն ձեռք բեր թեկուզ Վեներայով մատչելի[1]
Եթե խելքիդ դու չես կարող տալ մի ուրիշ ուղղություն։

Վեներայի պտղից զուրկ չէ, ով խուսափում է սիրուց.
Նա վերցնում է այն, ինչ առանց մեծ տանջանքի է տրվում,
Եվ նա է լավ վայելում, ով տիրապետում է իրեն,
Մարդը առողջ դատողությամբ, և ոչ թե նա, ով խենթ է։
Կիրքը եռում է շարունակ բավարարման ժամանակ,
Տանջում է նա սիրողներին, որոնք նույնիսկ չգիտեն
Հագեցնել նախ աչքե՞րն իրենց, թե՞ ձեռքերը այդ պահին,
Եվ ցանկության առարկայիմ իրենց գրկի մեջ սեղմած՝
Շրթունքներն են կծում նրա, մարմնին ցավ են պատճառում,
Որովհետև մարդու կիրքը երբեք մաքուր չի լինում,
Որովհետև գրգռում է նրան գաղտնի մի խայթոց
Նրա հանդեպ, որի սիրուց այդպես գժվել է մարդը։
Բայց Վեներան հագեցնում է տառապանքը սիրո մեջ
Վայելքների այդ վերքերը բալասանով է բուժում։
Չէ որ ամեն մի սիրահար կարծում է, որ մարմինն այն,
Որ կրակ է առաջ բերել, կարող է այն հանգցնել.
Սակայն ինքը՝ բնությունն է ընդդիմանում այդ բանին.
Սերը միակ ցանկությունն է, բավարարումը որի,
Որքան էլ որ լինի լրիվ, բոցավառվում է նորից։
Հեշտությամբ են միշտ հագենում մեր քաղցը և ծարավը,
Քանի որ ջուրն ու սնունդը տարածվում են մեր մարմնում
Եվ մարմնի մեջ միանում են նրա որոշ մասերին
Բայց գեղեցիկ երեսից և կերպարանքից վայելուչ
Մեր մարմնի մեջ թափանցում են միայն թեթև տեսիլներ
Վստահում են իզո՞ւր, նրանց թեթև քամին է տանում
Ինչպես ուզում է երազում խմել նա, ով ծարավ է,
Բայց չի գտնում ջուր՝ մարելու ջերմությունը իր մարմնի,
Մոտեցնում է շրթունքները տեսիլներին աղբյուրի,
Մեռնում գետի մեջ ծարավից, թեև խմում էր կարծես։
Տեսիլներով այդպես ծաղրում է Վեներան սիրողին,
Որն ընդունակ չէ հագենալ տեսքից մարմնի գեղեցիկ,
Իզուր քնքուշ անդամներ է սեղմում ձեռքով դողդոջուն,
Որոնելով, գուրգուրում է ողջ մարմինը, բայց իզո՞ւր։
Եվ, վերջապես, միանալով պատանության խանդավառ
Վայելքների մեջ, որոնք իր մարմնին հրճվանք են տալիս,
Երբ մտնում է Վեներայի սերմը կնոջ փորի մեջ,
Թուքը թքի հետ խառնելով, մարմնով սեղմվում են իրար,
Շնչում իրար երեսի և շրթունք կծում համբույրով
Իզուր ջանքեր են, դուրս բերել մարմնից ոչինչ չես կարող.

Կամ թափանցել այլ մարմնի մեջ, մարմնով մտնել մարմնի մեջ
Թեև անել այդ ուզում են, գլուխները կորցրած։
Եվ այդպես են ընկնում ցանցը Վեներայի ըղձալի
Բուսանում են անդամները, հյուծվում սիրո վայելքից
Երբ կիրքը, որ հավաքվել էր նյարդերի մեջ, պոռթկում է,
Ընդմիջում է հասնում փոքրիկ այդ կատաղի հրդեհում,
Այնժամ նորից ետ է դառնում կատաղությունն ակամա
Եվ ձգտում են դարձյալ նույն այդ նպատակին հասնելու,
Բայց միջոցներ չեն գտնում, որ հաղթահարեն փորձանքն այդ,
Եվ այդպես են հոգուց հանում նրանց անհայտ վերքերը։
Ավելացրու, որ կորցնում են ուժերն իրենց՝ տանջանքից
Եվ անցնում է նրանց կյանքը այլոց կամքով կամակոր
Նրանց գույքը քայքայվում է և պարտքերը աճում են
Մոռանում են, թե ինչ անել պարտական են շատ հաճախ
Եվ այդպես են խայտառակում իրենց բարի անունը։
Եվ, օծելով գլուխները անուշահոտ բուրմունքով,
Սիկիոնի կարմիր կաշվից կարված կոշիկ են հագնում [14]
Ոսկյա կանաչ շրջանակում զմրուխտներ են շողացնում
Ալիքների նման կապույտ գործվածքները թանկագին
Տոգորում են Վեներայից առաջ եկած քրտինքով,
Եվ հայրերի գույքը, ծանր աշխատանքով ձեռք բերված,
Մելիտենի և Քեայի գործվածքի հետ են փոխում,
Կահույքներ են փռում շքեղ, քեֆ են անում, շռայլում
Շվայտ խաղեր, ցոփ կերուխում, բուրմունք, ծաղիկ ու պսակ
Սակայն ի զո՜ւր. որովհետև վայելքների խորքից հենց,
Չգիտես թե ինչպիսի սև դառնություն է դուրս գալիս,
Եվ տատասկ են քաղում նրանք ծաղիկների մեջ փարթամ
Կամ նորից է նրանց կրծում գիտակցությունն իրենց, որ
Կյանքը պարապ է անցկենում խրվել են խոր ցեխի մեջ
Կամ որևէ երկիմաստ բառ, որը սիրածն է ասել,
Թափանցում է հոգուդ խորքը, մնում կարծես մոխրի տակ
Կրակի պես խանդից տանջվում ես, տեսնելով հայացքում
Թե քո հանդեպ անտարբեր է նա, իսկ այլոց՝ ուշադիր,
Կամ տեսնելով նրա դեմքին ծաղրող ժպտի հետքերը։
Այդ փորձանքը պատահում է, երբ երջանիկ է սերը,
Սակայն դժբախտ սիրո չարիքն ակնհայտ է ավելի,
Եվ ավելի է տանջում նա, ավելի է ահավոր,
Ուստի, ինչպես ասել եմ քեզ, զգուշանալ պետք է այդ
Որոգայթից ու խուսափել թույլ չտալ, որ կապեն քեզ

Քանի որ հեշտ է ավելի սիրո ցանցից խուսափել
Քան նրա մեջ արդեն ընկած՝ հետո փորձել ազատվել
Պատռելով այն հանգույցները, որ կապել է Վեներան։
Այդպես նրանց մեջ խճճված դարձյալ կարող էիր դու
Խուսափել այդ անկումից, թե չկտրեիր դու ինքդ
Ճանապարհդ, եթե միայն չփակեիր աչքերդ
Հոգու, մարմնի արատների վրա այնքան բազմաթիվ
Այն կնոջ, որ դյութել է քեզ։ Սակայն այդպես են անում
Բոլոր մարդիկ համարյա և, կուրանալով այդ կրքից,
Կատարյալ են համարում այն, ինչ կատարյալ չէ բնավ։
Տեսնում ենք մենք հաճախ կանանց՝ ապականված ու տգեղ
Որոնց հարգում են չափազանց տղամարդիկ կուրացած,
Որոնք, իրար միշտ ծաղրելով իրար խորհուրդ են տալիս՝
Խաղաղեցնել Վեներային մի կերպ, որը պատժել է
Նրանց կրքով այնպիսի, որ ստորացնում է նրանց,
Սակայն իրենց ավելի մեծ անարգանքը չեն տեսնում։
Թե սևուհին մի թուխ կին է, «խայթող մեղվիկ» են ասում
Թե կեղտոտ է ու զզվելի «զարդարանք չի սիրում նա»,
Թե նա շիլ է, անվանում են՝ «մրցակցուհի Պալլասի»
Թե նիհար է, «եղնիկ է նա», գաճաճ՝ «մուսա իսկական»
«Մարմնավորված գեղեցկություն» թե լողլող է չափազանց
Ասում են, որ «վեհապանծ է, արժանիքներ ունի շատ
Կակազում է՝ «ծլվլում է» և թե համր է՝ «ամաչկոտ»,
Խանդոտ, անզուսպ ու շատախոս՝ «օ՜, նա հուր է իսկական»
Եթե հյուծված, հիվանդ կին է՝ «վայելչություն է քնքուշ»
Թե մահացու թոքախտ ունի՝ «Քաղցրությունը ինքն է նա»
Լայնալանջ է, մեծ ծծերով՝ «Նա Կերերեն ինքն է, որ
Բաքոսին դեռ ծիծ է տալիս» «Սիլենեն է»՝ կճատը,
Թե շրթնեղ է՝ «քաղցր համբույր»։ Օրինակներ բերելով
Երկար չէի ավարտելու եթե այդպես խոսեի։
Եթե դեմքը լինի նույնիսկ ինչպես կույսը, գեղեցիկ
Եվ մարմինը նրա շնչի Վեներայի թովչանքով,
Չէ՞ որ ուրիշ կանայք էլ կան, առանց նրան ապրել ենք
Գիտենք, որ նույնն է անում նա ինչ տգեղներն են անում
Ինքն իրեն է թունավորում այդ դժբախտը իր հոտով
Եվ փախչում է աղախինը, որ ծիծաղի անկյունում։
Բայց լալիս է սիրահարը, երբ նրա մոտ չեն թողնում
Նրա շեմքը զարդարում է ծաղիկների փնջերով
Խեղճը բուրմունք է շաղ տալիս, նրա դուռն է համբուրում

Եթե նրան ընդամենին, քթին հասներ այդ հոտը
Պատշաճ պատճառ կփնտրեր նա, որպեսզի շուտ հեռանար,
Միանգամից մոռանալով գանգատներն այն պերճախոս,
Որ նա ինքն է միշտ հորինում, կդադարեր տրտնջալ
Կշտամբելով միայն իրեն, որ շատ հիմար է եղել
Արժանիքներ վերագրելով ավելի քան կարող է
Մահկանացու կինն ունենալ կանանց համար մեր բոլոր
Դա գաղտնիք չէ ամենևին, և թաքուն են պահում այն
Մարդուց, որին ցանկանում են պահել ցանցում սիրային
Սակայն իզուր կհասկանաս, դուրս կբերես լույս աշխարհ
Խարդախությունն այդ անիմաստ, նրանց ամբողջ գաղտնիքը
Իսկ եթե նա զզվելի չէ, հոգի ունի գեղեցիկ,
Արատներին նրա նայիր դու մատների արանքով։

Սակայն միշտ չէ, որ կեղծում է ամեն մի կին իր սիրով
Երբ իր մարմնով տղամարդու մարմնին սեղմվում է կրքոտ
Համբույրներով ծծում նրա շրթունքները կիսաբաց
Սիրելով է անում հաճախ, ծարավի է փոխադարձ
Գրգանքների, գրգռելով սիրո դաշտում մրցություն։
Չէին կարող զուգավորվել էգ թռչուններ, գազաններ,
Ամեն տեսակ անասուններ արուների հետ, եթե
Այդ բնական ցանկությունը բոցավառված չլիներ,
Չհրապուրեր նրանց տենչով ձգտել դեպի Վեներան։
Չե՞ս տեսել, թե շներն ինչպես, զվարճացած միասին
Շղթայակցվում են իրար հետ ու տառապում տանջանքից
Ճանապարհի հանգույցներում աշխատում են բաժանվել,
Դեպի տարբեր կողմ են ձգտում, ուժասպառված են սաստիկ
Սակայն նրանք խճճված են Վեներայի ցանցերում
Այդպես երբեք չէին անի, եթե նրանց վայելքի
Ուրախությունն անհայտ լիներ, որ խաբում է, շղթայում
Սիրո բոլոր վայելքները փոխադարձ են կրկնում եմ

Երբ վայելքի մեջ սերմերը այնպես խառնվեն, որ կնոջ
Սերմն է հաղթում, տղամարդու սերմը պարտվում է այնժամ
Մանուկներ են ծնվելու որ կնմանվեն մայրերին
Իսկ հոր սերմից միայն՝ հորը Նրանք որոնք նման են
Թե հորը և թե մորն իրենց պետք է ծնվեն, անկասկած
Եվ հայրական մարմնից հզոր և արյունից մայրական,
Երբ սերմերը Վեներայի նետով մարմնում գրգռված՝
Ընդհարվում են մի ցանկությամբ և փոխադարձ իրար հետ
Եվ չի հաղթում մեկնումեկը երկուսը հետ չի մղվում

Պատահում է նաև այնպես, որ մանուկը շատ հաճախ
Նմանվում է նախապապին իր, ինչպես և իր պապին
Այն պատճառով, որ կրում են հայրերն իրենց մարմնի մեջ
Բազում տարրեր, որոնք տարբեր եղանակով են խառնվում,
Որ անցնում են ժառանգաբար կավակներին հայրերից։
Վեներան է վիճակ գցում, երբ ծնվում են մանուկներ,
Պապերի դեմքն ու մազերը, ձայնը տալով թոռներին,
Չէ՞ որ ամեն ինչ ծնվում է հայտնի, որոշ սերմերից՝
Թե՛ դեմքերն ու մարմինները, թե անդամներն, անկասկած։
Ինչպես աղջիկ ընդունակ է ծնել սերմը հայրական,
Տղաներ էլ նույնպես ծնել կարող է մոր մարմինը
Չէ՞ որ կախված են սեռերը երկու տեսակ սերմերից
Ծնողներից միայն նրան է մանուկը նմանվում,
Որ մեկին նա իր ծննդով պարտական է ավելի
Դա երևում է ծննդից՝ տղա լինի թե աղջիկ։
Աստվածների կամքով չէ, որ ցանքն է խլված ոմանցից,
Որ չլսեն երբեք իրենց զավակներից սիրասուն
Հայր անունը, և սիրո մեջ հավետ մնան անպտուղ։
Բայց կան այդպես կարծող մարդիկ, որ զոհարան են թրջում
Արյունով, և սրբավայրը պարգևներով լցնում, որ
Բեղմնավորվեն իրենց կանայք իրենց սերմի հոսանքով,
Նրանք իզուր ձանձրացնում են աստվածներին աղոթքով
Որովհետև անպտուղ են նրանք կամ այն պատճառով,
Որ թանձր է իրենց սերմը, կամ ջրիկ է չափազանց
Թե ջրիկ է, որտեղ կպչել հարկավոր է, չի կարող
Թե թանձր է, դուրս է թափվում ավելի հոծ, քան պետք է։
Այդ դեպքում սերմն արագ թռչել, որքան պետք է, չի կարող
Եվ չի կարող, այնտեղ, որտեղ հարկավոր է, թափանցել.
Կամ թափանցած՝ կնոջ սերմին դժվարությամբ է խառնվում
Կազմվածքն էլ է առաջ բերում տարբերություն այդ գործում։
Որոշ այր ու կին իրար հետ բազմազավակ են լինում
Կա կին, որը հղիանում է դյուրին, ասենք, այս մարդուց
Իսկ շատ կանայք շատ մարդկանց հետ միշտ անպտուղ լինելով,
Գտնում են այլ մարդկանց, որոնք բեղմնավորում են նրանց,
Եվ կարող են զավակներով ուրախանալ վերջապես
Եվ կան մարդիկ, որոնց կանայք պտղաբեր են եղել, բայց
Մանուկներ չեն ծնել, սակայն նրանք ուրիշ կանանց հետ
Զավակներով ծերությունը ապահովում են իրենց։
Էականն այն է, անշուշտ, որ սերմերը խառնվելիս

Պետք է նրանք բեղմնավորվեն, այսպես խառնվեն իրար հետ՝
Ջրիկ սերմը միշտ թանձրի հետ, թանձր սերմը՝ ջրիկի.
Բայց էական է նաև այն, թե ինչպես են սնուցվում
Որովհետև թանձրանում են սերմերը մի սննդից,
Ընդհակառակն՝ այլ սննդից ջրիկանում են և հյուծվում
Նույնպես ձևը, թե ինչպես են զվարճությունն այդ կատարում,
Էական է, որովհետև կարծում են, որ շատ հաճախ
Չորքոտանու եղանակով կանայք շուտ են հղիանում,
Որովհետև այդ ժամանակ սերմը հասնում է այնտեղ,
Որտեղ պետք է, երբ կուրծքն իջած, բարձրացված է հետույքը
Կանայք իրենք չեն ցանկանում բեղմնավորվել այնուհետ,
Երբ ազդրերի շարժումներով պատասխանում են մարդու
Տոփոտությանն, այն ժամանակ սերմը շուտ է դուրս թափվում.
Եվ պետքական ուղիղ գծից այնպես շեղում ակոսը,
Որ գութանն ու սերմի հոսանքն, ուր որ պետք է, չեն անցնում.
Պոռնիկներն են միայն դիտմամբ շարժվում ձևով այդպիսի,
Չեն ցանկանում բեղմնավորվել, որ մանուկներ չծնեն,
Որպեսզի տան մարդուն սիրո ավելի նուրբ վայելքներ,
Մի բան, որ մեր կանանց համար բոլորովին վայել չէ.
Հաճախ առանց աստվածների, Վեներայի նետերի
Օգնության են սիրված լինում կանայք տգեղ չափազանց,
Որովհետև նրանց վարքը, նիստուկացը մեղմ ու հեզ,
Այն, որ նրանք մաքրասեր են, և այնպես են անում, որ
Սովորում ես անցկացնել քո ամբողջ կյանքը նրա հետ
Սովորությունն էլ է նույնպես առաջ բերում կայուն սեր
Ամենայն ինչ դժվարությամբ թեև, եթե համառես,
Զիջում է քեզ, վերջ ի վերջո, և անձնատուր է լինում
Կաթիլներով, որ ընկնում են, ինչպես հաճախ տեսնում ենք,
Ջուրն էլ է պինդ քարեր տաշում, նրանց ծակում ու անցնում.

# ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ո՞վ է կարող գտնել հոգու այնպիսի մի հզոր ուժ,
Որ գովերգի ըստ արժանվույն վեհությունը մեր գյուտի
Ո՞վ է խոսքին տիրապետում այնքան, որ նա կարենա
Ինչպես հարկն է փառաբանել արժանիքներն այն մարդու[1],
Ով սեփական ոգու ուժով այդքան գանձեր ձեռք բերեց
Եվ թողեց մեզ։ Ո՛չ ոք, գիտեմ, մահկանացու մարդկանցից։
Եթե միտքը արտահայտենք չափով գործի մեծության
Աստված է նա եղել իրոք, ով քաջարի Մեմմիոս։
Առաջինը նա է գտել հիմքը կյանքի իմացքի
Որ կոչվում է իմաստություն վարպետությամբ հրաշալի
Մարդկանց կյա՛նքը դուրս բերելով այդքան մռայլ խավարից
Տանել դեպի խաղաղություն, դեպի պայծառ լույս նրան։
Աստվածների հայտնությունը համեմատիր դրա հետ
Ասում են՝ թե Կերեսն է ուսուցել արտ մշակել,
Իսկ Լիբերը[2]՝ ըմպել հյութն ողկույզների խաղողի
Թեև ապրել կարելի է առանց նման պարգևի
Ինչպես ապրում են, լսելով, այժմ ուրիշ ազգերը
Բայց անխռով կյանք չի լինի, եթե սիրտդ մաքուր չէ
Այդ պատճառով աստված լինել արժանի է առավել
Նա ում քաղցր սփոփանքը, ազգերի մեջ ցրվելով
Ազատում է մարդկանց հոգին դառնությունից այս կյանքի։
Թե ցանկանաս գերադասել Հերկուլեսի[3] գործերը
Ճշմարտության ճանապարհից պիտի շեղվես չափազանց

Ինչո՞ւ պիտի վախենանք մենք հսկայական երախից
Նեմեյան մի առյուծի կամ արկադյան մի վարազի
Կամ ի՞նչ կարող է անել մեզ ահեղ ցուլը Կրետայի,
Կամ լեռնեյան ժանտախտ հիդրան, շրջապատված բազմաթիվ
Իր թունավոր օձերով, կամ Գերիոնը եռակի՝
Երեք հզոր մարմիններով, մեզ ի՞նչ կարող են անել
Կամ ձիերը Դիոմեդի, որոնք իբրև բոց էին
Արտաշնչում բերաններից Թրակիական դաշտերում,
Իսմարիայի բարձունքներում, բիստոնական ափերին
Կամ կատաղի այն վիշապը, որ միշտ հսկել է անքուն
Հեսպերի կույս դստրիկների շքեղ պարտեզն այն, որտեղ
Խնձորներ են եղել ոսկյա. Նրա հայացքն անդադար
Սպառնում էր դաժանորեն, և իր մարմնով վիթխարի
Փաթաթվում էր ծառի շուրջը, կարո՞ղ է մեզ վնասել
Այնտեղ, ափին Ատլանտի և անմատչելի ծովի, ուր
Չենք հանդգնի գնալ ոչ մենք, ոչ ազգերը բարբարոս
Նույնպես և այլ հրեշները, որ չկան մեր աշխարհում
Կարո՞ղ էին մեզ վնասել, թե կենդանի լինեին.
Ոչ, կարծում եմ մինչև հիմա մեր երկիրը անհամար
Գազաններ է ծնում վայրի, որոնք սարսափ են սփռում
Անտառներում, լեռներում ու դաշտավայրում ընդարձակ,
Կարողանում ենք մենք, սակայն, այդ տեղերից խուսափել

Սակայն եթե արատների սիրտդ լինի անձնատուր,
Այն ժամանակ քեզ ինչպիսի՜ վտանգներ միշտ կսպառնան
Ինչպիսի՜ հոգս ու տառապանք կպատճառեն կրքերը
Եվ ինչպիսի՜ հուզում արդյոք կչարչարի բոլորին,
Եվ ինչպիսի՜ ավերումներ առաջ կգան մեր հոգում
Որքա՜ն փորձանք մեզ կբերի պարագ, շվայտ կյանքը մեր
Եթե ժլատ ու գոռոզ ենք, ապականված ու լկտի
Իսկ ով դրանք տապալել է միայն խոսքի զորությամբ
Եվ ոչ զենքով, հոգուց վանել, արժանի չէ՞ արդյոք, որ
Աստվածների շարքը դասենք այդ իմաստուն մեծ մարդուն
Եվ բացի այդ, ներշնչվելով աստվածային իր ոգով
Անմահական աստվածների մասին էլ է խոսել նա
Բացահայտել նաև ամբողջ բնությունը իրերի

Եվ ես պետք է շարունակեմ նրա հետքով ընթանալ
Ուսուցանեմ քեզ, թե որքան անհրաժեշտ է որ բոլոր
Արարածներն էլ գոյություն ունենան ճիշտ սահմանված
Ժամանակի ընթացքում այն օրենքների համաձայն

Ըստ որոնց են առաջացել, երբեք դուրս գալ չեն կարող
Սահմաններից, որ նշված են, թե որքան են ապրելու։
Դատողությամբ, ուստի, գտանք, որ մարմնավոր է հոգու
Բնությունը, որ ծնվում է բոլորի պես ու մեռնում
Եվ առհավետ անխախտ մնալ նա ոչ մի կերպ չի կարող։
Երազում մեզ տեսիլներ են մոլորումի մեջ նետում,
Երբ տեսնում ենք նրանց, որոնք արդեն մեռել են վաղուց։
Շարադրության կարգը այժմ պահանջում է քննարկել
Այն հարցը, թե մահկանացո՞ւ է մարմինը աշխարհի
Արդյոք, սկիզբ ունեցե՞լ է նա երբևէ, և հետո՝
Թե ինչպես են մատերիայի միակցումից ստացվել
Երկիրն, երկինքն ու ծովերը, լուսատուները պայծառ,
Արեգակը և լուսինը արարածներ ինչպիսի՞
Առաջ ծնվել են աշխարհում և ինչպիսի՞ չեն ծնվել.
Եվ թե ինչպես մարդիկ տարբեր հնչյունների օգնությամբ
Սկսել են փոխանակել իրենց խոսքն ու մտքերը.
Ինչպես մարդիկ սկսել են աստվածներից վախենալ,
Եվ ինչպես են արդյոք նրանք ողջ աշխարհում պահպանել
Սրբավայրեր ու տաճարներ, զոհարաններ սրբազան,
Արձանները աստվածների, անտառ, լճակ ու մեհյան։
Հետո ընթացքն արեգակի, լուսնի շարժումն անդադար
Ի՞նչ ուժով է բնությունը ղեկավարում համաչափ[5]
Չկարծես, որ նրանք երկրի ու երկնքի արանքում
Հավերժապես իրենց կամքով գլորվում են անդադար
Որ աջակցես աճին արտի, արարածի կենդանի
Որ չկարծես ամենևին, թե շարժումով մշտական
Պարտական են աստվածների կամքին նրանք անպայման։
Եվ, իսկապես, նրանք, որոնք համոզված են նույնիսկ, որ
Աստվածների կյանքն անհույզ է, հիացմունքով խորհելով,
Թե ինչպիսի կարգով է այդ կատարվում և, մանավանդ
Այն, ինչ տեղի է ունենում իրենց գլխի վերևում,
Անծայրածիր տարածության մեջ եթերի, երկնքում
Դարձյալ ընկնում են հնուցվան կրոնական այդ կաշկանդող
Կապանքների մեջ նողկալի. Թշվառներն այդ կարծում են,
Թե այնտեղ կան տիրակալներ ամենազոր ու ահեղ
Հավատում են նրանք, սակայն, ամենևին չգիտեն
Թե ինչ կարող է գոյություն ունենալ, ինչ չի կարող,
Ամեն բանին ինչպիսի մի ուժ է տրված վերջնական
Եվ, վերջապես, թե ինչպիսի նրան դրված է սահման։

Սակայն երկար խոստումներով իզուր քեզ չեմ չարչարի։
Նախ իմացիր, որ երկիրը, երկինքը և ծովերը
Երեք տարբեր բնություն են, երեք մարմին, Մեմիո՛ս,
Երեք տարբեր էություններ, երեք հյուսվածք են նրանք,
Կկործանվեն նրանք մի օր, անթիվ դարեր ապրելով,
Ողջ աշխարհի մեծ մարմինը փուլ կգա մի վայրկյանում։
Գիտեմ, որ այդ նորությունը կպատճառի քեզ զարմանք,
Որ երկիրը և երկինքը ապագայում կփլվեն.
Որքան դժվար մի բան է՝ դա ապացուցել խոսքերով։
Եվ այդպես է պատահում, երբ հասնում է մեր ականջին
Այն, ինչ դարձնել մեր աչքերին մատչելի չի կարելի։
Եվ այն, ինչը մենք չենք կարող շոշափել մեր ձեռքերով,
Բայց այդ երկու ուղիներով ճշմարտությունն, անկասկած
Պետք է հասնել կարողանար գիտակցությանն ու սրտին։
Բայց ասում եմ իմ կարծիքը, իմ խոսքերին, գուցե, տա
Ուժ ավելի ինքը՝ գործը։ Գուցե, շուտով կտեսնենք,
Թե ինչպես է երկրագունդը ողջ փլվում մի վայրկյանում
Երկրաշարժից ահռելի։ Բայց ճակատագիրն անողոք
Թող խափանի նման փորձանք մեզնից, քանի ապրում ենք,
Եվ համոզվենք ոչ թե գործով, այլ բանական մեր մտքով,
Որ կարող է փլվել ահեղ դղրդոցով ամեն ինչ։
Նախքան անել գուշակումներ, որ ավելի սրբազան
Եվ առավել ճշմարիտ են, քան անում էր Պիթիան,
Որը դափնու տակ էր նստում, եռաժանու մոտ Ֆեբի,
Ես քեզ որպես մի սփոփանք պետք է բացեմ մի քանի
Այլ ճշմարիտ գաղտնիքներ, որ դու սնոտի մտքերից
Սարսափելով, չկարծես, թե զսպված սանձով հավատի՝
Ծովը լուսինն, արեգակը, երկիրը և երկինքը
Աստվածային մարմին ունեն, հավերժական են նրանք
Այդ պատճառով դա կլինի մի ահավոր պղծություն
սկաններն են ինչպես արել[6], և արժանի ահռելի
Պատիժների, եթե միայն համարձակվենք անտեղի
Խատողությամբ սասանել այն հավերժական կարգերը
Տիեզերքի և երկնքում մարել փայլուն արևը,
Մահկանացու խոսքով անմահ աստվածներին աղտոտենք
Աստվածային բնությունից, սակայն, այնքան հեռու են
Մարմիններն այդ, որ արժանի չեն աստվածներ համարվել,
Եվ կարող ենք հենց նրանով պատկերացում կազմել մենք,
Որ կազմված են նրանք կոպիտ մատերիայից անհոգի[7]

Որովհետև չի կարելի հավատալ, որ հատուկ են
Բանական խելք ու զգացմունք ամեն մարմնի անխտիր։
Ինչպես չկա երկնքում ծառ, ամպ չի լինում ծովի մեջ,
Դաշտերում չեն ապրում ձկներ, արյուն չկա փայտի մեջ
Քարերը հյութ չեն ունենում, պատճառն այն է միայն, որ
Բնությունն է նշանակել ամեն ինչին որոշ տեղ,
Որտեղ ծնվում, փարգանում են արարածներ ամենայն
Այդպես՝ հոգին մեր չի կարող ծնված լինել առանձին
Կամ ինքն իրեն ծնվել առանց մարմնի, արյան, նյարդերի
Եթե լիներ այդ կարելի, ավելի շուտ կարող էր
Առաջ գալ մեր գլխի մեջ կամ կրունկներում, ուսերում,
Կամ մեր մարմնի մի այլ մասում, քանի որ նա, վերջապես
Պետք է մնար նույն մարմնի մեջ, ինչպես ջուրը անոթում
Բայց քանի որ համոզված ենք որ մեր հոգին ու ոգին
Մարմնում ունեն ճշտորոշ տեղ, ուր կարող են առանձին
Ծնվել, աճել այդ պատճառով ավելի մեծ իրավունք
Ունենք ժխտել, որ կարող են առանց մարմնի գոյություն
Ունենալ և անասնական մարմիններից դուրս, ինչպես
Փտող հողի շերտերում կամ արևի մեջ բոցավառ,
Կամ բարձունքում եթերային, կամ ծովային ջրի մեջ
Եվ ոչ միայն աստվածային հոգով օժտված չեն նրանք
Այլև զուրկ են բոլորովին կյանքի ամեն շարժումից։

Այդ պատճառով չհավատաս որ աստվածներն աշխարհում
Կարող են մի որևէ տեղ բնակավայր ունենալ,
Որովհետև աստվածների բնությունը շատ է նուրբ
Ամենևին մատչելի չէ զգացմունքին մարդկային,
Նրանց հազիվ ենք ըմբռնում դատողությամբ բանական
Որովհետև մենք չենք կարող ձեռքով նրանց շոշափել
Ուստի նրանք էլ չեն կարող շոշափել այն իրերը
Որոնց դիպչել մենք կարող ենք, քանի որ չի կարելի
Շոշափել այն որ բնությամբ շոշափելի չէ բնավ
Ուստի նրանց բնակավայրը տարբերվում է մեր անից,
Եվ նուրբ պիտի լինի նույնքան, որքան նրանց մարմինը։
Այդ ամենը կապացուցեմ[8] հետագայում սակայն ես։

Իսկ ասել, թե բնության մեջ աննման կարգ այսպիսի
Աստվածներն են բարեհաճել մարդկանց համար հաստատել
Այդ պատճառով պետք է նրանց մենք օրհնենք ու հավատանք,
Որ ձեռքերի գործը նրանց հավերժական, անմահ է,
Եվ ոճիր ենք գործելու մենք, թե համարձակ խոսքերով

Մենք այդ շենքի անապական հիմունքները փորփրենք,
Որ շինել է իմաստությունն աստվածների՝ մարդկային
Ցեղի համար, առասպել է, Մեմփո՛ս, և խենթություն։
Ի՞նչ շահ ունեն անմահական աստվածները, եթե մենք
Երախտագետ լինենք նրանց, որպեսզի մեր հասարակ
աճույքների համար նման մեծ աշխատանք թափեին
Ու ջանիկ են նրանք, հավերժ. ինչպիսի՞ մի նորություն,
Որ անցել են արդեն այդքան դարեր անթիվ, անհամար
Նրանց կարող էր ստիպել փոխելու այն կարգը, որ
հաստատված է եղել վաղուց։ Չէ՞ որ նրան է միայն
Նորություն ցանկալի, ում վիճակը շատ թշվառ է։
Սակայն եթե աստվածները, որ նախընթաց դարերում
Վիշտ ու հոգսեր չեն ունեցել, խաղաղությամբ են ապրել,
Ի՞նչը արդյոք պիտի նրանց բոցավառեր ցանկությամբ՝
Փոփոխություն կատարելու։ Կարելի՞ է ասել, որ
Նրանք տանջվել են խավարում և վշտեր են ունեցել
Մինչև այն ժամանակ, երբ չէին տեսել իրերի
Ծագմնասփյուռ այդ սկիզբը։ Նույնպես էլ մենք՝ ինքներս
Ինչ վատ բան է, ասենք, եթե չծնվեինք մենք բնավ։
Ով որ մտել է կյանքի մեջ, պետք է մնալ ցանկանա
Այնքան, քանի հաճույքներ է ստանալու իր կյանքից
Սակայն նա, ով կյանքի սիրո համը դեռ չի ճաշակել,
Դեռ չի ապրել, մի՞թե վատ է, եթե բնավ չծնվեր։
Այնուհետև աստվածները որտե՞ղ պիտի գտնեին
Օրինակը մեր աշխարհի և մարդկային կերպարի,
Առանց որոնց չէին կարող պատկերացնել, թե ինչպես
Իրենք պիտի իրագործեն այն, ինչ անել կուզեին։
Ո՞վ է նրանց սովորեցրել, թե տարրերը նախնական
Ինչ հատկություն ունեն արդյոք, ինչ կարող է ստացվել,
Երբ իրար հետ միակցվում են, եթե ոչ մի օրինակ
Այդպիսի մի արարչության բնությունը չի տվել։
Որովհետև այդ անհամար մարմնիկները իրերի,
Անվերջ դարեր ենթարկվելով հարվածների ահավոր
Ծանրությամբ իրենց տարված, սլանալով սրընթաց
Սլացել են ամեն կերպ և փորձել ամեն միակցում
Որից ծնվել է արարած այդ պատճառով զարմանալ
Չի կարելի, որ, վերջապես, հանդիպել են այնպիսի
Մի կարգով և շարժումներով, որից առաջ է եկել
Մեր աշխարհը, որը նրանք պահպանում են նորոգում

Եթե նույնիսկ չիմանայի, թե տարրերը իրերի
Ինչ հատկություն ունեն, դարձյալ ես կասեի համարձակ,
Տեսնելով շատ երևույթներ աշխարհում ու երկնքում,
Որ այդպիսի արատներով՝ տիեզերքը չի կարող
Ամենևին աստվածագործ մի աշխատանք համարվել,
Որ աստվածներ չեն ստեղծել այս աշխարհը մեզ համար.
Նախ մեր երկրի, որ ծածկված է ջինջ երկնքի կամարով
Մի մեծ մասին տիրացել են լեռներ ու խիտ անտառներ՝
Լցված վայրի գազաններով ու ժայռերով անպտուղ,
Ճահիճներով ու ծովերով, որոնք իրենց անսահման
Ափերով են շրջապատել շրջանները աշխարհի։
Իսկ համարյա երկու մասը կամ ջերմությունն է անչափ,
Կամ մշտական սառնամանիքն խլել ցեղից մարդկային
Ինչ դաշտերից է մնացել, բնությունը մասը այդ
Տատասկներով կծածկեր միշտ, եթե մարդիկ, անդադար
Իրենց կյանքը պաշտպանելով, չլինեին ստիպված
Տնքալ ծանր աշխատանքից և գութանի սուր խոփով
Պատառոտել, փխրունացնել այնքան հողի շերտերը,
Որ ծիլերը կարողանան դուրս գալ պայծառ օդի մեջ։
Այն, ինչ ծանր աշխատանքով է ձեռք բերվում շատ անգամ,
Երբ հազիվ են ծաղկել ծառերն ու կանաչել բույսերը
Կամ չափից անց ջերմությունն է այրում բարձր եթերից,
Կամ կատաղի փոթորիկն է պոկում, տանում ու ցրում,
Կամ խիստ ցուրտն է վրա հասնում, ոչնչացնում ամեն ինչ,
Կամ ավերում են ամեն ինչ քամիները անողոք։
Իսկ ինչո՞ւ է բնությունը ցամաքում ու ծովի մեջ
Բազմապատկում գազաններին վայրի, դաժան, կատաղի,
Որոնք ահեղ թշնամի են ցեղի համար մարդկային,
Եվ ինչո՞ւ է երկրում հաճախ համաճարակ տարածվում,
Եվ ինչո՞ւ են վաղ հասակում մեռնում մարդիկ բազմաթիվ։
Նավաստու պես, որին ծովից մրրիկն է դուրս շպրտել,
Գետնի վրա փռվում է մերկ խեղճ մանուկը նորածին,
Խոսել անգամ նա չգիտե, այնքան թույլ է ու անզոր
Սկսած այն վայրկյանից, երբ բնությունը մոր փորից
Նրան աշխարհ դուրս բերելու համար ճգնում է այնքան,
Ծննդավայրն իր լցնում է աղաղակով վշտալի։
Իրավացի է, անշուշտ, նա որովհետև դժբախտը
Դեռ իր կյանքում պետք է տեսնի փորձություններ բազմաթիվ,
Ընդհակառակն՝ անասունը և գազանը ահռելի

Աճում են ու բազմապատկվում, այն էլ առանց որևէ
Դժվարության, կարիք չունեն խաղալիքի կամ տատի,
Որ ափոփի մանկությունը նրանց լեզվով քնքշորեն
Տարբեր հագուստ հարկավոր չէ նրանց տարվա ընթացքում,
Ցենքերի ու պարիսպների կարիք չունեն, վերջապես,
Որ պաշտպանեն իրենց գույքը, որովհետև ամեն ինչ
Բնությունն ու հողն են տալիս առատորեն ամեն օր։
Եթե միայն անշարժ հողը, ջրի հոսուն հեղուկը,
Հետո՝ օդի թեթև շունչը, ջերմությունը և ցուրտը,
Որոնցից է կազմված, գիտենք, ամբողջությունն իրերի,
Բաղկացած են մահկանացու մարմնից, այդ իսկ պատճառով
Այդպես պիտի լինի նաև բնությունն այս աշխարհի
Որովհետև եթե պարզ է, որ մասերը մի քանի
Ծնվելով են առաջացել, մահկանացու են ձևով,
Եզրակացնում ենք արդեն, որ մահկանացու է ողջը
Ծնվելով է առաջ եկել եթե միայն մեռնում են
Տիեզերքի մասերը և վերածնվում են նորից,
Չի կարելի կասկածել, թե երկինքը և երկիրը,
Որ ծնվել են մի ժամանակ, մի օր պետք է կործանվեն։
Դու չկարծես, Մեմիո՛ս, որ հետևություն անելով,
Շտապել եմ, թե աշխարհը և կրակը կմեռնեն,
Որ անպայման կկործանվեն նաև օդը և ջուրը,
Եվ որ պիտի վերածնվի մեր աշխարհում ամեն ինչ
Չէ՞ որ այրվում է անդադար հողի մի մասն արևի
Ջերմությունից, տրորվում է ոտքերի տակ շարունակ
Փոշիանում է ամեն օր, թեթև ամպեր է կազմում,
Տանում հեռու, տարածում է, ցրում ամբողջ երկնքում
Հողի մի մասն էլ անդադար անձրևներից է լուծվում
Եվ կրծում են վարար գետերն իրենց ափերն անդադար
Ամեն մարմին, որն իրենով այլ մարմին է սնուցում,
Միշտ կորուստներ է ունենում անպայման, մենք գիտենք այդ
Եվ քանի որ հողն է ամեն ինչի ծնողն ընդհանուր
Ինչպես նաև գերեզմանն է ամեն ինչի, անկասկած,
Հողը պիտի հերթով հյուծվի ու նորոգվի շարունակ։
Հետո՝ ինչպե՞ս են ծովերը, աղբյուրներն ու գետերը
Լցվում ջրով, ինչո՞ւ նրանք չեն ցամաքում երբևէ,
Կարիք չկա այդ ասելու. հոսող բոլոր կողմերից՝
Ջուրն ինքն է իր հսկայական չափն ակնառու ցույց տալիս.
Բայց անդադար կորուստները միշտ խանգարում են ջրին,

*Որ չափազանց ավելանա մասամբ քամին է ցրում,*
*Մասամբ ծծում է արևը եթերային բարձունքից,*
*Եվ այդպես է պակաս դառնում ջրի չափը աշխարհում*
*Եվ մասամբ էլ տարածվում է հողի անտակ խորքերում*
*Որտեղ նորից զտվում է և աղատվում իր աղերից,*
*Հավաքվում է ու կուտակվում ակունքներում գետերի*
*Այդպես զտված՝ դուրս հորդելով, հոսում հողի երեսին*
*Որտեղ ուղի է բաց անում թաց ոտքերով իր համար*

*Այժմ անցնում եմ ես օդին, որն իր ամբողջ մարմնով միշտ*
*Փոփոխության է ենթարկվում ամեն մի ժամ ու վայրկյան*
*Այն, ինչ բխել է իրերից, գնում է և անսահման*
*Ծովի մեջ է անհետանում, իսկ եթե նոր մասնիկներ*
*Մարմինները չտանային, լրացնելով պակասը,*
*Ամեն ինչը կքայքայվեր, կփոխվեր, օդ դառնալով,*
*Որովհետև բխումներ են միշտ դուրս գալիս իրերից*
*Այդպես է օդն առաջ գալիս իրերից և նրանց մեջ*
*Վերադառնում, որովհետև ողջն է հոսում անդադար*
*Այդպես՝ լույսի առատ աղբյուր եթերային արևը*
*Ողջ երկինքը ողողում է վերածնվող շողերով*
*Ուղարկելով շարունակ իր լույսը լույսի հետևից*
*Բայց շողերը չքանում են նույնպես իրար հետևից,*
*Հասած իրենց նպատակին. Այդ կարող ես ստուգել,*
*Երբ մի ամպ է արեգակի առջև կանգնում, թվում է*
*Որ մեջտեղում կանգնած՝ կտրում է շողերի ճամփան նա*
*Անմիջապես չքանում է ներքին մասը շողերի*
*Ստվեր գցում երկրի վրա որտեղով ամպն է անցնում*
*Բայց իրերին պետք է անշուշտ, որ լույսը միշտ նորոգվի*
*Որովհետև անմիջապես կործանվում է, ընկնելով*
*Եվ մենք չէինք կարող տեսնել որևիցե առարկա,*
*Թե չթափվեր արեգակից լույսը անվերջ հոսանքով*
*Նայիր նաև գիշերային այդ ջահերի լույսերին,*
*Որ կախում ենք մեր տներում հեղեղներ են արձակում*
*Ծխում են ու շտապում, որ դարձյալ պայծառ լույս տան մեզ*
*Միշտ այդպես էլ այդ դողդոջուն կրակների օգնությամբ*
*Ոչ մի դադար չեն ունենում, բխումներով շարունակ*
*Փոխարինում է կրակը արագությամբ առավել*
*Այն լույսին, որ ամեն վայրկյան մարում է ու չքանում*
*Եվ այդպես են կրակները առաջ ձգտում, որպեսզի*
*Ծածկեն լույսի կորուստները բոցի արագ ծննդով*

Ուստի պետք է մենք ընդունենք, որ արևն ու լուսինը
Եվ աստղերը, արձակելով լույսի շողեր, նրանց միշտ
Փոխարինում են նորերով և կորցնում են բոցը այն
Որ արձակել էին առաջ, ուստի դու այդ պատճառով
Չհավատաս, որ անխախտ ու հավերժական են նրանք։
Եվ մի՞թե դու չես տեսնում, որ ժամանակը քարերը
Քայքայում է և փլվում են աշտարակներ բարձրաբերձ
Մեծ ժայռեր են փոշիանում, աստվածների արձաններ
Եվ տաճարներ են խարխլվում և ավերակ են դառնում
Եվ չեն կարող աստվածները սահմաններից անցնել, որ
Ճակատագիրն է հաստատել, ոչ էլ նույնիսկ պայքարել
Այն օրենքի դեմ, որ անխախտ բնությունն է սահմանել
Եվ մի՞թե մենք չենք տեսնում, որ հուշարձաններ բազմաթիվ
Փուլ են գալիս, ավերվում են հանկարծ, քանի որ նրանք
Խարխլվել են հնությունից, և քարեր են գլորվում
Բարձր լեռան գագաթներից, որոնք արդեն չեն կարող
Դիմանալ այն սարսափելի հարվածներին, որոնց միշտ
Ենթարկվում են նրանք որոշ ժամանակի ընթացքում,
Որովհետև չէին պոկվի, հանկարծ չէին գլորվի
Մի վայրկյանում, եթե անվերջ դարեր նրանք շարունակ
Դիմանային ժամանակի հարձակումին անընդհատ,
Այդպես անվերջ պահպանվեին և մնային անվնաս։
Վերջապես դու նայիր վերև՝ պայծառ ու ջինջ երկնքին
Որ տարածված անվերջորեն՝ մեր երկիրն է ընդգրկել,
Եվ ծնում է ամենայն ինչ, ինչպես կարծում են ոմանք
Քայքայվելուց հետո նաև ընդունելով ամեն ինչ
Ամբողջովին բաղկացած է մահկանացու մարմնից նա
Քանի որ այն, ինչն իրենով այլ մարմին է սնուցում
Պակասում է և նորոգվում, երբ ստանում է նորից։
Այնուհետև, եթե միայն երկինքը և երկիրը
Երբեք սկիզբ չեն ունեցել, հավերժական են, ինչո՞ւ
Մինչ Թեբեի՞ արշավանքը և անկումը Տրոյայի
Ուրիշ դեպքեր պոետներից ոչ մեկը չի գովերգել
Ինչո՞ւ անթիվ հերոսական արարքներ են մոռացվել
Եվ չեն ծաղկում՝ մարմնավորված անմահ փառքի երգերում
Որովհետև, կարծում եմ ես, ամբողջությունն իրերի
Բնությունը մեր աշխարհի հին չէ և դեռ մանուկ է,
Եվ դեռ նոր է առաջացել։ Ահա այդ է պատճառը,
Որ այժմ դեռ կան արվեստներ որ կատարյալ չեն բնավ,

*Կան արվեստներ նաև, որոնք միայն նոր են հնարվել*
*Այժմ նավեր են կառուցում ավելի մեծ արվեստով,*
*Երաժիշտներն էլ նոր գյուտեր կատարում են բազմաթիվ*
*Եվ իրերի բնությունն ու կարգը դեռ նոր ենք գտել,*
*Եվ այդ գործում առաջինը ինքս եղա ընդունակ*
*Շարադրել այդ մեր լեզվով և լուսաբանել ամեն ինչ։*
*Իսկ եթե դու կարծում ես, որ այդ եղել է և առաջ,*
*Եվ մարդկային սերունդները կործանվել են հուրերից,*
*Փուլ են եկել քաղաքները ցնցումներից մեր երկրի,*
*Կամ անընդհատ անձրևներից առաջ եկած ջրերը*
*Հեղեղել են քաղաքները և ավերել ամեն ինչ,*
*Այդ դեպքում էլ պարտավոր ես դու ընդունել անպայման*
*Որ երկինքը և երկիրը պիտի մի օր կործանվեն։*
*Եվ այդպիսի փորձանքների միշտ ենթարկված լինելով,*
*Այդքան ծանր հիվանդությամբ տառապելով շարունակ,*
*Եթե լինեն հարվածները այդ առավել կատաղի,*
*Տիեզերքի կառուցվածքը պիտի փլվի անպայման։*
*Ինչպե՞ս գիտենք ինքներս, որ մահկանացու ենք մարդիկ,*
*Եթե ոչ այն պատճառով, որ ենթարկվում ենք շարունակ*
*Նույն ախտերին, անտարակույս, ինչպես նրանք, որոնցից*
*Բնությունն է արդեն խլել տրված կյանքը առհավետ։*
*Հետո՝ եթե հավերժական է որևէ մի մարմին,*
*Կամ իր մարմնի կարծրությամբ է հարվածներին դիմանում,*
*Չի թողնում, որ իր մեջ մտնեն, մասերի չի բաժանվում*
*Այդպիսիք են մատերիայի մասնիկները նախնական,*
*Ինչպես առաջ ասել եմ քեզ, երբ խոսել եմ այդ մասին.*
*Կամ կարող է այն պատճառով նա պահպանվել հավետ, որ*
*Չի ենթարկվում հարվածների, դատարկության նման, որ*
*Ամենևին չի շոշափվում, չի ենթարկվում հարվածի*
*Կամ, վերջապես, շրջապատված չէ նա բոլոր կողմերից*
*Տարածությամբ, որ կարող է բեկորները ընդունել,*
*Եթե միայն նա քայքայվի և ուր ցրվել կարող է*
*Եվ այդպես է տիեզերքը, որից դուրս այլ տեղ չկա*
*Որտեղ ցրվել կարողանար իր մասերը և չկան*
*Այլ մարմիններ, որոնցից նա, ստանալով հարվածներ*
*Կարողանար բաժանվել և կամ նոր մասեր անջատել։*
*Ուստի անմահ չէ աշխարհը, որովհետև պինդ չէ նա*
*Իր բնությամբ, դատարկություն է պարփակում նա իր մեջ,*
*Դատարկության նման սակայն, անմահ լինել չի կարող։*

Չափազանց շատ մարմիններ կան տիեզերքում անսահման,
Որ, այնտեղից ներխուժելով, պետք է նրան սպառնան
Այնուհետև այնտեղ կա և տարածություն մի անհուն
Որտեղ պետք է ցրվեն նրա բաղկացուցիչ մասերը
Ուստի կարող է կործանվել նա իր ամբողջ էությամբ
Որևէ մի եղանակով, ինչպիսին էլ որ լինի։
Եվ ոչ միայն փակ չեն մահվան դռները այդ պատճառով
Երկնքի և արեգակի, ծովերի և երկրի դեմ,
Այլև բաց են միշտ լայնորեն նրանց առջև մշտապես
Ուստի պետք է մենք ընդունենք, որ սկիզբ են ունեցել,
Չէ՞ որ մահվան ենթակա են և դարերի սկզբից
Դիմանալ չեն կարող անվերջ գրոհների ահռելի,
Եվ անսահման երկարատև ժամանակի ընթացքում։
Սակայն մի՞թե չես տեսնում, որ տիեզերքի անսահման
Մասերն, իրար հետ սկսած այդ կռիվներն անդադար,
Երկարատև պատերազմը որ մղում են իրար դեմ,
Պետք է, անշուշտ, վերջ ունենան, ինչ կերպ լինի, երբևէ։
Երբ արևը և բոլոր այլ կրակները, օրինակ,
Կըմպեն երկրի ողջ հեղուկը և կտանեն հաղթանակ.
Մեծ ջանքերով ձգտում են, որ հաղթանակեն, բայց իզո՜ւր.
Որովհետև գետերն այնքան ջուր են տալիս ծովին, որ
Երկրագնդին սպառնում է մի ընդհանուր ջրհեղեղ
Ծովերի խոր անդունդներից: սակայն իզո՜ւր. իր հերթին
Քամիները, որ ծովային հարթավայրն են ավլում,
Արևը, որ ջուր է ծծում եթերային բարձունքից,
Պակասեցնում են շարունակ ողջ քանակը ջրերի.
Եվ այդպես էլ ամբողջովին կցամաքի ջուրն առաջ,
Քան երբևէ կհաջողվի նպատակին իր հասնել։
Եվ փոխադարձ հաջողությամբ նրանք այդպես անդադար
Պայքարում են, ամեն մեկն է ուզում մենակ տիրանալ։
Կարողացել է կրակը հաղթանակել մի անգամ,
Մի անգամ էլ ջուրն է հաղթել, ավանդության ասելով
Երբ հաղթել են կրակները, երկրում շատ բան է վառվել,
Երբ արևի նժույգները, Ֆաետոնին[10] տանելով,
Անճանապարհ սլացել են եթերային բարձունքում
Երկրների վրայով. բայց աստվածների հայրն[11] ահեղ,
Դաժանորեն բարկանալով կայծակով է տապալել
Լիղախասիրտ Ֆաետոնին իր կառքի հետ միասին,
Բայց արևը, որ աշխարհի պայծառ ջահն է մշտական

Ընդառաջել Ֆաետոնին կարողացել է ընկնել
Նորից լծել իր ձիերին, որ շնչասպառ են եղել
Հաստատելով կարգն առաջվա, սովոր ճամփով է քշել
Եվ այդպես են գրայների հին պոետները[10] հորինել
Սուտ է, սակայն, և մեր խելքը հերքում է այդ հեքիաթը
Բայց կարող է հուրը հաղթել այն ժամանակ միայն երբ
Տիեզերքի անհուն խորքից կարողանա հավաքել
Մեր աշխարհում մատերիայի կրակների տարրերը
Չափազանց մեծ քանակությամբ, քանի որ այն ժամանակ
Կամ որևէ մի ուժ պիտի հաղթահարի կրակին
Կամ ամեն ինչ կկործանվի բոցավառվող հրերից։
Բայց ասում են որ ջուրն էլ է ավելանալ սկսել
Եվ հեղեղել է քաղաքներ բազմաթիվ ու բազմամարդ
Սակայն ինչ-որ ուժից պարտված՝ նահանջել են ջրերը
Անվերջության խորքից եկած և հավաքված միասին
Դադարել է անձրև տեղալ փոքրացնելով գետերը։
Մատերիայի հավաքույթից արդյոք ինչպես են ծագել
Մեր երկիրը և երկինքը, լայնածավալ ծովերը
Արեգակի, լուսնի ընթացքն, ասելու եմ քեզ կարգով։
Նախնական այդ տարրերն, անշուշտ, կարգով որոշ սրամիտ
Չէին կարող դասավորվել, համաձայնված իրար հետ,
Նրանք իրենց շարժումների մասին պայման չեն կնքել
Բայց անհամար քանակությամբ, շարժումներով բազմակերպ
Օժտված և միշտ ենթարկվելով հարվածների անհարկու
Եվ ծանրությամբ տարված իրենց անթիվ դարեր շարունակ
Եվ ամեն կերպ միանալով, և ամեն ինչ փորձելով
Ինչ որ առաջ գալ կարող է միակցումից այնուհետ
Պատահում է, վերջապես, որ թափառելիս անդադար
Կուտակվում են այնպես, որ այդ հավաքույթից, անկասկած,
Մեծ իրերի սաղմեր նրանք առաջ բերել կարող են՝
Ծովեր ցամաք, երկինք, մարդիկ և արարած շնչավոր
Միշտ չի եղել արեգակի լայն շրջանը լուսակիր
Չեն եղել և տիեզերքի ջահերն անշեջ ու պայծառ
Ոչ ցամաքը, ոչ երկինքը, ոչ ծովերը, ոչ օդը
Ոչինչ չկար այն իրերից, որ այժմ կան աշխարհում
Սրար խառնված փոթորկալի տարրերի մի հավաքույթ
Որոշ մասեր սկսել են անջատվել այդ զանգվածից,
Հետո իրար մոտեցել են միանման մասնիկներ
Եվ կարգացել է աշխարհը։ Ձևավորվել են նրա

Հսկայական անդամները, սակայն նրա մասերը
Կազմված էին բազմատարրեր բազմատեսակ տարրերից
Որոնք իրենց անկարգությամբ շփոթել են շարունակ
Ուղղությունն ու արանքները, ծանրությունն ու կապերը
Շարժումներն ու համակցումը, ինչպես նաև ուժերը։
Որովհետև իրենց ձևով տարբեր էին իրարից
Ուստի իրենց տեսքերով էլ պիտի տարբեր լինեին
Չէին կարող այդպես մնալ նրանք իրար միակցված
Եվ հաղորդել իրար շարժում՝ անհրաժեշտ ու փոխադարձ,
Այդ պատճառով բաժանվել է երկրից բարձր երկինքը,
Հավաքել է ծովը իր մեջ ամբողջ ջուրը աշխարհի,
Սկսել են պայծառ հուրեր շողալ կապույտ երկնքում
    Նախ այն տարրերն են սկսել համախմբվել միասին,
Որ ավելի ծանր էին իրար խառնված առավել,
Եվ գրավել են երկրի ներքին շրջաններն ու կենտրոնը
Որքան նրանք ավելի են սեղմվել, այնքան ավելի
Դուրս են բերել իրենցից նյութ, որն ընդունակ է կազմել
Ծովեր, աստղեր, արև, լուսին և պարիսպներն ընդարձակ,
Բարձունքներից զարկվել երկրին որ ճաքճքվել էր արդեն
Եվ արևի տապ շողերը արդեն ամեն ուղղությամբ
Տիեզերքի։ Եվ քանի որ մարմինների այդ բոլոր
Տարրերը հարթ են ավելի, կլոր մանր ավելի
Քան մեր երկրի կոպիտ տարրերն այդ պատճառով էլ նրանք
Դուրս են եկել ամենից շուտ երկրի բոլոր անցքերով,
Եվ իրենց հետ տարել հրե մարմնիկները բազմաթիվ,
Եվ հեշտությամբ բարձրացել են դեպի երկինք նրանց հետ
Այնպես ինչպես նկատում ենք առավոտյան շատ հաճախ,
Երբ բույսերը ադամանդյա ցողով ծածկված են լինում,
Հողից ծագող արեգակի կարմիր գույնով ներկվելով,
Լճերից ու վտակներից մառախուղ է բարձրանում
Հողն էլ կարծես արտաշնչում է մի տեսակ քնքուշ մեգ
Եվ հազիվ է այդ ամենը հավաքվել ու բարձրացել,
Երբ երկնքի կամարն արդեն ծածկվում է մութ ամպերով
Եվ այդպես է եթերը, որ, թեև այնքան թեթև է,
Խտացել և մի ընդարձակ կամար կազմել երկնքում
Տարածվելով ամենուրեք, այդպես բոլոր կողմերից
Մի անսահման շրջանի մեջ ողջ երկիրն է ընդգրկել
    Հետո ծնվել է արևը ինչպես նաև լուսինը
Որ գնդի պես գլորվում են տարածության մեջտեղում

Որոնց ոչ հողն է ընդունում, ոչ եթերը անսահման,
Որոնք այնքան ծանր չէին՝ մինչև գետին իջնելու։
Ո՛չ էլ թեթև, որ բարձրանան շրջանները եթերի։
Կարծես մարմին են կենդանի տարածության մեջտեղում
Պատվում են, տիեզերքի միայն մասերն են նրանք։
Մեզ մոտ էլ է այդպես լինում, երբ անշարժ է մի անդամ,
Այդ ժամանակ ուրիշները շարունակում են շարժվել։
Այն ժամանակ, երբ իրերը այդպես էին բաժանվել,
Հանկարծ երկրի այն մասը, ուր լաղուր ծովերն են փռվում,
Փլվել է ու ջրի համար բացել մի մեծ ավազան
Հետո՝ որքան ավելի են եթերային հուրերը
Եվ արևի տաք շողերը արդեն ամեն ուղղությամբ
Բարձունքներից զարկվել երկրին որ ճաքճքվել էր արդեն
Մակերեսով, այնքան հողն է, թանձրանալով ավելի,
Մոտեցել իր կենտրոնին, և այնքան պետք է ավելի
Ավելանար նրա հսկա մարմնից հոսող քրտինքից՝
Աղի ջրից կազմված ծովի հարթավայրը ընդարձակ։
Այնքան պիտի նրա մարմնից անջատվեին ավելի
Օդի, հրի մասնիկները, բարձրանալով դեպի վեր
Եվ ավելի պետք է փայլուն ջինջ կամարը երկնքի
Որ հեռու է երկրից այնքան, նոր թանձրություն ստանար։
Հովիտներն էլ նույն պատճառով պետք է ներքև իջնեին,
Իսկ լեռները դեպի երկինք բարձրանային գագաթով
Ծանր ժայռերն այդ պատճառով չէին կարող բարձրանալ
Եվ չէր կարող նույնպես հողը ամենուրեք հարթ լինել
Իր թանձրացած մարմնով հողը այդ ժամանակ անկասկած
Ձեռք է բերել ծանրություն ու թանձրություն, և աշխարհի
Եթե միայն կարելի է այդպես ասել, ողջ տիղմը
Իջել ներքև, հավաքվել է այնտեղ որպես մի նստվածք
Նախ ջուրը և հետո օդն են երկրում վերև բարձրացել
Իսկ ամենից վերև եթերն է հուրերով իր պայծառ
Ամենևին չխառնվեցին նրանք երկրի տարրերին,
Որովհետև միանման թեթևությամբ օժտված չեն
Եթերը նուրբ է ամենից, թափանցիկ է ու թեթև,
Ճախրում է նա օդից բարձր, սակայն օդի շնչի հետ
Նա չի խառնվում երբևիցե, քամիներին թողնելով
Որ մրրիկ ու հողմապտույտ առաջ բերին կատաղի
Եվ ինքն է իր շարժումներով տանում փայլուն հուրերը
Որ եթերն իր շարժումներով միանման սահուն չէ,

Մեզ այդ ցույց է տալիս ծովը, որը երբեք չի փոխում
Ճամփան և հետևում է նա էլ հենց նույն օրենքին։
Այժմ դառնանք մենք աստղերի շարժումների պատճառին
Թե պտտվում է երկնքի այդ շրջանը ընդարձակ,
Այնժամ պետք է ենթադրել, որ բևեռները աշխարհի
Շրջապատված և սեղմված են օդի երկու հոսանքով,
Եվ վերևի հոսանքը միշտ ողջ երկինքը տանում է
Այն ուղղությամբ, որով հավերժ տիեզերքի աստղերն են
Առաջանում, իսկ ներքևի՝ հոսանքն արդեն հակառակ
Ուղղությամբ է տանում, անշուշտ, այնպես, ինչպես, օրինակ,
Պտտեցնում են գետերը անիվներ ու շերեփներ։
Սակայն կարող է պատահել, որ երկինքը անշարժ է
Հավերժապես, իսկ աստղերը պտտվում են մեր շուրջը
Այն պատճառով, որ եթերը երկնային նեղ շրջանում
Պտտվում է անդադար և ելք է փնտրում որևէ,
Եվ այդպիսի շարժումներով դրդում շարժվել աստղերին [18]
Կամ շարժում է շրջանաձև նրանց օդը արտաքին,
Կամ իրենք են փռում այնտեղ, որտեղ սնունդն է կանչում
Իրենց ճամփին հավաքելով մարմնիկներն այն հրային
Որ ցրված են վաղուց ի վեր ոլորտներում երկնքի։
Քանի որ շատ դժվարին է երևույթն այդ բացատրել
Ուստի պետք է բավարարվեմ ես միայն այն բանով, որ
Ցույց կտամ քեզ պատճառներն այն, որ բնությունն է կարող
Գործադրել և գործադրում է տիեզերքում անսահման,
Այն անհամար աշխարհներում, որ տարբեր է ստեղծել
Եվ ավելին չեմ ասելու, ցույց կտամ քեզ աստղերի
Շարժումների հնարավոր պատճառները բոլոր, բայց
Միայն մեկն է շարժում նրանց։ Իսկ ո՞րն է այդ պատճառը
Այնուհետև հետազոտողն այդ չի կարող ասել քեզ։
Բայց որ մնա մեր երկիրը տիեզերքի մեջտեղում
Անշարժ կանգնած, այնժամ պետք է հետզհետե պակասի
Իր ծանրությամբ, թեթևանա, կարելի է որքան այդ
Ներքևում պետք է ունենա արդեն մի այլ բնություն
Նուցվանից միանալով տիեզերքի օդային
Մասերի հետ ամբողջապես և սերտորեն, որի մեջ
Մարմնավորվել է իր կյանքը, այդ պատճառով բեռ չէ նա
Օդի համար, որին բնավ չի ճնշում իր ծանրությամբ։
Այնպես մարդն էլ ծանրությունն իր անդամների չի զգում
Վզի համար բեռ չէ գլուխն ու բնավ չենք նկատում,

Որ մարմինը ողջ ծանրությամբ հենվում է մեր ոտքերին։
Մինչդեռ եթե ընկնում է մի այլ ծանրություն մեզ վրա
Տառապում ենք, եթե նույնիսկ պակաս ծանր լինի այն։
Էական է, որ իրերը լինեն իրար միակցված։
Մեր երկիրը, սակայն, հանկարծ որպես օտար մի մարմին
Օդի մեջ չի նետվել՝ որպես իրեն օտար մարմնի մեջ
Նրա հետ է սաղմնավորվել տիեզերքի սկզբում,
Նրա մասն է կազմում, ինչպես անդամները մեր մարմնի
Այնուհետև, երբ երկնքում ահեղ շանթ է դղրդում,
Երկրին ցնցվել ստիպելով, այդ հաղորդվում է իսկույն
Իրերին այն բոլոր, որոնք մակերեսին են նրա,
Մի բան, որ չէր կարողանա, եթե կապված չլիներ
Երկնքի և տիեզերքի մասերի հետ օդային
Եվ այդ երեք էությունները արմատներով ընդհանուր
Սերտ միակցված են իրար հետ տիեզերքի սկզբից,
Այնպես, որ մի ամբողջություն պիտի կազմեն, անկասկած
Չե՞ս նկատում, որ մեր հոգու էությունը նրբագույն
Կարողանում է պահպանել ծանրությունը ողջ մարմնի
Այն պատճառով, որ կազմում են ամբողջություն առանձին
Ինչպիսի՞ այլ բան կարող էր մարմինը մեր բարձրացնել,
Եթե ոչ մեր հոգին, որը մեր անդամներն է շարժում.
Տեսնո՞ւմ ես, որ էությունը, որ թեթև է ամենից,
Ինչպես է ձեռք բերում, սակայն, այդպիսի ուժ կորավոր
Երբ միացած է լինում նա էության հետ ծանրաքաշ
Ինչպես օդը ծանր հողի, և մարմնի հետ մեր հոգին
Իսկ արևի հրե գունդի ջերմությունը անկասկած
Ավելի կամ պակաս լինել չի կարող, քան թվում են
Զգացմունքներին, որովհետև երբ որևէ մի վառվող
Մարմին է մեզ լուսավորում լույսով իր կամ տաքացնում
Կրակով մեր անդամները որքան լինի հեռվից այդ
Ոչինչ մարմնի մեծությունից չի խլում այդ արանքը
Տեսանելի չափը մարմնի դրանից չի փոքրանում
Երբ արևի ջերմությունն ու լույսն են գալիս որպեսզի
Գրգռեն մեր զգացմունքները, լուսավորեն իրերը,
Մենք չենք կարող ենթադրել, որ նա իր չափով ու ձևով
Մեծ կամ փոքրիկ է ավելի, քան այդ մենք ենք նկատում
Իսկ լուսինը լուսավորո՞ւմ է փոխառած լույսով, թե՞
Իր սեփական մարմնով է միշտ մեղմիվ լույսը արձակում
Ինչպես էլ այդ լինի, սակայն չափով մեծ չէ ավելի

Քան թվում է զգացմունքներին, մեր աչքերին երևում
Բոլոր հրերն այն, որոնց մենք հեռվից տեսնում ենք օդի
Թանձր շերտի միջով, ունեն մի տեսք, որը պարզ չէ մեզ,
Չեն փոքրանում, և քանի որ երևում է լուսինը
Մեզ իր ամբողջ մակերեսով, գծագրությամբ պարզորոշ,
Նույնիսկ մինչև իր ծայրերը, ուստի պետք է երկնքում
Լինի այնպես, ինչպես որ նա երևում է մեզ երկրից։
Որովհետև վերջապես, այն կրակները, որ հաճախ
Տեսնում ենք մենք այս աշխարհում, որքան հեռվից էլ լինի,
Որևէ մի փոփոխության չեն ենթարկվում չափերով,
Որքան որ այդ տարրերում ենք նրանց լույսով դողդոջուն
Ո՛չ մեծ են, ո՛չ փոքրիկ են, քան թվում են մեր աչքերին։
Ինչո՞ւ պիտի դու զարմանաս, թե ինչպես է արևը
Այդքան փոքրիկ շրջանակով կարողանում ողողել
Առատ լույսով ողջ ցամաքը, ծովերը և երկինքը,
Իր բնության վրա իր ողջ տաքությունը տարածում
Այնպես կարող է պատահել, որ նա միակ գետն է այն
Որով ամբողջ տիեզերքի լույսը կարող է հոսել
Ազատորեն, և որ նա է վառ օջախը այն միակ,
Որտեղ կարող են հավաքվել, համախմբվել ջերմության
Մասնիկները տիեզերքի ամեն կողմից, որտեղից
Հետագայում ցրվեն այնտեղ։ Եվ մի՞թե դու չես տեսել
Թե ինչպես է որևէ շատ փոքրիկ վտակ ողողում
Կանաչ մարգերն ընդարձակ և հեղեղում է դաշտերը։
Այնպես կարող է պատահել, որ հուրերը արևի,
Թեև շատ չեն քանակությամբ, սակայն կարող են նրանք
Տաքացնել ու բոցավառել իրենց շուրջը գտնվող
Օդը, եթե ենթադրենք, որ ընդունակ է օդը այդ
Բոցավառվել ջերմության մի նվազագույն մասնիկից։
Սակայն կարող է պատահել վերջապես, որ արևի
Կարմրագույն ու պայծառ ջահը ունի հուրեր այնպիսի
Եվ այնքան մեծ քանակությամբ, որոնք սակայն չեն փայլում
Չեն երևում ամենևին, ավելացնում են թեև
Իրենից անչափ մեծ ջերմությամբ ուժը նրա շողերի
Չի կարելի գտնել հաստատ ու պարզ պատճառ թե ինչու
Արեգակը ամռան սկզբից մինչև ձմռան ցրտերը
Այծեղջյուրի տաք շրջաններից խեցգետնին է հասնում միշտ
Որտեղ ճամփան վերջանում է, արևադարձ է լինում
Կամ ինչու է լուսինը մի ամսում անցնում այն ճամփան,

Որ անցնում է արեգակը դանդաղորեն մի տարում։
Երևույթներն այդ բացատրել չենք կարող մի պատճառով։
Կարելի է ընդունել, որ կատարվում է այդ, ինչպես
Ենթադրում է Դեմոկրիտի այս կարծիքը սրբազան
Որքան մոտ է երկրից անցնում որևէ մի լուսատու,
Այնքան պակաս պիտի տարվի հողմի կողմից երկնային։
Որովհետև թուլանում է արագությունն երկնքի
Հետզհետե դեպի ներքև, այդ պատճառով արևը,
Որ շատ ներքև է գտնվում բոցավառվող աստղերից,
Պետք է ուրիշ մարմինների հետ ներքևում հապաղի
Իսկ լուսինը, որն ավելի հեռու է ցինչ եթերից,
Եվ ավելի մոտիկ երկրին, այդ պատճառով առավել
Հապաղելու է ընթացքից նշանների երկնային։
Եվ որքան իր արագությամբ նրան տանող պտույտը
Պակաս լինի շարժումներից լուսապայծառ արևի,
Աստղերն այնքան ավելի են նրան արագ հասնելու
Եվ անցնելու, այդ պատճառով թվում է, թե լուսինն է
Արագորեն հասնում նրանց, բայց նշաններն են, իրոք,
Այդքան արագ հասնում նրան և անցնում են նրանից։
Բայց կարող է պատահել, որ տիեզերքի հակադիր
Երկու կողմից պարբերաբար օդի հոսանք է գալիս
Եվ արևը տեղափոխում նշաններից ամառվա
Դեպի խավար ու սառուցյալ հյուսիսային շրջանը։
Եվ նորից է քշում նրան ստվերներից սառցացուրտ
Մինչև ամռան տաք շրջանի նշանները բոցավառ։
Եվ այդ դեպքում հոսանքները օդի, որոնք փոխվում են
Դարձյալ պիտի քշեն լուսնին ու աստղերին, որոնց մեծ
Շրջապտույտն ավարտվում է տարիների ընթացքում
Տեսնե՞լ ես, երբ քամիներ են փչում իրար հակադիր,
Թե ինչպես են ամպեր քշվում ներքևում ու վերևում,
Բայց ուղղությամբ ճիշտ հակառակ։ Ինչո՞ւ տարվել չեն կարող
Լուսատուներն եթերային շրջաններում ճիշտ նույնպես
Օդի տարբեր հոսանքներով, իրար ներհակ ուղղությամբ։
Գիշերը մութ իր ծածկույթով ամբողջ երկիրն է ծածկում,
Որովհետև արեգակը՝ հասած ծայրին երկնքի
Եվ հոգնած իր երկար վազքից, կրակներն է մարում իր
Որոնք արդեն թուլացել են երկար ճամփա անցնելիս
Հեղեղներից օդի, որոնք թափանցել են նրա մեջ
Կամ արևին գետնի տակ է տանում մի ուժ, ասենք, այն

Որ ստիպում է պտտվել նրան երկրի վերևում։
Երբ Մատուտան[15] ժամանակին մատ է գալիս երկնքում,
Ամենուրեք լույս է սփռում արշալույսը վարդագույն
Այն պատճառով, որ արևը, հողի տակից անցնելով,
Աշխատում է իր շողերով ողջ երկինքը ջերմացնել
Սակայն կարող է պատահել, որ սերմերը կրակի,
Որոշ պահին և անհամար քանակությամբ հավաքված,
Ստիպում են, որ նոր արև բոցավառվի ամեն օր
Ասում են՝[16] դա երևում է Իդա լեռան գագաթից,
Լուսաբացին ցրված հուրեր հավաքվում են միասին
Եվ, մի փայլուն գունդ կազմելով, անցնում ամբողջ երկնքով։
Այնուհետև, զարմանալու ոչինչ չկա այն բանում,
Որ ընդունակ են կրակի սերմերն ի մի հավաքվել՝
Նորոգելու մշտաբորբոք փայլը պայծառ արևի։
Չէ՞ որ որոշ ժամանակ են միշտ կատարվում բազմաթիվ
Երևույթներ, կանաչում են ու ծաղկում են ծառերը,
Ինչպես նաև հետագայում ծաղիկներից են զրկվում.
Թափվում են մեր ատամները նույնպես որոշ հասակում,
Որոշ մատաղ հասակումն է աղվամազը ծածկում մեր
Այտերը և անդամները, փափուկ մորուք է բուսնում,
Եվ, վերջապես, կայծակ, անձրև, ձյուն, քամի, ամպ առանց մեծ
Անկարգության համարյա միշտ որոշ պահին են լինում
Թե այդպես են պատճառները այդ տարրերի նախնական
Սկզբից, երբ տիեզերքում ողջ իրերն են գոյացել,
Պետք է ամեն ինչ ընթանա որոշ կարգով բնության։
Երկարանում է ցերեկը և գիշերը կարճանում,
Պակասում է լույսը նույնպես, ավելանում է մութը
Այն պատճառով, որ արևը, միշտ միևնույնը մնալով,
Մեր երկրի տակ ու վերևում անհավասար աղեղներ
Գործելով ու բաժանելով տարրեր չափի մասերի
Ուղեծիրը, սակայն լույսի այն մասը, որ խլել է
Կիսագնդից այս, տալիս է անմիջապես երկրորդին,
Երբ չի հասել դեռ երկնային այն նշանին նա, որտեղ
Լույսը մթին հավասար է դարձնում տարվա հանգույցը[17],
Որովհետև այն ժամանակ երկնքի մասն այն, որով
Անցնում է նա, գտնվում է հեռու՝ չափով հավասար
Աքվիլոնից ու Ավստրից[18], իր ողջ գիրքով շեղակի
Շրջանագիծ, որտեղ արևն ավարտում է տարեկան
Իր պտույտը և որտեղից շեղակի լույս է սփռում

Դեպի երկիրն ու երկինքը։ Եվ այդպես են բացատրում
Այն մարդիկ, որ բաժանել են շրջանները երկնքի
Ամեն ինչը նշել այնտեղ նշաններով առանձին

Սակայն օդը որոշ վայրում կարող է շատ ավելի
Կոպիտ լինել ու կանգնեցնել, դարձյալ երկրի տակ պահել
Դողդոջուն լույսն արեգակի, որը արդեն չի կարող
Ճեղքել առանց դժվարության այդ հոսանքը, բարձրանալ
Արևելքում։ Այդ պատճառով բացատրում են ոմանք այն
Թե ինչու է այնքան երկար լինում ձմռան գիշերը,
Քանի դեռ չեն վերադարձել ճառագայթներն արևի։
Կամ փոխելով արդեն տարվա եղանակներն, այնուհետ
Ավելի են արագ խառնում կամ դանդաղ այն հուրերը
Որ արևին ստիպում են որոշ մասում ծագել։

Փայլել կարող է լուսինը արեգակի շողերով
Մեր հայացքին օրավուր իր դեմքը դարձնել ավելի,
Մեծանալով որքան շատ է արեգակից հեռանում,
Այնքան, քանի դեռ չի կանգնել արեգակի դեմ ուղիղ
Ավելի է սկսում նա փայլել արդեն ողջ լույսով,
Արևելքում բարձրանալիս՝ տեսնում մուտքը արևի
Հետո՝ պետք է, այսպես ասած, թաքցնի նա իր լույսը
Հետզհետե իր հետևում, մոտենալով արևին,
Երբ անցնում է երկրորդ կեսով նշանների շրջանում
Բացատրում են այդպես նրանք, ովքեր միայն կարծում են,
Թե լուսինը մի գունդ է, որ գլորվում է անգադար
Բայց արևից միշտ ցածր է, բացատրություն այդպիսի
Արժանի է, որ նաև մենք հավանական համարենք։

Սակայն նույնիսկ սեփական լույս ունենալով, լուսինը
Կարող է, միշտ գլորվելով, փոխել տեսքերն իր լույսի,
Եվ կարող է մի այլ մարմին շարժումներով ղուգրնթաց
Կանգնել ուղիղ լուսնի առջև ու պտտվել նրա հետ,
Փոխել նրա տեսքը այդպես նրան ծածկել մեղանից
Բայց մարմինն այդ չի երևում, որովհետև լույս չունի։

Բայց ինքն իրեն էլ կարող է լուսինն այնպես գլորվել
Ինչպես մի գունդ, որի կեսը պայծառ լույսով է օժտված
Եվ պտույտի ժամանակ մեզ ցույց տալ փուլեր ղանազան
Եվ մինչև այն ժամանակ, երբ շուռ է գալիս դեպի մեզ
Այն կողմով, որ ամբողջապես լուսավորված է լույսով
Սակայն հետո, վերադարձած, հետզհետե ծածկում է
Արդեն ամբողջ իր գնդաձև մարմնի մասը լուսավոր։

Սա կարծիքն է քաղդեացոց, որոնք ուզում են հերքել
Ուսմունքը այլ մարդկանց, որոնք աստղագետ են նրանց պես։
Պատահել չի կարող, կարծես, թե մեկը, թե մյուսը
Եվ մի ուսմունքն ամենևին վատ չէ մյուս ուսմունքից։
Ինչո՞ւ ամեն օր չի կարող մի նոր լուսին ստեղծվել
Ինչո՞ւ որոշ կարգով փոխել չի կարող իր ձևերը,
Եվ լուսնի, որ քայքայվել է արդեն երեկ, փոխարեն
Ինչո՞ւ արդյոք մի նոր լուսին դարձյալ ստեղծվել չի կարող
Դժվարին է ապացուցել, որ հենց այդպես չի լինում,
Տեսնելով շատ երևույթներ՝ պարբերաբար կրկնվող
Երևան է գալիս գարունն ու նրա հետ Վեներան
Եվ թևավոր մունետիկը Վեներայի[19]՝ առջևից
Զեփյուռի հետ, որի մայրը՝ Ֆլորան[20] ճամփին սփռում է
Շքեղ, տարբեր ու զանազան անուշաբույր ծաղիկներ
Ամռան տապը՝ Կերերի ուղեկցուհին այդ փոշոտ
Ապա արդեն Ակվիլոնի քամիները մեղմաշունչ
Հետո հասնում է աշունը թնդում «էվան էվոե»[21]
Իրանց ուրիշ մրրիկներ ու քամիներ են հետևում,
Որոտաշունչ Վոլտուրնոսը Ավստրը՝ ահեղ, շանթափայլ
Հետո գալիս է ձմեռը, ձյան, եղյամի, ցրտի հետ,
Սառները չխկչխկացնում՝ ընդարմացած խիստ ցրտից։
Ինչո՞ւ պիտի զարմանանք, որ ժամանակին ճշտորոշ
Կարող է նոր լուսին ծնվել, ժամանակին չքանալ։
Խավարումներն արևի և լուսնի դարձյալ կարող ենք
Բացատրել մենք նմանապես պատճառներով զանազան
Եթե կարող է լուսինը երկրից խլել արևի
Լույսը, ապա ծածկել նրա պայծառափայլ երեսը
Իր մութ մարմնով կտրել ճամփան նրա պայծառ շողերի
Միթե ասել չի կարելի, որ ընդունակ է անել
Նույնը նաև մի այլ մարմին, որ լույս չունի սեփական։
Ինչո՞ւ հյուծվել ժամանակին արեգակը չի կարող,
Եվ կորցնել իր պայծառ լույսը և նորից ետ ստանալ
Անցնելիս այն շրջանով, ուր բոցին օդ կա թշնամի,
Որտեղ հանգչում են հուրերը, առ ժամանակ կործանված։
Եթե երկիրն էլ իր հերթին լուսնից խլել կարող է
Նրա լույսը երբ գտնվում է արևի վերևում,
Եվ լուսատու ամիսների[22] խորասուզվում է երկրի
Խավարի մեջ թանձր, ինչո՞ւ արդյոք ուրիշ մի մարմին
Չի կարող հենց այդ ժամանակ ընկնել լուսնի գնդի տակ,

Արեգակի վերևում, և կանգնած նրանց մեջտեղում,
Փակել լույսի ճանապարհը։ Նեթե լուսինն, իսկապես,
Փայլում է իր լույսով միայն, ինչու հյուծվել չի կարող
Տիեզերքի մի շրջանում, երբ ճեղքում է մի հոսանք,
Որը մարել ընդունակ է նրա պայծառ շողերը։
Բացատրած քեզ արդեն, թե ինչ պատճառներով կարող
Տիեզերքի տարածության մեջ ամեն ինչ կատարվել՝
Լուսնի շարժումն, ինչպես նաև տարբեր ընթացքն արևի,
Արդյոք ինչ ուժ և ինչ պատճառ նրանց կարող է շարժել,
Եվ երբեմն իրենց լույսը կորցնում են ինչ պատճառով,
Աչքերի պես, մե՛րթ փակվելով և մե՛րթ նորից բացվելով,
Մեր երկիրը խորասուզում խավարի մեջ գիշերվա,
Եվ մերթ նրան լուսավորում իրենց փայլուն շողերով,
Այժմ նորից դառնում եմ ես մանկության աշխարհի՝
Ինչ փորձեր է երկիրն արել արարչության սկզբում,
Ինչ է ծնել ու վստահել քամիներին թափառիկ։
Նախ ծածկել է հողը բոլոր բլուրներն ու դաշտերը
Ամենուրեք ամեն տեսակ փարթամ ու ճոխ բույսերով,
Եվ գույնզգույն ծաղիկներ են փայլել կանաչ մարգերում.
Եվ, վերջապես, անզուսպ աճով ոգեշնչված ծառերը
Ոստերն իրենց տարածել են դեպի կապույտ երկինքը,
Ինչպես բուրդը չորքոտանու և թռչունի բմբուլը
Այն մասերն են, որ ծնվում են ամենից շուտ, անպայման,
Այդպես էլ նոր ծնված հողը բույսերով ու թփերով
Նախ ծածկվել է ամբողջովին, անասուններ բազմազան
Ծնել տարբեր եղանակով, պայմանների մեջ տարբեր։
Արարածներ չէ՞ որ չէին կարող իջնել երկնքից,
Կամ ցամաքի արարածներ ծովից չէին դուրս գալու
Ուստի պետք է ընդունենք, որ արժանի է մոր անուն
Կրել հողը, որովհետև նա է ծնել ամեն ինչ
Նույնիսկ այժմ դեռ բազմաթիվ արարածներ կենդանի
Հողի մեջ են ձևավորվում արեգակի ջերմության
Եվ անձրևի օգնությամբ։ Եվ ինչո՞ւ մխտի զարմանանք,
Որ հողից են առաջ եկել անասուններ ավելի
Մեծ մարմնով ու քանակությամբ այն ժամանակ, երբ հողը
Եվ օդն էին դեռ վայելում պատանություն կենսուրախ։
Նախ գարնանը բազմատեսակ խայտաբղետ թռչուններ,
Ձուն կոտրելով, հանկարծակի դուրս են գալիս լույս աշխարհ,
Իսկ ամռանը կեղևներից դուրս են գալիս ճպուռներ

Կենդանացած, իրենց համար իսկույն սնունդ փնտրելով
Այն ժամանակ մահկանացու արարածներն առաջին
Սնվել են այն պատճառով, որ շատ կար ջուր ու ջերմություն
Ամենուրեք, որտեղ միայն գտնում էին հարմար տեղ,
Արմատներով խրված գետնում, աճում էին արգանդներ
Եվ երբ հասնում հասունության, բացում էին մի նոր ելք
Արևի տակ առաջացած պտուղների համար նոր,
Որ հեղուկի միջից էին դուրս գալիս և օդ շնչում
Բնությունն էլ ընծայում էր նրանց հողի երակներ
Ճեղքվածքներից հոսեցնում էր կաթնանման մի հեղուկ
Չէ՞ որ հյութեղ սնունդ լինում է ծծերի մեջ կանանց,
Եվ միայն այն ժամանակ, երբ նրանք մանուկ են ծնում։
Այդպես՝ հողը մանուկներին ընծայում էր կերակուր,
Ջերմությունն իր տալով նրանց՝ հագուստների փոխարեն
Փափուկ բույսը ծառայում էր նրանց համար անկողին,
Եվ ո՛չ դաժան սառնամանի կար աշխարհում պատանի .
Ո՛չ չափազանց մեծ ջերմություն և ո՛չ հողմեր կատաղի.
Այո՛ ամեն ինչ աճում է հետզհետե ամրանում
Ուստի նորից ասում եմ որ կարող ենք հողն անվանել
Ընդհանուր մայր այն պատճառով, որ ստեղծել է մարդկանց
Նույն ժամանակ ստեղծելով անասուններ բազմազան,
Նրանց որոնք կատաղությամբ թափառում են լեռներում
Նրանց, որոնք ազատորեն ճախրում են ջինջ երկնքում։
Սակայն ոչ ոք անվերջ ծնել չի կարող այդ պատճառով
Անպտուղ է դարձել հոգնած հողը, պառավ կնոջ պես
Ժամանակն էլ տիեզերքի ողջ կերպարանքն է փոխում .
Եվ իրերի նախորդ կարգին հաջորդում է մի նոր կարգ.
Բնությունը ամեն ինչ է փոփոխում մեր աշխարհում.
Երբ հասակից ուժասպառված՝ մի բան փտում է այնտեղ
Այստեղ ցեխից մի այլ բան է դուրս գալիս ու ամրանում
Բնությունն է տիեզերքում այդպես փոխում ամեն ինչ
Եվ մի վիճակ է հաջորդում երկրում մի այլ վիճակի
Ինչ տվել է, էլ չի կարող, ինչ չի տվել, տալիս է։
Եվ փորձել է հողը ծնել բազմաթիվ այլ հրեշներ՝
Տարօրինակ մարմիններով անդամներով անսովոր
Արարածներ, որոնց սեռը ո՛չ արու էր և ո՛չ էգ
Հրեշ՝ անոտք կամ այնպիսի, որոնք ձեռքեր չունեին
Եվ չունեին ոմանք բերան, ոմանք ծնվում էին կույր
Ոմանց մարմնին կպած էին անդամներ շատ անճոռնի

*Որոնք շարժվել չէին կարող կամ որևէ բան անել*
*Որ խուսափեն վտանգներից կամ ձեռք բերեն, ինչ պետք է,*
*Գոյությունը իրենց մի կերպ կարողանան պահպանել։*
*Հողն ստեղծել է նաև այլ տեսակների հրեշներ*
*Սակայն իզո՜ւր բնությունը արգելել է զարգանալ,*
*Նրանք չէին կարող ապրել մինչև ծաղիկ հասակը,*
*Ոչ ձեռք բերել սնունդ և ո՛չ սիրով իրար միանալ,*
*Որպեսզի նոր սերունդները բազմապատկվեն շարունակ,*
*Եվ որպեսզի կոփվեին ու բազմանային շարունակ*
*Անշուշտ պետք է լինեին և բազմատարբեր պայմաններ*
*Նախ միշտ սնունդ է հարկավոր և ուղիներ, որոնցով*
*Առատորեն սերմեր ցրվեն անդամներում մանկածին*
*Այնքան լցվեն նրանց մարմնի անդամներում արտաքին,*
*Որ էգերն ու արուները վայելքներով փոխադարձ*
*Կարողանան զուգավորվել պետք են հարմար անդամներ*
*Բայց կենդանի արարածներն ու սերունդներն սկզբում*
*Իրենց արագ կործանվելուց՝ չէին կարող բազմանալ։*
*Անասուններն այն, իսկապես, որոնք ապրում են այժմ*
*Պետք է իրենց գոյությունը արիությամբ պաշտպանեն*
*Խարդախությամբ, կայտառությամբ կամ այն ուժով, որոնցով*
*Նրանք օժտված են ի ծնե, բացի նրանցից, որոնց մենք*
*Պաշտպանում ենք, որովհետև օգտավետ են մեզ համար։*
*Այդպես առյուծներին գազաններին կատաղի*
*Խիզախությունն է փրկում միշտ, ճարպկությունը՝ աղվեսին*
*Կայտառությունը՝ եղնիկին։ Հավատարիմ շները*
*Եվ լծակիր ու բեռնակիր անասուններն անխտիր,*
*Եվ թանձրագեղմ ոչխարները և եզները ջանասեր*
*Նրանք մարդկանց պաշտպանության տակ են ապրում, Մեմմի՛ոս։*
*Խուսափում են գազաններից որոնելով խաղաղ կյանք,*
*Առատ սնունդ են ուզում, որ ձեռք է բերվում անվտանգ*
*Եվ մենք նրանց տալիս ենք այդ որպես մի վարձ, քանի որ*
*Ծառայում են նրանք մարդուն։ Անասուններն այն, որոնց*
*Բնությունն է, սակայն, զրկել հատկությունից, որ այնքան*
*Անհրաժեշտ է պահպանելու համար անկախ գոյությունն,*
*Իսկ մեզ համար օգտավետ չեն, ինչո՞ւ պիտի նրանց մենք*
*Պահենք արդյոք, և՛ խնամենք և՛ պաշտպանենք շարունակ։*
*Ենթարկվելով իրենց դժբախտ ճակատագրին անողոք,*
*Գազանների համար նրանք միշտ դառնալու են ավար,*
*Բնությունը պետք է նրանց ընաջնջի, վերջապես*

Կենտավրոսներ, սակայն, երբեք չեն եղել մեր աշխարհում
Երկու տարբեր մարմիններով, տարբեր իրենց բնությամբ,
Տարբեր իրենց անդամներով. հատկություններն էլ նրանց
Տարբերվում են նրանց մարմնի մեկ և երկրորդ մասերում
Բայց այդպիսի արարածներ լույս աշխարհ չեն կարող գալ
Եվ բթամիտ մարդկանց նույնիսկ դա դժվար չէ հասկանալ
Երեքամյա ձին համարվում է իր ծաղիկ հասակում
Այդ հասակում երեխա է մարդը, և իր քնի մեջ
Որոնում է մոր ծծերը՝ անուշ կաթով ծանրացած
Հետագայում ուժը ձիու սկսում է սպառվել
Թուլանում են անդամները և զառամում կյանքի հետ
Մարդը ճիշտ այդ հասակումն է, սակայն դառնում պատանի
Եվ այտերը նրա քնքուշ աղվամազով են ծածկվում
Այդ պատճառով չհավատաս, որ ձիերի ու մարդկանց
Սերմից կարող են առաջ գալ կենտավրոսներ կենդանի
Կամ ծովային մարմնի շուրջը յուսած բազում շների
Չար դնչերով շրջապատված Սկիլլե կամ հրեշային
Այլ արարած անդամներով, որ միասին չեն լինում
Որովհետև նույն ժամանակ նրանք հասնել չեն կարող
Իրենց ծաղիկ հասակներին, հասունանալ, պառավել:
Եվ նրանք չեն բոցավառվի միանման կրքերով
Միանման չեն բնությամբ, և սնունդը տարբեր է
Որովհետև մոլախինդից գիրանում են այծերը,
Իսկ մեզ համար, ինչպես գիտենք, այն մահացու մի թույն է
Բայց քանի որ բոցն այրում է դեղին մարմինն առյուծի
Այնպես, ինչպես որ այրվում է ամենայն մի անասուն,
Որ բաղկացած է նույնպիսի ընդերքից ու արյունից,
Ինչպե՞ս կարող է ստեղծվել Քիմեր՝ մարմնով եռակի,
Գլխով՝ առյուծ, հետույքով՝ օձ, իսկ մեջտեղում՝ արդեն այծ
Ով կարծում է, որ երբ երկիրն ու երկինքը նոր էին
Ի վիճակի էին նման արարածներ ստեղծել,
Նա փաստարկներ չունի ուրիշ, բացի դատարկ խոսքից՝ նոր
Ընդունակ է գլխից դուրս տալ անմտություն ամենայն
Նաև կարող են ասել, որ գետերը այն ժամանակ
Ոսկի էին, ծաղիկները ծառերի՝ քար թանկագին,
Եվ որ մարդիկ ծնվում էին անդամներով այնպիսի
Օժտված էին նրանք այնքան հսկայական մի ուժով
Որ մի քայլով կարող էին անցնել ծովեր ընդարձակ
Եվ մի ձեռքով պտտեցնել կամարը ողջ երկնքի

Թեև նյութի բազում սերմեր եղել են այս ժամանակ,
Որ երկիրը սկսել է ծնել տարբեր գազաններ,
Իրականացնել չի կարելի, որ կարող էր նա ծնել
Արարածներ, որոնք այդքան հակադիր են բնությամբ,
Միացնել մի կենդանու մեջ անասուններ զանազան
Անդամներով, որովհետև բույսերը և արտերը,
Ծառերը որ մինչև այժմ առատորեն բուսնում են,
Երբեք այդպես իրար խառնված չեն պատահում աշխարհում,
Արարածներն ունեն տարբեր հատկություններ, առանձին
Տարբերությունն այդ պահպանել ստիպված են շարունակ
Որ բնությունն է սահմանել օրենքներով իր անխախտ։
Մարդիկ, որոնք ապրում էին այն ժամանակ, անկասկած,
Շատ ավելի ուժեղ էին, քան մարդկանց ցեղն այսօրվա
Եվ զավակներն էին հողի որ ղվարթ էր, պատանի
Ոսկորների կառուցվածքը նրանց մեծ էր առավել,
Ավելի պինդ էր հյուսվածքը նյարդերի և ընդերքի
Շատ ավելի ամրակուռ և սակավ էին տառապում
Խառնամանուց, ջերմությունից, ուտելիքից շատ կոպիտ
Ուստի չէին տառապում և հիվանդությամբ զանազան
Եվ այդպես են ապրել նրանք արեգակի անհամար
Հնգամյակներ ու շարունակ թափառել են խմբերով
Այնպես ինչպես թափառում են գազանները դեռ վայրի։
Եվ գութանի մաճը բռնել դեռ չգիտեր ո՛չ մի մարդ
Եվ երկաթով արտ մշակել դեռ հայտնի չէր ոչ մեկին
Ոչ էլ մատղաշ տունկեր տնկել հողի մեջ և ծառերի
Ոստերը, որ չորացել են, կտրել մի սուր մանգաղով
Եվ այն, ինչ որ տալիս էին անձրևներն ու արևը,
Եվ այն, ինչ որ պարգևում էր հողն ինքն իրեն՝ անմշակ
Առատորեն, բավական էր նրանց քաղցը հագեցնել
Եվ կազդուրվում էին նրանք կաղնիների անտառում
Կաղիններով կշտանալով էին կյանքը անցկացնում
Եվ, բացի այդ, պտուղներով թթենու, որ, վերջապես,
Հասունացած կարմրատակում է միշտ ձմռան ընթացքում
Թթենիներ այն ժամանակ բուսնում էին ավելի
Եվ ավելի խոշոր էին պտուղներն այդ ծառերի,
Պատանությունն աշխարհի այն ժամանակ շատ էր տալիս
Այլ պտուղներ թարմ և հյութեղ սքանչելի, անհաշիվ,
Քան այդ դժբախտ մահկանացու մարդկանց պետք էր, անկասկած։
Եվ հրավիրում էին նրանց ծարավն իրենց հագեցնել

Գետերը և աղբյուրները, վտակները այն, որոնք
Լեռներից են թափվում բարձր, կարծես հեռվից կանչելով
Գազաններին՝ իրենց մաքուր ու զով ջուրը խմելու,
Երբ մթնում էր, մտնում էին անտառի մեջ ընդարձակ
Որ շատ վաղուց լինում էր միշտ նիմֆաներին նվիրված
Այն մեկուսի ապաստանը, որտեղից դուրս են գալիս
Անուշաջուր վտակները և քարերը ողողում,
Դանդաղորեն ժայռերի թաց մամուռից ցած թափվելով
Որ մեղմահոս գնան հետո հովիտներով կանաչած
Ազատ, արձակ հարթավայրում դարձած գետեր լայնահուն։
Այն ժամանակ չգիտեին, ինչպես կրակ ստանալ
Մարմինները չէին ծածկում մորթիներով գազանի
Ապրում էին անտառներում, անձավներում լեռների,
Սովորաբար ապաստարան էին նրանք որոնում
Անձրևներից, քամիներից, կայծակներից ահավոր
Նոշտ ու կոպիտ մարմիններով պատսպարվում թփերում։
Եվ հանրային գործերով դեռ անընդունակ զբաղվել,
Ոչ ունեին բարքեր նրանք, ո՛չ օրենքներ սահմանված
Ով ինչ գտներ պատահարար, տիրապետում էր դրան,
Մտահոգվում էին նրանք և պաշտպանվում առանձին։
Սիրողներին անտառներում միացնում էր Վեներան
Բավարարում էին կիրքը կամ հաճույքով փոխադարձ,
Կամ բռնությամբ կոպիտ, մարդու տենչով՝ հանգիստ չտվող,
Կամ պտուղով, ինչպես վայրի խնձոր, կաղին կամ մորի։
Նրանց ձեռքերն ուժեղ էին և ոտքերը շատ կայտառ
Անտառներում հալածելով գազաններին թշնամի,
Հեռվից քարեր էին նետում կամ հարձակվում մոտիկից
Իրենց ծանր մահակներով էին նրանց կոտորում։
Եվ սպանում էին ոմանց, իսկ ոմանցից խուսափում։
Երբ գիշերվա խավարն արդեն ծածկում էր ողջ երկիրը
Փռվում էին գետնին նրանք անդամներով իրենց մերկ
Վարազների նման, որոնք խոզի մազով են ծածկված,
Ծածկվում էին տերևներով կամ թաղվում թփուտում
Աղաղակում էին նրանք ցերեկով ու թափառում
Հարթավայրում, սակայն այդպես չէին անում գիշերով
Սարսափահար սպասելով, լռում էին շարունակ
Քնում էին քանի արևն իր վարդագույն վառ դեմքով
Երկինքը չէր լուսավորում իր շողերով լուսափայլ
Մանկությունից սովորած, որ պայծառ լույսն ու խավար

Պետք է փոխվեն հաջորդաբար, նրանք չէին զարմանում,
Նրանք չէին սարսափում և նրանք չէին կասկածում,
Որ աշխարհին կտիրանա հավերժական մի գիշեր,
Որ իրենցից խլվելու է արևի լույսն առհավետ։
Նրանց հանգիստ չէին տալիս գազանները կատաղի,
Որոնք քնած մարդկանց վրա հաճախ էին հարձակվում,
Այն ժամանակ սպանում էր նրանց մի մահ ահռելի
Եվ, վտարված օթևանից, փնտրում էին ապաստան
Քարայրում, երբ մոտենում էր հսկայական մի վարազ
Կամ մի առյուծ, քարանալով սարսափից, կեսգիշերին
Զիջում էին տերևներից ու խոտերից պատրաստված
Անկողինը այդ հյուրերին՝ սարսափելի ու դաժան։
Այն ժամանակ մահկանացու մարդիկ չէին բաժանվում
Կյանքի քաղցր լույսից ծանր հառաչանքով առավել,
Քան մեռնում են այժմ։ Ճիշտ է, շատերն էին նրանցից
Պատառոտվում՝ հանկարծակի հարձակումի ենթարկված
Գազանների համար դառնում մի կենդանի կերակուր
Անտառները և լեռները աղաղակով լցնելով,
Երբ կենդանի անդամները բոլոր իրար հետևից
Թաղվում էին դամբարանում, որ կենդանի էր նույնպես։
Դժբախտները, որոնց փրկվել հաջողվում էր փախուստով
Դնում էին ձեռքերն իրենց դողդոջուն մի ահռելի
Վերքի վրա Օրկին[23] կանչում աղաղակով բարձրաձայն
Անօգնական, չիմանալով՝ ինչպես բուժել վերքերը
Քանի դաժան ցավն առհավետ կյանքից նրանց չէր զրկում
Սակայն տարբեր դրոշների տակ մի օրը չէր կործանում
Անթիվ կյանքեր միանգամից և ծովերը հողմակոծ
Ստորերկրյա ժայռի նավեր զարկելով ու փշրելով
Չէին սակայն դեռ կործանում թե նավերը, թե մարդկանց
Եվ պոնտոսի[24] ալիքները իզուր էին բարձրանում,
Սպառնալով, դրանով էր կատաղությունն ավարտվում։
Նրա ծիծաղուն մակերեսը որոգայթի մեջ գցել
Մարդկանց դեռ չէր կարողանում Այն ժամանակ անհայտ էր
Թե ինչպես են սնում ծովով, որ հաճախ է կործանում
Այն պատճառով էին մեռնում սովից, որ քիչ սնունդ կար
Ինչպես առատ սնունդից են այժմ մեռնում շատ մարդիկ
Այն ժամանակ, չիմանալով, թունավորել են մարդկանց,
Ինչպես այժմ այդ անում են արդեն խարդախ հմտությամբ։

Իսկ հետո, երբ սկսել են խրճիթ, մորթի ու կրակ
Գործածել, կինն առանձնացել է ամուսնու հետ, նա էլ
Միացել է կնոջ հետ, մի տնտեսություն է կազմել,
Վեներայով սկսել են պարկեշտությամբ զբաղվել,
Եվ երբ տեսնել սկսել են իրենց մատաղ սերունդը,
Որն իր կյանքով պարտական էր նրանց, արդեն այդ պահից
Մարդկային ցեղն սկսել է հետզհետե մեղմանալ
Հետո՝ կրակից մրսկան է դարձել նրանց մարմինը,
Եվ նրանց չի բավարարել տանիքը ցինչ երկնքի
Թուլացել են Վեներայից՝ հաճախակի կրկնվող
Մանուկները, գուրգուրվելով, մեղմացրել են հայրերին
Հետո, սակայն, ում տները մոտ են եղել ավելի,
Հարևաններ, բարեկամներ դառնալով չեն ցանկացել
Արդեն իրար վնասել, որ բռնությունից չտուժեն
Մանուկների, կանանց հանդեպ տածելով սեր, գթություն,
Շարժումներով ու ճիչերով հասկացրել են իրար, որ
Հարկավոր է կարեկցել միշտ նրանց որոնք անզոր են.
Խաղաղությունն այդ, սակայն, չէր կարող լինել ընդհանուր
Բայց հաստատված օրենքներին շատերն էին հետևում
Իսկ մարդկային ցեղն այլապես բնաջնջված կլիներ
Եվ բազմաթիվ սերունդներով մինչև այժմ չէր կարող
Բնությունն է սովորեցրել նաև մարդկանց տարբերել
Ելևէջներն իրենց ձայնի, և կարիքն է ստիպել
Անուն տալու յուրաքանչյուր առարկային առանձին
Մանուկների նման, որոնք թոթովելով չեն կարող
Հասկացնել, թե ինչ են ուզում, մատներով են ցույց տալիս
Այն առարկան, որ տեսնում են նրանք իրենց աչքերով
Եվ զգում է ամեն մեկը, թե ինչ կարող է անել
Քանի դեռ չեն երևացել պոզեր հորթի ճակատին,
Բարկանալով սպառնում է և հարվածում նրանցով.
Հովազների, առյուծների ձագերը դեռ շատ փոքրիկ
Պաշտպանվում են ատամներով ու թաթերի ճանկերով
Այն ժամանակ նույնիսկ, քանի բաներ չունեն այդպիսի
Թռչունների ձագուկները, քանի իրենց թևերը
Դեռ չեն ծածկվել փետուրներով՝ ապավինում թևերին,
Ցանկանում են բարձրանալ ու թռչել նրանց օգնությամբ
Բայց խենթություն է կարծել, որ միայն մի մարդ
Անուն բոլոր այդ իրերին, և խոսքերը առաջին
Բոլոր մարդիկ նրանից են սովորել այն ժամանակ։

Որովհետև եթե մի մարդ կարողացել է նշել
Յուրաքանչյուր առարկան մի խոսքով, ասենք, և լեզվով
Տարբեր հնչյուն, ձայն արձակել, ինչո՞ւ նույն այդ ժամանակ
Ուրիշ մարդիկ չէին կարող անել, ինչ նա էր անում
Այնուհետև, եթե մարդիկ խոսքեր չէին գործածում
Դեռ իրար հետ այդ ժամանակ, բայց ինչպե՞ս են իմացել
Արդյոք, որ դա օգտավետ է, և ինչպե՞ս է առաջին
Հնարողը կարողացել ուրիշներին հասկացնել
Եվ ստիպել, որ ընդունեն իր հնարած խոսքերը։
Ստիպել չէր կարող մի մարդ բռնի կերպով բոլորին,
Որ սովորեն նրանք բոլոր անունները իրերի։
Ինչպե՞ս պիտի սովորեցներ, եթե մարդկանց նման խուլ
Նրան ականջ չէին դնի, և ոչ ոք չէր հանդուրժի,
Որ տանեն իր ականջները և ձանձրացնեն այդպիսի
Դեռ չլսված նոր խոսքերի արտասովոր ձայներով։
Ինչո՞ւ պիտի զարմանանք մենք, եթե ցեղը մարդկային
Որ օժտված է ձայնով, լեզվով հետևապես՝ և ունակ
Տարբեր իրեր նշել է նա բազմատարբեր խոսքերով,
Ըստ իր տարբեր զգացմունքների, եթե նույնիսկ ընտանի
Անասուններն, ինչպես նաև գազանները կատաղի,
Տարբեր ձայներ են արձակում, և նայած թե ինչպիսի
Նրանց հոգում կզգացմունքներ են այդ ժամանակ հաջորդում,
Երբ վախենում, ցավ են զգում, ուրախանում են նրանք.
Արդ կարող ես ամենօրյա փորձով նույնիսկ համոզվել
Մոլոսական[25] ահեղ շունը, որ, բարկացած լինելով,
Երթունքների միջև շարժուն ցույց է տալիս շարունակ
Ատամների երկու շարքն, սպառնում է մի ձայնով,
Որն, անկասկած, շատ տարբեր է հնչում, քան այն ժամանակ
Երբ լցնում է շրջակայքը իր դիվ հաչով ահարկու
Կամ երբ լիզում է քնքշորեն լակոտներին իր փոքրիկ,
Իր թաթերով նրանց գետնին խաղալեցնում կամացուկ,
Եվ բերանով վերցնում, առանց ատամներով դիպչելու
Նրա քնքույշ քրթմնջոցը բոլորովին ուրիշ է,
Քան երբ մենակ ոռնում է նա բարձր ձայնով վշտալի
Կամ երբ մարմնով կպչած գետնին վնգստում է հարվածից։
Մի՞թե չկա տարբերություն, ինչպես է ձին վրնջում
Երբ դեռ ջահել մի հովանակ վազվզում է խենթորեն
Զամբիկների մեջ, խթանված սիր թևավոր աստծուց[26],

Եվ երբ մարտում իր լայն դնչով խրխնչոց է արձակում
Կամ երբ մի այդ զգացմունքից է դողում ամբողջ իր մարմնով։
Եվ, վերջապես, երբ թևավոր թռչունները բազմազան՝
Լուղահավը, որորն ու ցին աղի ծովում են շրջում,
Ալիքներում իրենց օրվա ուտելիքը փնտրելով,
Այդ ժամանակ բոլորովին ուրիշ կերպ են աղմկում,
Ըան կռվելիս կերի համար կամ ավարի հետ իրենց։
Կան թռչուններ, որոնց խռպոտ ձայնը փոխվում է նաև
Եղանակի հետ. այդպես են ագռավները, օրինակ,
Որոնք ամբողջ երամներով կռկռում են անդադար,
Ինչպես ոմանք են հավատում, գուշակելով, որ շուտով
Անձրև կգա, քամիներին մրրիկին են ձայն տալիս։
Երբ զանազան զգացմունքներից անասուններ են դրդվում,
Տարբեր ձայներ արձակելու, թեև մունջ են միշտ նրանք,
Բնական ի՞նչն է ավելի քան այն, որ մարդն այդ ձևով
Տարբեր ձայնի օգնությամբ է նշում իրեր զանազան։
Սակայն պիտի կանխեմ մի հարց, որ կարող ես դու ինձ տալ
Մահկանացու մարդկանց համար կայծակներն են հուր բերել
Մեր աշխարհը. կայծակներն են սկզբնական օջախը
Այն կրակի, որը մենք ենք օգտագործում աշխարհում։
Նույնիսկ այժմ կարելի է հաճախ տեսնել մարմիններ,
Որ վառվում են, բռնկելով կրակներից երկնային,
Երբ փոթորիկն օդից բոց է երկրի վրա շպրտում։
Պատահում է, սակայն, նաև, որ մի քամի սանձարձակ
Թափահարում է ծառերը և, նրանց խիտ ոստերը
Համյին իրար հետ շփելով, առաջ բերում է կայծեր,
Եվ այդ շփման ժամանակ են կրակները բռնկում,
Ուստի երկու պատճառով է առաջ եկել կրակը։
Իսկ կերակուր եփել, ինչպես փափկացնել մեղմ կրակով
Սովորեցրել է արևը, քանզի տեսել են նրանք,
Որ դաշտում շատ բան է փափկում արևի տաք շողերից։
Ովքեր տաղանդ են ունեցել և եղել են խելացի,
Սովորել են կյանքն ու կերը բարելավել օրեցօր
Ամեն տեսակ նորմուծությամբ և կրակի օգնությամբ։
Այն ժամանակ արքաները սկսել են կառուցել
Քաղաքներ ու բերդեր, որպես պաշտպանության ապաստան,
Եվ արքաներն են սկսել հենց առաջին օրերից
Անասուններ ընտանի, հող մարդկանց միջև բաժանել,
Նայած որքան գեղեցիկ են կամ ուժեղ են, կամ խելոք,

Որովհետև հատկություններն այդ եղել են գովելի
Հնարել են հարստություն, հետո գտել են ոսկին,
Այն, որ առանց դժվարության առաջնությունն է խլել
Գեղեցիկ և ուժեղ մարդուց, հարուստի մոտ չե՞ն գնում
Նրանք, որոնք ուժեղ, խելոք կամ գեղեցիկ են մարմնով։
Իսկ ով միայն իր խելքով է ղեկավարվում միշտ կյանքում,
Եվ ում կյանքը չափավոր է, նա հարուստ է չափազանց,
Անվրդով է ապրում հոգով, ոչ մի բան չի պակասում
Այդպիսի մի մարդու երբեք, որը քիչ է ցանկանում.
Սակայն մարդիկ միշտ տենչում են իշխանություն ձեռք բերել,
Եվ հռչակվել, և որ իրենց բարօրությունն ավելի
Հաստատ հիմքի վրա շինեն, իրենց համար, այդպիսով,
Առատությամբ ու ճոխությամբ սահեցնելու խաղաղ կյանք։
Սակայն իզո՜ւր նա, ով պատվի գագաթնակետն է ձգտում,
Կործանիչ է դարձնում ուղին, որով պիտի բարձրանա.
Այնտեղ հասած՝ հարվածում է նախանձն ինչպես մի կայծակ,
Տարտարոսի անտակ մութը հաճախ նրան շպրտում։
Բայց ավելի լավ է, որ միշտ խաղաղություն վայելես,
Քան ունենաս իշխանություն, նույնիսկ լինես թագավոր.
Թող հյուծվեն այդ դժբախտները, քրտնեն իրենց արյունով,
Սնափառ նեղ ճանապարհին, ուժասպառված պայքարից,
Որովհետև չեն տեսնում, որ կայծակի պես նախանձը
Ճանթահարում է այն վայրը, որ բարձր է ամենից,
Որովհետև միշտ դատում են բամբասանքով ուրիշի,
Ապրում ոչ թե իրենց սրտով, այլ ուրիշի կարծիքով,
Այդպես եղել է, այդպես է և այդպես է լինելու։
Երբ սպանվել էին արդեն արքաները, վերջապես,
Բեկորները արքայական գահերի ու թագերի
Որոնք այնքան հարգանք էին վայելում մի ժամանակ,
Տապալվել են ու տրորվել ժողովրդի ոտքի տակ.
Եվ այդ հպարտ զարդարանքը, պոկված գլխից իշխողի,
Կեղտոտվել է արյան լճում և ափսոսել առաջվա
Իր հին տեղը, որովհետև ճզմում են միշտ համարձակ,
Ուրախությամբ տրորում այն, ինչ պաշտել են երկյուղից։
Հետո հասան պառակտումներ, անկարգություն կատարյալ,
Որովհետև ամեն մեկը ինքն էր իշխել ցանկանում,
Այդ պատճառով որոշ թվով պաշտոնյաներ ընտրեցին,
Սահմանեցին իրավունք, որ մարդիկ ապրեն օրենքով։
Բռնությունից այնքան շատ էր տանջվել ցեղը մարդկային,

նրան հյուծվել պատակտումից, որ նա ինքը իր կամքով ևաղանդվեց օրենքների լծին ծանր, կաշկանդող վ քանի որ ամեն մեկն էր ուզում վրեժն իր լուծել ևլնի խիստ, քան օրենքն է արդարացի թույլ տալիս, յանքը մարդկանց համար արդեն անտանելի էր դառնում։ Դատիժների երկյուղն է միշտ թուլացնում մեր կյանքի սճույքները։ Եվ մարդը, որ կատաղի է, անարդար, րն է ընկնում իր ցանցի մեջ այդպես վարքը անօրեն ամարյա միշտ ջախջախում է նրան, ով այդ արել է։ ևաղաղությամբ, հանգստություն չի տմենում արդեն նա, ով խախտում է, ոտնահարում դաշինքները հանրային թև նույնիսկ աստվածներից ու մարդկանցից խույս տա նա, արձյալ պիտի չարչարվի իր տագնապներից անդադար րովհետև զառանցանքի կամ քնի մեջ ակամա ա ինքն իրեն, ինչպես ոմանք մատնելու է, բացելու ողտնիքներն ու ոճիրներն այն, որ նա ինքն է կատարել։

Այժմ ի՞նչն է պատճառը, որ տարածվել է աշխարհի ազգերի մեջ այն հավատը, որ աստվածներ իբրև կան, ով լցրել են քաղաքները տաճարներով սահմանել անդիսավոր անթիվ ծեսեր, հանդեսներ ճոխ ու փարթամ ր արվում են ամենուրեք, և որ այսօր է կատարվեն Տենայն մի կարևոր գործ սկսելու սկզբում։ ու պատճառով է թափանցել ահը մարդկանց սրտի մեջ ր շարունակ աստվածների մեհյաններ են կառուցում ւց աշխարհում այդպես նրանք և տոներ են սահմանում պատիվ այդ անմահների դժվարին չէ բացատրել։

Առաջ մարդկանց մահկանացու սերունդ՝ երբ առաջին, նույնիսկ արթուն, տեսնում էին աստվածների դեմքերը ամ զարմանում երազներում մարմիններով նրանց մեծ, սատ նրանց զգացմունքներ էլ վերագրեցին, քանի որ րև շարժվում, հպարտ խոսքեր էին ասում շարունակ, ր վայել են լուսապայծառ գեղեցկության ուժերին րանց կյանքը համարվում էր հավերժական, քանի որ րանց դեմքը մարդկանց աչքին երևում էր անփոփոխ, զորությունը նրանց այնքան ահռելի էր համարվում, որ թվում էր, հաղթահարել այն ոչ մի ուժ չի կարող։ ևարծում էին երջանկությունն էլ + նրանց չափից անց ով նրանցից ոչ մեկն արդեն երբեք մեռնել չի կարող։

Եվ երազում թվում էր, թե առանց ջանքի որևէ՝
Աստվածները ամեն հրաշք ընդունակ են գործելու։
Այնուհետև նկատելով կայուն կարգը երկնքի,
Եղանակներն ամբողջ տարվա, որ փոխվում են խիստ կարգով,
Այդ ամենի պատճառները, սակայն, չէին իմանում,
Հետևապես աստվածներին վերագրեցին ամեն բան,
Կարծելով, որ ամեն ինչը կառավարում են նրանք։
Աստվածների տները և պալատները երկնքում
Հաստատել են, որովհետև արեգակն ու լուսինը
Իրենց անվերջ պտույտները կատարում են երկնքում,
Երկնքից են գալիս կարգով ցերեկը և գիշերը,
Այն թափառիկ ջահերը, որ փայլփլում են խավարում,
Թռչող հուրը, և՛ ամպերը, ցողը, ձյունն ու անձրևը,
Քամիները, կայծակները, կարկուտը և որոտը
Արընթաց, որ սպառնում է իր ահեղի դղրդով։
Օ՜, գո՛ւ, թշվառ մարդկային ցե՛ղ, երևույթներ այդպիսի
Վերագրել ես աստվածների՜ն, նրանց օժտել բարկությա՜մբ։
Ցեղիդ որքա՜ն տառապանք է այն ժամանակ պատճառել,
Որքան ցա՜վ է նույնիսկ այժմ այդ բանը մեզ պատճառում,
Եվ որքա՜ն մեր մանուկներին է պատճառել արտասուք։
Մի՞թե նա է բարեպաշտ ով ծածկել է իր գլուխը,
Պտտվել մի քարի շուրջը[27], հաճախել ինչ-որ տաճար,
Գետնին չոքել, խոնարհվելով, պարզել ձեռքերն անդադար
Աստվածների արձաններին, ողողել
Անասունի արյունով և ավելացրել նոր ուխտեր
Հին ուխտերին։ Անհույզ ոգով պետք է դիտես ամեն ինչ։
Եվ, իսկապես, երբ նայում ենք դեպի վերև՝ աշխարհի
Կամարներին անսահման և աստղերին, որ փայլում են
Զինչ եթերում, մտածում ենք արեգակի ու լուսնի
Կանոնավոր երթի մասին, արդեն ուրիշ հոգսերի
Բեռան տակից բարձրացնում է իր գլուխը դեպի վեր,
Մեր կրծքի մեջ արթնանալով, արդեն այլ հոգս այսպիսի
Կա՞ մի աստված այնտեղ, որ իր իշխանությամբ անսահման
Այնքան տարբեր շարժումով է պտտեցնում աստղերը.
Պատճառները չիմանալով, տատանվում է մեր հոգին.
Ունեցե՞լ է աշխարհն սկիզբ, այդ են ուզում իմանալ,
Պե՞տք է արդյոք նա վերջանա. մինչև ե՞րբ է կարող նա
Դեռ դիմանալ ամենօրյա շարժումների մեծ թափին
Թե՞ օժտել են աստվածները անմահությամբ, կարող է

*Անթիվ դարեր արհամարհել այդ ջանքերը ջախջախիչ*
*Եվ դարերի ընթացքում դեռ անվերջորեն պահպանվել։*
*Այնուհետև, աստվածներից ո՞ր հոգին է ընդունակ*
*Զվախենալ ամենևին, ո՞ւմ ծնկները չեն ծալվի*
*Երկյուղից, երբ բոցավառված ամբողջ երկիրն է դողում*
*Սարսափելի գղրդոցից որոտի, որ անցնում է*
*Ողջ երկնքով։ Այդ ո՞ր խիզախ ժողովուրդը չի դողում,*
*Մի՞թե փառոք արքաներն էլ մարդկանց հետ չեն վախենում*
*Աստվածների արձանները չեն համբուրում և նրանք,*
*Վախենալով, թե չլինի՞ հասել է ժամն ահեղ այն,*
*Երբ ոճիրն ու բռնությունը նրանց պիտի հատուցվեն*
*Եվ այն բոլոր չար գործերը, որ կատարել են նրանք*
*Երբ կատաղի քամու շունչն է ծովի վրա հարձակվում*
*Նավատորմի առաջնորդին հալածում է, քշելով,*
*Ինչպես նաև լեգեոններ ու փղեր է քարշ տալիս,*
*Այն ժամանակ աստվածներին մի՞թե նա չի աղոթում*
*Եվ մի՞թե նա չի աղերսում խաղաղություն, սարսափած*
*Սակայն իզո՜ւր։ Հաճախ քամին սաստկանում է առավել*
*Եվ, նայած աղոթքներին, նրան նետում անդունդը։*
*Ուստի ճիշտ է՝ ինչ-որ ուժ*[28] *է այդպես խաղում մարդկանցով.*
*Ոտքի տակ է սիրում գցել ամեն կապոց ու տապար*[29]*։*
*Եվ, վերջապես, երբ ոտքի տակ մեր դողում է ողջ հողը*
*Փուլ են գալիս կամ սպառնում փուլ գալ ամբողջ քաղաքներ*
*Ինչո՞ւ պիտի զարմանանք, որ մարդիկ՝ մահվան ենթակա*
*Վերագրել են այդ ամենը աստվածներին գերբնական,*
*Աստվածային այն ուժին, որ իշխանությամբ իր հզոր*
*Տիեզերքն է կառավարում, ինչպես ինքն է ցանկանում։*
*Եվ գտել են, հետո, տարբեր տեսակների մետաղներ՝*
*Ոսկին, պղինձն ու արծաթը, արճիճը և երկաթը,*
*Երբ կրակն էր ոչնչացնում լայնատարած անտառներ*
*Լեռներում այն հրդեհից, որ բռնկում էր կայծակից,*
*Կամ մարդիկ են առաջ բերել մարտնչելիս անտառում*
*Ցանկանալով կրակներով ահաբեկել թշնամուն,*
*Կամ ցանկացել, հրապուրվելով այդ արգավանդ հողերով*
*Անտառները նոր արտերի ու մարգերի վերածել*
*Կամ ցանկացել ոչնչացնել գազաններին թափառիկ,*
*Իրենց համար ձեռք բերել այն, ինչ նրանցից է մնում*
*Որովհետև գործածել են որսորդական փոս և հուր,*
*Շներով ցեռ չքիտեխին հալածել ու ցանց պարզել։*

*Բայց ինչ կերպ էլ առաջ դային հրդեհներն այդ ահռելի,*
*Երբ ճարճատող կրակներից վառվում էին անտառները,*
*Մինչև ծառի արմատները տաքանալով հողի մեջ*
*Երակ-երակ հոսում էին, փոսերի մեջ հավաքվում*
*Ոսկի, արծաթ, պղինձ, արճիճ վտակներով շիկացած,*
*Իսկ հետո, երբ սառում էին, գտնում էինք նրանք պինդ*
*Տեսել են, որ նրանք արդեն փայլփլում են հողի մեջ,*
*Եվ վերցրել են, գերված նրանց գեղեցկությամբ ու փայլով.*
*Տեսել են, որ նրանք ունեն ճիշտ այնպիսի ձևեր, որ*
*Ունեցել են այն փոսերը, որոնց մեջ են գտնվել*
*Մի քան, որից սովորել են, որ, կրակով հալելով,*
*Կարելի է ձև տալ նրանց, ինչպես միայն ցանկանաս,*
*Դարբնել նրանց, երկարացնել, բարակացնել ու սրել,*
*Որ նրանցից կարելի է նաև զենքեր պատրաստել*
*Եվ նրանցով ծառեր կտրել, տաշել, հղկել, ողորկել*
*Կարելի է, ծակեր բացել, ինչպես կուզես, նրանց մեջ.*
*Նախ փորձել են նրանք ոսկին, ապա՝ արծաթն են փորձել,*
*Ավելի ուշ՝ պղինձը, որ դիմացկուն է ավելի։*
*Իզո՜ւր սակայն։ Այդ առաջին մետաղները պնդությամբ*
*Համեմատվել չէին կարող պղնձի հետ, անկասկած.*
*Արհամարհվեց ոսկին շուտով, իսկ պղինձը հարգվում էր,*
*Որովհետև ոսկե սայրը հեշտությամբ էր բթանում։*
*Բայց ոսկին են հարգում հիմա, արհամարհում՝ պղինձը*
*Եվ փոխում է ժամանակը ողջ իրերի արժեքը,*
*Այն, ինչն առաջ թանկ է եղել, զրկվում է փառք ու պատվից,*
*Եվ այն, ինչը թանկ է այժմ, արհամարհվում էր առաջ,*
*Հետզհետե ավելի է արժանանում գովեստի*
*Եվ վայելում մահկանացու մարդկանց խորին հարգանքը։*
*Հետո՝ ինչպես են սկսել մարդիկ երկաթ գործածել,*
*Ինքդ առանց դժվարության կհասկանաս, Մեմիո՛ս.*
*Բազուկներն են եղել, անշուշտ, մարդու զենքերն առաջին,*
*Եղունգներն ու ատամները, ծառի ոստեր ու քարեր,*
*Հետո՝ բոցը, կրակը, որ հայտնաբերել են մի օր,*
*Եվ գտել են հատկություններն երկաթի ու պղնձի*
*Հետագայում, երբ անցել էր բավականին ժամանակ*
*Բայց պղինձը գործածել են երկաթից դեռ շատ առաջ,*
*Պղինձը հեշտ է մշակվում և այն շատ է տարածված,*
*Եվ պղնձով են սկսել արտերը մի ժամանակ*
*Եվ պղնձով են մարտնչել, մահ տարածել աշխարհում,*

Եվ պղնձով են տիրացել նախնիները, արտերի
Զինվածներին միշտ զիջում են անզեններն ու մերկերը
Հետզհետե հաղթանակել սուրն սկսեց երկաթյա,
Եվ ծաղրանքի առարկա է դարձել սուրը պղնձե
Եվ երկաթով սկսեցին ճեղքել հողը այնուհետև
Եվ մարտնչել պատերազմում զենքերով նույն երկաթից
Առաջներում ձի էր հեծնում ամեն զինված մի ռազմիկ,
Որ ձախ ձեռքով բռնած սանձը, մարտնչում էր իր աջով
Հետո կռվել սովորեցին նաև երկձի կառքերով,
Այնուհետև, զույգ ձիերին ավելացրին մի նոր զույգ
Ճակատամարտ մղում էին մանգաղակիր կառքերում,
Հետո՝ եզներ լուկանական սարսափելի, օձաձեռք,
Մեջքին դրած աշտարակներ հնարել են պունները,
Որ մարտնչող զորքերի մեջ ահ ու սարսափ տարածեն
Եվ այդպես են արյունահեղ պատերազմներն ստեղծել
Կոտորածի շատ միջոցներ մեկը մյուսի հետևից,
Եվ օրավուր ավելացրել պատերազմի սարսափը։
Փորձում էին ահեղ ցուլեր օգտագործել մարտերում
Մարդ սպանել սովորեցնում էին դաժան վարազին
Պարթևները առյուծներ են քշել իրենց առջևից
Ուղեկցությամբ մարզորդների՝ նույնպես զինված ու հմուտ
Որոնք զսպել կարող էին գազաններին կատաղի
Եվ շարունակ պահել նրանց շղթաներով երկաթյա։
Սակայն իզո՜ւր։ Գազանները կոտորածից, արյունից
Կատաղելով, կոտորել են բոլոր մարդկանց անխտիր
Իրենց փրչոտ ահեղ բաշերն ամենուրեք ցնցելով։
Հեծյալները չէին կարող հանգստացնել ձիերին,
Որ սարսափում էին այնտեղ մռնչոցից ահռելի,
Ոչ էլ նրանց թշնամու դեմ ուղղել սանձի օգնությամբ։
Եվ սլացել են կատաղի առյուծները, ցատկելով,
Հարձակվելով թե այս, թե այն զորքի վրա անխտիր,
Իրենց ահեղ երախներով սպառնալով բոլորին,
Հետևներից հարձակվելով, ռազմիկներին տապալում
Պատառոտում էին իրենց ատամներով, ճանկերով
Իսկ ցուլերը մարդկանց գցում էին իրենց ոտքի տակ,
Ձիերի փորն ու կողերը ծակում իրենց պոզերով
Ներքևից և ճակատներով փորփրում հողն անդադար
Սարսափելի վարազները ժանիքներով ահռելի
Տաք արյունով ծածկում էին փշրանքները զենքերի

Եվ աջ ու ձախ շարքում մարդկանց՝ հեծելակ ու հետևակ։
Եվ ձիերը իջնում էին ժանիքներից խուսափում
Եվ ծառս էին գալիս նրանք, ծեծում հողը ոտքերով
Ժանիքները կտրում էին, սակայն, նրանց ջլերը
Եվ ձիերը ընկնում էին ու թավալվում փոշու մեջ։
Այդ կատաղի գազանները, որ համարվել են հլու,
Ընտելացած, այն ժամանակ նորից էին կատաղում
Վերքերի ու աղաղակի, սարսափի ու փախուստի
Աղմուկի մեջ զսպել նրանց չէր կարելի ոչ մի կերպ։
Հետո նրանք ցրվում էին արդեն բոլոր կողմերում.
Սակայն եզն էլ լուկանական[30], վիրավորված լինելով
Կոտորում էր այն զորքերին, որոնց պիտի պաշտպաններ։
(Եվ այդպես է եղել, գուցե, բայց դժվար է հավատալ,
Որ մարդիկ չեն նախատեսել այն չարիքներն ընդհանուր,
Որոնք պիտի հետևեին ապագայում այդ գործից։
Կարելի է ենթադրել, որ այդ եղել է ամենուր,
Աշխարհներում բոլոր, որոնք տարբեր կերպով են ստեղծված,
Եվ հատուկ չէ այդ ամենը առանձնապես մեր երկրին։
Եվ հաղթելու համար չէին մարդիկ այդպես մարտնչում,
Այլ թշնամուն չարչարելու, թեկուզ մեռնեն և իրենք,
Հույս չդրած իրենց թվին, զենքի կարիք զգալով[31])։
Հագուստն առաջ հյուսում էին, հետո դարձավ գործվածքից,
Գործվածք հետո են պատրաստել, երբ գտել են երկաթը,
Որովհետև կարելի է շինել միայն երկաթից
Սանրեր, կոճեր ու մաքոքներ, և այլ նման գործիքներ։
Բնությունն է սովորեցրել գործել առաջ այրերին,
Քանզի գործում սրամիտ են տղամարդիկ ավելի,
Եվ ավելի ընդունակ են այդ արվեստում, քան կանայք
Սակայն արտ հողագործը, ղղվելով նուրբ մանվածքից,
Ձեռք է քաշել դրանից և միայն կանանց թողել այն,
Հետո ծանր աշխատանքն է միայն պահել իր համար,
Այն գործերը, որ անդամներն ամրապնդում են նրա։
Եվ առաջին անգամ ցանքն ու պատվաստումը ծառերի
Բնությունն է սովորեցրել նույնպես միայն այլ մարդուն,
Ցույց տալով, որ հատիկներից, կաղիններից, որոնք միշտ
Ընկնում էին ծառերի տակ, երբ հասնում էր աշունը,
Փոքրիկ ծառեր էին բուսնում ժամանակի ընթացքում։
Եվ դա դարձել է օրինակ՝ ծառին ճյուղեր պատվաստել,
Եվ որպեսզի կանաչ դաշտում տնկեն դալար տնկիներ։

Օրըստօրե կատարելով նման փորձեր դաշտերում,
Տեսել են, որ քաղցր է դառնում պտուղն անհամ ու վայրի
Եվ քնքշանում, երբ դաշտերի հողը լավ է մշակված
Անտառները ետ մղելով դեպի բարձր լեռները,
Հովիտներում հերկելու տեղ էին նրանք պատրաստում,
Որ ունենան ամենուրեք լճեր, մարգեր, վտակներ,
Արտեր, այգի դաշտերում ու բլուրների լանջերին։
Եվ ձիթենու ուղիղ շարքով շրջապատել են նրանց
Հարթավայրից բարձրացնելով հասցրել թեք լանջերին,
Նույնիսկ այսօր այս ու այնտեղ դու կարող ես նկատել,
Թե ինչպես են ներազարդում բազմապիսի պտղատու
Ծառերով, որ իրենց տեսքով հաճելի են հայացքին։
Թռչուններից սովորել են երգել մարդիկ շատ առաջ,
Քան տաղերը քաղցրահնչյուն համայրի հետ մեղեդու
Հասել են մեր ականջներին և հիացմունք պատճառել
Մարդիկ լսած, թե ինչպես է ցողուններով եղեգի
Սուլում քամին, սովորել են փչել շվին գեղջկական,
Հետզհետե ներշնչվելով, արդեն վարպետ մատներով
Քաղցր ձայնի հետ միասին սկսել է գանգատվել
Սրինգը, որ հնարել են անտառներում հեռավոր
Մենության ու հանգստի մեջ, ուր հովիվներ են եղել։
Հետագայում հետզհետե առաջացել են տարբեր
Արվեստներն նաև բոլոր, հետզհետե զարգացել։
Եվ այդպես են զվարճացել մարդիկ արդեն հագեցած,
Որովհետև մեր սրտովն է լինում երգն այդ ժամանակ
Փափուկ կանաչ խոտի վրա նրանք փռվել են հաճախ
Բարձր ծառի սաղարթի տակ, ափին խոսուն վտակի,
Միջոցներով քաղցր ու համեստ հանգստություն վայելել,
Մանավանդ երբ եղանակը ժպտացել է նրանց մեղմ,
Նրանց շուրջը ծփացել են ծաղիկները բուրավետ։
Զրուցելով և ծիծաղելով, կատակելով զվարճանում,
Ուրախանում էին մարդիկ, ծաղկում մուսան գեղջկական
Եվ զարդարում էին անհոգ ուրախ մարդիկ օրնիրուն
Իրենց ուսերն ու գլուխը ծաղիկների պսակով,
Եվ սկսում կայտառ պարել, շարժել կոպիտ ձեռքերը,
Եվ կրունկներով տրորելով իրենց հողը հարազատ,
Եվ շարունակ նորոգելով կատակներն ու ծիծաղը
Այն ժամանակ նոր էր ողջը, հիանալի էր թվում,
Ով քնել չէր կարողանում, սփոփում էր ինքն իրեն,

Սովորելով տարբեր հնչող այդ երգերը քաղցրաձայն
Երբեմն էլ մի եղեգնափող կպցրած իր շրթունքին։
Մինչև այժմ մենք այդպես ենք զվարճանում, երբ հսկում ենք։
Դաշնակելու կանոնները մենք իմացել ենք արդեն,
Բայց ավելի երջանիկ չենք, քան այդ մարդիկ առաջվա,
Որոնք ապրում էին այդպես անտառների խորքերում
Մեզ ավելի դուր է գալիս, արժանավոր է թվում
Առկա իրը, եթե չկա էլ ավելի հաճելին
Բայց գալիս է նոր առարկա ու թվում լավ առավել
Փոխում է մեր ճաշակները, հնացածը վտարում
Զզվելի են դարձել այդպես կաղինները մեզ համար,
Հրաժարվել ենք տերևներից ու խոտերից պատրաստված
Անկողնուց և արհամարհում արդեն մորթին գազանի,
Սակայն ես չեմ կասկածում, որ այդ հագուստը շատ կոպիտ
Հնարողին նախանձել են շատ մարդիկ այն ժամանակ
Եվ անկասկած, դարանամուտ սպանել են, ի վերջո,
Բաժանելով արնաշաղախ նրա մորթին իրար մեջ։
Եթե առաջ մարդկանց կյանքը թունավորել է մորթին,
Այժմ ոսկին, ծիրանին են առաջ բերում պատերազմ
Բայց, կարծում եմ, հանցավոր ենք մենք նրանցից ավելի
Ցուրտը տանջում էր անմորթի ու մերկ մարդկանց հողածին
Սակայն մենք ի՞նչ կարիք ունենք ոսկու, շքեղ ծիրանու
Հագուստների, որ ոսկեկար նախշերով են զարդարված,
Պլեբեյական հագուստն էլ է մեզ ցրտից լավ պաշտպանում
Եվ մարդկային ցեղն այդպես է, անշուշտ, իզուր չարչարվում
Անցկացնելով կյանքը դատարկ, աննպատակ հոգսերով
Զի՞ որ նրա ցանկությունը անսահման է ու անհագ,
Չգիտե, թե մինչև ուր են հաճույքները տարածվում
Եվ այդ է, որ մարդկանց կյանքը ալեկոծում է այնքան,
Այնքան դաժան պատերազմներ առաջ բերում նրանց մեջ։
Արեգակը և լուսինը՝ պահապաններն աշխարհի,
Որոնք հերթով պտտվում են բարձունքներում երկնային,
Պայծառ լույսով լուսավորում ամեն ինչը աշխարհում
Այդպես են մեզ ցույց տալիս, որ եղանակներն անխախտ են
Նույնիսկ իրենց փոփոխությամբ, որ ամեն ինչ աշխարհում
Մի խիստ կարգով է կատարվում, ամեն ինչն է անփոփոխ։
Եվ երբ մարդիկ ապրում էին քաղաքներում, բերդերում
Բաժանել են հողն իրար մեջ և սկսել մշակել,
Եվ նավերի առագաստով ծածկել ծովեր ընդարձակ,

Եվ դաշնակից ժողովուրդներն օգնում էին միշտ իրար
Պոետները արարքներն են փառաբանել երգերով,
Իսկ տառերը գտել էին դրանից ոչ շատ առաջ
Ահա ինչու հնուց ոչինչ մեզ չի հասել, բացի այն
Հետքերից որ բացատրում եմ պատճառներով խելացի
Ուստի նավով ճամփա գնալ, և արտերը մշակել,
Եվ կառուցել հոյակապ տուն, և զենք կոփել անհելի
Եվ իմանալ օրենքները, շինել հարմար ճանապարհ,
Ե՛վ պատրաստել շքեղ գործվածք, այլ արվեստներ այսպիսի
Պոեզիա և նկարչություն և արձաններ քանդակել
Սովորեցրել է կարիքը, մարդու խելքը հարցախույզ
Առաջընթաց շարժումով է բարելավել օրեցօր։
Այդպես՝ գյուտեր հետզհետե ժամանակն է մեզ բերում
Մարդու խելքն էլ փայլ է տալիս այդ ամենին շարունակ
Այդպես բացվում են արվեստի ճյուղերը և ընթանում
Արդեն դեպի կատարյալը՝ մեկը մյուսի հետևից

# ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Հռչակավոր ու անվանի Աթենք քաղաքն[1] առաջին
Անգամ մարդկանց խղճուկ ցեղին հացահատիկ պարգևեց,
Նա է կյանքը վերաստեղծել, նա է տվել օրենքներ,
Եվ քաղցրությամբ սփոփել է դառնությունը մեր կյանքի
Իր ծնել է այնպիսի մեծ սրտով օժտված մի մարդու[2],
Որն ամեն ինչ բացատրել է ճշմարտախոս բերանով
Աստվածային գյուտի փառքը նրա մահից հետո դեռ
Տարածվում է և բարձրանում մինչև կապույտ երկինքը։
Երբ նա տեսավ, թե ինչ է պետք անցողական մեր կյանքին,
Որ այն լինի ապահովված, այն տրված է լիովին,
Եվ պաշտպանված վտանգներից, կարելի է որքան այդ,
Հարստությամբ և հարգանքով, իրենց բարի անունով,
Բարեծնունդ զավակներով, այնուհետև, երբ տեսավ՝
Մարդիկ պակաս չեն տառապում իրենց ծանր վշտերից
Եվ անդադար երկյուղով է հոգին ճնշված ակամա
Կասկածներ են կրծում նրան, ծանր վշտեր են տանջում,
Հասկացավ, որ առաջ գալիս է չարիքն այն անոթից,
Որն, արատներ ունենալով, ապականում է, ինչ որ
Լցնեն նրա մեջ, թեև դա բան լինի և թանկագին,
Այն պատճառով, որ ճեղքված է, դուրս է հոսում ամեն ինչ
Ուստի երբեք լցված լինել ծայրից ծայր չի կարող, կամ
Այն պատճառով, որ կեղտոտ է, վարակում է իր թույնով
Այն ամենը ինչ որ միայն լցրած լինեն նրա մեջ։

Նա՛ մարդկային սիրտը մաքրեց իր ճշմարիտ խոսքերով,
Նա՛ սահմաններ դրեց մարդկանց կրքերին ու երկյուղին,
Նա՛ բացատրեց, թե ինչումն է բարիքը մեր բարձրագույն,
Որին հասնել աշխատում ենք մեր կյանքի մեջ ամեն կերպ
Նա՛ ցույց տվեց ամենակարճ ուղին, որով կարող ենք
Այդ ձեռք բերել. Նա՛ է մարդկանց սովորեցրել, թե որքան
Չարիքներ կան դեռ սփռված մարդկանց բոլոր գործերում։
Ինչպես են մեզ նրանք տարբեր եղանակով ջախջախում,
Կամ, ըստ անխախտ օրենքների, բնության մեջ անփոփոխ,
Բոլորովին պատահաբար անսպասելի և հանկարծ։
Նա՛ ցույց տվեց ելքը, որով մենք կարող ենք խուսափել,
Ապացուցեց մեզ նաև, որ հաճախ ցեղը մարդկային
Բոլորովին իզուր է իր հոգում հուզվում վշտերից։

Ինչպես մթում մանուկներն են ամեն ինչից վախենում,
Այդպես էլ մենք ցերեկով ենք սարսափում այն բաներից,
Որոնցից մեզ հարկավոր է վախենալ ո՛չ ավելի,
Քան նրանից, որից իզուր մանուկներն են վախենում։

Ուստի վանել այդ երկյուղը և խավարը մեր հոգուց
Կարող են ո՛չ թե ցերեկվա լույսն ու շողերն արևի,
Այլ բնությունն ինքն իր ներքին կառուցվածքով ու տեսքով։
Ուստի պիտի շարունակենք ավելի մեծ եռանդով։

Ասել եմ, որ մահկանացու կառուցվածք է աշխարհը,
Որ երկնքի ողջ կամարը ծնվել է մի ժամանակ,
Այն ամենը, ինչ որ ծնվել կամ ծնվելու է հետո
Խուսափել չի կարող մահից, կքայքայվի անպայման։
Այժմ լսիր, թե ինչ է ինձ դեռ մնում քեզ ասելու
Որովհետև հրավիրում է հաղթանակի հույսը ինձ
Բարձրանալու փառքի փայլուն կառքը ամեն խոչընդոտ,
Որ իմ վազքին է խանգարում, խրախուսում է ավելի։

Երևույթներն այն, որ մենք ենք տեսնում կապույտ ել ՛նքում
Եվ աշխարհում, համակում են մարդու հոգին երկյուղով,
Նվաստացնում նրա ոգին աստվածների սարսափով,
Եվ ստիպում մինչև գետին ստրկորեն խոնարհվել,
Որովհետև, չիմանալով պատճառները իսկական,
Ստիպված են աստվածների իշխանությանն ենթարկել
Ամենայն ինչ և նրանց տալ գահն ու փառքը աշխարհի,
Կամ նրանք միշտ վերագրում են ինչ-որ ուժի գերբնական
Այն ամենը, որի պատճառն անկարող են հասկանալ։
Նույնիսկ նրանք, որ պնդում են, թե աստվածներն ապրում են

Անորոշության մեջ կատարյալ, երբ փնտրում են բնության
Որևէ մի երևույթի պատճառը, կամ մանավանդ՝
Երբ աչքները բարձրացնում են դեպի կապույտ երկինքը,
Եթերային շրջանները, դարձյալ ընկնում են իրենց
Նախապաշարմունքների մեջ. դժբախտները կարծում են,
Թե խիստ տերեր կան երկնքում, կարծո՛ւմ են, բայց չգիտեն,
Թե ինչ կարող է գոյություն ունենալ, ինչ՝ չի կարող,
Ամեն բանին ինչպիսի մի ուժ է տրված վերջնական,
Եվ, վերջապես, թե ինչպիսի սահման նշված է նրան,
Այդ պատճառով մոլորվում են ավելի ու ավելի։
Թե քո հոգուց դու չվանես այն մտքերը, որ, անշուշտ,
Արժանի չեն աստվածներին, վայել լինել չեն կարող
Խաղաղության այնքան անհույզ, որ նրանք են վայելում,
Աստվածները, որոնց հանգիստն ես դու խախտում այդպիսով,
Երևալու են անդադար, և ոչ թե այն պատճառով,
Որ էակներն այդ բարձրագույն իրենց կարող են զգալ
Անարգված և բարկանալով, կցանկանան պատժել քեզ,
Այլ կիմանաս, որ դու նրանց, խաղաղ կյանքից զրկելով,
Կստիպես որ հուզեն նրանց քեն ու ոխի ալիքներ
Դու աներկյուղ չես մտնելու աստվածների տաճարը
Տեսիլները, բխած նրանց մարմիններից սրբազան,
Քեզ ցույց կտան աստվածային պատկերները, որպեսզի
Խախտեն սրտիդ խաղաղությունն անդադար ու շարունակ,
Ուստի պետք է հասկանաս, թե քեզ ինչ կյանք է սպասում։
Որպեսզի դու կարողանաս նման բախտից խուսափել,
Թեև ես քեզ ճշմարտությունն արդեն վաղուց եմ ասել,
Սակայն դեռ շատ է մնում ինձ նույնքան քաղցր տաղերով
Երևույթներ շարադրել նույն կարգի մասին երկնային,
Պատճառները մրրիկների և այն պայծառ կայծակի,
Որ նրանք են առաջ բերում, որպեսզի դու, վախեցած,
Չբաժանես ջինջ երկինքը նույնպես բազում մասերի,
Չհետևես, թե որ մասում է կայծակը փայլելու[3],
Թե որտեղից է սլանում և որտեղ է պտտվում,
Թափանցում է ինչպես արդյոք հաստ պատերի միջով նա,
Եվ այնտեղից դուրս է գալիս, ավերելով ամեն ինչ։
Իսկ մարդիկ չեն կարողանում պատճառները հասկանալ,
Կարծում են, որ աստվածների կամքով է այդ կատարվում։
Իսկ այժմ, երբ ցանկանում եմ ես իմ վազքը ավարտել
Օգնիր դու ինձ, Կալիոպե ո՜, դու մուսա՛ խորամանկ[4],

Ո՜ դո՛ւ, մարդկանց մեծ սփոփանք, աստվածների բերկրություն,
Որ պսակով փայլուն փառքի իմ ճակատը զարդարեմ։
Որոտներից դղրդում է երկինքը այն պատճառով,
Որ թռչելով տարածությամբ, բարձունքներում եթերի
Քամիների անզուսպ թափից ընդհարվում են ամպերը
Չէ՞ որ երբեք ձայն չի լսվում անամպ մասից երկնքի,
Իսկ այնտեղից, որտեղ թանձր մութ ամպեր են կուտակվել,
Որոտների դղրդյունը բարձր է թվում ավելի։
Ամպերը չեն կարող լինել այնպիսի հոծ զանգվածից
Ինչպես, ասենք, գերանները կամ քարերը, ոչ մի կերպ
Եվ կամ այնպես նոսր լինել, ինչպես ծուխը կամ մեգը
Իրոք, քանի որ առաջին դեպքում պիտի ընկնեին,
Ինչպես ընկնում են քարերը՝ ծանրությունից սեփական.
Երկրորդ դեպքում նրանք պիտի խիտ լինեին՝ ծխի չափ,
Ո՛չ ձյուն կարող էին պահել, ոչ էլ կարկուտ, իսկապես
Հաճախ թնդում է երկնային տարածությամբ մի աղմուկ,
Որ նմանվում է աղմուկին այն ընդարձակ ծածկույթի
Որ ծածանվում է սյուների երկայնությամբ թատրոնում
Կամ էվրոսի[5] խելառ ձեռքով պատառոտված անխնա
Կարծես թղթի մի կտոր է ճարճատում ողջ երկնքում
Այդպիսի ձայն դու կարող ես լսել և այն ժամանակ
Երբ քամին է վրա տալիս թափահարում օդի մեջ
Կախված հագուստ կամ թղթերի մի քանի մեծ կտորներ։
Հաճախ այնպես է լինում, որ իրար ճակատ առ ճակատ
Մութ ամպերը չեն հարվածում, այլ սեղմվում են կողքերով
Իրենց ամբողջ երկայնությամբ վարկյանում իրար հակադիր
Շարժումներով, այն ժամանակ մենք լսում ենք սուր ձայներ,
Որ տևում են այնքան, քանի մութ ամպերը անցնում են։
Պատահում է, որ որոտը դղրդում է այնպես, որ
Տատանվում է ողջ երկիրը և երերում է ուժգին
Կարծես հանկարծ փուլ են եկել տիեզերքի պատերը
Թռչում են ու բեկորները ցրում բոլոր կողմերում
Այդ լինում է այն ժամանակ, երբ մրրիկը կատաղի
Անզուսպ թափով արդեն մտած ամպերի մեջ ու փակված,
Խելացնոր մի արագությամբ, կրկնապատկված ջանքերով
Թանձրացնում է մութ ամպերը և կողքերը խտացնում,
Իսկ մեջտեղում նրանց բացում լայնատարած մի խոռոչ,
Հետո երբ մի ելք է բացում, կատաղությամբ սոսկալի
Դուրս է գալիս մութ ամպերից ճարճատյունով ահավոր

Զարմանալու ոչինչ չկա. երբ օդով լի հասարակ
Մի փամփուշտ ես պատռում հանկարծ, նույնպիսի ձայն է լսվում։

Ուրիշ կերպ էլ կարելի է բացատրել այն դղիրդը
Որ ամպերի խորքում ուժգին առաջացնում է քամին
Մենք հաճախ ենք տեսնում ամպեր, որոնք ունեն մակերես
Ոչ հավասար և անջատված բոլորովին իրարից,
Ճյուղավորված կարծես լինեն, այդ պատճառով էլ նրանք
Ուստի պետք է առաջ բերեն ճիշտ նույնպիսի մի աղմուկ,
Ինչպես և խիտ անտառների տերևներն ու ոստերը,
Երբ նրանց խիստ թափահարում է հյուսիսի խենթ քամին։

Բայց կարող է պատահել, որ անզուսպ թափով ուղղակի
Հարձակվում է քամին հանկարծ, պատառոտում ամպերը։
Թե ինչպիսի ուժ պետք է նա բարձունքներում ունենա
Դա մեզ ցույց է տալիս փորձը, որովհետև ներքևում,
Երկրում, որտեղ նրա թափը թույլ է լինում ավելի,
Դյուրին կերպով արմատահան է անում նա մեծ ծառեր։

Բայց ամպերում պատահում են ալիքներ մի տեսակ, որ
Փշրվելով, խուլ ձայներ են առաջ բերում այնպիսի,
Ինչպես գետերն ու ծովերը, որոնց քամին է ծեծում։

Պատահում է նաև այնպես, որ, անցնելով ամպից ամպ
Կայծակների կրակները մտնում են դեռ ջրով լի
Մի ամպի մեջ, այնտեղ հանգչում հանկարծ մի մեծ աղմուկով,
Այնպիսի մի ֆշշոցով, որ արձակում է շիկացած
Երկաթը, որ դուրս բերելով հրաբորբոք հնոցից
Անմիջապես նրան սառը ջրի մեջ են շպրտում։
Ընդհակառակը՝ երբ կայծակը ընկնում է չոր ամպի մեջ,
Ամպը հանկարծ բոցավառվում է ահավոր աղմուկով
Կրակն այնպես է տարածվում՝ երբ բորբոքում է նրան
Կատաղի խենթ քամու թափը դափնիածածկ լեռներում
Եվ համարյա վայրկենապես բոցավառում է նրան
Չէ՞ որ ոչ մի բան չի վառվում այնպիսի մի աղմուկով,
Ինչպես Ֆեբի դելփիական դափնիները հոյակապ։

Սառույցները փշրվելիս և կարկուտը թափվելիս
Հաճախ հեռվից դղրդացնում են սև ամպեր վերջապես,
Որոնց քամին է բարձրացրել, կուտակելով լեռան պես
Դրանք հանկարծ փշրվում են և կարկուտի հետ թափվում։

Կայծակներ են գոյանում, երբ, հարվածվելով, ամպերը
Հրի սերմեր են արձակում այդ ժամանակ բազմաթիվ,

Ինչպես քարը, հարվածվելով այլ քարի կամ երկաթի,
Շողշողում լույս է արձակում, բազում կայծեր է ցրում

Սակայն ձայնը որոտի մենք չենք լսում այն ժամանակ,
Երբ տեսնում ենք կայծակների տեսիլները, բայց անշուշտ
Հասնում է մեր ականջներին, գալիս է շատ դանդաղկոտ,
Ավելի, քան նրանք, որոնք հասնում են մեր աչքերին։
Մի փորձ պետք է համոզի քեզ. Երբ հեռվում մի փայտահատ
Կացնով կտրում է ճյուղերը, դու կտեսնես նախ նրա
Հարվածները, սակայն ձայնը լսելու ես դու հետո
Այդպես և մենք նախ տեսնում ենք կայծակը, ապա լսում որոտը,
Թեև նրանք երկուսն էլ միշտ ծնվում են նույն վայրկյանին։

Կարելի է նաև այլ կերպ բացատրել այդ, թե ինչու
Ամպը ներկում է երկիրը ամպրոպների ժամանակ
Իր փայլերով, որ դողում են ներխուժելով ամպի մեջ,
Եվ, անդադար պտտվելով, քամին առաջ է բերում
Այդ ամպի մեջ մի խոռոչ, բայց խտացնում է կողքերը,
Ինչպես արդեն ասել եմ քեզ, բոցավառվում է հետո,
Իր արագ շարժումներից, քանի որ մենք տեսնում ենք,
Որ իրերը արագաշարժ բոցավառվում են օդում,
Ինչպես վառվում է իր երկար ճամփին գնդակն արճճե[6]։
Եվ երբ քամին բոցավառում, ճեղքում է ամպը այդ,
Նա ցրում է միանգամից կրակները իր, որոնք
Սլանում են ամպից թափով՝ նրանց փայլից ստիպված
Մենք փակում ենք մեր աչքերը. ձայնը լսում ենք հետո,
Չէ՞ որ նրան շատ ավելի ժամանակ է հարկավոր,
Որ հասնի մեր ականջներին, քան լույսը՝ մեր աչքերին։
Եվ այդպես է պատահում, երբ հոծ ամպեր են կուտակվել
Իրար վրա և քշում է նրանց քամին սանձարձակ։

Չխաբվես դու այն բանով, որ մենք տեսնում ենք ներքևից,
Թե ավելի լայն է լինում ամպը, քան խոր ու բարձր
Այն ամպերին, որ օդային լեռների են նմանվում,
Որոնց ուժգին հալածում է քամին տարբեր ուղղությամբ
Իսկ երբ քամին խաղաղվել է, նայիր, այնժամ կտեսնես
Կուտակվում են լեռների շուրջն իրար վրա ամպերը
Եվ սեղմվում են նրանք այնտեղ՝ բարձունքներում երկնային
Եվ կարող ես դու հասկանալ, թե ինչ զանգված է հզոր
Քարանձավներ այնտեղ կարծես կախված լինեն վերևից։
Մրրիկների ժամանակ այդ ամպերի մեջ կուտակված

Քամին կարծես կատաղում է, որպես գերված մի գազան,
Որն անհելի մռնչում է իր երկաթյա վանդակում,
Դեսուդեն է ընկնում քամին, վազվզում է շարունակ,
Որևէ ելք որոնելով, անջատում է ամպերից
Կրակների անթիվ սերմեր և հավաքում է նրանց,
Պտտեցնում է նրանց մեծ օջախների մեջ վառվող,
Եվ մինչև այն ժամանակ, երբ ճեղքում է մութ ամպերը,
Դուրս են պոռթկում կայծակները, կարմիր բոցով վառվելով։

Կայծակները, որ սրընթաց, սլանում են երկնքով,
Անհրաժեշտ է, որ գոյությամբ իրենց լինեն պարտական
Այն ամպերին, որոնք ունեն հրի սերմեր բազմաթիվ
Սակայն նրանք ջուր էլ շատ են պարունակում իրենց մեջ
Ամպերի գույնն այդ ժամանակ բոցավառ է ու փայլուն,
Որովհետև արեգակից շատ լույս պիտի փոխ առնեն,
Որ կարմրվել կարողանան, բոցավառվեն ու փայլեն,
Իսկ հետո, երբ հավաքում է քամին սերմերն այդ ի մի,
Սեղմում նրանց ուժգին կերպով, կուտակելով ամպի մեջ
Կայծակների փայլեր է նա առաջ բերում հրավառ։

Կայծակներ են առաջ գալիս և նոսրացած ամպերից,
Երբ սկսում է մի թեթև քամի քշել ու տանել,
Բաժանում է մասերի և ցրում սերմերն, անպայման
Պետք է կայծակ առաջ բերեն, սակայն առանց աղմուկի
Այդ կայծակը չի ավերում, մեզ սարսափ չի պատճառում։

Բայց կայծակներն այդ ինչպիսի՞ արդյոք ունեն բնություն.
Հետևանքն է, իհարկե, մեզ բացահայտում ամեն ինչ։
Այն հետքերը, որ դրոշմում են նրանք վառված իրերին
Եվ այն հեղձուկ ծծմբային հոտը՝ նրանց արձակած
Կրակների նշաններ են, ո՛չ թե ջրի կամ քամու։
Այնուհետև, կայծակները տան կտուրն էլ են վառում մերթ,
Հարվածելով, ամբողջ տունը դարձնում են հուր ու մոխիր,
Քանզի նրանք ամենանուրբ կրակներն են աշխարհում,
Որ կազմել է բնությունը մանր ու շարժուն տարրերից
Որոնց երկրում ընդդիմանալ ընդունակ չէ ոչ մի բան։
Կայծակն անցնում է սրընթաց տների հաստ պատերով
Ինչպես ձայնն ու աղաղակը անցնում է նա ժայռերի,
Մետաղների միջով հալում նույնիսկ պղինձն ու ոսկին
Ցրում է նա գինին, թեև անոթը նա չի կոտրում,
Որովհետև լայնացնելով նոսրացնելով անոթի

Պատերը իր մեծ ջերմությամբ, թափանցում է նրա մեջ
Եվ հեշտությամբ գինու տարրերն այնտեղ իսպառ քայքայում:
Իսկ արևը, որի կրակն այնքան տաք չէ, չի կարող
Առաջ բերել նման մի բան, նույնիսկ մի դար շողալով,
Այդքան հզոր է արևից և շարժուն է կայծակը:

Իսկ ինչպե՞ս են առաջ գալիս և ինչպես են ձեռք բերում
Այնպիսի ուժ որ կարող են մի հարվածով ջախջախել
Աշտարակներ, քանդել տներ, պոկել սյուներ, գերաններ,
Ցնցել մարդկանց ձեռքով կերտված հուշարձաններ բազմաթիվ,
Ոչնչացնել ողջ նախիրներ, կյանքը խլել մարդկանցից
Եվ բազմաթիվ ուրիշ բաներ. այդ ինչպե՞ս է պատահում,
Ահավասիկ բացատրում եմ, չեմ չարչարի քեզ երկար:

Կայծակները գոյանում են ամպերի մեջ թանձր, որ
Կուտակվում են իրար վրա, չեն հարվածում երբեք
Զինջ երկնքից կամ երբ ծածկված է նա թեթև ամպերով:
Չենք կասկածել մենք այդ մասին, քանզի փորձն է ցույց տալիս
Որ երկինքը ամպամած է ամպրոպների ժամանակ
Այնպես կարծես Աքերոնից դուրս է եկել մութը ողջ
Տարածվելով, լցրել անհուն քարայրները երկնքի
Սարսափելի մութ գիշեր է մեզ ծածկում իր ծածկույթով
Կարծես արդեն մահվան սարսափ կախված լինի երկնքից,
Սկսում է անձրև տեղալ, կայծակներ են փայլփլում:

Հաճախ հեռվից տեսար, հանկարծ մոտենում է մի սև ամպ,
Կարծես կպրե մի գետ լինի, որ իջնում է երկնքից,
Տարածվում է ծովի վրա, հեռվում խավար տարածում,
Իր հետևից քարշ է տալիս մրրիկներ ու կայծակներ
Որոնց նաև զուգակցում են կրակներ ու դղրդոց,
Եվ այնքան է ահռելի, որ մարդիկ, նույնիսկ ցամաքում,
Սարսափելով տանիքի տակ պիտի փնտրեն ապաստան:
Այդքան մեծ է խորությունը ամպրոպային ամպերի,
Որ մեր գլխի վերևում են հանկարծակի գոյանում
Եթե լույսը արևգակի ամպերի մեծ պատնեշով
Չքողարկվեր, այն ժամանակ ամբողջովին երկիրը
Իհարկե, չէր խորասուզվի գիշերվա մեջ այդքան մութ,
Եվ անձրևներ չէին թափվի առատությամբ այնպիսի,
Որից ուռում են գետերը ողողելով դաշտ ու արտ,
Թե ամպերը մինչև եթեր չլինեին կուտակված:
Կրակներով ու քամիներով լի է ամբողջ աշխարհը,
Այդ պատճառով ամենուրեք որոտ կայծակ է լինում,

Որովհետև ցույց եմ տվել քեզ արդեն, որ ամպերի
Խոռոչները լի են լինում կրակների տարրերով,
Քանակությունն էլ նրանց միշտ ավելանում է անշուշտ,
Շողերից ու ջերմությունից լուսապայծառ արևի.
Այդպես եթե մի որևէ տեղ ամպեր են կուտակվում,
Քամին, նրանց հավաքելով, սկսում է սեղմել սրինդ
Եվ ջերմության անթիվ սերմեր արտահանում նրանցից,
Ինքն էլ նրանց հետ է խառնվում, պտտահողմն այնժամ է
Այդ շիկացած օջախի մեջ կայծակ սրել սկսում.
Ուստի երկու պատճառով է բոցավառվում քամին միշտ
Կամ սեփական շարժումներից, կամ դիպչելով կրակի։
Եվ երբ քամին տաքանում է շարժումներից սեփական
Կամ տաքություն ստանում է որևէ մի կրակից,
Այն ժամանակ կայծակը, որ արդեն հասուն է դարձել,
Ճեղքում է ամպն ամենուրեք, կուրացուցիչ լույս սփռում
Որոտալով այնպես, կարծես ողջ կամարը երկնքի
Փշրվել է և ուր որ է պետք է թափվի մեր գլխին
Ողջ երկիրը երերում է դողերոցքից ընդհանուր,
Սարսափելի մռնչյուն է անցնում ամբողջ երկնքով,
Որովհետև ամպերն արդեն շարժվում են, այն ժամանակ
Դղրդում է միանգամից այդ ընդհանուր ցնցումից
Սկսում է անձրև տեղալ առատությամբ այնպիսի,
Որ կարծես թե ողջ երկինքը ջուր է դարձել ու թափվում,
Հեղեղում նոր ջրհեղեղով դարձյալ ամբողջ երկիրը,
Եվ այդպիսի սարսափ ամպերն են պատճառում այն, որոնք
Փշրվում են, ոռնող քամին, կայծակները բոցավառ
Սակայն կարող է պատահել, որ դրսից մի կատաղի
Քամի գալիս, հարձակվում է ամպի վրա, որի մեջ
Արդեն պատրաստ կայծակներ կան, որոնք, հանկարծ անջատված
Անմիջապես շպրտվում են որպես հուրեր բոցավառ,
Որ հարազատ մեր լեզվով մենք կայծակներ ենք անվանում։
Այդ նույն բանը պատահում է հաջորդաբար և ուրիշ
Ամպերին, ըստ այն ուղղության, որով փչում է քամին
Սակայն կարող է պատահել՝ քամին որ չէր բռնկում
Բոցավառվում է արդեն, երբ տարածությամբ անցնելիս
Ճանապարհին ազատվում է իր շատ կոպիտ տարրերից,
Որոնք օդով անցնում էին դժվարությամբ շարունակ,
Եվ նա, օդի էությունից անջատելով մասնիկներ,
Որ ավելի նուրբ են նրանց միացնում իր տարրերին

Այդպես հետո բոցավառվել ընդունակ է, անկասկած
Սակայն այլ կերպ չի տաքանում այն արճճե գունդը, որ
Ամենաառատ իր տարրերը ճանապարհին թողնելով
Նույն ժամանակ ընդունում է կրակների սերմերը

Պատահում է, որ հարվածից բոցավառվում է քամին,
Թեև զուրկ է բոլորովին այդ ժամանակ կրակից,
Եթե միայն այդ հարվածը այնքան ուժգին է եղել,
Որ ջերմության մասնիկները անջատվել են այդ քամուց
Եվ այն մարմնից, որին քամին հարվածել է խենթորեն։
Երբ երկաթով խփում ենք մենք, քարից կայծեր են թռչում,
Թեև շատ սառն է երկաթը, բայց, ընդհարված քարի հետ,
Այնժամ պետք է առաջացնի փայլուն տարրեր բոցերի։
Եվ այդպես էլ քամին պիտի մարմինները վառի այն,
Որոնց վրա հարձակվում է այն ժամանակ միայն, երբ
Մարմիններն այդ ընդունակ են վառվել իրենց բնությամբ։
Բայց կարծել չի կարելի, թե բարձրությունից այդպիսի
Եվ այդպիսի արագությամբ սլանալով սրընթաց,
Քամին պիտի մնա սառը, եթե միայն իր ճամփին
Դեռևս չի բոցավառվել, սակայն պիտի հասնի նա
Արդեն շատ տաք ու համակված մասնիկներով տաքության։
Արագությունը կայծակի, շանթի թափը ահարկու,
Կատաղությունն անկման, անշուշտ, առաջանում են նրա
Բնական ու արագ վազքից, բայց մտնելով ամպի մեջ
Պետք է աճեն, անտարակույս, այն ջանքերից, որ նրանք
Թափում են՝ դուրս գալու։ Սակայն երբ ընդունակ չէ ամպը
Դիմանալու աճին ուժի, այնժամ հուրը ավերիչ
Մեքենայի պես ռազմական, որ քարեր է շպրտում,
Պիտի դուրս գա և սլանա արագությամբ խելացնոր։
Ավելացրու, որ կայծակը բաղկացած է տարրերից,
Որոնք շատ նուրբ ու մանր են, և որ հեշտ չէ նրանց դեմ
Խոչընդոտներ բարձրացնելը. կայծակը այդ պատճառով,
Սողոսկելով, թափանցում է, անցնում անցքով շատ փոքրիկ։
Եվ աշխարհում չկա գոնե մի մարմին, որ կարող է
Կանգնեցնել կամ դանդաղեցնել նրա վազքը սրընթաց։
Եվ, բացի այդ, որովհետև իր ծանրության բնությամբ
Ամեն մարմին պիտի ձգտի դեպի ներքև, բայց որքան
Ավելի է դրդվում դրսից, այնքան պիտի ավելի
Արագությունն ավելանա, կրկնապատիկ դառնա այն,
Այդ պատճառով և կայծակը անզսպելի մի թափով

*Փշրում է այն խոչընդոտը, որին ինքն է հանդիպել,*
*Շարունակում է իր ճամփան և երբեք կանգ չի առնում։*
*Բայց չափազանց երկարատև շարժումները քամու միշտ*
*Արագությունն ավելացնում են շարունակ, անկասկած,*
*Ուժեղացնում հարվածները առաջվանից ավելի,*
*Ստիպում են, որ կայծակի սերմերն արագ սլանան*
*Դեպի առաջ, կրկնում եմ ես, և միայն մի ուղղությամբ*
*Խառնում իրար, պատեցնում, քշում նրանց սրընթաց*
*Կայծակները ձեռք են բերում օդից ինչ-որ մարմիններ*
*Որոնցից են հարվածները ուժեղանում շարունակ։*
*Երբ անցնում են կայծակները բազմատեսակ իրերով,*
*Չեն վնասում, որովհետև անցք են գտնում նրանց մեջ*
*Շատ իրեր էլ վնասվում են, եթե իրենց տարրերով*
*Ընդհարվում են տարրերի հետ այն իրերի, որոնց մեջ*
*Մարմնիկները կապակցված են և հյուսվածքը շատ է պինդ։*
*Ոսկին եռում է կայծակից, պինդ պղինձը՝ հալվում է,*
*Չէ՞ որ կազմված է կայծակը միշտ այնպիսի տարրերից,*
*Որոնք մանր ու նուրբ են շատ, հեշտությամբ են թափանցում*
*Եվ թուլացնում են կապերը և հանգույցներն արձակում։*
*Աստղազարդ ու ջինջ երկինքը և երկիրը շատ հաճախ*
*Դողդողում են աշնան, գարնան կայծակներից սրընթաց*
*Եվ մանավանդ այն ժամանակ երբ ծաղիկներ են լինում։*
*Ձմեռն այնքան հուրեր չունի, ամառն՝ ուժգին քամիներ*
*Բավականին հոծ չեն լինում այդ ժամանակ ամպերը,*
*Գարնան, ամռան, աշնան, ձմռան միջև ընկած ժամանակ*
*Առաջանում են կայծակներ՝ եղանակից միշտ կախված*
*Այդ ժամանակ տարեդարձը[7] շոգը խառնում է ցրտին։*
*Անհրաժեշտ են այդ երկուսը, որ կայծակներ գոյանան*
*Ներհակություն իրերում միշտ գոյանում է նրանցից,*
*Մրրիկների կայծակները առաջացնում են նրանք*
*Աղմկալի քամիներից օդն է եռում կատաղի։*
*Եվ կազմվում է գարունն ամռան տաքությունից առաջին*
*Եվ խիստ ձմռան վերջին ցրտից այդպես ցուրտն ու շոգը, որ*
*Հակադիր են այնքան իրար, պայքարում են իրար հետ*
*Երբ խառնվում են տաքության վերջն ու խիստ ցրտի սկիզբը*
*Եղանակների պտույտում, ասում ենք այդ աշուն է։*
*Եվ իրար հետ մարտնչում են ամառը և ձմեռը,*
*Տարեդարձին եղանակներն ահա այդպես են կռվում*
*Ինչո՞ւ պիտի զարմանանք, որ կազմվում են այդ ժամանակ*

Կայծակները մրրիկներից խիստ հուզվում է երկինքը,
Բանի որ այդ ժամանակ են պատերազմում մի կողմից
Հուրերը և մյուս կողմից էլ՝ քամիներն ու ամպերը
Եվ այդպիսի դատողությամբ կարելի է հասկանալ
Կայծակների բնությունը, հետևանքներն, անկասկած,
Եվ ոչ թե զուր քրքրելով տիռենական տաղերը [8]
Աստվածների ցուցումները որոնելով նրանց մեջ
Ո՛չ թե նայել, թե կայծակը առաջացավ որ կողմում,
Եվ սլացավ հետո դեպի որ շրջանը երկնքի,
Եվ ինչպես է ներթափանցել հաստ պատերի մեջ արդյոք,
Եվ այնտեղից ինչպես կրկին դուրս է եկել հաղթական,
Եվ ինչպիսի դժբախտություն է գուշակում դա մարդկանց։

Եթե միայն Յուպիտերն ու աստվածները մնացած
Դղրդյուն են ցնցում ահեղ կամարը մեծ երկնքի,
Եթե միայն, ըստ ցանկության կայծակներ են արձակում,
Իսկ ինչո՞ւ չեն շանթահարում նրանք իրար հետևից
Այն չարագործ մարդկանց, որոնք զազիր ոճիր են գործում,
Որոնց մահը սարսափելի, անշուշտ, պիտի ծառայեր
Որպես ահեղ խրատ ամբողջ ցեղի համար մարդկային։
Եվ ինչո՞ւ են շանթահարում հաճախ դժբախտ մարդկանց այն,
Որ անմեղ են, որոնց նրանք պախարակել չեն կարող,
Բայց բոցով են շրջապատում և այրում մի վայրկյանում
Հանկարծակի փոթորկալի հուրերի մեջ երկնային։
Եվ ինչո՞ւ են իզուր ջանքեր թափում վայրում ամայի
Նշան խփե՞լ են սովորում, թե՞ ձեռքներն են վարժեցնում
Եվ ինչո՞ւ է Յուպիտերը հանդուրժում, որ բթանան
Իր նետերը, ի՞նչ պատճառով արդյոք դրանք չի պահում
Իր թշնամյաց համար, ինչո՞ւ չի արձակում կայծակներ,
Եվ ինչո՞ւ չի դղրդացնում, երբ երկինքը անամպ է
Ամպերի՞ է սպասում, որ, նրանց հեծած, մոտենա
Մեր աշխարհին և սկսի այն ժամանակ հարվածել։
Ծովին ինչո՞ւ է հարվածում և ինչո՞վ են մեղավոր
Ալիքները, որ խփում են հարթավայրին ծովային։

Իսկ եթե նա ցանկանում է, որ խուսափենք իր շանթից
Ու հարվածը անմիջապես ինչո՞ւ մեզ ցույց չի տալիս
Իսկ եթե մեզ մտադիր է հանկարծակի հարվածել,
Ինչո՞ւ է իր որոտով մեզ ցույց տալիս, թե որ կողմից
Պետք է շանթից մենք խուսափենք։ Ինչո՞ւ է մութ տարածում

Եվ ինչո՞ւ է հողը դողում, ինչո՞ւ է նա դղրդում,
Որով նա է զգուշացնում իր հարվածից ահռելի։
Եվ ո՞վ կարող է հավատալ, որ նա այդ նույն ժամանակ
Վայրերում է լինում անթիվ, արձակելով կայծակներ.
Բայց այդ ժխտել չի կարելի, շատ հաճախ է կրկնվում.
Անհրաժեշտ է այդ, քանի որ անձրևը նույն ժամանակ
Տեղում է այն վայրերում, որ շատ են հեռու իրարից,
Եվ բազմաթիվ այլ վայրերում կայծակներ են փայլփլում։
Եվ, վերջապես, ինչո՞ւ շանթը տապալում է սրբազան
Տաճարները աստվածների, այդ շենքերը հոյակապ,
Որ կառուցել է մարդկային ցեղը նրանց ի պատիվ,
Կամ ինչո՞ւ են աստվածների արձանները ջախջախում
Որ այնքան լավ են քանդակված և այնպիսի անվայել
Հարվածով են ոչնչացնում պաշտամունքը արժանի
Իրենց, ինչո՞ւ են հարվածում միշտ բարձրադիր վայրերին,
Եվ ինչո՞ւ են կայծակները հետքեր թողնում առավել
Լեռան բարձր գագաթներին, քան որևէ այլ վայրում։
Շարադրածից դյուրին կերպով կարող ես դու հասկանալ,
Թե ինչպես է պտուտահողմը, որ հույներն են պրեստերա
Կոչում, գալիս երկնքից և ծովի վրա վայր ընկնում
Հսկայական մի սյան նման, որի շուրջը եռում են
Ալիքները, որոնց քամին բարձրացրել է սրընթաց
Նավերը, որ այդպիսի խենթ պտույտի մեջ են ընկնում,
Այդ ժամանակ ենթարկվում են ամենամեծ վտանգի։
Այդ լինում է այն ժամանակ, երբ չի կարող ներս մտած
Քամին ուժով ճեղքել ամպը, նրան քշում է ներքև,
Կարծես ուղղած երկնքից՝ մի սյուն է ընկնում ծովի մեջ,
Կարծես թե մի ձեռք է խփել, հետզհետե մի զանգված
Վերևից է գցել ներքև և կանգնեցրել է ջրին։
Ճեղքելով այդ ամպը, սակայն, քամին թափով կատաղի
Ծովի մեջ է խրվում, որտեղ ալիքներ են եռ գալիս
Բայց իջնում է պտուտահողմն ավելի ու ավելի,
Եվ վերևից դեպի ներքև քարշ տալիս ամպն անընդհատ
Եվ հազիվ է այդ զանգվածը ալիքներին հարվածել,
Երբ նետվում է նաև քամին խորքերի մեջ անհատակ,
Ալիքները բարձրացնելով սարսափելի աղմուկով։
Պատահում է նաև այնպես, որ հավաքում է քամին
Օդում ամպի սերմերը և փաթաթվում է նրանց մեջ,
Եվ ցամաքում նմանվում է պրեստերասին ծովային.

Ամպն, իջնելով դեպի գետին, չարդափիշող է լինում,
Իր կողքերից դուրս բերելով մի ահռելի փոթորիկ.
Սակայն նման երևույթներ հազվադեպ են ցամաքում.
Որովհետև խանգարում են քամուն բարձր լեռները.
Սակայն դրանք շատ հաճախ են պատահում այն ծովերում,
Որ ավելի ընդարձակ են և բաց բոլոր կողմերից։
Ամպեր այնժամ են գոյանում, երբ հավաքվում են անթիվ
Անկյունավոր այն տարրերը, որոնք ճախրում են օդում
Անդադար ու անվերջ, թեև թույլ են նրանց կապերը։
Բայց կարող են դարձյալ կազմել նրանք հյուսվածք որևէ
Այդ ամպերը, որ թեթև են, միանալով իրար հետ,
Կուտակվում են ու աճում են. Նրանց քշում է քամին
Այնքան, քանի չի բարձրացել մի սասկալի փոթորիկ։
Որքան բարձր են ավելի, որքան մոտիկ երկնքին,
Այնքան նրանց գագաթները խավարում են ավելի
Թանձր ծխի նմանվող մի մառախուղից դեղնավուն.
Եվ երբ նրանք ջինջ երկնքում սկսում են հավաքվել,
Քանի նրանց նուրբ հյուսվածքը աչքերով չի նշմարվում,
Քամին քշում ու սեղմում է նրանց լեռան գագաթին
Հետո, իրար միանալով, ամպակույտեր կազմելով,
Բարձրանում են լեռներից և եթերից մեզ երևում։
Իրոք, երբ մենք բարձրանում ենք, զգացմունքն է ասում մեզ,
Որ միշտ բաց են քամիների համար բարձր լեռները։
Այնուհետև, բնությունը բարձրացնում է ծովերից
Անձրևների շատ մարմնիկներ, ինչպես ցույց է տալիս մեզ
Թրջված շորը, որ կախված է լինում հաճախ ծովափին
Ակներև է, որ ծովերի բխումներն էլ անդադար
Շարժվում են և օժանդակում նույնպես աճին ամպերի։
Եվ վերջապես, մենք տեսնում ենք, որ գետերից ու հողից
Դուրս է գալիս մառախուղ, որ, արտաշնչման գոլորշուն
Նմանվելով, բարձրանում է և երկինքը մթացնում,
Հետո, իրար կապակցվելով, ամպեր կազմում թանձրախիտ
Նրանց ճնշում է եթերը և խտացնում ավելի,
Ապա թանձր գործվածքով է ծածկվում կապույտ երկինքը։
Սակայն կարող է պատահել, որ տարրերը, որոնցից
Կազմվում են ամպ ու փոթորիկ, գալիս են այլ աշխարհից,
Եվ հավաքվում մեր աշխարհում։ Չէ՞ որ ասել եմ արդեն,
Որ նախնական մարմնիկները քանակությամբ անթիվ են,
Տիեզերքի անդունդն՝ անվերջ, և գիտես թե տարրերը

Մատերիայի ինչպիսի մի արագությամբ են օժտված,
Որքան չնչին ժամանակ է նրանց, իրոք, հարկավոր՝
Հսկայական տարածություն մի վայրկյանում անցնելու.
Այդ պատճառով չզարմանաս, որ փոքրիկն ու մութը,
Որոնք կախված են բարձունքից վայրկենապես ծածկում են
Բարձր լեռներն ու տարածվում արդեն ամբողջ աշխարհում
Եվ ծովերի վրա, չէ՞ որ ամեն կողմից տարրերը
Իրենց համար ելք ու մուտք են գտնում նաև եթերի,
Այսպես ասած, օդանցքներով, տիեզերքում անհատակ։
Այժմ պիտի բացատրեմ քեզ, թե անձրևներն ինչպես են,
Ամպերում ջուր հավաքելով, դարձյալ թափում աշխարհում.
Բայց ամենից առաջ պետք է իմանաս, որ իրերից
Ողջ ամպերի հետ միասին բարձրանում են դեպի վեր
Նույն ժամանակ նաև ջրի անթիվ տարրեր նախնական,
Որոնք, ամպի հետ աճելով, ասենք, այնպես համարյա,
Ինչպես քրտինքն ու արյունը, այլ հեղուկներն են աճում
Մարմնի հետ մեր անդամներում, նույն ժամանակ միասին։
Ծանրաբեռնվում են ամպերը նաև ծովի ջրերով
Ինչպես գեղմն է լողում ջրի մակերեսին ճիշտ այդպես,
Քամին պիտի բշի նրանց մակերեսին ամպերի,
Մեծ գետերի խոնավությունն այդպես է վեր բարձրանում։
Ուստի ջրի այդ սերմերը, որոնք բոլոր կողմերում
Պետք է աճեն այնքան տարբեր բխումներից, երբ դարձյալ
Քամու շնչից հավաքվել են և ամպերում թանձրացել,
Նրանք կարող են վայր ընկնել միայն երկու պատճառով.
Նախ սեղմում է ուժգին քամին վերևից և հուսկ հետո՝
Կուտակված մեծ քանակությամբ իրար վրա նստելով,
Այդպես ճնշում են վերևից, դարձյալ անձրև է թափվում։
Ինչպես գիտենք, այդ ամպերից, որ նոսրացնում է քամին,
Կամ ցրվում են արեգակի տաքությունից, այդ ժամին
Սկսվում է կաթիլ-կաթիլ անձրև մաղվել վերևից
Այնպես, ինչպես բոցից հալված մեղրամոմից է կաթում։
Հորդ անձրև է թափվում այնժամ, երբ ամպերը սեփական
Ծանրությունից, քամիների շնչից սեղմվում են իրար։
Անձրևները երկարատև լինում են այն պատճառով,
Որ ամպի մեջ հավաքված են անթիվ սերմեր ջրերի,
Եվ ջրերով ծանրաբեռնված՝ բեռնաթափվում է, հետո
Կարծես արագ վազում է նա՝ ծանրությունը նետելու,
Իսկ ներքևում ամբողջովին հողը ծխում է, կարծես

Եվ մրրիկի ժամանակ, երբ ճառագայթներն արևի
Փայլփլում են անձրևաբեր ամպերի դեմ, այդ ժամին
Խավարի մեջ ներկում է ծիածանը երփներանգ։
Երևույթներն այն, որոնք միշտ գոյանում են ամպերում
Միակցվում ու աճում այնտեղ, ինչպես կարկուտն ու ձյունը,
Քամին, եղյամն ու սառույցը, որը ջուր է պնդացած
Եվ զսպում է հոսանքները երկրի բոլոր գետերի,
Պատճառը և հետևանքը գտնել ու բացատրել
Հեշտ է, եթե միայն գիտես հատկությունը տարրերի։
Այժմ պիտի բացատրեմ քեզ երկրաշարժի պատճառը։
Նախ դու պիտի իմանաս, որ լի են երկրի խորքերը,
Ինչպես նաև մակերեսը, քամիներով, լճերով,
Անձավներով, անդունդներով, քարերով ու ժայռերով
Կան բազմաթիվ ստորերկրյա գետեր նաև խորունկ, որ
Քշում, տանում, գլորում են խորասուզված մեծ ժայռեր
Չէ՞ որ հողը միանման պիտի լինի ամեն տեղ։
Եվ եթե մեր ենթադրածը ճշմարտություն է, իրոք,
Պետք է հողի մակերեսը դողդողա, երբ խորքերում
Մի քանի հատ հսկայական քարայրներ են փուլ գալիս,
Որոնք պիտի ոչնչանան ժամանակի ընթացքում
Որովհետև ամբողջ լեռներ փլվում են այդ ժամանակ
Նրանց ահեղ ցնցումները պետք է հեռու տարածվեն
Հասկանալի է սակայն, այդ. նույնիսկ թեթև սայլերը
Թեև նրանց ծանրությունը այնքան էլ մեծ չլինի,
Ցնցում են մեր տները միշտ, երբ անցնում են փողոցով
Երբ ձիերը քարշ են տալիս երկաթապատ անիվներ
Նրանց շուրջը ամենայն ինչ սկսում է երերալ։
Սակայն կարող է պատահել, որ խարխլված որևէ
Ստորերկրյա հսկայական հողակոշտ է փշրվում
Որևէ մեծ մի լճի մեջ, և երերում գետինը
Պատճառով այն շարժումների, որ ջրից են գոյանում
Ինչպես հողի մակերեսին դողդողում է անոթը
Այնքան, քանի չի դադարել ջուրը շարժվել նրա մեջ։
Այնուհետև, երբ քամին է հավաքվում մեր աշխարհի
Ստորերկրյա քարայրներում և հարձակվում է հանկարծ
Կատաղությամբ կողքի վրա, իր ուժերը միացնում,
Այդ ժամանակ հողը պիտի թեքվի դեպի այն կողմը
Որտեղ քամին կատաղորեն հռնդում է ավելի։
Որքան մոտիկ են ավելի մեր տները այդ կողմին

Այնքան սպառնում են ավելի անմիջապես փուլ գալու,
Առանձնապես այն տները, որ շատ վեր են բարձրացել,
Գերանները դուրս են եկել իրենց դիրքից ուղղաձիգ։
Եվ չե՞ն ուզում հավատալ, որ բնությունը վաղուց է
Նշել, թե երբ պիտի փուլ գա մեր աշխարհը, վերջանա
Անվերադարձ, ամբողջովին, երբ իրենք են տեսնում, որ
Այդքան հսկա ղանգվածները միշտ պատրաստ են փլվելու
Եթե հաճախ քամիները իրենց շունչը չզսպեն,
Ո՛չ մի բան չի կարողանա կայուն պահել իրերը,
Դադարեցնել նույնիսկ նրանց խենթ, կործանիչ ջանքերը։
Բայց քանի որ հաջորդաբար հանգստանում են նրանք
Եվ հավաքում ուժերն իրենց, հարձակվում ու նահանջում,
Այդ պատճառով հողը փլվել սպառնում է ավելի,
Քան փլվում է իրականում, թեքվում է և ուղղվում,
Հավասարակշռությունը առժամանակ կորցնում է,
Սպա նորից ձեռք է բերում իր սեփական ծանրությամբ
Ահա ինչու մեր տները այդպես ճոճվում են հաճախ,
Վերևում՝ շատ, մեջտեղում՝ քիչ, իսկ ներքևում՝ աննկատ։
Հողին ահեղ ցնցում կարող է պատճառել և քամին,
Երբ նա դրսից թափանցում է հանկարծ թափով ահռելի,
Հանկարծակի ներխուժելով դատարկության մեջ հողի,
Կամ երբ քամին գոյանում է ինքն էլ հողի խորքերում
Եվ կատաղում քարայրների անդունդներում անսահման,
Սլանում է, մոլեգնելով, այդպես բոլոր կողմերում
Եվ միայն այն ժամանակ է հողի միջից դուրս պրծնում,
Երբ բացում է անդունդները իր խենթ վազքով սրընթաց։
Պելոպոնեսյան Էգինան և Սիդոնը տիրական
Կլանված են եղել այդպես[9]։ Եվ որքա՞ն այլ քաղաքներ
Ավերվել են քամիների մայթքումներից ահռելի,
Եվ հողի այն ցնցումներից, որ հետևում են դրանց
Եվ որքա՞ն են փլատակվել երկրաշարժի ժամանակ,
Սուզվել իրենց բնակչությամբ անդունդներում ծովային։
Իսկ երբ քամին դուրս չի պրծնում, նրա շունչը մոլեգին
Դողի նման տարածվում է հողի բոլոր անցքերով
Եվ գոյանում ընդհանուր դող, իսկապես, այն դողի պես,
Որ առաջ է բերում ցուրտը՝ թափանցած մեր մարմնի մեջ,
Եվ ստիպում դողդողալ մեր անդամներին ակամա։
Քաղաքներում մարդիկ երկու երկյուղից են սարսափում՝
Վախենում, որ կփլվի իրենց գլխին կտուրը,

Կամ կփլվի, կընկնի գետին բարձր ու ջինջ երկինքը
Հողը ոտքի տակ բացելով անդունդները իր անտակ,
Դրանք կարող է լցնել իր բեկորներով սեփական։
Թո՛ղ կարծեն, թե ցանկանում են, որ երկինքն ու երկիրը
Վերջ չունեն և հար ու հավետ պիտի մնան դարերում
Սակայն հանկարծ անսպասելի վտանգներ են ահռելի
Մարդկությանը սարսափեցնում հարվածներով անողոք
Չլինի՞ թե հողը հանկարծ, ոտքի տակից դուրս գալով
Ընկնի անդունդ ու նրա հետ ողջ իրերը կործանվեն,
Եվ տիեզերքն ամբողջովին ավերակի կույտ դառնա։
Այժմ պիտի բացատրեմ քեզ, թե ծովն ինչու չի աճում
Զարմանալի է թվում, որ, ստանալով այդքան ջուր
Գետերից, որ ամեն կողմից միշտ թափվում են նրա մեջ
Եվ հորդառատ անձրևներից, մրրիկներից մոլեգին
Որ ցամաքում ու ծովում են թափվում այդ նույն ժամանակ,
Ավելացրած և ջրերը աղբյուրների ծովային,
Ամենևին չի մեծանում ծովը լցած իր չափից։
Բայց այլևս չենք զարմանա, եթե միայն իմանանք,
Որ այդ ջուրը մի կաթիլ է համեմատած ծովի հետ։
Նախ՝ արևի ջերմությունն է ծծում ջրի մի մասը
Չէ՞ որ հաճախ տեսնում ենք մենք, որ մեր թրջված հագուստը
Անմիջապես չորանում է արեգակի շողերից։
Բայց ինչպիսի՞ հետևանք է ստացվում, երբ արևի
Տաք շողերի գործողության ենթարկվում է, անկասկած,
Ծովի անվերջ մակերեսը։ Որքան փոքրիկ էլ լինի
Հեղուկի այն մասնիկը, որ ամեն մի վայր է կորցնում
Առանձին, բայց կրկնվելով անթիվ անգամ ընդարձակ
Տարածության վրա, մի՞թե կորուստը մեծ չի լինի։
Իսկ մյուս կողմից քամիներն են ալիքները մտրակում
Եվ ջրի մի մասը տանում, քանի որ մի գիշերվա
Ընթացքում է ցեխոտ ճամփան չորանում ու պնդանում
Այնուհետև, ասել եմ, որ ամպերն էլ են ջուր վերցնում
Ծովերի մեծ հարթավայրից, հետո, նրան տանելով,
Թափում են ողջ երկրի վրա որպես անձրև հորդառատ,
Երբ խենթ քամին, հալածելով, քշում է մութ ամպերին։
Եվ քանի որ ամբողջ հողը մի մարմին է ծակոտկեն,
Որովհետև ամեն կողմից շրջապատված է ծովով,
Ծովին կպած է շարունակ, այդ պատճառով էլ, ինչպես
Ծովն է ջրերն ընդունում այն, որ հոսում են ցամաքից,

Այնպես պետք է ջուրը ծորա այդ ծովից հողի մեջ.
Եվ այնտեղ էլ կուտակվելով, հավաքվում է գետերի
Ակունքներում, հետո՝ զտված հոսում Երկրի երեսով,
Այնտեղ, որտեղ իր թաց ուղով իրեն ճամփա է բացել։
Իսկ այժմ թե ինչ պատճառով խառնարանից Էտնայի
Կրակներ են ժայթքում հաճախ ահռելի և ահավոր
Որովհետև շատ է մարդկանց թշվառություն պատճառել
Սիկուլայի[10] դաշտերում նա իր մրրիկով հրավառ
Եվ գրավել է ուշքն ու միտքը սահմանակից ազգերի
Որոնք տեսած թանձր ծուխը և բոցերի հեղեղը,
Որ ելնում են ալիքաձև դեպի կապույտ երկինքը,
Սարսափահար սպասում էին, թե բնությունն ինչպիսի
Դժրախտություն է ցանկանում նրանց համար պատրաստել։
Բայց որպեսզի լավ ըմբռնես երևույթներն այդպիսի,
Պետք է ամեն կողմից զննես խորաթափանց հայացքով
Եվ ընդգրկես ամբողջովին նրանց բոլոր մասերը.
Չմոռանաս, որ տիեզերքն անհուն է և անսահման,
Չմոռանաս, որ երկինքը տիեզերքի համեմատ
Նրա ամենից ավելի փոքրիկ, չնչին մասնիկն է,
Որքան երկրի համեմատ է մարդը փոքրիկ, աննշան
Այնքան երկինքն է աննշան տիեզերքի համեմատ.
Եվ եթե դու ճշմարտությունն այդ ըմբռնես, հասկանաս,
Արդեն հենց այդ երևույթով կդադարես զարմանալ։
Մեզանից ո՞վ է զարմանում, երբ որևէ մի մարդ է
Հանկարծակի հիվանդանում, ասենք, տենդով որևէ,
Մեր այս կամ այն անդամներն են հիվանդանում, և ահա
Հանկարծ ուռում են ոտքերը, կամ ատամներն են ցավում,
Եվ այնպիսի մի սուր ցավով, որ հասնում է աչքերին
Կամ սրբազան ճուրճ է[11] վառում, մեր ողջ մարմնով սողալով,
Եվ այրում է այն մասերը, որոնց վրա է նստել
Չենք զարմանում, քանզի սերմեր կան անհամար իրերի,
Ե՛վ երկինքը, և՛ երկիրը լի են բոլոր ախտերով,
Որ շարունակ տարածվում են տիեզերքում ծայրից ծայր
Ուստի երկինքն ու երկիրը անվերջության մեջ ունեն
Ամեն կարգի պաշարների առատաբուխ մի աղբյուր,
Որ կարենան հողը խորքից շարժել, ցնցել շարունակ,
Որ արընթաց քամիները անցնեն և՛ ծով, և՛ ցամաք,
Որ Էտնայից հուրեր ժայթքեն, բոցավառվի երկինքը։
Եվ այդպես են հաճախ վառվում բարձունքները երկնային,

Սկսվում են փոթորիկներ, տեղատարափ հորդ անձրև
Այնտեղ, որտեղ հավաքվել են ջրի սերմեր անհամար։
Ասում են, որ հրդեհները մեծ են թվում չափազանց։
Այո՛, ինչպես մեծ է թվում ամենայն մի գետ նրան,
Ով նրանից ավելի մեծ գետ չի տեսել իր կյանքում,
Ինչպես մարդը, ծառը, բոլոր իրերը մեծ կթվան,
Քանի մենք դեռ չենք հանդիպել է՛լ ավելի մեծերին
Իսկ այդ ողջը մեծ երկնքի, ծովերի ու երկրի հետ
Տիեզերքի համեմատ շատ չնչին է և աննշան։

Այժմ փորձում եմ բացատրել, թե ինչպես են Էտնայի
Լայնածավալ խառնարանից ժայթքում բոցեր ահավոր
Այդ մեծ լեռան ներսում նախ կա լայնատարած մի խոռոչ,
Այնպես, ինչպես քարայրներ են շինված լինում քարերից,
Այդ քարայրներն, անշուշտ, լի են քամիներով մշտապես
Հետևապես՝ օդով, քանզի շարժուն օդը քամի է։
Եվ երբ օդը բոցավառվում, տաքացնում է իր հերթին
Ժայռերը և հողը, որոնց շուրջը նա է պտտվում,
Եվ նրանցից արտաբերում վառվող բոցի լեզուներ,
Սկսում է վեր բարձրանալ խառնարանի նեղ անցքով,
Դեպի հեռու շպրտելով իր բոցերն ու մոխիրը.
Գլորում է թանձր ծխի կծկվող մի մառախուղ,
Եվ շպրտում նաև ժայռեր հսկայական ծանրությամբ.
Կարելի՞ է կասկածել, որ ուժը քամու շատ է մեծ։

Այնուհետև, ծովը լեռան ստորոտն է ողողում,
Ալիքներն իր փշրում այնտեղ և քաշում է նորից ետ։
Քարայրներն ու խառնարանը, անշուշտ, պետք է տարածվեն
Լեռան տակից մինչև ծովը։ Չի կարելի կասկածել,
Որ քամին միշտ մտնում է այդ անցքերի մեջ, երբ արդեն
Ծովն այնտեղից հեռացել է, և իր շունչը ուղղում է
Հենց այնտեղից դեպի լեռան գագաթը, այդ պատճառով
Բոցերն երկինք են բարձրանում և ժայռեր են շպրտվում,
Եվ ավազի թանձր ամպ է ամենուրեք տարածվում։
Չէ՞ որ լեռան գագաթին է կրաթերն այդ գտնվում,
Բայց դա մի խոսք է տեղական, մենք կոչում ենք խառնարան
Կան այնպիսի երևույթներ, որոնց քիչ է մի պատճառ
Բայց շատերից միայն մեկը պիտի լինի ճշմարիտ.
Այսպես՝ եթե հեռվից տեսնես դու մարդկային մի դիակ
Նա կարող է մեռած լինել պատճառներով բազմաթիվ,
Բայց նրանցից միայն մեկը պետք է լինի իսկական։

Դու չես կարող ապացուցել, թե մարդն ինչից է մեռել՝
Սրի՞ց, ցրտի՞ց, ինչ-որ ախտի՞ց, թե՞ նա մեռել է թույնից.
Հաստատ գիտենք մենք, որ նրան ինչ-որ բան է պատահել,
Բայց ի՞նչ. այսպես պետք է դատենք շատ բաների մասին մենք։
Նեղոս գետը, որ ամռանը ողջ դաշտերն է ողողում,
Եվ որ ամբողջ եգիպտական երկրի միակ մեծ գետն է
Այդ երկիրը ողողում է ամառվա տաք օրերին,
Այն ժամանակ, երբ փչում են քամիները պասատային,
Որոնք կոչվում են տարեկան։ Աքվիլոնը, փչելով
Շարունակ այն ուղղության դեմ, որով գետն է ընթանում,
Դանդաղեցնում է հոսանքը, ալիքները քշում ետ,
Եվ լցնելով նրա հունը ստիպում է կանգ առնել։
Չի կարելի կասկածել, որ քամիներն այդ փչում են
Հոսանքի դեմ, որովհետև միշտ գալիս են հյուսիսից
Եվ սառնաշունչ բևեռների աստեղատան խորքերից,
Մինչդեռ գետը սկսվում է երկրներում հարավի,
Այնտեղ, որտեղ սևացել են բոլոր մարդիկ խիստ շոգից,
Այն երկրում, որ արեգակի կիսաճամփան է, անշուշտ։
Սակայն կարող է պատահել, որ ավազի կույտերը,
Հավաքվելով այնտեղ, որտեղ գետն է թափվում ծովի մեջ,
Հոսանքի դեմ բարձրացրել են անմատչելի մի պատնեշ.
Քամին, որ ծովն ալեկոծում և գլորում է ավազ,
Այդ պատճառով գետի ազատ ելքը արդեն փակում է
Եվ սկսում ջուրն ավելի դանդաղ հոսել թեք հունով։
Սակայն կարող է պատահել, որ այնտեղ այդ ժամանակ,
Որտեղ նրա ակունքներն են, անձրևներ են տեղում հորդ
Եվ ավելի առատորեն, որովհետև փչում է
Արդեն քամին պասատային և Աքվիլոնը, որոնք միշտ
Այս կողմից են քշում ամպեր, որ, հավաքված հարավում,
Կուտակվում են ու թանձրանում գագաթներին լեռների,
Հետո տեղալ են սկսում իրենց ամբողջ ծանրությամբ։
Գետը, գուցե, Եթովպիայի լեռներում է աճում, երբ
Այնտեղ ճերմակ ձյունն է հալվում արևի տաք շողերից,
Եվ ողողում հորդ հոսանքով սարից դեպի հարթավայր։
Այժմ պետք է բացատրեմ քեզ բնությունն այն վայրերի
Աղետաբեր և այն լճի, որ Ավեռն են անվանում.
Անվանում են դրանց Ավեռն[12] այն պատճառով, որ նրանք
Վնասակար են չափազանց թռչուններին զանազան։
Հազիվ է մի թռչուն հասնում այնտեղ կապույտ երկնքով,

Կարծես հանկարծ մոռանում է արվեստը իր թռիչքի
Եվ, ծալելով թույլ թևերի առագաստներն, ընկնում վայր,
Գլուխը կախ, ուժասպառված՝ ցամաքում կամ ջրի մեջ
Այն լճի, որ ստացել է Ավեռնական անունը։
Կումք քաղաքի, Վեզուվ լեռան մոտ այնպիսի մի տեղ կա
Որտեղ միշտ տաք աղբյուրները թանձր ծուխ են արձակում
Իսկ Աթենքի պարիսպներում միջնաբերդի գագաթին,
Որտեղ կանգնած է տաճարը Տրիտոնիդե Պալլասի,
Մի տեղ կա, ուր ագռավը չի համարձակվում բարձրանալ,
Նույնիսկ երբ մի զոհարանից բարձրանում է անուշ ծուխ[13]։
Սարսափում է սակայն ոչ թե բարկությունից Պալլասի,
Այն պատճառով, որ մատնել է, ինչպես հույներն են պատմում
Այլ բնական այն գոլորշուց, որ ելնում է այն տեղից։
Ասում են[14], թե Սիրիայում նույնպես նման մի տեղ կա.
Չորքոտանի անասունին, որ մոտենում է հազիվ,
Այդ նույն ուժը, տապալելով, անշունչ գցում է գետին,
Կարծես նրան զոհաբերում ստորերկրյա մանեսին։
Սակայն նման երևույթներ բնական են, անկասկած.
Ակներև է մեզ համար, թե ինչն է դրանց պատճառը։
Այստեղ նույնպես ամենևին չկան Օրկի դարպասներ,
Որոնցով են ստորերկրյա աստվածները տանում միշտ
Մեռած մարդու հոգին իրենց դեպի մռայլ դժոխքը։
Ինչպես ոմանք կարծում են դեռ, որ եղնիկը, շնչելով,
Կարող է իր բնից հանել որևիցե սողունի
Ճշմարտության նշույլ չկա հեքիաթներում այդ բոլոր,
Որոնց մասին պիտի խոսեմ, համոզվելու ես անշուշտ։
Նախ ասում եմ, ինչպես առաջ քեզ ասել եմ շատ անգամ,
Որ հողն իր մեջ պահպանում է սերմեր տարբեր ձևերի,
Բազմատեսակ ու բազմաթիվ և որ թեև շատերը
Մարդու համար կենսական են, բայց շատերը դրանցից
Հիվանդություն են պատճառում, արագացնում վախճանը։
Ավելի կամ պակաս իրար նման են այդ սերմերը
Բազմատարբեր էակների, և ավելի կամ պակաս
Անհրաժեշտ են նրանց համար, տարբերության համաձայն
Եվ բնության, և՛ հյուսվածքի, և՛ նախնական տարրերի։
Վիրավորում են շատերը անցք ու ականջ մտնելիս,
Շատերը հոտ են արձակում մարդու համար զզվելի,
Վտանգավոր են շատերը, երբ շոշափում ենք նրանց
Կան այնպիսիք, որոնց տեսքից մարդու աչքն է վախենում

Հետ փորձով իմանում ենք, թե մեզ որքան բաներ են
Անհաճելի ու վշտալի զգացումներ միշտ պատճառում։
Կան այնպիսի ծառեր՝ այնքան վնասակար ստվերով,
Որ երբ հաղիվ մի որևէ մարդ է պառկում նրա տակ,
Անմիջապես ստանում է անտանելի գլխացավ.
Հելիկոնի բարձունքներում մի այնպիսի ծառ կա, որ
Ծաղիկների ծանր հոտով մարդկանց մահ է պատճառում
Այդ ամենը, ակներև է, հողի միջից է բուսնում
Բազմատարրեր եղանակով այն սերմերից բազմաթիվ
Իրերի, որ խառնված են միշտ իրար հողի խորքերում,
Որոնց հյութով և սնվում է ամեն էակ առանձին։
Երբ մարդու քիթն է թափանցում հոտը մարած ճրագի,
Իսկույն անթ ուշաթափված վայր է ընկնում կարծես, նա
Կամ հիվանդ է, կամ ընկնավոր, գույնը թռած երեսից
Կղբաձվի ուժգին հոտից ուշաթափվում են կանայք
Եվ ընկնում է ձեռագործը նրանց քնքուշ ձեռքերից,
Եթե միայն հոտոտում են ամսականի ժամանակ։
Շատ բաներ կան, որոնք մարմնին թուլություն են պատճառում
Եվ տատանում ամբողջ հոգին մինչև նրա խորքերը։
Եթե մի տաք բաղնիքում դու մնաս երկար ժամանակ,
Լթե լներել ես չափից շատ, իսկույն մտնես լոգարան,
Շատ հեշտությամբ դու կարող ես ուշաթափվել ու ընկնել։
Իսկ ինչպիսի՜ հեշտությամբ է հոտն ածուխի բոցկլտող
Մեր ուղեղի մեջ թափանցում, եթե նախ ջուր չլինք խմել։
Երբ վառվում է մեր մարմինը տաքությունից տենդի մեջ,
Գինու հոտը կարող է մեզ հարված լինել մահացու։
Տեսնո՞ւմ ես դու, թե ինչպես է արդյոք ծնվում ծծումբը,
Բիթումը, որ չորանալով պահպանում է զզվելի հոտ։
Այնտեղ, որտեղ երակներ են փնտրում ոսկու, արծաթի
Եվ երկաթով հանքեր փորում հողի մթին շերտերում
Սկապտենզուլի[15] մութ խորքերից ինչպիսի՜ հոտ է գալիս։
Եվ զարշելի հոտ է գալիս նույնիսկ ոսկու հանքերից
Ինչպիսի՜ գույն ունեն մարդիկ, գույնը նրանց ինչպե՞ս է։
Ինչպիսի՜ դեմք ունեն մարդիկ, նրանց դեմքը ինչպե՞ս է։
Չե՞ս տեսել դու, կամ չե՞ս լսել, թե որքան շուտ են մեռնում
Դժբախտ մարդիկ, որ խմբերով հանուն չնչին սնունդի,
Ուժասպառված, տառապում են, տքնում խավար հանքերում։
Պարզ է, որ հողն արձակում է այդ թույները իրենից
Եվ տարածում անվերջորեն տարածությամբ երկնքի։

Այդ վայրերում Ավեռնական հողից հոտ է դուրս գալիս,
Մահաբեր է թռչուններին, բարձրանում է դեպի վեր,
Թունավորում որոշ մասը տարածության երկնային։
Եվ հազիվ է հասել այնտեղ թռչունը իր թռիչքով,
Հանկարծ շշմում է նա թույնից, որ, սակայն, չի երևում,
Եվ քարի պես ընկնում գետին, ու նրան թույնն է քաշում,
Եվ հազիվ է թռչունն ընկել, թույնը՝ ուժեղ առավել
Նրա կյանքի մնացորդն է խլում արդեն թույլ մարմնից,
Որովհետև այդ թույնը նախ թմրեցնում է թռչունին,
Իսկ հետո, երբ ընկած է նա ոլորտի մեջ այդ թույնի,
Առհավետ իր քաղցր կյանքից արդեն պիտի բաժանվի
Հսկայական հավաքույթից թույնի այնտեղ կուտակված։
Բայց կարող է պատահել, որ թույնն այնքան է նոսրացնում
Թռչունի և հողի միջև տարածությունն օդային,
Որ, գուցե, օդ այնտեղ արդեն բոլորովին չի մնում։
Եվ երբ արդեն այնտեղ հասնում է թռչունը, զուր է նա
Դատարկության մեջ թևերը թափահարել սկսում,
Ծառայել չեն կարող նրանք, ապարդյուն են ջանքերը
Եվ թռչունը, որ թևերին արդեն հենվել չի կարող,
Պարզ է, պետք է ընկնի գետին ծանրությունից սեփական։
Եվ երբ ընկնում է թռչունը տարածության մեջ դատարկ,
Նրա հոգին դուրս է գալիս մարմնից բոլոր անցքերով։
Իսկ ամռանը ջուրը սառն է ջրհորում այս պատճառով,
Որովհետև տաքությունից հողը շատ է նոսրանում
Եվ տաքության սերմերն, անշուշտ, պետք է ցրվեն շատ արագ.
Որքան հողի մակերեսը տաքանում է ավելի,
Այնքան ջուրը ավելի է սառը դառնում նրա մեջ
Ընդհակառակն՝ ցրտից հողը սեղմվում է, կուչ է գալիս,
Մակերեսը, պնդանալով, ավելի հոծ է դառնում
Եվ ջրհորի մեջ է պահում մնացորդը տաքության։
Ասում են, որ մի աղբյուր կա տաճարի մոտ Ամմոնի[16],
Ցերեկներով ջուրը սառն է, գիշերներով տաք է այն.
Զարմանում են շատ ավելի, քան դա պետք է, կարծելով,
Որ երբ մտնում է արևը երկրի տակ, այդ ժամանակ
Թափանցում են կրակները նրա իբրև հողի մեջ,
Երբ գիշերը ողջ երկիրը ծածկում է իր խավարով։
Ճշմարտության նշույլ անգամ չկա սակայն դրա մեջ
Եթե միայն արևն այդ ջուրն անմիջապես տաքացնել
Վերևից չի կարողացել այն ժամանակ, երբ նրա

Շողերն ուժեղ են ավելի, ինչպե՞ս կարող է հողի
Ողջ զանգվածով և ներքևից արդյոք նրան տաքացնել։
Աղբյուրի մեջ թափանցելով իր շողերով բոցավառ,
Երբ հազիվ է կարողանում իր շողերի տաքությամբ
Թափանցել մեր տան պատերով այնպես, որ դա զգացվի։
Սակայն ինչպե՞ս բացատրել այդ։ Ահավասիկ թե ինչպես.
Հողն աղբյուրի շուրջը, անշուշտ, ծակոտկեն է ավելի,
Հրի սերմեր ավելի է պարունակում, քան այլուր,
Երբ ծածկում է մութ գիշերը հողը խավար ծածկույթով,
Հողը սառում է և նրան կարծես մի ձեռք է սեղմում.
Եվ հուրերի այդ սերմերը, որոնցով է համակված,
Այդպիսով, նա ներս է քաշում այդ աղբյուրի ջրի մեջ,
Եվ այդպիսով տաքությունը հաղորդվում է այդ ջրին.
Այդ կարող ենք շոշափելիս, համ առնելիս զգալ մենք.
Երբ ճառագող արեգակը բաց է անում անցքերը
Եվ նոսրացնում է հյուսվածքը խառնուրդով իր շողերի,
Դարձյալ անցնում են հուրերի սերմերն իրենց տեղը հին,
Եվ անցնում է ջրի ամբողջ տաքությունը հողի մեջ,
Ահա ինչու է նա սառը դառնում դարձյալ ցերեկով։
Եվ, բացի այդ, ջուրը, որին արեգակի շողերը
Դիպչել էին, պիտի, անշուշտ, իսկույն դարձներ գոլորշի
Կրակների սերմերը, որ պարունակում է ինչպես
Անջատում է իրեն կապող մարմինները սառնության։
Իսկ մի ուրիշ սառն աղբյուրի մեջ վառվում է խծուծը,
Հանկարծ բոցեր է արձակում վառված ջահը, բոցկլտում,
Տարվում այնտեղ, որտեղ նրան քամու թույլ շունչն է քշում[17]։
Իսկ այդ տեղի է ունենում այն պատճառով, որ ջուրը
Պարունակում է ոչ միայն կրակի սերմեր բազմաթիվ,
Այլև հողից ստանում է, որով հոսում է ջուրը,
Անթիվ սերմեր տաքության, որ, դեպի վերև բարձրացած,
Ջությանն են խառնվում ջրի, արտաթորվում դեպի դուրս,
Եվ տարածվում են օդի մեջ, սակայն, այնքան գործուն չեն,
Որ աղբյուրը կարողանան անմիջապես տաքացնել.
Եվ, բացի այդ, մի այլ ուժ է այդ սերմերին ստիպում
Եվ բարձրանալ, և հավաքվել հանկարծ ջրի երեսին։
Այդպիսի մի աղբյուր էլ կա Արադական ծովի[18] մեջ,
Որի աղի ալիքներից անուշ ջուր է բարձրանում
Այլ վայրերում, սակայն, նույնպես հարթավայրը ծովային
Օգնում է խեղճ նավաստուն, որ տառապում է ծարավից,

Ալիքների միջից աղի դուրս բերելով անուշ ջուր։
Հուրի սերմերն այդպես ահա ջրի միջից կարող են
Բարձրանալ ու համախմբվել շուրջը վառվող խծուծի.
Եվ երբ այնտեղ հավաքվում են կամ միանում են չափի
Խտությանը, պետք է նրան բոցավառեն հեշտությամբ,
Քանի որ ջահն ու խծուծը պարունակում են անթիվ
Եվ այնպիսի տարրեր, որոնք վառվել անշուշտ կարող են։
Կամ չե՞ս տեսել երբևիցե, թե ինչպես է պատահում,
Երբ աբեթը մոտեցնելիս, կրակին դեռ չդիպչած,
Հանկարծ վառվել է սկսում։ Ջահն էլ այդպես է անում,
Եվ, բացի այդ, շատ իրեր են բոցավառվում դեռ հեռվից,
Երբ կրակը չի մոտեցել նրանց ընդհուպ։ Նույն բանն է
Կատարվում, ըստ երևույթին, այդ աղբյուրի մեջ նաև։
Մեզ մնում է քննարկել, թե բնության ո՞ր օրենքով
Դեպի իրեն քար է ձգում երկաթը, որ հույները
Անվանում են մագնիս նրա հանքավայրի անունով
Որովհետև մագնիտների երկրում է այն հանդիպում։
Եվ մարդիկ շատ են զարմանում այդ քարերով, քանի որ
Նրանք ունեն մի հատկություն՝ օղակվում են ու կազմում
Ամուր շղթա, սակայն, առանց տեսանելի կապերի։
Հաճախ տեսնում ենք, թե ինչպես թեթև քամուց ճոճվելով,
Դեպի ներքև իջնում են հինգ կամ ավելի օղակներ,
Ուղիղ գծով իրար կպած, այդպես կախված իրարից
Այն ուժով, որ այդ քարերը միշտ հաղորդում են իրար,
Եվ հատուկ է միայն նրանց, և շատ մեծ է, անկասկած։
Հարկավոր է շատ բան այստեղ հաստատապես սահմանել
Եվ, որպեսզի կարողանաս, երևույթն այդ հասկանալ,
Մի զարտուղի ճանապարհով պիտի այստեղ մոտենանք.
Ուստի պիտի ավելի մեծ ուշադրությամբ ունկնդրես։
Նախ իրերից բոլոր, որոնց մենք տեսնում ենք, անպայման
Արտահոսեն, անհրաժեշտ է, թռչեն, ցրվեն մարմնիկներ,
Որոնք, աչքին հարվածելով, թույլ են տալիս, որ տեսնենք.
Որոշ հոտ է արտահոսում նաև բազում իրերից,
Սառնություն է բխում ջրից, իսկ արևից՝ ջերմություն,
Աղ է բխում ծովից, որը միշտ կրծում է ափերն իր,
Ամեն տեսակ ձայն է հասնում մեր ականջին անդադար.
Մեր բերանում աղի համ ենք զգում մենք այն ժամանակ,
Երբ զբոսնում ենք մենք ծովափին, և մեզանից ոչ հեռու
Օշինդրից, որ եփում են, միշտ դառնություն ենք զգում մենք։

Ուստի բոլոր իրերից միշտ անջատվում են այլ իրեր,
Որոնք ցրվում են անդադար, և ամեն մի ուղղությամբ։
Եվ նրանք չեն հանգստանում, և նրանք չեն սպառվում,
Քանի որ մեր զգացմունքները գրգռվում են անդադար.
Ամեն վայրկյան մենք կարող ենք տեսնել, լսել, հոտոտել։
Նորից պիտի հիշեցնեմ քեզ, որ իրերը այդ բոլոր
Մարմիններով ծակոտկեն են, գիտես գրքից առաջին։
Թեև դա շատ բանի համար կարևոր է գիտենալ,
Բայց այն, որով զբաղվում ենք անմիջապես այժմ մենք,
Հենց սկզբից պիտի լինի, անշուշտ, հաստատ սահմանված,
Այն է՝ չկան իրեր առանց դատարկության խառնուրդի։
Նախ քարայրի կամարները ողողվում են մի տեսակ
Քրտինքով, որ ծորում է միշտ այնտեղ կաթիլ առ կաթիլ.
Ճիշտ այդպես է մեր ողջ մարմնից տաք քրտինքը դուրս գալիս.
Մորուք ունենք և մարմինը մեր ծածկված է մազերով,
Միշտ սնունդ է երակներով ցրվում մեր ողջ մարմնի մեջ,
Այդ սննդով եղունգներն են նույնիսկ սնվում ու աճում.
Մենք զգում ենք, թե ինչպես են պղնձի մեջ թափանցում
Սառնությունն ու տաքությունը, որոնք անցնում են նաև
Արծաթի և ոսկու միջով, երբ գավաթն ենք շոշափում.
Եվ, վերջապես, ձայնն անցնում է տների հաստ պատերով,
Հոտը մտնում է նրանց մեջ և այնտեղ են թափանցում
Սառնությունն ու տաքությունը, որ անցնում են երկաթին,
Այն, որով են գլնվում բոլոր ռազմիկները քաջարի,
Եվ ղանազան ախտեր, որոնք մասամբ գալիս են դրսից.
Մրրիկները, որ ծնվում են մեր երկրում կամ երկնքում,
Որ կազմվում են ու ցրվում են մի վայրկյանի ընթացքում,
Ուստի չկա մի մարմին, որ դատարկություն չունենա։
Ավելացնենք, որ այդ բոլոր բխումները իրերի
Չունեն միևնույն հատկություններն ու երբեք չեն նմանվում
Այն իրերին, որոնց վրա ազդեցություն են գործում։
Փափուկ հողը պնդանում է ու չորանում արևից,
Իսկ նրանից պինդ սառույցը հալվում է և դառնում ջուր,
Ինչպես նաև այն ձյունը, որ կուտակված է լեռներում.
Արեգակի շողից մոմը ցրիկ հեղուկ է դառնում,
Ոսկին հալվում է կրակից, հեղուկ դառնում պղինձը,
Խորշոմում են ու ծամովում կաշին, միսը նրանցից։
Ջրից երկաթն է պնդանում, երբ շիկացած է արդեն.
Ընդհակառակն՝ փափկանում են արդեն պինդ միսն ու կաշին։

*Այծին այնքան հաճելի են տերևները ձիթենու,*
*Որ կարծես թե նրա համար քաղցր նեկտար լինի դա*
*Բայց ոչ մի բան մարդու համար այդքան դառը չի լինում։*
*Անտանելի է խոզերին սուսամբարը, փախչում են*
*Նրանք բոլոր բույրերից, դա նրանց համար մի թույն է։*
*Սակայն հաճախ մարդու կյանքը միայն բուրմունքն է փրկում*
*Ընդհակառակն՝ այն ցեխը, որ պատճառում է մեզ զզվանք,*
*Յուրաքանչյուր խոզի համար հիանալի է այնքան,*
*Որ նրա մեջ թավալվելուց չի կշտանում նա երբեք։*

*Մի այլ սկզբունք է մնում ինձ սահմանել դեռ, քանի ես*
*Չեմ խոսել այն բանի մասին, որ մտադիր եմ ասել*
*Եթե բոլոր մարմինները ունեն անթիվ արանքներ,*
*Բայց չեն կարող արանքները երբեք իրար նմանվել,*
*Բնությամբ են տարբեր նրանք և տարբեր են գործածվում,*
*Հենց այդպես էլ անասուններն ունեն տարբեր զգացմունքներ,*
*Զգացմունքներից յուրաքանչյուրն ունի տարբեր առարկա։*
*Ձայնն այս ճամփով է ներս մտնում, իսկ համը՝ մի այլ ճամփով,*
*Բոլորովին այլ ճամփով են թափանցում և հոտերը,*
*Իրար բնավ չեն նմանվում բնությամբ և հյուսվածքով։*
*Կան տարրեր, որ միշտ անցնում են քարերով կամ փայտերով,*
*Կան, որ անցնում են արծաթով, կան, որ անցնում են ոսկով,*
*Եվ ապակու միջով արդեն այլ տարրեր են թափանցում,*
*Այնտեղ անցնում են պատկերներ, մինչդեռ այստեղ՝ տաքությունն,*
*Միևնույն մարմնով ավելի կամ պակաս արագ անցնելով։*
*Եվ ամեն մի տարբերություն հետևանքն է անհրաժեշտ*
*Տարբերության բազմազան, որ բնությունն է սահմանել*
*Մարմինների արանքների միջև բոլոր անխտիր։*

*Այս նախնական ճշմարտությունն, ուստի, լավ է սահմանված,*
*Ուստի հեշտ է բացատրություն եզրակացնել մեզ համար՝*
*Ինչու մագնիսն է երկաթին դեպի իրեն ձգում միշտ։*
*Նախ այդ քարից պետք է որ շատ սերմեր դուրս գան, հոսեն կամ*
*Տաքություն, որ հարվածներով նոսրացնում է օդը այն,*
*Որ այդ քարի ու երկաթի միջև է միշտ գտնվում,*
*Երբ մեջտեղի տարածությունն արդեն դառնում է դատարկ,*
*Եվ իրարից չբաժանված, ամբողջ խմբով միասին*
*Երկաթի այդ տարրերն իսկույն այնտեղ պիտի սլանան,*
*Հետևապես և օղակի մարմինն ամբողջ նրանց հետ։*
*Այնպիսի մի մարմին չկա, որի տարրերն ավելի*
*Խառնված լինեն միշտ իրար հետ և սերտ կապված ավելի,*

*Քան անհրկյուղ, անպարտելի հզորությունն երկաթի.*
*Ինչո՞ւ պիտի մենք զարմանանք, ինչպես ասել եմ առաջ,*
*Որ երկաթի տարրերն այդքան մեծ բազմությամբ չեն կարող*
*Դատարկության մեջ սլանալ, որ այդ շղթան հենց այնտեղ*
*Չսլանա ամբողջապես, և անում է այդպես նա,*
*Եվ մինչև այն ժամանակ, երբ արդեն հասնում է քարին,*
*Միանալով, կախվում է և կապանքներով է կապվում,*
*Որոնք սակայն չեն երևում։ Բխումները մագնիսի*
*Անխոչընդոտ տարածվում են դարձյալ ամեն ուղղությամբ,*
*Եվ կազմվում է դատարկություն այդպես բոլոր կողմերում,*
*Ե՛վ վերևում, և՛ ներքևում։ Օղակները շարունակ*
*Սլանում են անմիջապես դեպի արդեն նոսրացած*
*Տարածությունն, այդպես զրկված հարվածներից արտաքին,*
*Սակայն իրենք ընդունակ չեն դեպի վերև բարձրանալ։*
*Եվ որպեսզի գործողությունն այդ ավելի հեշտ լինի*
*Եվ շատ արագ՝ շարժումները, օգնության է գալիս այն,*
*Որ հազիվ է օդը այնտեղ նվաղել ու նոսրացել,*
*Օղի առջև մինչև քարը դատարկություն է բացվել,*
*Օդն օղակի հետևից խենթ սլանալով սրընթաց,*
*Կարծես հրում է հետևից, քշում, տանում է նրան։*
*Հարվածում է շրջապատող օդն իրերին անդադար,*
*Հարվածները այդ նույն, սակայն, այդ ժամանակ շարունակ*
*Ստիպում են այդ օղակին առաջ շարժվել, քանի որ*
*Վերևում կա դատարկություն, որն ընդունում է նրան,*
*Երբ տարածվում է օղակը, որի մասին է խոսքը,*
*Այդ երկաթի արանքներում, ապա մտնում է նրա*
*Ամենանուրբ տարրերի մեջ. օդը քշում է նրանց*
*Եվ ստիպում առաջանալ այնպես, ինչպես քամին է,*
*Առագաստներ ուռեցնելով, նավին քշում ու տանում։*
*Եվ օդ պիտի պարունակեն բոլոր իրերն իրենց մեջ,*
*Որովհետև ծակոտկեն են, այդ պատճառով է օդը,*
*Որ իրերն է շրջապատում, մտնում նրանց մեջ, անշուշտ.*
*Նուրբ հոսանքն այդ թաքնված է էության մեջ երկաթի,*
*Նրա շարժման մեջ անդադար, այդ պատճառով անդադար*
*Պետք է, օդին հարվածելով, նրան ներսից տատանի։*
*Եվ նրա հետ դեպի դատարկ տարածություն սլանա,*
*Եվ այդպես է ձգտում անել նա իր բոլոր ջանքերով։*
*Սակայն, երբեմն այդ քարերից խուսափում է երկաթը,*
*Հաջորդաբար հեռանում է նրանցից և հետևում։*

*Սամոթրակիայի երկաթը մանրուքի հետ տեսել եմ*
*Ցատկոտելիս անդադար մի պղնձե մեծ անոթում,*
*Երբ մագնիսի մի քար էին դնում տակն այդ անոթի,*
*Այնպես, կարծես հեռանալ էր ուզում քարից երկաթը։*
*Եվ այդ երկու իրերի մեջ առաջացնում էր նման*
*Ներհակություն նրանց միջև եղած բարակ պղինձը։*
*Սակայն պարզ է պատճառը, որ բխումները պղնձի*
*Առաջիններն են երկաթի արանքներին տիրանում.*
*Իսկ մագնիսի բխումները, որ հաջորդում են նրանց,*
*Արդեն գտնում են գրավված բոլոր նրա անցքերը։*
*Եվ առաջվա նման մտնել այնտեղ արդեն չեն կարող,*
*Հարձակվում են բուն էության վրա այդ նույն երկաթի,*
*Հոսանքներով իրենց հրում այդ մետաղի հյուսվածքը։*
*Ահա թե ինչ պատճառով է քարը այդպես ետ մղում*
*Եվ պղնձի միջով հուզում այն մարմինը, որի հետ,*
*Թե չլիներ խոչընդոտն այդ, իսկույն պիտի միանար։*
*Զարմանաս սակայն դու, որ բխումներից մագնիսի*
*Այլ իրերի հետ չի կարող նույն հետևանքն ստացվել.*
*Կան իրեր, որ ծանրությունից իրենց շարժվել չեն կարող,*
*Ինչպես ոսկին. այլ իրերի արանքները շատ են լայն,*
*Եվ անցնում են բխումները առանց նրանց դիպչելու։*
*Հետևապես, մարմիններն այդ նրանք շարժել չեն կարող։*
*Փայտը կարող ենք համարել այդ տեսակի իրերից։*
*Առաջինի և վերջինի մեջտեղումն է երկաթը,*
*Iությունը միակ, որին բխումները մագնիսի*
*Շարժում են այդ եղանակով, եթե միայն երկաթը*
*Որոշ չափով համակված է մանրիկներով պղնձի։*
*Մենք չենք կարող համարել այդ երևույթը բացառիկ,*
*Կարող եմ ես բերել նման օրինակներ բազմաթիվ*
*Եվ ցույց տալ, որ այս ինչ իրը այն ինչ իրին է հարմար.*
*Նախ քարերին միացնում է միայն կիրը իրար հետ,*
*Տախտակները պինդ կպչում են միայն եզան սոսնձով,*
*Եվ այնպես, որ ավելի շուտ այլ մասերով կջարդվեն,*
*Քան մասերի կբաժանվեն, որ սոսնձով են կպած։*
*Խաղողի հյութն աղբյուրների ջրի հետ է միանում,*
*Ծանր կուպրն ու թեթև ձեթը այդ բանն անել չեն կարող։*
*Խեցիների կարմիր ներկը բրդին այնպես է կպչում,*
*Որ այլևս բաժանվել չի կարող երբեք նրանից,*
*Որքան ուզում ես այն լվա հեղուկի մեջ Նեպտունի*[10],

*Ծովի նույնիսկ ամբողջ ջուրը կարմիր գույնը չի տանի։*
*Հետո՝ ոսկին միանում է արծաթի հետ կրակով,*
*Իսկ պղինձը այլ պղնձի հետ՝ անագի օգնությամբ։*
*Օրինակներ կարող էի շատ բերել ես, բայց ինչո՞ւ։*
*Եվ մի՞թե քեզ հարկավոր է, որ ես այդքան շատ խոսեմ,*
*Եվ ի՞նչ կարիք կա թափելու այդքան ջանքեր ապարդյուն։*
*Շատ փաստերի փոխարեն ես միայն մեկն եմ բերում քեզ*
*Իրերը, որ հյուսվածքներով համընկնում են իրար հետ*
*Այնպես, որ մեկն ունի ելուն, իսկ երկրորդը՝ նման փոս,*
*Նրանց կապը պիտի լինի ավելի սերտ, անկասկած։*
*Կան այնպիսի իրեր նաև, որոնք կպչում են իրար*
*Ամեն տեսակ կեռիկներով, օղակներով մանավանդ,*
*Նման կապով է երկաթը կախվում ձգող մագնիսից։*
*Այժմ պիտի բացատրեմ քեզ, թե ինչու են ղանազան*
*Ախտեր առաջ գալիս հաճախ, համաճարակ ահավոր,*
*Եվ զրկվում են քաղցր կյանքից անթիվ մարդ ու անասուն։*
*Արդեն առաջ ասել եմ, որ օդը լի է անհամար*
*Բազմապիսի մասնիկներով և այնպիսի, որոնք մեզ*
*Կյանք են տալիս, և կան սակայն և այնպիսի մասնիկներ,*
*Որ մեզ համար մահաբեր են։ Երբ տեսակներն այդ վերջին*
*Քանակությամբ պատահաբար բազմացել են չափազանց,*
*Վարակում են ամբողջ օդը և դառնում են մահացու։*
*Շատ ախտեր և ամեն տեսակ համաճարակ, անկասկած,*
*Կամ դրսից են գալիս մեզ մոտ ջինջ երկնքով, և ինչպես*
*Մրրիկները և ամպերը, կամ երկրից են բարձրանում,*
*Երբ հորդառատ անձրևներից թրջված հողը փտում է*
*Եվ չափազանց տաք արևից հաջորդաբար չորանում։*
*Մի՞թե դու չես նկատել, որ օդն ու ջուրը փոխելուց*
*Առողջությունն է վատանում ճամփորդների այն, որոնք*
*Հեռանում են հայրենիքից, իսկ պատճառը այն է, որ*
*Սովոր օդի փոխարեն այլ, մի ուրիշ օդ են շնչում։*
*Որքան տարբեր են իրարից բրիտանական երկինքը*
*Եվ երկինքը Եգիպտոսի, որտեղ թեք է առանցքը*
*Մեր աշխարհի։ Եվ Պոնտոսից ու Գադեսից*[20] *սկսած*
*Մինչև ազգերն այն, որ վաղուց սևացել են արևից։*
*Ուստի այդ չորս երկրները տարբերվում են իրարից,*
*Նրանք ունեն չորս քամիներ և երկնքի չորս մասեր,*
*Այնտեղ մարդիկ տարբերվում են արտաքինով և գույնով,*
*Ինչպես տարբեր ազգեր ունեն նույնպես ախտեր զանազան։*

Նեղոս գետի հովտում ախտ կա, որ կոչվում է փղային[21]
Միայն միջին Եգիպտոսում, և այլևս ոչ մի տեղ.
Ատտիկեում ոտք է ցավում, Աքեյայում՝ աչքերը,
Երկրներում այլ ցավում են այլ մասերը մեր մարմնի,
Եվ ամենայն տարբերություն միայն օդից է կախված։
Այդ պատճառով, երբ շարժվում է մի երկինք, որ խորթ է մեզ,
Հետզհետե տեղափոխվում է օդը, մեզ մոտենում,
Մառախուղի և ամպի պես զաղտագողի սողալով
Եվ փոխելով, ապականում շրջանները երկնքի,
Որոնցով է անց կենում նա, մեր երկինքը հասնելով,
Ապականում է և նրան, միաձուլում է իր հետ,
Փոփոխում է մեզ համար այն և դարձնում խորթ ու օտար։
Համաճարակն այդ նոր ապա տարածվում է շատ արագ
Եվ ընկնում է նա ջրի մեջ, հացաբույսին է կպչում,
Եվ խառնվում է մեր սննդին անասնական արոտին,
Եվ այդպես է շարունակում կախված մնալ օդի մեջ։
Եվ շնչելով այն օդը, որ վարակվածին է խառնված
Թունավորված օդ պետք է մենք շնչենք արդեն ակամա
Վարակվում են այդպես նաև եզները՝ խիստ ցանասեր,
Խաղաղ ոչխարն էլ է այդ նույն հիվանդությամբ վարակվում,
Եվ միևնույն է՝ գնացե՞լ ենք մենք ախտաշատ մի երկիր,
Մեզ անծանոթ երկնքի տակ, թե՞ բնությունն է բերել
Համաճարակ, թունավորված մասնիկներ, որ խորթ են մեզ,
Կամ որևէ մի ուրիշ բան, որին, սակայն, սովոր չենք
Եվ որ, այդպես հանկարծ գալով, մեզ դառնում է մահացու։

Այդպիսի մի հիվանդություն և մահացու տաքություն
Դարձրել էր մի հանգստարան ողջ երկիրը Կեկրոպյան[22]
Քաղաքներն ու ճանապարհներն ամայացրել էր այնտեղ
Եգիպտոսի խորքում ծնված և այնտեղից դուրս եկած
Օդով, ծովի հարթավայրով անցած երկար ճանապարհ
Պանդիոնի ցեղի[23] վրա համաճարակ էր ընկել,
Ամենուրեք հիվանդություն, մահ սփռելով այդ երկրում։

Հիվանդությունն սկսվում էր գլխի սաստիկ տաքությամբ,
Աչքերն էին բորբոքվում և հետզհետե կարմրում։
Հետո կոկորդն էր սևանում՝ սև արյունով ողողված,
Հետո խոցեր էին ձայնի ուղին սեղմում ու փակում.
Լեզուն՝ հոգու մունետիկը ուռում էր սև արյունից
Ու դառնում էր ծանր, անշարժ, պինդ, ցավերից թուլացած։
Հիվանդությունն այդ իջնում էր ապա մարդու կոկորդով

Կրծքի մեջ ու չրչապատում սիրտը. կյանքի հիմքերը
Ծրերում էր. դուրս էր գալիս գարշելի հոտ բերանից,
Ինչպես նեխած մի դիակից, անտանելի, շարունակ.
Եվ չէր մնում հոգեկան ուժ, և մարմինը հոգնատանջ
Մոտենում էր մահվան շեմին. ցավերին այդ ահավոր
Հուզումների մի անդադար չարչարանք էր միանում.
Դառը, ծանր հեծկլտանքին խառնվում էին տնքոցներ,
Եվ անդադար ղլոտոցից նյարդերն էին գրգռվում,
Եվ սկսում էին մարդու անդամները փայտանալ,
Հոդերն էին թուլանում, և դժբախտ մարդը հյուծվում էր,
Ջլատվում էր՝ բոլորովին, ուժասպառվում, վերջապես
Սակայն չէիր նկատելու, որ այրվում է հիվանդի
Մարմնի մասը որևիցե տաքությունից չափազանց,
Միայն ձեռքով շոշափելիս մի քիչ տաք էր թվում նա
Ամբողջովին կարմրում էր հիվանդ մարդու մարմինը
Եվ ծածկվում էր խոցերով, որ կարծես այրվածք լինեին
Կամ սրբազան հուր էր կարծես անդամներում տարածվել,
Եվ մի ներքին տաքություն էր նրանց տանջում անդադար,
Բոցավառված հնոցի պես՝ որովայնն էր բորբոքում,
Կարծես ծանր մի բեռ լիներ ամենանուրբ գործվածքը
Հիվանդները սառնություն ու թարմ օդ էին որոնում
Իրենց ուստղ տաքությունից, և շատերը նրանցից
Ամբողջ մարմնով նետվում էին գետի սառը ջրի մեջ.
Կամ նրանց մեջ սուզում էին անդամները իրենց մերկ
Իսկ ոմանք էլ բաց բերանով ջրհորի մոտ սողալով,
Գլուխն ի վար նետվում էին այդպես նրա խորքերը
Կամ, ընկնելով նրա եզրին, դեմքը կախում նրա մեջ
Նրանց ջրի մեջ հրում էր այրող անհագ ծարավը,
Եվ հորդառատ անձրևները կթվային ցող նրանց.
Հանգստություն չէին տալիս նրանց դաժան ցավերը
Ուժասպառված անդամները անշարժ էին շարունակ.
Նրանց կողքին քրթմնջում էր սարսափահար բժիշկը,
Երբ տեսնում էր լայն բաց արած ու բորբոքված աչքերի
Հայացքները նրանց անքուն և անհանգիստ շարունակ.
Եվ մահվան այլ ու բազմաթիվ նշաններից վախեցած,
Նրանց հոգին շփոթվում էր վշտերից ու երկյուղից
Եվ հիվանդի հայացքն արդեն դառնում էր չոր ու պղտոր,
Եվ ունքերը կիտվում էին, ականջներում աղմկում,
Օր ու գիշեր մարդուն հանգիստ ամենևին չտալով.

Շնչում էին մերթ թույլ, դանդաղ, մերթ շատ ուժգին և հաճախ,
Նրանց վիզը ողողվում էր փայլուն ջրիկ քրտինքով.
Նրանց թուքը, որ աղի էր և զափրանի գույն ուներ,
Դուրս էր գալիս դժվարությամբ խռպոտահագ կոկորդից։
Դողում էին անդամները և կարկամում ձեռքերը,
Հետո մահվան սառնությունը հետզհետե ոտքերից
Բարձրանում էր մինչև կուրծքը. ապա վերջին վայրկյանին
Ռունգները միշտ սեղմվում էին, քիթը սրվում էր մարդու,
Այտերը փոս էին դառնում և աչքերը խորանում,
Մաշկը սառում էր, պնդանում, շրթունքները՝ ետ քաշվում,
Եվ ճակատի կաշին գլվում, և բերանը մնում բաց.
Սակայն երկար չէր տևում այդ, վախճանը շուտ էր հասնում,
Եվ ութերորդ կամ իններորդ արեգակի լույսի հետ
Նրանց կյանքի ջահը վառվել դադարում էր առհավետ։
Եթե մարդը դիմանում էր այդ ամենին, այնուհետ
Ուժասպառվում էր խոցերից, փորհարինքից տանջալի,
Հետագայում դարձյալ մահվան ավարն էր նա միշտ դառնում։
Նրանց տանջել սկսում էր մի ահավոր գլխացավ,
Թարախի հետ նեխած արյուն արտահոսում էր քթից
Եվ այդպես էր հետզհետե ուժասպառվում հիվանդը
Սակայն եթե դեռ այդպես չէր հոսում նրա արյունը,
Հիվանդությունն այն ժամանակ հարձակվում էր, տարածվում
Նրա բոլոր անդամներում, և ջլերի մեջ բոլոր,
Եվ, վերջապես, մտնում նույնիսկ մասերի մեջ մանկածին։
Ոմանք արդեն մոտիկ մահից ցանկանալով խուսափել
Ուզում էին փրկել կյանքը, առնանդամը կտրելով.
Ոմանք արդեն զրկված իրենց ձեռքերից ու ոտքերից,
Դարձյալ չէին ուզում մեռնել, իրենց կյանքից բաժանվել
Ոմանք զրկվում էին նույնիսկ լույսից իրենց աչքերի,
Այնքան մեծ էր դժբախտների երկյուղն ահեղ մահվանից.
Իսկ ոմանք էլ իրենց անցյալն այնպես էին մոռանում,
Որ դադարում էին նույնիսկ իրենք իրենց ճանաչել։
Թեև երկրի մակերեսը դիակներով էր ծածկված
Որ կուտակվել էին այնտեղ, թռչունները գիշատիչ
Եվ վայրի չար գազանները փախչում էին այդ հոտից
Գարշելի և ապականված, կամ, մի դիակ ուտելով,
Տանջվում էին չարաչար և սատկում էին, վերջապես
Ո՛չ թռչուններ էին գալիս, սակայն, այնտեղ ցերեկով,
Ո՛չ էլ գազան էր դուրս գալիս անտառից, երբ մթնում էր.

Վարակվելով, չարչարվելով, սատկում էին և նրանք։
Իսկ շները, հավատարիմ անասուններն այդ դժբախտ
Սատկում էին փողոցներում, տառապելով չարաչար,
Մահաբեր ուժն այդ վարակի կյանքը խլում էր մարմնից։
Դիակները թաղում էին շտապելով և անծես,
Վստահելի մի դեղ չկար, որը օգներ բոլորին.
Այն, ինչ մեկին թույլ էր տալիս դեռ շնչել օդ կենսատու
Ամբողջ կրծքով, նայել վերև՝ բարձունքներին երկնային,
Ուրիշների համար թույն էր, մահ էր նրանց պատճառում։
Սակայն մի բան էր վշտալի և ողբալի չափազանց
Այդ փորձանքում. դժբախտները, իրենց հիվանդ զգալով,
Հուսահատվում էին որպես դատապարտված անխնա,
Վհատվելով, այդպես էին իրենց սրտով վշտահար
Սպասում միշտ իրենց մահին, իրենց հոգուց բաժանվում։
Բազմապատկվում էր վախճանը առանձնապես ահավոր
Այն պատճառով, որ իրարից վարակվելով անդադար,
Գերեզմանից գերեզման էր ավելանում ամեն ժամ։
Նրանք, որոնք սիրում էին իրենց կյանքը չափազանց,
Եվ ով մահից վախենում էր և խուսափում շարունակ
Իր վարակված հարազատից, նա էլ մեռնում էր շուտով,
Որպես զոհ նույն անփութության, լքված այդպես ու մենակ,
Զուրկ որևէ օգնությունից, անասունի նման այն,
Որ բուրդ ունի կամ նրա, որ մեր արտերն է մշակում
Բայց նա էլ, ով չէր վախենում ենթարկվելուց վտանգի,
Նույնպես մեռնում էր, վարակված, և այն ծանր հոգսերից,
Որ ակամա ունենում էր, երբ լսում էր հարազատ
Մարդու ողբն ու հառաչանքը սրտաճմլիկ, վշտալի
Առաքինի է այդպիսի մահն ամենից ավելի։
Դիակները թաղում էին հապճեպ, առանց ծեսերի,
Աճյունները ծածկում էին շտապելով և մի կերպ,
Չկատարած մեր բարեպաշտ նախնիների ծեսերը
Ուժասպառված, վշտանալով, լալով էին գնում տուն,
Պառկում էին այդպես հաճախ, մեռնում իրենց վշտերից։
Եվ աչերի այդ օրերին կարող էիր դու տեսնել
Միայն նրանց, որ մեռել են կամ մեռնում են, կամ նրանց,
Որոնք ողբում էին իրենց հարազատի վախճանը։
Հովիվը, որ ամեն տեսակ անասուն է պահպանում,
Եվ հաղթանդամ հողագործը, որ հերկում է դութանով,
Հիվանդանում էին նույնպես։ Այդ վարակը փտում էր

Նրանց իրենց խրճիթներում. աղքատությունն ահավոր
Հիվանդության հետ միացած, պատճառում էր մահ, որից
Հնարավոր չէր խուսափել։ Կարելի էր նկատել
Զավակների վրա անշունչ ծնողների դիակներ,
Եվ հայրերի ու մայրերի դիակների վրա շատ
Զավակների մարմինները՝ արդեն կյանքից բաժանված։
Եվ քիչ չօգնեց այդ վարակի տարածմանը նաև այն,
Որ գեղջուկներ, մեծ բազմությամբ դաշտերն իրենց թողնելով,
Վարակվելով ամեն կողմից, հավաքվեցին քաղաքում։
Հրապարակներն ու անկյուն լցվել էին մարդկանցով,
Եվ դիակներ կուտակում էր մահը արդեն հեշտությամբ։
Եվ բազմաթիվ մարդիկ, որոնք տանջվում էին ծարավից,
Մեռնում էին փողոցներում. սակայն ոմանք, քարշ գալով
Եվ աղբյուրին մոտենալով, խմում էին անդադար.
Կտրվում էր նրանց շունչը և դադարում շարժումը։
Եվ լցրել էր մահը նույնիսկ աստվածների սրբազան
Մեհյանները ծայրից ծայր այդ դիակների կույտերով.
Դիակները հասնում էին առատաղին տաճարի
Եվ քուրմերը, վախվխելով, մարդկանց էին խնամում։
Աստվածների պաշտամունքով չէր զբաղվում ոչ մի մարդ,
Զգացմունքները ճնշված էին, մարդկանց խոր վիշտ էր տանջում.
Եվ ծեսերը թաղման, որոնք անխախտ էին համարվում,
Ժողովուրդը վաղուց ի վեր հրաժարվել էր կատարել,
Եվ շփոթվել էին բոլորն, ու մեծ հուզմունք էր տիրում.
Այդ ընդհանուր սարսափի մեջ լուռ թաղում էր ամեն ոք
Դիակը իր հարազատի, ինչպես կարող էր միայն.
Եվ դրդում էր աղքատությունն, անհրաժեշտ էր դարձնում, որ
Մարդն անի այն, ինչ որ երբեք մինչև այդ դեռ արված չէր։
Ոմանք իրենց հարազատի դիակն արդեն փայտացած
Դնում էին խարույկի մեջ, որ պատրաստված էր լինում
Այլ դիակի համար հետո աղաղակով ահռելի
Պատրաստ էին արյունահեղ ճակատամարտ սկսել,
Քան թողնել, որ անթաղ մնա հարազատի դիակը։

# ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Լուկրեցիոսի «Իրերի բնության մասին» փիլիսոփայական պոեմը մեզ հասել է երկու կարգի թերությամբ. նախ հեղինակը այն չի ավարտել վերջնականապես, չի հղկել, և ապա դարերի ընթացքում մեկը մյուսից ընդօրինակողները խառնաշփոթել են բնագրի տեքստը։ Այդ պատճառով պոեմն ավելի ըմբռնելի դարձնելու համար առաջարկվել են բազմաթիվ լրացումներ ու կրճատումներ (Էրնու, Մենրո, Դիլս և այլն)։ Շատ անգամ հարկավոր է լինում տեղափոխել ամբողջ տողեր, շատ բառեր աղավաղված են ու դարձած անհասկանալի, և նրանց վերականգնումն ու թարգմանությունը դառնում են ենթադրական։

Թարգմանիչը պիտի որոշի, թե այդ ավելացումներից ու կրճատումներից որոնք են ընդունելի։ Մենք նկատի ենք ունեցել այդ ամենը, բայց ընդունել ենք ոչ բոլորը, ինչպես, օրինակ, Մենրոյի կողմից առաջարկված առաջին գրքի մի քանի տողերը։

Այդ առաջին դժվարությունը հաղթահարելուց հետո՝ պետք է հաղթահարվի և երկրորդը լատիներենի մեկ բառը ոչ միայն հայերենում, այլև բոլոր լեզուներում, հաճախ թարգմանվում է մի ամբողջ նախադասությամբ։ Բացի այդ, հայկական բառերը սովորաբար ավելի երկար են, քան համապատասխան օտար բառերը։ Եվ քանի որ հեկզամետրին մոտավորապես համապատասխանում է հայկական վանկաքանակային տաղաչափության 15—16 ոտնյան յամբ-անապեստյան չափը, ուստի թարգմանիչը պետք է վճռի, թե ինչպես է թարգմանելու։ Եթե բնագրի ու թարգմանու-

թյան տողերը համընկնեն, այդ դեպքում բնագիրը կկրճատվի անխուսափելիորեն. իսկ եթե բնագիրը չկրճատվի, այդ դեպքում թարգմանությունը կուռի զգալի չափով։

Տարիներ հետաքրքրվելով Լուկրեցիոսի պոեմով, մենք այն թարգմանել ենք մի քանի անգամ, բայց ամեն անգամ դժգոհ ենք եղել մեր թարգմանությունից, այն մեզ չի բավարարել և, վերջապես, վճռեցինք աշխատել չորրորդ թարգմանության վրա, որը և առաջարկվում է ընթերցողին։ Այս վարիանտում, ի տարբերություն նախընթացների, մենք աշխատել ենք ոչ թե պահպանել տողերի համընկնումը, այլ պոեմի տրամաբանական շարադրությունը ահա թե ինչու մեր թարգմանությունը մի քիչ ուռել է, բայց ավելի մոտիկ է բնագրին, քան այն թարգմանությունը, որի տողերը համընկնում են բնագրի տողերի հետ։

Այնուամենայնիվ, մի շարք պատճառներով չափածո թարգմանությունից չի կարելի պահանջել այն ստույգությունը, որ իրավունք ունենք պահանջելու արձակ թարգմանությունից։ Պոեմը փիլիսոփայական մի սիստեմի շարադրությունն է, հետևապես՝ ամբողջովին բաղկացած ապացույցներից, ժխտումներից ու հերքումներից, ահա թե ինչու գլխավորը ընդհանուր տրամաբանական գիծն է։ Եվ մեզ հարկավոր է ոչ թե բառացի ճշտությունը, քանի որ բառացի թարգմանության դեպքում շատ հաճախ ծիծաղելի անմտություններ ու անհեթեթություններ են ստացվում, այլ գեղարվեստական ճշտություն։ Հասկանալի է, որ մենք չենք կարող մեզ գովել, թե որքան է մեզ հաջողվել այդ հիանալի պոեմի թարգմանությունը։ Ինչպես ասել է ռուս նշանավոր բանաստեղծ Ֆետը՝ «Ընդօրինակում են, ինչպես ցանկանում են, թարգմանում են, ինչպես կարողանում են»։ Եվ ավարտում ենք մի ուրիշ, ավելի հին, բայց ոչ պակաս հանճարեղ բանաստեղծի՝ Հորացիոսի խոսքերով «Արել եմ, ինչ կարողացել եմ, թո՛ղ ավելի լավ անի նա, ով կարող է»։

Թարգմանիչ

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Վեներան՝ Հռոմեացիների սիրո աստվածուհին տրովական հերոս Անքիզից ծնել է Էնեասին, որը Տրովայի անկումից հետո իբրև տեղափոխվել է Իտալիա և հիմնել հռոմեական պետությունը, ուստի Վեներան համարվել է էնեականների այսինքն՝ Հռոմեացիների ծնողը նախամայրը։ Սակայն Լուկրեցիուսը մատերիալիստ ու աթեիստ լինելով կրոնը ոտնահարելով այլոց նախապաշարմունքները ծաղրելով, ինչո՞ւ է դիմել Վեներային, որը նույնպիսի մի աստվածուհի է, ինչպես հռոմեական պանթեոնի մյուս աստվածներն ու աստվածուհիները, որոնց Լուկրեցիուսը զրկում է ամենայն շնորհքից, ավելի ճիշտ կլիներ ասել՝ ժխտում է նրանց իշխանությունը և նույնիսկ գոյությունը։

Ոմանք ասում են, որ վաղուց ի վեր սովորույթ էր դարձել, որ պոետները սկսելով իրենց գործը Հոմերոսի օրինակով դիմեն իրենց հովանավորուհի աստվածուհուն կամ մուսային։ Լուկրեցիոսն էլ այդ պատճառով է դիմել Վեներային՝ պոետների հովանավորուհի աստվածուհուն։

Լուկրեցիուսն իր պոեմում հանդես է գալիս որպես պոետ և որպես փիլիսոփա. որպես պոետ նա կարող էր դիմել իր մուսային, իսկ որպես փիլիսոփա-մատերիալիստ նա ժխտել է աստվածներին, որոնց թվում նաև Վեներային։ Առանց այդպիսի բացատրության պոեմի շատ հատվածներ կլինեին անհասկանալի։ Մի խոսքով Լուկրեցիոսի համար Վեներան ու Մարսը բեղմնավորության ու ավերմունքի ընդունակություններն են, որոնց մարմնավորել է դիցաբանությունը։

1 Փավոն favonius — արևմտյան քամի

2 Գայոս Մեմիոսը Կեսարի և Պոմպեոսի միջև սկսված պայքարում նախ Պոմպեոսի կողմնակիցն էր, ապա անցել է Կեսարի կողմը։ Սիրային բանաստեղծություններ է գրել։ Ցիցերոնի մի նամակից երևում է, որ նա էպիկուրյան փիլիսոփայության հետևորդներից չէր։ Լուկրեցիոսը նրան դիմելով կամ ցանկացել է նրան համոզել, կամ ավելի շուտ դա գրական մի ձև է, որ ընդունված էր այն ժամանակներում։

3 Պետք է նկատի ունենալ, որ Լուկրեցիոսը ատոմներն անվանում է exordia rerum—իրերի սկիզբներ, radices—արմատներ, elementa—տարրեր, corpora—մարմիններ, corpuscula մարմնիկներ, figurae—ֆիգուրաներ։ Մեր թարգմանության մեջ ատոմները կոչվում են տարրեր, մարմնիկներ, մասնիկներ, սկիզբներ,

քայց ոչ մարմիններ, որպեսզի ատոմները չչփոխվեն ատոմներից բաղկացած մարմինների իրերի հետ։

4 Այստեղ Լուկրեցիուսը նկատի ունի Էպիկուրի «Մետակոսմիա»-ն, «միջաշխարհները»։ Ցիցերոնի ու Սենեկայի կարծիքով Էպիկուրն այդպես անում է, որպեսզի աստվածներին փրկի այն ժամանակ երբ աշխարհը կործանվելու է, մինչդեռ Էպիկուրի նպատակն այն էր, որ աստվածներին բոլորովին զրկի ամենայն իշխանությունից ու արտաքսի աշխարհից։

5 «Հունաստանում ծնված մի մարդ առաջինը հանդգնեց»—«primum graius homo»—Էպիկուրն է որի գովքն է սկսվում։ Էպիկուրն աթեիստ էր և հարձակվում էր կրոնի վրա Լուկրեցիոսն այն պատճառով է փառաբանում նրան, որ նա առաջինն է հերոսաբար տապալել աստվածներին ու ոտնահարել կրոնը։

6 Աշխարհի բոցավառված սահմաններից այսինքն՝ անցավ աստղերի շրջանից ու մտավ տիեզերքի մեջ։ Տիեզերքը բնագրում կոչվում է omne immensum natura rerum, summa tota summai totius summa։ Մեր աշխարհին պատկանում են երկիրը արևը, լուսինը մոլորակները և նույնիսկ աստղերը, որովհետև կարծում էին, թե աստղերը պատկանում են մեր սիստեմին, որի նման սիստեմների քանակը տիեզերքում անհամար է։ Մեր սիստեմը և ամեն մի սիստեմ առանձին վերցված՝ կարող է փլվել ու կործանվել, սակայն տիեզերքը հավիտենական է։ Մյուս փիլիսոփաների պյութագորականների պլատոնականների և արիստոտելականների սիստեմների սահմաններն ավելի նեղ էին նրանք կարծում էին, որ, բացի մեր սիստեմից ոչ մի այլ սիստեմ չկա և մեր սիստեմն էին տիեզերք համարում։

7 Ավլիսն այն նավահանգիստն է, ուր հավաքվել էր Տրոյական արշավանքին մասնակցող հունական նավատորմիղը։ Տրիվիա—Դիանա աստվածուհին է որը միաժամանակ լուսնի և կախարդության աստվածուհի Հեկատեն էր համարվում (տրի-երեք)։ Այդ աստվածուհին իրը բարկացել էր հույների վրա փոթորիկ էր բարձրացրել, որպեսզի հունական նավատորմիղը չկարողանա դուրս գալ բաց ծով։ Նրան մեղմացնելու համար հույները զոհաբերել են Իփիանասային (Իֆիգենիային), որը հույների առաջնորդ Ագամեմնոնի դուստրն էր։ Դանայենյաց—հունաց։

8 «Ում արքա անվանել էր հայրենիքը»—Ագամեմնոնը։

9 Բնագրում՝ Հիմենեյի, այսինքն՝ ամուսնության աստծու։

10 Օրկ—դժոխք, տարտարոս, երբեմն դժոխքի աստվածը։

11 Քվինտոս Էննիոս (239—169 մեր թվարկությունից առաջ) դրամատուրգ և էպիկական պոետ։

12 Հելիկոն—լեռ Բեոթիայում, մուսաների բնակավայրը։

13 Աքերուզիա—Աքերոն դժոխք տարտարոս։

14 Տինդարի դուստրը Հեղինեն է, «Իլիականի» ի գլխավոր հերոսներից մեկի՝ հունական դաշնակից բանակի առաջնորդ Ագամեմնոնի եղբայր Մենելայոսի կինը, որին առևանգել էր տրոյական արքայազն Պարիս Ալեքսանդրը։ Այդ է եղել առասպելական տրոյական պատերազմի պատճառը։

15. Հույները պաշարել էին Տրոյան և ինը տարի չէին կարողանում գրավել այդ քաղաքը Նրանք դիմել են խորամանկության, կառուցել են փայտյա հսկայական մի ձի որի ներսում թաքնվել են հույների կտրիճները տրովացիներն այդ ձին տարել են իրենց քաղաքը կեսգիշերին հույները դուրս են եկել ձիու ներսից բացել են դարպասներն իրենց զորքի առջև և այդպիսով գրավել քաղաքը։

«Համածիններին»—բնագրի graiugenarum բառի թարգմանությունն է, հույներից ծնվածներին, հույներին։ Պերգամ—Տրովա։

16 Տարրերի միակցում—մոլեկուլ։

17 Բանավեճ մատերիայի կառուցվածքի մասին։ Լուկրեցիոսը հերքում է Հերակլիտի (մոտ 500 թ. մեր թվարկությունից առաջ) կարծիքը, որը կարծում էր, թե ամեն ինչ առաջ է եկել կրակից։ Բնագրի 639 տողում Լուկրեցիոսը Հերակլիտին խավարախոս է անվանում «Heraclitus init quorum dux proelia primus, clarus (ob) obscuram linguam magis inter inanes quamde gravis inter graios...»։ Հերակլիտն այդպես է այդ անունը շահել փիլիսոփայության պատմության մեջ։ Ցիցերոնն էլ է Հերակլիտին խավարախոս անվանել, բայց այդպես անվանել է նաև Էպիկուրին։

18 Հերքվում են այլ փիլիսոփաների աշխարհածնական սիստեմները։ Լուկրեցիոսը նրանց չի անվանում։ Անաքսիմենը կարծում էր, որ աշխարհը առաջ է եկել օդից, Թալեսը՝ ջրից, Փերեկիդը հողից, Քսենոֆանը՝ ջրից և հողից, Էնոպիդես Քիոսցին՝ օդից ու կրակից։ Լուկրեցիոսը թեև համաձայն չէ Էմպեդոկլեսի հետ, սակայն հիանում է նրանով և հինգերորդ գրքում նրան է հետևում այն հարցում, թե ինչպես է առաջ եկել կյանքը։

19. Եռանկյուն կղզին—Սիցիլիան իր երեք հրվանդաններով Տրինակրիա։

20 Քարիբդե—առասպելական ծովային հրեշ, որը ջուրն ու նավերը կուլ էր տալիս ու որձկալով դուրս շպրտում, նա վերը չարգուփշուր անելուց հետո Էտնա—լեռ Սիցիլիայում, գործող հրաբուխ։

21 Պիթիա—Ապոլոնի քրմուհի և գուշակուհի Դելփում։

22 Անաքսագոր (5 րդ դար մեր թվարկությունից առաջ) կլազոմենցի փիլիսոփա Պերիկլեսի և Էվրիպիդի ուսուցիչն ու բարեկամը։

23 Տիրս-thyrsus—Բաքոսի խաղողի վազերով կամ բաղեղով փաթաթված գավազանը։

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

1 Լուկրեցիոսը նկատի ունի մարդու ողջ էությունը։

2 Պլեբեյական—հասարակ ժողովրդի։

3 Ընդհանուր զանգվածը այստեղ տիեզերքն է։

4 Լուկրեցիոսը երևի նկատի ունի Արիստոտելին, որը կարծում էր, թե մատերիան անշարժ է և նրա անշարժությունից են առաջ գալիս բնության ձևերը։ Էպիկուրն ընդհակառակը՝ կարծում էր, որ մատերիան շարժվում է անդադար։

5 Լուկրեցիոսն առարկում է ստոյիկներին, որոնք կարծում էին, թե աշխարհում ամեն ինչ ստեղծվել է մարդու համար։

6 Էպիկուրի ատոմիզմը տարբերվում է Լևկիպի և Դեմոկրիտի ատոմիզմից այն բանով, որ Էպիկուրի ատոմները շեղվում են ուղղաձիգ ուղղությունից։ Հերոդոտին գրած մի նամակում Էպիկուրն ապացուցում է, որ դատարկության մեջ բոլոր մարմիններն անկախ իրենց ծանրությունից պիտի ընկնեն միևնույն արագությամբ։ Լուկրեցիոսը 272 տողից սկսած այդ բացատրում է կամքի ազատությամբ։

7. Արտացոլմամբ պղնձի—այսինքն՝ զենքերի։

8 Պանքեական—Պանքեա առասպելական կղզու անունից այդ կղզին իբր

գտնվում էր Արաբիտյում։ Լուկրեցիոսն է այդ անունը մտցրել հռոմեական գրականության մեջ։

9 Մելիբեյա—քաղաք Թեսալիայում։

10 Աստվածամայր Քիբելեի հողագործական պաշտամունքը առաջ է եկել Փռյուգիայում (Փոքր Ասիա) և թափանցել Հռոմ երկրորդ պունիկական պատերազմի ժամանակ։ Ի պատիվ այդ աստվածուհու տեղի էին ունենում խաղեր (megalensia)։ Ըստ հռոմեական առասպելների, Քիբելեն (Ռեան) Յուպիտերի (Զևսի) մայրն է, իսկ Սատուրնոսը (Քրոնոսը) նրա հայրն էր, որն ուտում էր իր զավակներին, քանի որ նախազգուշակված էր, թե նրա որդիներից մեկը կտապալի նրա իշխանությունը։ Քիբելեն մանուկ Յուպիտերին թաքցրել է Կրետե կղզում, իսկ Սատուրնոսին մանկան փոխարեն բարուրված մի քար է տվել։ Լուկրեցիոսը նկարագրում է այն ժամանակվա պաշտամունքը, երբ հունական Ռեային նույնացրել էին փռյուգական Քիբելեի հետ։

11 Պարսպաձև պսակով murali coron—Հռոմում պարգևատրում էին այն ռազմիկին, որն առաջինն էր բարձրանում պաշարված քաղաքի պարիսպների

12 Իդեական մայր—Idream matrem—Փռյուգիայի Իդա լեռան անունով Կրետե կղզում էլ կար նույնանուն մի լեռ. երբ Ռեայի ու Քիբելեի առասպելները խառնվել են սկսել են շփոթել նաև տարբեր երկրներում գտնվող նույնանուն երկու լեռները։

13 Այդ քուրմերը կոչվում էին գալլեր։

14 Դաշույնը որպես ամորձատման գործիք։

15 Փռյուգական պաշտամունքարարներին սովորաբար անվանում էին կորիբանտ, իսկ կուրեթները այն կրետացիներն էին, որոնք աղմուկ էին բարձրացրել որպեսզի մանուկ Յուպիտերի ճիչը չլսվի և դրանով էլ փրկել են նրա կյանքը։ Լուկրեցիոսը նրանց անվանում է դիքթեական այսինքն՝ կրետական։ Գրայներ—հույները։

16. Լուկրեցիոսը 5-րդ գրքում դարձյալ կրկնում է որ կենդանիներ են ծնվում հողից։ Այդ թեորիան չնայած իր անհեթեթությանը, պահպանվել է մինչև 19 րդ դարը։

17. Հնագարյան գրեթե բոլոր փիլիսոփաների կարծիքով բազմաթիվ աշխարհներ գոյություն ունեն տիեզերքում. Էմպեդոկլը, Պլատոնը, ստոիկները ապացուցում էին տիեզերքի միասնականությունը։ Անաքսիմանդրը, Դեմոկրիտը Էպիկուրը կարծում էին, որ աշխարհներն անթիվ են։ Լուկրեցիոսն այդ հարցը դարձյալ քննարկում է 5 րդ գրքում։

18. «Ոսկյա շղթան» վերցված է «Իլիական» ից ստոիկներն օգտագործել են որպես կապ բնության երևույթների միջև։ Լուկրեցիոսն ըստ երևույթին ստոիկներին է ասարկում։

19 Տաճարներ կառուցում էին սովորաբար բարձրադիր վայրերում այդ պատճառով էլ հաճախ էին շանթահարվում։

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

1 «Ոսկյա խոսքեր» կոչվում էին Պյութագորին վերագրվող ասույթները։

2 Էպիկուրն աստվածացվում է հենց այն պատճառով, որ հերքել է աստվածների գոյությունը. նա աստվածներին զրկել է ամեն այն իշխանությունից նրանց արտաքսել աշխարհից ու տեղավորել միջաշխարհային տարածություններում։

3 Ոգին (animus) և Հոգին (anima) կազմում են միասնական մի էություն, Ոգին կոչվում է նաև խելք՝ mentem saepe vocamus, գտնվում է կրծքի մեջտեղում, իսկ Հոգին ցրված է ողջ մարմնում. ոգին ու Հոգին կապված են իրար ամենասերտ կապերով։

4 Մաներ—այստեղ ստորերկրյա աստվածներ, որոնց սև կենդանիներ էին զոհաբերում. այդպես անվանում էին նաև մեռելների ստվերները, քրիստոնյաների «Հոգիները»։

5 Վախենում էին, որ իրենց կթունավորեն խնջույքում։

6 «Հարմոնիա»-յի մասին տես Պլատոն «Ֆեդոն կամ Հոգու անմահության մասին»։ Լուկրեցիոսը նկատի ունի նաև Արիստոքսենին (4-րդ դար մեր թվարկությունից առաջ), որի մասին խոսում է Ցիցերոնը իր «Տուսկուլանյան զրույցներում»։

7 Բաքոսը—գինու աստվածը. այստեղ՝ գինին։

8 Լուկրեցիոսն ըստ երևույթին նկատի ունի Արիստոտելին։

9. Լուկրեցիոսի այդ Համվածից ենք իմանում Դեմոկրիտի ուսմունքը մարմնի և Հոգու ատոմների մասին։

10 Հիրկանիա—Կասպից ծովի Հարավային ափերին գտնվող երկիր։

11 Պուներ—կարթագենացիներ. Լուկրեցիոսը նկատի ունի երկրորդ պունիկյան պատերազմը, Հաննիբալի արշավանքը Իտալիա (208—201 թթ. մեր թվարկությունից առաջ)։

12. Հունական առասպելներ. Սիզիֆը դժոխքում Հսկայական մի քար է բարձրացնում լեռն ի վեր և Հազիվ է բարձրացրել, ինչ քարը դարձյալ գլորվում է ներքև։ Տիտիոսի լյարդը թռչուններ են կտցում անդադար։ Տանտալոսը տանջվում է սովից ու ծարավից. նա մինչև իր կզակը կանգնած է ջրի մեջ, բայց ջուր խմել չի կարողանում, որովհետև երբ կռանում է ջուրը խույս է տալիս նրանից։ Նրա գլխի վերևում ոստերից կախված են Հիանալի պտուղներ, որոնք իսկույն բարձրանում են երբ միայն նա ցանկանում է պոկել և ուտել։ Դանայոսի դուստրերը ջրով լցնում են մի անտակ տակառ, որը չի լցվի երբեք։ Կերբերը դժոխքի պահապան երեքգլխանի պարհուրելի մի շուն է, որը պատառոտում է «մաներին» և նրանց սարսափեցնում իր հաչով. Ֆուրիաները վրիժառու աստվածուհիներ են որոնք հետապնդում ու չարչարում են հանցագործներին, Տարտարոս—դժոխք սանդարամետ, ուր իջնում են մեռած մարդկանց մաները, անկախ այն բանից՝ արդար են եղել, թե մեղավոր։

13 Սակռեր ու փնջեր պահանջել—ցանկանալ ընտրվել կոնսուլ։

14 Անկոս—Հռոմի չորրորդ թագավորը, որն, ըստ ավանդության խաղաղասեր ու բարեպաշտ մարդ է եղել։

15 «Նա»—պարսից թագավոր Քսերքսեսը որն իր զորքերը անց է կացրել Հելեսպոնտով (Դարդանել) Ասիայից Եվրոպա։

16 Սկիպիո անունով հայտնի են երկու մարդ. Պուբլիոս Կորնելիոս Սկիպիո Աֆրիկանուս Մայոր—Հռոմեական զորավար երկրորդ պունիկյան պատերազմում։ Պուբլիոս Կորնելիոս Սկիպիո Էմիլիանուս Նումանտինուս—Հաղթել է կարթագենացիներին երրորդ պունիկյան պատերազմում։

17. Դեմոկրիտ աբդերացի (5-րդ դար մեր թվարկությունից առաջ) Նշանավոր փիլիսոփա-մատերիալիստ։

23 Այստեղ մահին։

24. Սովի։

25 Մոլոսներ—Էպիրոսում բնակվող հունական ցեղ։

26 Սիրո աստված Ամուրը։

27 Այսինքն՝ աստվածների արձանների շուրջը։

28 Բնության ուժը։

29 Տրիբունների նշանները որ լիկտորներն էին կրում։

30. Լուկանական եզ—փիղը Հռոմեացիներն առաջին անգամ փղեր տեսել էին Լուկանիայում (Հարավային Իտալիա) երբ պատերազմում էին Էպիրոսի թագավոր Պիռոսի դեմ։ Լուկրեցիոսն ասում է որ փղերին պատերազմում օգտագործելը պունների (կարթագենացիների) հնարանքն է։

31 Այդ տողերը համարվում են ընդմիջարկություն այդ պատճառով էլ վերցված են փակագծերի միջև։

## ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

1 Աթենքը փառաբանվում է որպես Էպիկուրի հայրենիքը։

2 Էպիկուրին։

3. Լուկրեցիոսը ծաղրում է նրանց, ովքեր երկինքը բաժանում էին մասերի և գուշակում այն բանով, թե որ մասումն է կայծակ փայլել։

4. Լուկրեցիոսը հեգնում է մուսային դիմելով ոչ թե իր պոեմի սկզբում այլ վերջում։

5 Հյուսիսային քամի։

6 Վերգիլիոսն էլ է գրում որ արձակված արճճե գնդակը տաքանում է օդում։ (Տես. «Էնեական» 9 586)։

7 Օրահավասարը։

8 Էթրուսկների սրբազան գրքերում գրված գուշակությունները

9 Էգինայի երկրաշարժը տեղի է ունեցել 372 թ., իսկ Սիդոնի երկրաշարժը 4-րդ դարում մեր թվարկությունից առաջ, ինչպես վկայում է Ստրաբոնը և հաստատում է Պոսիդոնիոսը։ Սենեկան էլ է խոսում դրա մասին, ինչպես նաև Օլիմպոսը իր «Կերպարանափոխություններում» (գիրք 15-րդ)։ Դիոդոր Սիցիլիացին ասում է որ այդ երկրաշարժն առաջ է բերել Նեպտունը՝ պատժելու համար այդ երկու ապականված քաղաքների բնակիչներին, սակայն հետո որպես փիլիսոփա այդ երկրաշարժերը բացատրում է ֆիզիկական պատճառներով։

10 Սիկուլա—Սիցիլիա կղզին։

11 Sacer ignis—«անտոնյան կրակ» խոսխտային կարմիր քամի

12 «Ավեռնո» հունարեն նշանակում է «անթռչուն»։

13 Տես Օլիդիոս «Կերպարանափոխություններ» գիրք երկրորդ։

14 Մի քանի հնադարյան հեղինակներ։

15 Սկապտենզուլա—քաղաք Թրակիայում։

16 Քվինտոս Կուրցիոսն այդ աղբյուրի մասին գրում է «Ամմոնի անտառի մեջտեղում կա մի աղբյուր, որին արևի ջուր են անվանում։ Երբ արևը ծագում է, ջուրը տաք է, կեսօրին, երբ ամենից ավելի շոգ է ջուրը շատ սառն է, որքան ավելի է օրը թեքվում, ջուրն այնքան ավելի է տաքանում, այնպես որ կեսգիշերին սկսում է եռալ, և որքան ավելի է մոտենում լուսաբացը այնքան ավելի է

կորցնում իր տաքությունը մինչև առավոտ, երբ նորից է սկսում ընդունել իր սովորական տաքությունը։

17 Դա Յուպիտերի աղբյուրն է Դոդոնում, որի մասին Պլինիոսը գրում է. «Յուպիտերի աղբյուրը Դոդոնում թեև այնքան սառն է, որ կարող է մարել արդեն վառվող ջահերը, որ սուզում են նրա մեջ, բայց այն հատկությունն ունի, որ դարձյալ վառում է, երբ մարած ջահեր են մոտեցնում։ Այդ աղբյուրը կանոնավոր կերպով ցամաքում է կեսօրին և կեսգիշերին դարձյալ լցվում է և այդ պահից սկսած նվազում է հետզհետե»։

18 Միջերկրականի արևելյան մասում այդ բանն հաստատում են նաև Պլինիոսն ու Ստրաբոնը։

19. Ծովի ջուրը։

20. Պոնտոս—Սև ծովի հարավային ափերը։ Գադես—Կադիքս քաղաքն Իսպանիայում։

21 Այժմ էլ է կոչվում «փղային»—էլեֆանտիազիս։

22 Կեկրոպյան երկիր—Ատտիկե—առասպելական թագավոր Կեկրոպսի անունով։ Նման մի համաճարակ էլ նկարագրում է Օվիդիոսը «Կերպարանափոխություններում» (գիրք 7 րդ) և Վերգիլիոսը «Գեորգիկներում»։ Մինչև այժմ դեռ վիճում են այն մասին, թե դա ինչ համաճարակ է եղել։

23 Պանդիոնի ցեղ—Հույներն իրենց առասպելական մի թագավորի անունով։

Պատվեր 386 Տիրաժ 10 000

Հանձնված է արտադրության 14.I 1960 թ.
Ստորագրված է տպագրության 10/III 1960 թ.
Թուղթ՝ $60 \times 92^1/_{16}$ տպագր. 14,75 մամ., հրատ. 12,9 մամ.
Գինը՝ 8 ռ. 10 կ.

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների
և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության
№ 6 տպարան Երևան, Լենինի պողոտա № 51: